Հատոր գրականության Գ. Գալուստեանի № 8.

ԲԱԳՐԱՏ ՍԱՀԱԿՅԱՆՑ

ԱՂՈՑ ԻՄՊԱԾ

ՊԱՏՄՎԱԾՔ Ա ՄԱՍ

Բարեխթած և Տոքթոր աց

891.99
Ա-55

ԹԻՖԼԻՍ
Տպարան Ե. Պրոմպեռոպ, Փոլից. 7.
1914

Գրատարակութիւն Գ. Պալսեանի № 82

20 JAN 2006
19 NOV 2010

891.99
Ա-55

ԲԱԳՐԱՏ ԱՅՎԱԶԵԱՆՑ

ԱԹՈՏ ԵՐԿԱԹ

ՊԱՏՄԱԿԱՆ ՎԷՊ

(913 – 928 թ. Ք.)

ՄԱՍՆ Ա. և Բ.

ՉՈՐՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Բարեփոխած և ճոխացրած

ԹԻՖԼԻՍ
Տպարան օր. Ն. Ադամեանի, Պօլից. 7.
1914

11.02.2013

19384

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍՀ А.ՍՍР
Ա. ԱԿ. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆ-ՎԱՆ

2221-90

Ա.

Կապոյտ*) բերդը պաշարուած էր... Դեռ նոր բացուել էր գարունը, նոր հալուել ձիւնն ու սառոյցը և Թաւշեայ կանաչով պատել բերդի շրջակայքը, երբ Իւսուֆ

*) Սոյն Կապոյտ բերդը գտնւում էր Արարատեան երկրում և կառուցուած էր Կապոյտ կոչուած քարանձաւի վրայ, որ գտնվում էր Երասխ գետի ձորում։ Այս պատառը Երասխի ձորի անունով էլ կոչւում էր Երասխառձոր։ Ստեփաննոս Օրբէլեանը այս ձորը կոչում է նաև Աշորնեաց (կամ Արշարունեաց)։ Այս բերդը չպէտք է խառնել Սիւնեաց երկրում գտնուած Հրաշկաբերդի հետ, որ այլապէս կոչվում էր նաև Կապոյտ բերդ Վայոց ձորի։

Ինճիճեան. Ստոր. հին Հայաստ. 398.

Մեզ աւելի հաւանական է կարծել, որ «ամուրք Կապոյտ լերին սասձը—կամ Պարխար լեռների մէջ գտնուող Գեօհ-դաղն (Կապոյտ սարն) է և կամ նոյն իսկ Կապոյտ բերդն էր, որ իբրև անառիկ տեղ յայտնի է մեր պատմութեան մէջ և գտնւում էր Արշարունիքում ոչ հեռու այն տեղերից, ուր խառնւում է Ախուրեանը Երասխի հետ Բարդողի հիւսիսային թևերում։

Ոմանք Արտագերսն ու Կապոյտ բերդը միևնոյն են համարում, բայց Եղիշէն Արտագերսի և Կապոյտի անուններն առանձին է յիշում։

Հիւսուածք գիրք երրորդ. Կոստանեանի 125, 4.

Ծ. Հ.։

սպարապետը իւր հրոսակներով կանգ առաւ Կապոյտ բերդի պատերի առաջ և բազմաթիւ սպիտակ վրաններով շրջապատեց բերդը, ուր ամրացած էր հայոց թագաւոր Սմբատը իւր հաւատարիմ խմբով։

* Արեգակը նոր թագնուել էր լեռների քաժակին իւր եռևից թողնելով ծիրանագոյն շերտեր, որոնք հետզհետէ անհետանում էին, մէկ գոյն միւսի հետ խառնվում, ոչնչանում և ապա թողնում իրանց եռևից ամպերի գորշ կոյտեր։ Կամաց կամաց հեռաւոր լեռներն ընկղմվում էին խաւարի մէջ և անհետանում, այն ինչ Կապոյտ բերդի շրջակայ բլուրները և դաշտերը ծածկվում խարոյկներով։

Մէկը միւսի եռևից աճում էին խարոյկները և գիշերային խաւարի մէջ տարածում իրանց կարմրածիրանագոյն ցոլմունքները, որոնց թոյլ փայլի տակ, ինչպես մի վիթխարի, մէջտեղը կանգ էր առել Կապոյտ բերդը և դառն արհամարհանքով նայում էր խարոյկներին...

Այդ խարոյկների առաջ վխտում էին Իսուփի զինուորները դաժան և ահարկու տեսքով. նրանցից մի քանիսը թեք էին ընկած կրակի շուրջը և պատմում էին իրար իրանց սխրագործութիւնները. նրանք ծիծաղում էին ու հռհռում։ Միւս խարոյկի մօտ, ընդհակառակն, զինուորները խմբուել էին մի կրակի շուրջը, ուր փայտեայ պատուհակի (շամփրի) վրայ խորովում էր մի ամբողջ ոչխար։ Հայաստանի օդն ու ջուրը նրանց

ախորժակը բաց էր արել. իսկ կերակուր ամեն կողմը կար, հարկաւոր էր մի փոքրիկ արշաւանք գործել մօտակայ գիւղերը և ահա ոչխարների հօտերը պատրաստ էին նրանց անկուշտ որովայնը յագեցնելու։

Արաբական վրանից մի փոքր ցած, բայց երկրնքի տակ, կանաչ խոտի վրայ, հաժարեա իրար վրայ թափուած էր խառնիճաղանճ մի բազմութիւն՝ բաղկացած կանանցից և երիտասարդներից, որոնց վզերից, իրարից շատ մօտիկ, անցկացրած էին շղթաներ։ Նրանք ծանր կերպով հեծեծում են, շղթաների ամուր կապերը ուռցրել էին նրանց վզերը, իսկ պատառոտուն հանդերձների տակից, մերկ մարմիններից, հոսում էր արիւնը, որով ողողվում էին դաշտի ծաղիկները։ Սարսափելի, աղիողորմ տեսարան էր ներկայացնում այդ վայրը, ուր խմբուած էին հայ գերիները և որոնց շուրջը պտրտվում էին արաբ զինուորներն իրանց արիւնթաթախ նիզակներով։

Դեռ անցեալ օրը այդ գերիները ազատ, իրանց յարկի տակ, իրանց սիրելիների գրկումն էին, երբ վրայ հասան անգութ Իսուփի հրոսակները և ծերերին ու անկարներին սպանելով, իրանց աչքի առաջ մորթոտելով իրանց փայփայած զաւակներին, ծանր շղթաներով շղթայեցին նրանց և քարերի ու մացառների միջով, նիզակներով և սրերով քշելով, յոգնած, քաղցած ու ծարաւի քշեցին մինչև Կապոյտ բերդի պարիսպները։ Ո՞ւր պիտի տանեն նրանց, ինչ պէտք է անեն նրանց հետ։

—Ո՜հ, պապակեցայ, մի կաթիլ ջուր, շշշըն-ջում էր մի նորատի գեղեցիկ աղջիկ և վայրենի հայեացքը դարձնում շուրջը։

—Մեռայ, շղթան մի՛ ձգիր, մօտեցի՛ր ինձ, կրկնում էր մի ուրիշը, որ սարսափից ապշութեան մէջ ընկած ուժով ձգում էր իւր ընկերոջ շղթան։

Բայց ողորմելիների հեծկլտանքի պատաս-խանը լինում էր պահապանների մարակների և նիզակների հարուածները, որոնք մինը միւսի ե-տևից անխնայ իջնում էին սրա ու նրա գլխին։

Ցաւից նրանք մի փոքը լռում էին և ապա միաձայն, իբրև մի մարմին, սարսափելի կերպով հառաչում...

Թող հառաչեն, թող հեծկլտան, որքան որ կուզեն, ումի՞նչ փոյթ, դրանք ընտրուած գե-ղեցիկ կանայք ու պատանիներն էին, որոնք վաղ թէ ուշ պիտի վաճառուէին և կամ գինուորների կրքերին զոհ գնային։

Բայց թողնենք այդ գերիներին և անցնենք մի ուրիշ բանակ, որ բռնում է Կապոյտ բերդի աջակողմը։

Այդտեղ էլ շարուած են վրաններ, այդտեղ էլ վառվում են խարոյկներ, բայց այդտեղի գի-նուորները բոլորովին այլ ազատութիւն են թող-նում։ Սրանց դէմքն այնքան ահարկու և վայրե-նի չէ, ինչպէս առաջիններինը և այնքան խիստ և ահարկու ազատութիւն չէ գործում։ Թուխ դէմքերով էին, բայց կորովի և քաջ, իսկ հայ-կական արիւնը հոսում էր նրանց երակների մէջ։

Այդ գունդը հայկական գունդն էր, որ բռնում էր Իսուֆ ոսոիկանի աջ կողմը և արաբական հրոսակների հետ միասին եկել էր Կապոյտ բեր-դը պաշարել։ Նա հայոց թագաւորին բռնել էր ուզում. նա ծարաւի էր նրա արեանը... Ինչո՞ւ, ի՞նչ էր պատահել և ինչո՞ւ հայը հայի դէմ էր զի-նուել... Բայց այդ ինչ զինուորների գիտնալու բանն էր. նրանց հրամայուած էր կռուել հայոց թագաւորի դէմ և նրանք պիտի կռուէին։ Նրան-ցից շատերը թէև զգում էին իրանց արարքի վա-տութիւնը, բայց լռում էին, նրանք վախենում էին իրանց իշխան Գագիկից, որի հրամանատա-րութեան տակ եկել, ժողովուել էին այդտեղ։ Եւ Արծրունեաց իշխան Գագիկի գունդը վաղը, առաւօտեան պիտի կռուէր ու գերէր հայոց թա-գաւորին և յանձնէր արաբական Իսուֆ սպարա-պետին. իսկ թէ ի՞նչով կը վարձատրէր ամիրան հայի այդ դաւաճանութիւնը Սմբատի քեռորդի Գագիկին, այդ կախուած էր ամիրայի վեհանձ-նութիւնից։

Լուռ ընթրիք էին անում հայ զինուորները և սպասում վաղուան ճակատամարտին։

Այդ միջոցին հեռու, լեռների քամակին մի լոյս երևեցաւ. այդ լոյսը հետզհետէ աճում էր և դիշերային խաւարի մէջ կազմում մի բոցա-վառ փունջ. ի՞նչ է դա... հրդե՞հ թէ խարոյկ և ինչո՞ւ մէջ դիշերին, հեռու լեռների մէջ, վառել են այդ խարոյկը և ի՞նչքան նա մեծ է և ա-հաւոր և բոպէ առ բոպէ աճում և ծաւալ է ըն-

դունում, նրա բոցերը մինչև երկինք են հասնում։

Նայում են հայկական գնդի զինուորները դեպի այդ բոցը և նրանց երեսները կըսճռռում է։

—Տեսնում ես այն բոցը, հարցնում է մի յաղթանդամ գեղեցկատեսիլ զինուոր իր երիտասարդ ընկերակցին, որ խորին մտածմունքի մէջ ընկղմուած թիկն է տուել կրակի մօտ և լուռ նայում է հեռու երևացող բոցին։

—Հա, տեսնում եմ, ինչ բան է։

—Միթէ չգիտես, որ այնտեղ գիւղ է այրվում։

—Ո՞նչ գիւղ։

—Հայոց գիւղ։

—Եւ ո՞վ է այրել։

—Ի հարկ է Իսուֆի հրոսակները։ Այնտեղ հիմա մորթում են, կողոպտում են, ոտնատակ են տալիս ամեն սրբութիւն, իսկ նորատի կոյսերին և հարսներին որին սպանում, որին առևանգում, իսկ ոմանց շղթայում և գերութեան են վարում։ Վաղը, եթէ Տէրը մի արասցէ, առնուի քերդը, սա էլ նոյն օրին կը հասնի։

—Իսկ հայոց թագաւորը՞...

—Հայոց թագաւորը՞... հը՛մ... նրա արեանը վաղուց է կարօտ Իսուֆը։

—Իսկ մենք միթէ պէտք է կռուենք Սմբատի դէմ։

—Այո, էլ ինչու համար ենք եկել։ Մենք

եկել ենք որ մեր արիւնը թափենք և բռնելով Սմբատին յանձնենք Իսուֆին։

—Դաւիթ, ի սէր Աստուծոյ, ասա, ինչու մենք պէտք է պատերազմենք հայոց թագաւորի դէմ, միթէ...

—Մ՛ասս... այդ քո գիտնալու բանը չէ, դու պարտաւոր ես հնազանդել մեծիդ և ինչ որ հրամայում են առանց բացատրութիւն պահանջելու պիտի կատարես։

—Բայց միթէ դու պիտի վաղը կռուես...

—Ե՛ս, ի հարկէ, իսկ թէ ու՞մ դէմ և ինչու համար, այդ էլ իմ գիտնալու բանն է։

Այդ միջոցին թմբուկները խփեցին, ընթրիքը վերջացաւ և բանակը խոր քուն մտաւ։ Պահապանները միայն արթուն հսկում էին ամեն կողմը, իսկ հեռուում դեռ ծխում էր հայոց գիւղը և աւելի բոցավառվում, այն ինչ բանակի խարոյկները հետզհետէ հանգչում։

Բ.

Ինչ որ գիշեր էր...

Անամպ երկնակամարի վրայ վայլուն աստղերը լուռ կատարում էին իրանց գիշերային ճանապարհորդութիւնը. փչում էր գարնանային ցուրտ զեփիւռը, որ շոյելով կապոյտ բերդի պարիսպներին կամացուկ համբուրում էր նրան,

իւր կարօտն առնում և գնում կորչում հեռու և հեռու... Հայրենի քամին կարծես կարօտել էր հայրենի բերդի պարիսպներին, որ այսօր շրջապատուած էր թշնամիներով։

Այդ միջոցին, երբ հայկական դաւաճան գունդն էլ խոր քուն էր մտած, զինուորական մէկ վրանից զգուշութեամբ մի գլուխ երևեցաւ, որ աջ ու ձախ նայելով, համարեա դուրս սողաց վրանի տակից, կանգնեց տեղը, աչքերն ուղղեց դէպի Կապոյտ բերդը և զգոյշ քայլերով բաւից իջաւ ցած։ Յաղթանդամ, բայց զեղեցկատեսիլ զինուոր էր դա, նոր էր ծածկուել նրա երեսը ազուամազով և երկու փայլուն աչքեր վառւում էին գիշերային խաւարի մէջ, այն ինչ նրա սիրտը արագ արուիարուիում էր։ Վախ չուներ նա մահից, բայց նրա մաքի մէջ պարզվում էր մի բան, որպիսին աշխատում էր շատ ի կատար ածել։ Զգուշութեամբ նա անցաւ մի փոքր տարածութիւն և ապա յանկարծ կանգ առաւ և թափնուեց մի թփի տակ։ Իրանից մի փոքր հեռու նա մի շշունջ լսեց, որ սառեցրեց նրա արիւնը երակների մէջ։ Ի՞նչ էր այդ, խօսակցութիւն թէ հառաչանք նա պարզ չկարողացաւ լսել. հակառակ քամին թոյլ չտուեց նրան իմանալու և նա մի քանի վայրկեան պահուելով թփի տակ, հէնց ուզում էր վեր կենալ և շարունակել ճանապարհը, երբ ձայները նորից կրկնուեցան։ Այժմ նա պարզ լսեց հառաչանքի և խօսակցութեան ձայները։ Ապա նայեց այն

կողմը և տեսաւ երկու տուրեր, որոնք զգուշութեամբ առաջ էին գնում։

—Ո՛հ, կամաց գնա, ես չեմ կարող քայլել, ոտքերս ուռած և արիւնլուայ են, ասում էր մէկը միւսին։

—Կամաց գնալով բան չի լինի, Աւօ, արշալոյսը կը բացուի և մենք կրկին կը բռնուենք, հարկաւոր է շտապել, փախչել դէպի լեռները, դէպի մեր գիւղը, պատասխանեց միւսը։

—Ա՛խ, եղբայր, ես այս րոպէիս վայր կ՚ընկնեմ, աչքերս մթնում են և գլուխս պտտվում է. բաւական չէ չղթաներից յառաջացած վէրքերս, քաղցն էլ մի կողմից է նեղացնում ինձ։ Մի ամբողջ օր է ոչինչ չեմ կերել։ Ես տանջվում եմ։

—Լռիր, էլ ինչո՞ւ փախար, երբ չէիր կարող հեռանել ինձ...

Երկու տուրերն անցան թփի տակ պահուած զինուորի մօտից և նա լաւ նայելով նրանց՝ տեսաւ որ երկու փախստական հայ տղաներ էին, որոնք խուսափում էին բանակից։

Զինուորը մի խոր ախ քաշեց, մի փոքր կանգ առաւ, մի միտք անցաւ նրա գլխում և նա սկսեց կամաց հեռանել փախստականներից, որոնք հեռուհեռե շտապեցնում էին իրանց քայլերը, թէև փշերն ու քարերը արիւնլուայ էին անում նրանց բոբիկ ոտքերը։

Լուռ հեռանում էր զինուորը, որի մէջքից միայն մի սուր էր կախուած, երբ անզգուշաբար ոտքը քարին կպաւ և այդ քարը գլորուելով ցած

աղմուկ հանեց։ Փախստականները սրտատրոփ կանգ առան և նայեցին։ Նրանք տեսան իրանց տանը մի մարդ, որ լուռ իրանց էր նայում։ Սարսափը պատեց և սառը մահուան դողը անցաւ նրանց մարմնով։ Այդ ժամանակ զինուորը մոտեցաւ։

—Ի սէր Աստուծոյ, մեզ մի սպանի, ասացին նրանք միասին։

—Լուռ, ձայն մի հանէք, թշուառականներ, թէ չէ կորած էնք։

Փախստականները լռեցին և ուրախացան լսելով հայ լեզուն։

—Ո՞վ էք և ո՞ւր էք գնում, հարցրեց զինուորը։

—Մենք Զարիշատցի ենք և գերի էինք Իւսուֆի բանակում և յաջող ժամանակ գտնելով փախչում ենք, ի սէր Աստուծոյ, մի՛ խանգարիր մեզ։

—Լաւ, ես ինքս էլ փախուստ եմ տալիս այդ զզուելի բանակից, ուր հայը հայի դէմ պիտի կռուի. քայլեցէք, գնանք, քանի ժամանակ կայ, լոյսը բացուելուն պէս շատ ուշ կը լինի, մեզ մաս-մաս կըկտրատեն արաբ զինուորները։

Ապա երեքն էլ լուռ սկսան առաջ քայլել։ Զինուորն առաջ ընթացաւ, իսկ երկու տղաները նրա ետևից։ Զգոյշ, անխօս անցան նրանք բանակատարածութիւնն և մտան մի փոքրիկ ձոր, ուր խոխոջում էր լեռնական պարզ և վճիտ առուակը։ Այդ ձորից այն կողմը, բարձրութեան

վրա էր գտնվում Կապոյտ բերդը։ Յանկարծ զինուորը կանգ առաւ և նշան արաւ տղաներին, որ թաքնուեն։ Ձորի մէս կողմից զինուորը մի ինչ որ ձայն լսեց։ Մի փոքր ժամանակ անցաւ և պարզ նկատեց մի խումբ զինուորներ՝ թուով հինգ հոգի, որոնք դէպի իրանց կողմն էին գալիս։ Զգուշութեամբ տղաներին ծածկեց մացառի տակ և ինքն էլ կուչ գալով մերկացրեց սուրը սպասելով նրանց։ Նա զգաց, որ թէ ինքը և թէ տղաները կորած էին, գոնէ կեանքը աժան չծախէը։ Խումբը խօսակցելով հետզհետէ մօտենում էր։ Խօսակցութիւնից հայ զինուորը ոչինչ չհասկացաւ, այնքանն իմացաւ միայն որ դրանք Իւսուֆի զիշերապահ զինուորներն էին, որոնք գնացել էին Կապոյտ բերդի շրջակայքը լրտեսելու։

—Էհ, հոգ չէ, որ հինգ հոգի են, դրանցից հեշտ է ազատուելը, բայց վախենում եմ որ այդ անպիտանները աղմուկ բարձրացնեն և բոլոր բանը փչացնեն, թէ չէ դրանց սատակացնելը ամենահեշտ բանն է, մտածում էր զինուորը աչքը չհեռացնելով նրանցից։ Նրանք աւելի մօտեցան. մի քանի քայլ էլ և ահա նրանք ոտքի տակ կը տային թաքցրած տղաներին, որոնք դողում էին յոյսները Աստուծոյ վրայ դնելով։ Զինուորը լսում էր թշուառ տղայոց սրտի բաբախիւնը և այդ աւելի սիրտ էր տալիս նրան։

Յանկարծ խումբը կանգ առաւ։ Հայ զինուորը մտածում էր անակնկալ կերպով յարձակուել

նրանց վրայ և նա արդէն բարձրացրեց սուրը, երբ խումբը ծռուելով մի կողմը, անցաւ առաջ։ Փախստականները ազատ շունչ քաշեցին։

—Ի՞նչ եղաւ Ահմադը, ասում էր Իսուֆի զինուորներից մէկը։

—Զգիտեմ, նա կարելի է առաջ լինի գնացած, պատասխանեց միւսը և նրանք աւելի առաջ անցան թողնելով մեր փախստականներին իրանց հետը։

—Կորան անպիտանները, կամաց ասաց զինուորը ազերանցը և նրանք մի փոքր ժամանակ կրկին անշարժ ճնալուց յետոյ առուակի ուղղութեամբ առաջ անցան։

—Մեր ազատիչն ես, ինչ է քո անունը, հարցրեց Աւօն, որ մեծն էր միւսից։

—Իմ անունը Դաւիթ է, Գնունեաց ազգից, ասաց փախստական զինուորը և այնուհետև առաջ անցան լուռ։ Ոչ մէկը ոչինչ չէր խօսում։

Բաւական ժամանակ լուռ առաջ էին գնում առուակի հակառակ կողմով, երբ կրկին կանգ առան մի սև առարկայ իրանց առաջը տեսնելով։ Նրանցից մի քայլ առաջ նստած էր մի տեսակ սև մարմին, որի երկու աչքերը երկու ճրագնեբի նման փայլում էին գիշերային խաւարի մէջ։ Ապուշ կրթած, լայն բացած աչքերով դիտում էր դա մեր փախստականներին, իսկ փախստականները դրան։

Այս գիշերը, ինչպէս երևում էր, շատ փորձանքների պիտի հանդիպէին մեր փախստական-

ները։ Մի վայրկեան Դաւիթը նայեց այդ սև հրեշին, որ վիթխարի հասակ ունէր և նստած չորի ափին լուռ նայում էր իրան։ Երկայն նիզակը դրուած էր այդ արաբ զինուորի կողքին, իսկ կեռ սուրը մէջքից էր կախած, բայց արաբ զինուորը ըստ երևոյթին ոչ մի տրամադրութիւն չունէր զէնքի դիմելու և ապուշի նման նայում էր իրան։

Դաւթի և արաբ զինուորի հայեացքները մթութեան մէջ պատահեցան իրար և Դաւթի մարմնով մի սառը դող անցաւ։ Նա մտածեց, «եթէ ես սրան չսպանեմ, սա ինձ կսպանի, յարմար վայրկեանից պէտք է օգտուել, քանի որ յետ ճնացած արաբ զինուորը, որ չորի ափին նստած ոտքերն էլ լուանում, իրանց գիշերային վհուկներ կարծելով, երկիւղից սառել, կարկամել էր»։ Նա յանկարծ վրայ. ընկաւ և մի վայրկեանում իւր սուրը մխեց արաբ զինուորի կուրծքը։ Մի վայրկեան և ամեն ինչ վերջացած էր։

Դաւիթը հանեց արաբի կեռ սուրը և վերցրեց մօտը դրուած նիզակը և տալով տղերանց, որոնք 18—19 տարեկան կը լինէին, ասաց.

—Առէք, դուք անզէն էիք, այս զէնքով դուրանք շատ հայի արիւն են թափել, այժմ իրանց զէնքով իրանց արիւնը պէտք է թափենք։ Պէտք չէ մեր ժամանակում առանց զէնքի շրջել, անիծուածները հայի արիւնը քամեցին։

Տղաները իրանց ցաւը մոռացան և առնելով զէնքերը առաջ անցան կրկին վեր։

—Բայց ձեր ես տանում մեզ, մենք մօտե-

նում ենք արդէն բերդի պարիսպներին, ասաց Աւօն։

— Ո՛ւր եմ տանում, մի՞թէ կարծում էք Իւսուֆի բանակը։

— Ո՛չ, Տէրը մի արասցէ. բայց մենք մօտենալով պարսպին, մեզ թշնամու տեղ կարող են դնել և մեզ կոտորել։

— Մի վախենաք, դրա ճարն էլ պիտեմ, վաղը առաւօտ մենք կապոյտ բերդում կը լինենք և այնտեղից կը կռուենք Իւսուֆի դէմ։ Գագիկ իշխանը մտածում էր, որ ես հայոց թագաւորի դէմ կը կռուեմ, բայց շատ սխալուեցաւ։ Դաւթի երակների մէջ չի հոսում դաւաճանութեան կեղտոտ արիւնը. նա իւր արիւնը կը դնի օրինական թագաւորի համար։ Եւ մի այնպիսի ոգեւորութեամբ կեցցէ աղաղակեց, որ երկու տղաների սիրտը արուփաց, երկիւղ կրելով որ մօտիկ մարդ կը լինի և իրանց վրայ յարձակում կը գործի։

Դաւիթն արքայորդու՝ Աշոտ երկաթի ծառաներից էր, որին գերի տանելով Իւսուֆը և նրա հասակն ու լայնապինդ թիկունքը տեսնելով յանձնել էր Գագիկ իշխանին, որ իւր պինուորների շարքն էր անցկացրել խոստանալով շատ բարիքներ տալ նրան, եթէ կը ժողանայ Սմբատ թագաւորին և իրան հաւատարմութեամբ կը ծառայի։ կապոյտ բերդը պաշարելով Դաւթին իւր սիրոյ դէմ էր դինել, իւր օրինական թագաւորի դէմ յարուցել։ Դաւիթը ամեն կերպ աշխատում էր

փախուստ տալ Գագիկ իշխանից, բայց յարմար ժամանակ չէր գտնում. իսկ այժմս, երբ կանգնած էին կապոյտ բերդի պարիսպների տակ, այդ հեշտ էր Դաւթի համար։ Նա ծանօթ էր կապոյտ բերդի ծակուծուկերին և նրա համար բերդ մտնելը ամենահեշտ բանն էր։

Եւ երեք վախտականներն առաջ էին անցնում բարձրանալով վեր, միշտ վեր, ուր ցցուած էր անյաղթելի կապոյտ բերդը, ուր նստած էր իւր նախկին տէրը, այն տէրը, որին կարօտել էր վաղուց։

Անցնում էին նրանք առաջ քարերի վրայ մագլցելով, թփերի ու մացառների միջից ճղելով, որոնք պատառոտում էին նրանց հանդերձները և արիւնոտում երեսները, բայց նրանց ամենևին հոգսը չէր. քանի մօտենում էին պարիսպներին, այնքան Դաւթի սիրտը աւելի արագ էր տրոփում, այնքան աւելի սկսում էր նա յուզուել և շփոթուել։ Ի՞նչ էր մտածում նա, որ Գագիկ իշխանի խոստումները թողած, ազատ կեանքը մի կողմը ձգած, գալիս էր պաշարուելու և իւր կեանքը զոհելու իւր տիրոջ համար։ Չէ՞ որ նա կարող էր կռուել Գագիկի զօրքի հետ միասին, քաջութիւնները անել, բարիքներ վայելել և ապա հանգիստ, Գագիկից և Իւսուֆից բարիքներ առանալով, պատերազմի դաշտից մի կողմը քաշուել և ապրել հանգիստ ու խաղաղ... Բայց արդարութեան և ազնուութեան դրօշակը աւելի վառ կերպով, ինչպէս արևի պայծառ ճառագայթ,

փայլում էր նրա մաքի մէջ, քան թէ այն հանդիսաւոր կեանքը, որ պիտի դատաստանութեամբ ձեռք բերէր...:

Յոգնածութիւնից կանգ առաւ Դաւիթը մի սեպացած ժայռի տակ և նայեց ցած, ուր տարածվում էր Իսուֆի բանակը և մի դառն ժպիտ արձակեց, ապա իւր ուշադրութիւնը դարձրեց հեռուն, այնտեղ, ուր կորչում են լեռները իրար քամակին և նրա սիրտը արուփաց: Հեռու, արեւելեան հորիզոնի վրայ երևում էր մի տեսակ ադօտ լուսաւորութիւն, այնտեղից կամաց-կամաց բացվում էր արշալոյսը... Ինչ հրաշալի էր դա, խաւարը նահանջում էր յետ, լեռների գագաթները հետզհետէ բացւում էին, կարճ ժամանակից յետոյ պիտի դուրս գար հրաշալի արևը և ոսկեզօծէր լեռների կատարները և կապոյտ բերդի անյաղթելի պարիսպների ժանիքները: Նա փեշով սրբեց իւր ճակատի քրտինքը և նրանք ժայռից ժայռ մագլցելով մտան խիտ մացառների մէջ: Ժամանակը կարճ էր, հարկաւոր էր շտապել, վաղ առաւօտեանից Իսուֆի հրոսակները վայրենիների նման կը թափուէին արդէն հինաւուրց բերդի պարիսպների տակ:

Զգուշութեամբ անցնում էին մացառների միջով և իրանց եռանից ամեն հեռք ծածկում, ոչնչացնում: Ապա կանգ առան հենց պարսպի տակ, ուր մի ժայռի կոտր դուրս էր ցցել իւր անարկու ժանիքը: Մի վայրկեանում Դաւիթը վեր մագլցեց ժայռի գլխին և տղերանց էլ օգ-

նելով, այդ ժայռի վրայ սկսեցին առաջ դնալ, մինչև որ կրկին ժռան ժացառների մէջ: Նրանց ոտքերի տակ արդէն տարածվում էր ահռելի անդունդը. մի փոքրիկ անզգուշութիւն և նրանք կը գլորուէին անդունդ, որից կենդանի դուրս գալ անկարելի էր:

—Վերջապէս, ասաց Դաւիթը և փորսող տալով ժռաւ մի անցքի մէջ, ուր հեռևեցին և տղաները:

Քառորդ ժամ մութ անցքի մէջ փորսող տալուց յետոյ, նրանք կանգ առան և չորս կողմը նայելով տեսան հայկական զօրքերին կազմ և պատրաստ թշնամուն դիմադրելու:

—Կեցցէ՛ հայոց բանակը, կանչեց նա և սուրը հանելով պատեանից ճօճեց օդի մէջ:

Նրանք արդէն կապոյտ բերդումն էին:

Այդ միջոցին բարձր լեռների կատարներն արդէն ոսկեզօծուել էին արևի անդրանիկ ճառագայթներով... Իսկ հեռուում արդէն լսվում էին թմբուկների ձայները: Իսուֆի զօրքերը կամաց կամաց մօտենում էին...

Գ.

Ինչպէս մի սարսափելի փոթորիկ, որի առաջ ամեն ինչ դողում և տապալվում է, այնպէս վրայ վազեցին Իսուֆի զինուորները կապոյտ բերդի պարիսպներին, կա-

ծես նրան միանգամից կուլ տալու, ոչնչացնելու և ջնջելու երկրի երեսից... Սարսափելի գոռիւն գոչիւնով, անթիւ նետեր ձգելով դէպի պարիսպները, նրանք ճանճերի բազմութեան նման ուզում էին վեր մագլցել պարիսպների վրայ և հիմնայատակ տալ ամեն ինչ, կոտորել բոլորին ով համարձակւում էր իրանց դէմ կանգնել և այդպիսով յագուրդ տալ իրանց արիւնածարաւ սրտերին, երբ մինը միւսի ետևից, բերդականների նետերից վիրաւորուած, ընկնում էին գետին և մահուան տագնապի մէջ տոչորվում:

Աւրհամարհանքով նայում էին Սմբատ արքայի մի բուռն քաջերը դէպի այդ բազմութիւնը և սառնասրտութեամբ թշնամեաց գնդերից դիակները մէկը միւսի վրայ կիտում:

Գոռում էր կատաղած Իւսուֆը, իւր զօրքերին խրախուսում և նրա վայրենի աչքերից կատաղութեան կայծեր էին թափվում, երբ տեսնում էր իւր գնդի նուազիլը և դիակներից բլուրներ կիտուիլը, որ մինչև պարիսպներն էին հասնում: Նա ուզում էր արիւնլուայ դիակները կոխկորտելով բերդը մտնել և բոլորին մասմաս կտրատել, բայց իւր կեանքը թանգ էր ծախում: Այնտեղից սլանում էին հայկական գնդի մահաբեր նետերը և իրանց հունձն անում:

Կատաղութեան փրփուրը բերանին, գոռում էր իւր զինուորներին, խրախուսում նրանց, առաջ մղում, բայց ոչ մի բան չէր օգնում, նրբանց դիմացը անվեհեր կանգնած էր Կապոյտ

բերդը իւր ընտիր քաջերով, որոնց ոգևորում էր Սմբատ հայոց օրինական թագաւորը:

Երբ որ տեսաւ Իւսուֆը իւր զօրքերի կոտորածը, երբ նկատեց բերդականների քաջութիւնը, հրամայեց իւր զօրքին յետ նահանջելու և ապա առաջ կոչելով Գագիկի հայկական գունդը սկսեց խրախուսել նրանց.

— Տեսնում էք ինչպէս քաջ են հայերը, դուք էլ ցոյց տուէք ձեր քաջութիւնը:

Ու հայկական գունդը նետաձգութեամբ առաջ սլացաւ դէպի բերդը, բայց բերդից արձակուող նետերը չհնազանդեցին և դրանց, որոնցից շատերն ընկան դաշտում առանց բերդին մի փոքր անգամ վնաս տալու:

Երեկոյացաւ: Արևը արդէն իւր վերջին հանդիստն էր առնում երբ փողը հնչեցին և զինուորները յետ դարձան իրանց բանակները:

Բայց Իւսուֆը կատաղած էր: Իւր զօրքերի կոտորուիլը նրան յուսահատութեան մէջ էր ձգել, այն ինչ իւր նպատակը չէր աջողում Սմբատին բռնելու: Թանկագին օթոցի վրայ նստած, մի թիկունքը տուած բարձին, նա ձեռքի համբիչը ձգելով, երբեմն իւր նօսր մօրուսը շփելով մտածում էր: Կատաղութեան և վրէժխնդրութեան ալիքները երբեմն անցնում էին նրա դէմքի վրայ: Սոսկալի էր նա այդ ժամանակ. փոքրիկ բայց կատաղութեամբ լցուած աչքերը կարծես ուզում էին դուրս ժայթքել ակնակապիճներից:

Այդ միջոցին ներս մտաւ վրանը իւր ծառաներից մէկը և խոնարհ գլուխ տալով նրան կանգնեց վրանի դռների մօտ։

Իւսուֆը գլուխը բարձրացրեց և նայեց նրան։ Ծառան առանց համարձակուելու Իւսուֆին նայելու յայտնեց, որ Գագիկ Արծրունին ցանկանում է արժանանալ իւր տեսութեան։

—Թող գայ այդ շունը, հրամայեց Իւսուֆը և կրկին իւր համրիչը սկսեց պարտեցնել։

Այդ միջոցին ներս եկաւ Գագիկ հայոց իշխանը, խոր գլուխ տուեց Իւսուֆին և ծունկ չոքելով նրա առաջ, համբուրեց նրա փեշի ծայրը, ապա յետ գնալով, ձեռները կրծքին դարսեց և կանգնեց վրանի դռների մօտ։

—Այս ինչ է, Գագիկ իշխան, քո դունդը ամենևին քաջութիւն ցոյց չըտուեց և մեր առաջին արշաւանքը անյաջող անցաւ կապոյտ բերդը գրաւելու։ Ի՞նչ խաղ է ուզում խաղալ Սմբատ Թագաւորը. մի՞թէ նա կարծում է, որ ոչ ոք առողջ կը պրծնի իմ ձեռքից։

—Թող չվշտացնէ քո սիրտը այս օրուայ անյաջողութիւնը. մեծ է Ալլահի զօրութիւնը և Սմբատը վաղ թէ ուշ քո ձեռքը կը յանձնուի։ Այսօր նրա քաջերը չէին պատերազմում, այլ կապոյտ բերդի պարիսպները, որոնք փլատակ կը դառնան միմիայն քո ամենազօր զօրութեան առաջ։

—Այո, ես կը կործանեմ այդ պարիսպները, որ միւս անգամ պատսպարան չլինին վախկոտ և թոյլ հայերին։ Ինչ է կարծում Սմբատը. ես երկաթի օղերով կ'շղթայեմ բերդը և նա սովից անձնատուր կըլինի ինձ և իմ գթութեանը կը հայցի, այն ժամանակ վայ հայոց թագաւորին, որ համարձակվում է իմ դէմ ապստամբել։ Քաջդ իշխան, դու կարգադրիր զօրքերդ, կազմ և պատրաստ ունեցիր միշտ յարձակուածներով նեղելու Սմբատին, իսկ երբ նա կ'ընկնի ձեռքս, այն ժամանակ մեծամեծ պարգևներ կ'ընդունես ինձանից և ես քեզ Հայաստանի տէր կը դարձնեմ։

Գագիկը խոր գլուխ տուեց, նորից ծունկ չոքեց, համբուրեց նրա փեշի ծայրը և դուրս եկաւ նրա վրանից։

Տխուր և արտում հեռանում էր նա Իւսուֆի վրանից և նրա միտքը ալեկոծվում։ Նա մրտածում էր իւր դրութեան մասին, թէ ինչ պիտի լինի ինքը և թէ ինչով պիտի վարձատրի իրան Իւսուֆը իւր դաւաճանութեան համար։

—Չէ, Սմբատին վերջ չկայ, հասաւ նրա վախճանը։ Ի՞նչ պիտի անէ նա միայնակ, առանց օգնականի, առանց զօրքի և մինչև ե՞րբ պիտի փակուած մնայ կապոյտ բերդում։ Ո՞վ կօգնէ նրան, երբ նա սովից սպիտակած յուսահատութեամբ կ'որոշի անձնատուր լինել բռնաւոր Իւսուֆին։ Նախարարները հեռացած են նրանից, ամբողջ Արարատը անտէր անտիրական ընկած, Իւսուֆի հրոսակները կրակ և մոխիր են դարձնում ամեն ինչ, իսկ ես՝ ատոր դաւաճանս, փոխանակ օրի-

նական թագաւորին պաշտպանելու՝ ինքս նրա դէմ եմ. զինուել։ Ի՞նչ պիտի ասէ փոխարէնը Իսուֆը—ոչինչ։ Ես համոզուած եմ, որ նա վաղ թէ ուշ ինձ էլ կը շղթայի ամուր շղթաներով և ամենաստոկալի տանջանքներ տալով կը սպանի ինձ։ Չէ, պէտք է շուտով ազատուել նրանից և դառնալ իմ աշխարհը, այդ է պահանջում իմ ապահովութիւնը...

Եւ նա աննկատելի կերպով մտաւ իւր բանակը, ուր մի վրանի առաջ նստած էին զինուորները և կամացուկ խօսում էին։

—Ո՞ւր է Դաւիթը, մի՞թէ նա ապստամբած է, հարցնում էր մէկը։

—Չէ, նա առաւօտից չկար, ինչպէս երեւում է նա փախել է բանակից։

—Շատ լաւ էլ արել է, ինչ կը վայելի մեզ հայոց թագաւորի դէմ կռուել, տեսար, թէ որպիսի քաջութեամբ էին կռւում նրանք և ինչպէս կոտորեցին Իսուֆի զինուորներին։

—Արդարացատ Աստուածը միշտ ճշմարտի կողմը կը լինի. բայց տեսար, Թէոս, երբ մեր գունդը առաջ գնաց, նրանք պակասեցրին իրանց նետերի արձակելը, կարծես մեզ խնայում էին։

—Հա, ես լսեցի ինչպէս մէկը գոռում էր պարսպից՝ «փախէք, թէ չէ ձեզ էլ կը կոտորենք» և նա անագին պարսաքարը ձեռքին կարծես խընայում էր ձգելու։ Ես նայեցի նրան, հեռուից այդ զինուորը շատ նման էր մեր զինակից Դաւթին, կարծես իսկը նա լինէր...

Այդ միջոցին նկատեցին զինուորները Գադիկին և լռելով իսկոյն ոտքի կանգնեցան։ Գադիկը, որ մինչև այդ ժամանակ լուռ լսում էր նրանց, շարժուեցաւ տեղից և աւելի յուսահատ դէպի իւր վրանը գնաց։

Ցորեկ ամառն ու աշունը և եկաւ ցուրտ ձմեռը, այն ինչ դեռ պաշարուած էր կապոյտ բերդը Իսուֆի հրոսակներից։ Ամեն անգամ քանի յարձակում էին գործում, նրանք մեծ կորուստով էին դառնում ու Իսուֆը յուսահատուած այնպիսի պինդ օղակով շղթայեց կապոյտ բերդը, որ ոչ մի մարդ չէր կարող անցնել այդ շղթայից։ Նա ուզեցաւ սովով նեղել Սմբատին։ Եւ յիրաւի Սմբատի պաշարը հատել էր։ Յուսահատուած մտածում էր Սմբատը իւր դրութեան, իւր աշխարհի վրայ և դառն կերպով հառաչում։ Նա տեսնում էր քրիստոնէից կոտորածը, նա տեսնում էր իւր քաջերի արիութիւնը և վեհանձնութիւնը, որոնք սովից հալածած դեռ առիւծների քաջութիւն էին ցոյց տալիս և նրա սիրտը կսկծում էր։ Յորին վիշտը կեղեքում էր բարեպաշտ թագաւորի սիրտը և դառն մտատանջութիւնները մաշում նրան։ Նա զգում էր, որ Իսուֆը միայն իւր արեանն

էր. կարօտ, այն ինչ այստեղ զուր թափվում էր հայոց արիւնը և զուր, բոլորովին զուր, հալուժաշ էին լինում իւր քաջերը, որոնք մինչև իրանց վերջին կաթիլը կը դնէին իրանց թագաւորի համար։

Սմբատը արդէն վճռել էր անձնատուր լինել Իւսուֆին խնայելով իւր քաջերի և քրիստոնէից արիւնը, երբ նրան ներկայացաւ Դաւիթ զինուորը։

— Ես պատրաստ եմ, տէր արքայ, ճղել թշնամեաց բանակը և ուտեստ հասցնել բերդին։

Սմբատը վեր բարձրացրեց իւր յուսահատութեամբ լի աչքերը և նայեց Դաւթին. մի տեսակ ժպիտ անցաւ նրա թալկացած դէմքի վրայ, որ և՛ ուրախութիւն էր նշանակում և՛ տխրութիւն։

— Գնա, որդիս, դու մխիթարեցիր ինձ։

Եւ Դաւիթը խոր գլուխ տալով հեռացաւ արքայից, որի աչքերի մէջ այժմ փայլատակում էին ուրախութեան արցունքներ։

Ձմերային մի մութ գիշեր էր։ Գորշ ամպերը ծածկել էին երկինքը և խորին խաւարը տիրում էր ամեն տեղ։ Կապոյտ բերդի շրջակայքը ծածկուած էր թանձր ձիւնով, ուր ամեն ինչ մեռած էր և ոչ մի կենդանութեան նշոյլ չէր երեւում։ Երբեմն երբեմն միայն պարսպի շուրջը փչում էր ցուրտ քամին և սուլելով անցնում հեռու և հեռու։ Այդ միջոցին մօտ տան և հինգ մարդ դուրս գալով բերդի դռներից զգուշութեամբ սկսեցին առաջ անցնել։ Նրանք ամենքն էլ պի-

նուորուած էին նիզակներով, վահաններով և սրերով։

Ցուրտ քամին սուլելով շոյեց և իւր դաժան ցրտութեամբ համբուրեց նրանց, բայց նրանք բանի տեղ չդնելով դրան լուռ առաջ էին անցնում։ Ամբի առաջ գնում էր մի մարդ բարձրահասակ և վիթխարի տեսքով, որ ամենայն զգուշութեամբ աջ ու ձախ էր նայում։ Յանկարծ հեռուից ճրագների նման փայլուն կէտեր երեացին, որոնք հետզհետէ մօտենում էին իրանց։ Առաջնորդը վաղուց նկատել էր այդ, բայց լուռ էր, այն ինչ այդ ժամանակ ընկերներից մէկը նկատելով այդ ասաց.

— Դաւիթ, տեսնո՞ւմ ես հեռուում ճրագների փայլփլմունքը, դրանք մեզ վրայ են գալիս։

— Հա, գիտեմ, վաղուց եմ նկատել, բայց ցաւում եմ, որ մեր առաջին արշաւանքը փոխանակ Իւսուֆի զինուորների վրայ լինելու, ստիպուած ենք գայլերի հետ կռիւ տալ։

Այդ միջոցին գայլերի խումբը թռուով տասըտասնեակու հատ իրանց ոռնոցով շրջապատեցին մեր խմբին, որը քառանկիւնի կանգնելով, սկսեցին յետ մղել նոցա։

— Տղերք, այսպէս բան չի լինի, հանաք անելու ժամանակ չէ, սրանց պէտք է վերջ տալ, ասաց Դաւիթը և հրամայեց յարձակուել գայլերի վրայ։ Մի վայրկեանում գայլերի հեռքն էլ չմնաց...

Ապա անցան առաջ և հեռուում երեաց կա-

պոյտ բերդի մօտակայ դիւղերից մէկը։ Այս բերդի մերձաւոր բոլոր դիւղերում գտնւում էր Իւսուֆի զօրքը, ուր տեղափոխուել էր ձմեռը։

Երբ մօտեցան դիւղին, Դաւիթը հրամայեց իւր ընկերներին թաքնուել թփի տակ, իսկ ինքը միայնակ մտաւ դիւղը լրտեսելու։

Զգուշութեամբ նա առաջ անցաւ և ապա կանգ առաւ մի դռան առաջ, որտեղից լսվում էին երգի և ուրախութեան ձայներ։ Կատուի դիւրաշարժութեամբ նա մագլցեց ցանկապատը և մտաւ բակը և ապա նայելով դռան ճեղքից տեսաւ զինուորներ, որոնցից մի քանիսը կրակի շուրջը նստած խորովում էին մի ոչխար, իսկ միւսները կրակից հեռու փափուկ բարձերի վրայ նստած ծափ էին տալիս և խաղացնում մի քանի կիսամերկ կանանց։ Վայրենի կիրքը փայլում էր նրանց դէմքերի վրայ, այն ինչ խեղճ կանայք յոգնածութիւնից հազիւ շարժում էին իրանց ոտքերը։

Դաւիթը սոսկաց. նրա մազերը փշաքաղուեցան և նա ձեռքը տանելով դէպի սուրը ուզեցաւ աքացի տալ դռանը և ներս մտնել, բայց խոհեմութեամբ զսպեց իրան։ Նա համարեց զինուորներին, որոնց թիւը քսան և հինգ երևաց իրան, իսկ կանայք և հարսները վեց հոգի։ Հայ հարսներ էին դրանք...

Զգուշութեամբ յետ քաշուեց Դաւիթը և հասնելով իւր ընկերներին պատմեց տեսարանը ու նրանք երկուսի բաժանուելով մի խումբը կանգ

առաւ դռների մօտ, իսկ միւս խումբը ուժգին աքացի տուեց սենեակի դռանը և ահագին աղմուկ հանելով յանկարծակի վրայ ընկան արաբ զինուորների վրայ և սկսան իրանց սրերով նրբանց մէկը միւսի ետևից կոտորել ու երբ վերջացրին կոտորածը, Դաւիթը կանչեց.

—Փառք Աստուծոյ, հեռքն էլ չմնաց. այստեղ բաւականին պաշար կայ, որ շուտով բերդը պէտք է տեղափոխել, ասաց նա և որքան հնարաւոր էր վերցնելով պաշարը քաշուեցան բերդը։

Փոքրիկ արշաւանքներն էլ ոչինչ օգնութիւն չէին տալիս բերդականներին և Սմբատը յուսահատուած անձնատուր եղաւ Իւսուֆին, խօսք առնելով Իւսուֆից, որ իւր և բերդականների կեանքը խնայէ։

Իւսուֆը խոստացաւ և կապոյտ բերդը մի տարի պաշարում կրելուց յետոյ յանձնուեցաւ Իւսուֆին։ Իւսուֆը դրժեց իւր խօսքը և կարճ ժամանակից յետոյ Սմբատին շղթայեց, իսկ բերդականներից շատերին գերի տարաւ։

Գերի չմնաց միմեայն Դաւիթը իւր մի քանի ընկերներով, որ հայոց թագաւորին կորցնելուց յետոյ քաշուեց լեռները և օր աւուր սպասում էր արաբաց ժանտախտին՝ քաջ Աշոտ Երկաթին...

Ե.

Ինչպ ձիաւոր իրանց երեանները դէպի Վասպուրական դարձրած սրարշաւ առաջ էին գնում։ Քար ու քրտինքի մէջ կորած էին նրանց ձիերը, երևում էր, որ նրանք հեռու տեղից էին գալիս և ոչ մի տեղ դադար չէին տուել ձիերին, որոնք մարակների հարուածներից սպիտակած հազիւ հազ փոխում էին իրանց ոտքերը։ Ձիաւորները նկատում էին այդ, բայց կրկին անհամբերութեամբ քշում էին ձիերին։ Ձիաւորներից երկուսը գնում էին կողք կողքի, իսկ երեքը մի փոքր տարածութեամբ հետու հետևում էին նրանց թեթուած և տխուր դէմքով. դրանք առաջ գնացող երկու հայ նախարարների ծառաներն էին, որոնք երկար ճանապարհորդութիւնից յոգնած ոչ մի խօսք չէին արտասանում։ Լուռ էին նոյնպէս իշխանները, երկու եղբարք Գագիկ և Գուրգէն Արծրունիք, որոնք Իսուֆից խուսափելով փախչում էին իրանց աշխարհը՝ Վասպուրական։

Էլ չկարողացաւ դաւաճանութեան ամօթը տանել, այլ ևս կարեց Գագիկը Իսուֆից օգնութիւն և բարիքներ ստանալու յոյսը և իւր անձը շտապով ուզեցաւ ազատել այն բռնաւորից, որի ձեռքով վաղ թէ ուշ ինքն էլ պիտի մահանար հայոց միւս իշխանների նման։ Նրանք գոնէ պա-

տուով էին մեռնում, սուրը ձեռքին նահատակվում, առանց իրանց տոհմին ու անուանն արատ դնելու, իսկ ինքը ինչ էր անում... դաւաճանութեան և սուր մահանութեան կնիքը դնում էր իւր վրայ. հարկաւոր էր ուրիշ միջոցների ձեռնարկել, ուրիշ ճանապարհ ընտրել իւր նպատակին հասնելու համար, և նա Իսուֆից յոյսը կտրած, նրանից իւր կեանքի դէմ որոգայթներից վախեցած, իւր եղբայր Գուրգէնի հետ միասին արագութեամբ փախուստ էր տալիս դէպի Վասպուրական... Այնտեղ պէտք է բոյն դնել, կենդրոնանալ և այնտեղից դաւադրութիւններ լարել հայ իշխանների, հայոց թագաւորի դէմ և իւր սեպհական ոյժով հարթել իւր ճանապարհը...

Բայց քանի որ չէր մտել իւր երկրի սահմանները, նա դեռ երկիւղ էր կրում Իսուֆից...

Գագիկի դլխում այդ միջոցին սարսափելի փոթորիկ կար, որ տակն ու վրայ էր անում նրա մտածութիւնները։ Յանկարծ նրա դլխի մէջ վիթխարի լեռան նման կանգ էր առնում մի միտք, որ սարսռեցնում էր նրա մարմինը և փշաքաղում մազերը, նրա աչքերը դուրս էին թափվում, երեսը կարմրատակում էր, տաքութիւնը կրճատացնում և նրա մարմնով անցնում էր սառը դողը. իսկ երբ կորչում էր այդ միտքը, այն ժամանակ նրա գանգի ամբողջ ծաւալը բռնում էր մի ուրիշ միտք, որ այնպէս քաղցր, այնպէս դուրալի ազդեցութիւն էր գործում նրա վրայ, որ նրա ջղերը հանդարտվում էին, մահուան դողն անց-

նում էր, բարկութեան և սարսափի ներկը անյայտանում նրա երեսից և նրա դէմքի վրայ երևում էր մի տեսակ դառն, հեգնական ժպիտ... Ո՞ւմ դէմ էր այդ դառն ժպիտը արձակում այդ յայտնի չէր, միայն թէ այդ մտածելիս նրա հոգին ցնծում էր և նա աւելի շտապում էր շուտ հասնել Վասպուրական։

Ոչինչ նրա միտքը չէր գալիս, ոչ քաղցը և ոչ յոգնածութիւնը, նա ամենևին չէր էլ մտածում իւր եղբօր և ձիանների վրայ, որոնք բաւական տարածութեան վրայ յետ էին մնացել, իսկ ինքը միայնակ առաջ էր անցել... Երեկոյացել էր արդէն. մութը հետզհետէ սկսում էր պատել ամեն տեղ, երբ Գագիկը մտաւ մի նեղ ձոր, ուր քարերի վրայ թռչկոտալով վազում էր լեռնային վճիտ առուակը։ Գագիկի ձին տեսնելով ջուրը կանգ առաւ, խեղճ նժոյգը ծարաւ էր և սուված, նա ուզեց գոնէ իւր ծարաւը յագեցնել և ինչքան էլ որ Գագիկը քաշեց ձիու սանձը, որքան էլ մարակեց նրան, նա տեղից չշարժուեց։ Այդ ժամանակ Գագիկը յետ նայեց և իւր ձիաւորներին պարեց, բայց նրանցից ոչ մէկը չկար։ Նա ինչ որ մրմնջաց քթի տակ և իջաւ ձիուց։ Նա քաշեց ձիուն մի կողմը և սկսեց շոյել նրա ճակատը, բայց յոգնած երիվարը ուշք չէր դարձնում նրա շոյմունքին և ագահութեամբ պրճկում էր թարմ խոտը։

— Խեղճ ձիս, դու սովել ես, իրաւունք ունես այս թարմ խոտը վայելելու, մինչև որ մօտակայ գիւղից քեզ համար գարի կըբերեն, ես էլ եմ սոված, ինաս չկայ, պէտք է համբերել, ամեն նեղութիւն տանել, ասում էր Գագիկը իւր ձիու հետ խօսելով և սպասելով իւր եղբօրը և ծառաներին, բայց որոնք դեռ չկային. ինչպէս երևում է շատ յետ էին մնացել։

— Է՜... ինչ եղան անպիտանները և ինչու նրանք այսչափ յետ մնացին, ինչ պատահեց նրանց հետ։ Գուրգէնն էլ չկայ, այն ինչ հետզհետէ մութը պատում է և հարկաւոր է վաղօրօք գիւղ հասնել, հանգստացնել մեր ձիերին։ Փոքր ժամանակից յետոյ հասան նրան և մնացած ձիաւորները։

— Մենք մեռանք, իշխան, ասաց Գուրգէնը, մեր ձիերի մէջ էլ ոյժ չի մնացել, մի քանի քայլ անելուց յետոյ նրանք կ'ընկնեն և էլ չեն վերկենայ։

— Չա՛, բաւական տարածութիւն անցանք, մենք արդէն մօտենում ենք մեր երկրի սահմաններին, մի քանի քայլ և ահա առաջներիս թմբի տակ հայոց գիւղ կայ, այդտեղ գիշերս կըմնանք, լաւ ընթրիք կ'անենք և վաղ առաւօտ կրկին ճանապարհ կ'ընկնենք։

— Սովը սպանում է ինձ, ամբողջ օր է նշխարհք չենք դրել բերաններս։

— Դէհ, քայլեցէք գնանք, ժամանակ մի կորցնէք, ասաց Գագիկը և ամեն մարդ իջնելով ձիուց, սանձերը ձեռքերն առան և սկսեցին ոտքով քայլել և երբ բարձրացան ձորից, նրանց երևեցաւ

մի գիւղ, որ աւելի աւերակի էր նմանում քան բնակութեան տեղի։

Երբ մտան գիւղը այն ժամանակ մութը արդէն խառացած էր և գիշերը իւր սեւաթոյր թեւերը տարածել էր ամեն տեղ։

Ամայութիւնը և մեռելութիւնը տիրում էր ամբողջ գիւղին, կարծես ոչ մի կենդանի արարած չկար այդտեղ և կարծես հէնց նոր մահաբեր փոթորիկը անցել էր այդ գիւղի վրայով և ամեն ինչ խորտակելով, ոչնչացնելով մահացրել էր նրա բնակիչներին... Երբ մեր ձիաւորները ներս մտան գիւղը, սառը ամայութեան դող պատեց նրանց մարմիններին և նրանք չիմացան թէ ինչ անեն և որ աւերակ դառնը լինեն։ Ոչ մի կենդանի շունչ չդիմաւորեց դրանց։

Անցան աւերակ և ամայի մի քանի տների մօտով և հեռուում նրանց երևեցաւ ճրագի աղօտ լուսաւորութիւն, որը նրանց հոգի տուեց։ Նրանք անմիջապէս դէպի լոյսը դիմեցին և Գագիկը առաջինը մտաւ ներս, ուր կանթեղի աղօտ լուսաւորութեան տակ, հին չուլի վրայ նստած էր մի ծերունի։ Նա այնքան խորասուզուած էր իւր մտքի մէջ, որ չնկատեց անգամ Գագիկի ներս մտնելը, որ հեառքրքրութեամբ դիտում էր նրան։

—Բարի երեկոյ, հայրիկ, ասաց Գագիկը խրոխտ ձայնով։

Ծերունին սթափուեցաւ և իւր մեռելային անշարժ աչքերը դարձնելով դէպի Գագիկը, տեսաւ իւր առաջ զինուորուած մի մարդ կանգնած,

որ ըստ երևոյթին վատ տպաւորութիւն թողեց նրա վրայ։ Նա բարձրացրեց իւր ձեռնափայտը, որի վրայ յենուած էր և կարծես թէ ուզում էր խփել Գագիկին, բայց դողդոջուն ու թուլացած ձեռքերը չպահեցին փայտը և նա ընկաւ գետին, իսկ ծերուկը անշարժ և սարսափահար աչքերով նայում էր Գագիկին և երկիւղից դողում։ Խեղճ ծերուկ, նա դողում էր իւր կեանքի համար, այն թշուառ կեանքի, որի ողորմելի մնացորդները մնացել էին նրա մաշուած ու թալկացած մարմնի մէջ...

Գագիկը հասկացաւ նրան։

—Մի վախիր, ծերուկ, մենք թշնամիներ չենք։

Ծերուկը թշնամի բառը լսելով աւելի կուչ եկաւ և յետ ու յետ գնալով կանգ առաւ անկիւնում, որտեղից իւր անշարժ հայեացքով կրկին նայում էր Գագիկին և իւր ուղեկիցներին, որոնք նոր էին ներս եկել։

—Մի վախիր, ծերուկ, մենք քեզ վնաս չենք տալ, մենք միայն օթևան ենք ուզում, կրկնեց Գագիկը մօտենալով ծերուկին։

Բայց ծերուկը ըստ երևոյթին ոչինչ չէր հասկանում և ոչինչ պատասխան չէր տալիս։

Երբոր Գագիկը տեսաւ թէ նրա բերանից ոչ մի բառ չի դուրս գալիս, նա դարձաւ դէպի իւր ձիաւորները։

—Ձիերը մի տեղ տեղաւորեցէք և պատրաստեցէք նրանց համար տեղ գտնել. իսկ մենք կը-

ինանք այս գիշեր այստեղ։ Ինչպէս երևում է Ծերուկը երկիւղից սարսափահար է եղել և մեզ էլ թշնամիների տեղ է դնում, բայց մենք շուտով սրա լեզուն կը բանանք։

Ծառաները ձիերը կապեցին, իսկ երկուսն սկսան գիւղի մէջ պատել ձիանների համար գարի կամ դարման գտնելու. երկար որոնելուց յետոյ վերատառնալով բաց արին իրանց խուրջինները, ուր ամեն տեսակ պաշարեղէն և գինի կար։

Գագիկն ու Գուրգէնը ագահաբար վրայ ընկան պաշարին ու գինուն, իսկ Ծերուկը ապուշի նման դեռ նայում էր նրանց, չհամարձակուելով տեղից շարժուելու։

—Հարկաւոր է գրաւել Ծերուկին և հարցուփորձ անել, ասաց Գուրգէնը։

—Անպատճառ պէտք է իմանալ թէ ինչ է պատահել այս գիւղի հետ, որը մի քանի ամիս առաջ այնպէս շէն վիճակի մէջ էր, պատասխանեց Գագիկը և գաւաթի մէջ գինի լցնելով դիմեց Ծերուկին։

—Ծերուկ, առ մի բաժակ գինի խմիր, սա քեզ կը զօրացնէ և քո փակ լեզուն կը բանայ։

Ծերուկի աչքերի մէջ մի փայլ երևեցաւ գինին տեսնելով, որ շատ շուտով հանգաւ, ըստ երևոյթին նա կասկածում էր մեր հիւրընկալնեբի վրայ, բայց երբ Գագիկը զօրով նրան բերեց

իրան մօտ նստացրեց, նա խմեց գինին, որը ցնցեց նրա ջղերը։

—Հ՛ը, ինչ է, դուր եկաւ, լաւն էր, առ դարձեալ խմիր, ասաց Գագիկը դարձեալ գինու գաւաթը մեկնելով նրան։ Ծերունին նորից դատարկեց և հետզհետէ նրա լեզուն բացուեցաւ, որից Գագիկն իմացաւ, որ մի շաբաթ առաջ Իւսուֆի հրոսակները ներս խուժելով գիւղը աւերակ էին դարձրել նրան, իսկ բնակիչներից շատերին գերի էին տարել և շատերին էլ կոտորել։ Մնացել էր ամբողջ գիւղում ինքը, այդ Ծերուկը, ինչպէս գիւղի միակ կենդանի վկան...

Ծերունին սկսեց մանրամասնութիւնները պատմել. այն ինչ Գագիկն ու Գուրգէնը յոգնածութեանը չդանելով, տեղն ու տեղը մեկնուել էին և թունդ քրմփացնում էին։

Արշալոյսը բացուելուն պէս հինգ ձիաւորները կրկին ճանապարհները շարունակեցին թողնելով Ծերունուն նոյն անշարժ և պաղ դրութեան մէջ, ինչպէս պատահել էին իրանք...

2.

Եպաղոյտ բերդի յանձնուելուց յետոյ մի տարի էլ անցաւ։ Կրկին կանաչեցան դաշտերն ու ձորերը, կրկին կենդանութիւն ստացաւ բնութիւնը, լսուեցան թռչունների անուշ ճուողոնը, մեղմացաւ օդը, հալուեց

ձիւնն ու սառոյցը և առուակները ուրախ կրկնչոցով վազեցին առաջ. բայց ինչ վիճակի մէջ էր Հայաստանը։ Իւսուֆը Սմբատին մի տարի Դուինի մութ ու խոնաւ բանտումը բանտարկելուց յետոյ, նորից դուրս եկաւ Դուինից իւր հրոսակներով և այժմ կանգնած էր Երնջակի *) բերդի պարիսպների տակ, չորս կողմը սփռելով ամայութիւն և կատորած։

Գարնանային արևը ժպտում էր ուրախ, այն ինչ Իւսուֆի վրանի առաջ, ճիշտ Երնջակի մէջ պաշարուած կորիճ հայերի ներկայութեան, հեռաւոր տեսարանն էր կատարվում։

Մի խումբ պինուորների, դահիճների և Իւսուֆի իշխանների առաջ կանգնած էր մի մարդ դժգոյն և մեռելային դէմքով։ Գլխաբաց և ոտաբոբիկ, պատառոտուն, հին, մաշուած շորերը հագին ծածկում էին նրա մերկ մարմինը, իսկ տեղ տեղ երևացող մարմինը կապտացած և ուռուցրուած էր։ Գլխի երկար մազերը ոլորուած էին ալիքներով, իսկ թաւ մօրուսը անկարգ ծածկում էր նրա երեսը։ Հասակը բարձր էր և վիթխարի, այն ինչ նիհարութիւնն այն աստիճան էր հասած, որ կարելի էր նրան կմաղքի տեղ դնել,

*) Երնջակի բերդը գտնվում է Սիւնիքում, որ շինել է Երնջիկ անունով մի կին և այնուհետև իւր անունով կոչել թէ գաւառը և թէ բերդը։ Այժմ այս բերդը կոչվում է Ալինճապալէսի, որ սահմանակից է Գողթն գաւառին։

Ինքնին 253։

ևթէ չլինէին երկու վայրուն աչքերը, որոնք անհուն երանութեամբ էին լցուած։ Ո՞վ էր դա, որ սաժանելի վիշտը, անտանելի հոգսերը աւերել էին նրա յաղթանդամ մարմինը և միմիայն անփոփոխ թողել աչքերը, որոնք մինչև օրս վայրում էին այնպէս սիրուն, այնպէս անվրդով, որ կարծես մարմնական բոլոր վշտերն ու հոգսերը, դառն կսկիծը և թշնամիների արհամարանքը կապ չունենային նրա հետ...

Ի՞նչ աչքեր էին դրանք, որոնք տեսնում էին թշնամիների նախատինքը, նրանց ծաղրն ու ծանակը և այնպէս անվրդով, այնպէս անխռով ու հանգիստ տանում էին արհամարելով այն, ինչ որ աշխարհային էր և անցաւոր։

Իւսուֆի կալանաւորներից էր այդ մարդը, որի դէմ վատուել էր նրա տեսութիւնը, որին ուզում էր չարաչար տանջանքներով սպանել՝ ի տես այն յամառ հայ պաշարուածների, որոնցից չկարողանալով վրէժ առնել, իւր բարկութիւնը մի մարդուց էր ուզում առնել, որ անզէն և անմեղանչ կանգնած էր իւր առաջ և իւր բոլոր տանջանքները տանում էր գերմարդկային դիմացկութեամբ։

Հայոց թագաւոր Սմբատն էր այդ նահատակը... Դահիճները մէկ մէկ մօտենում էին նրան, ծածկում նրա գլխին մի հին, կտրատուած և անպէտք կտակարանք, թքում էին երեսին և ծաղրելով, ծունկ էին չոքում նրա առաջ և կանչում։

—Ողջոյն քեզ, հայոց թագաւոր։

Ապա երկաթէ գաւազաններով և խարազաններով խփում էին նրան, որից յետոյ կապտացած մարմնից ծոր ծոր դուրս էր բղխում արիւնը և կաթիլ կաթիլ ընկնում հողի վրայ։ Հողը կուլ էր տալիս արեան կաթիլները իբրև սուրբ աւանդ Սմբատ արքայից։ Նահատակուողը լուռ էր և անմռունչ. հառաչանքի և ոչ մի ձայն չէր լսւում նրա կրծքից և սոսկալի հարուածներից առաջացած ցաւից չէր ցնցվում նրա դէմքի և՛ ոչ մի մկանունքը։

Տեսնում էին անհաւատներն այդ անվերջանալի թիւնը և տանջանք տանջանքի վրայ աւելացնում, որպէս զի նա ուրանայ Լուսաւորչի հաւատը և ընդունի Իսլամի կրօնը։ Բայց անհուն տոկունութեամբ նա տանում էր ամեն տանջանք։

Նրանցից մէկը, առնելով թագաւորի թաշկինակը, կոխեց նրա բերանը և ապա վերցնելով ճիպոտներից մէկը սկսեց այդ ճիպոտով ներս կոխել թաշկինակը դէպի երանելու որկորը, որպէս զի կարուէ նրա շունչը. բայց Սմբատ թագաւորը դեռ շնչում էր ծանր և մահաբեր շնչով և իւր մաքում աղօթք մրմնջում։ Այդպիսով էլ չբաւականանալով՝ նրա վզով անցկացրին գելարանը *), ծանր բեռը դրին նրա գլխի վրայ և տասը դահիճներ սկսեցին նրան ինչպէս մի քար շարժել աջ ու ձախ։ Այդ էլ արին, բայց նա դեռ շնչում էր, դեռ ապրում էր, կեանքի թելը դեռ չէր

*) Գելարանը տանջանքի գործիք է։ Ծ. Հ.

կտրուել և տանջանքների բոլորն դեռ չէր անցել։

Տեսան անհաւատները, որ դեռ կենդանութեան նշոյլ կայ նրա մէջ և զազանական վրէժխնդրութեամբ լի, չեռացրին երկաթը կրակի վրայ, մինչև որ նա ստացաւ սպիտակ արծաթի գոյն և այն ժամանակ մօտեցնելով նրա մարմնի զանազան տեղերին սկսեցին աւելացնել նրա տանջանքները...**)։

Խեղդող ճնճղերային հոտը տարածուեցաւ ամեն կողմը, թանձր ծխի գոլորշիները դուրս էին ժայթքում Սմբատ թագաւորի մարմնի այն տեղերից, ուր կպչում էր տաքացրած սոսկալի ունելիքը։

Սոսկումը և զարհուրանքը պատում էր նայողին, բայց դահիճներն աւելի խորը, մսի մէջ էին ընկղմում շիկացած երկաթը...

Վերջին անգամ բացեց Սմբատ թագաւորը իւր Աստուածային լոյսով լցուած աչքերը, վերջին ճնաս բարեւն ասաց հայրենիքին և վերջին շունչը պիտի փչէր, երբ Դահիճը կտրեց նրա գլուխը...

Բարկութեան փրփուրը բերանին Իւսուֆը հրամայեց նրա դիակը Դուին տանել և՝ ի նախատինք քրիստոնեաների խաչել Քրիստոսի նման... Անկուշտ գազանը նրա արիւնից չէր կշտացել, նրա դիակն էլ էր ուզում անպատուել։

**) Ջամչեան, երես 757։

Ը.

Գէս գիշեր էր...

Երկրիս վրայ սիրում էր խորին խաւարը: Ոչ մի շշուկ, ոչ մի ձայն չէր լսանում գարուն մեռելային լռութիւնը, երբ հեռուից Դուինի*) քաղաքը տանող ճանապարհի վրայ երեւեցան երկու ձիաւոր:

Նեռի արագութեամբ դրանք առաջ էին սլանում դէպի Դուին, ուր նստած էր Իւսուֆը: Սառը գիշերային քամին փրփուացնում էր նրան, փեշերը և ձիաների ոտքերի տակից բարձրանում էր թանձր փոշի: Գիշերային խաւարի մէջ երկու

*) Ըստ Խորենացու Դուին քաղաքի Ագատ գետի վրայ հիմնարկողը եղել է Խոսրով Բ. 350 թ. ք. յետոյ որից յետոյ մայրաքաղաք դարձաւ մէկ թագաւորների և մէկ ոստիկանների: Մինչև 924 թիւը այդտեղ էր և հայոց կաթող. աթոռը: Դուին խօսքը պարսկերէն է և նշանակում է բլուր: Դուինի իսկական տեղը դեռ յայտնի չէ և վիճելի է: Պէտք է ենթադրել, որ դա այժմ մի չնչին գիւղ է, որ գտնվում է Երևան քաղաքից դէպի հարաւ արևելք:

Հիւս. Գ. գիրք Կ. Կոստանեանցի 146—148:

Դուինը միշտ ենթակայ է եղել երկրաշարժների, որից և հ. Ինճիճեանը ենթադրում է, որ կործանուած լինի բոլորովին: Դուինի տեղը այժմ որոշում է մի ձորի մէջ, որ լի է աւերակներով. ուստի սա չէ ընդունում թէ դրա տեղը այժմ գիւղ լինի:

Ինճիճեան 469:

վիթխարի հսկաների էին նմանում դրանք, որոնք արշաւելով Դուինի վրայ, կարծես ուզում էին մի ակնթարթում ոչնչացնել, լափել և հիմնայատակ անել Դուինը:

Վիթխարի հասակ ունէր ձիաւորներից մէկը, որ միւսից մի քանի քայլ առաջ էր սլանում. լայն թիկունքը, հասա և հուժկու բազուկները մի ամբողջ բանակ կարող էին ոչնչացնել: Թաւ սև մօրուսը պատել էր նրա դէմքը, իսկ երկու հրայայտ աչքերը փայլում էին գիշերային խաւարի մէջ ինչպէս երկու հրաբուխներ: Բարկութեան և վրէժխնդրութեան կատաղի կրակով լցուած էին այդ աչքերը, որոնք նայողին ինչպէս մոմ էին հալեցնում:

Անհագին ծանրութեան սուրը կախուած էր նրա մէջքին, իսկ ծանր սաղաւարտը փայլում էր նրա գլխին գիշերային խաւարի մէջ: Պակաս չէր մարմնի կազմուածքով և միւս ձիաւորը, բայց նա չէր կարող համեմատուել իւր ուժով առաջնի հետ: Նա էլ սուր ունէր մէջքին և երկայն նիզակը ձեռքին անդադար խփում էր իւր ձիուն, որ եւս չմնայ առաջին ձիաւորից, որ իւր տէրն էր:

Կարճ ժամանակ անցաւ և նրանք մօտեցան Դուին քաղաքին, ուր սիրում էր նոյնպէս մեռելային անշարժութիւնը, հեռում միայն երեւում էր Իւսուֆի պալատը և հայոց կաթողիկոսարանը: Նրանք մօտեցան Դուինին: Այդ ժամանակ մի քանի շուն սկսեցին հաչել ձիաւորների վրայ, որոնք մի փոքր էլ առաջ գնալով իջան

ձիերից և նրանց դէպի ձորը տանելով կապեցին այնտեղ, իսկ իրանք սկսան ոտքով քաղաք մտնել։

—Դու լաւ ես յիշում տեղը, հարցրեց առաջին ձիաւորը մեզ ծանօթ Դաւթին, երբ նրանք մտան լուռ փողոցները։

—Ինչպէս ցերեկուայ լոյսը, պատասխանեց Դաւիթը։

—Իսկ համոզուա՞ծ ես, որ լոյսն ամեն գիշեր լինում էր նրա խաչուած տեղը։

—Տէր, ես ինքս աչքովս եմ տեսել։ Ի՞նչպէս կարելի է չհաւատալ։

—Դէհ, ուրեմն առաջ քայլիր և ցոյց տուր տեղը։

Դաւիթը առաջ անցաւ և մի քանի լուռ փողոցներ անցնելուց յետոյ կանգ առան հայոց կաթուղիկոսարանի առաջ մի հրապարակի վրայ։

—Ահա այստեղ էր խաչուած հայոց թագաւոր Սմբատը, այստեղ ահա անարգում էին նրա դիակը այդ անօրէնները։

—Լաւ ընտրութիւն է. ճիշտ հայոց կաթողիկոսարանի դիմաց, ասաց Դաւթի տէրը և խոր, շատ խոր հոգոց հանեց։

—Իսկ ո՞ւր է լոյսը*), ինչո՞ւ նա չկայ։

---

*) Աւանդութիւն կայ որ Սմբատ արքայի խաչուած տեղը գիշերները լոյս է լինելիս եղել, որ շատ շատերը տեսել են թէ քրիստոնեաներից և թէ անհաւատներից։

Յովհ. կաթ. Դրասխանակերտցի, երես 131։

—Կը լինի, գուցէ դեռ վաղ է. երկնքից լոյսն իջնում էր առ հասարակ կէս գիշերից անց։

—Լաւ ուրեմն, սպասենք։

—Բայց տես, տէր իմ, ահա լոյսն իջնում է երկնքից. տեսնո՞ւմ ես. ճիշտ մեր գլխին մի տեսակ աղօտ լուսաւորութիւն է երևում, չի անցնի կարճ ժամանակ և դու կը տեսնես հրաշքը, ասաց Դաւիթը և նայեց վեր, դէպի աստեղազարդ երկինքը, ուր, յիրաւի, իրանց գլխի վրայ, այնտեղ, ուր բևեռել էր Իւսուֆը Սմբատին, երեւում էր մի աղօտ լոյս, որ հետզհետէ ընդարձակվում և պսակի կերպարանք էր առնում։

Դաւթի տէրը ծունկ չոքեց և ձեռքերը կրծքին դրեց. նա անթարթ աչքերով սկսեց նայել լոյսին և նրա սիրտը սկսեց դողալ, այն սիրտը, որ չէր դողալ, եթէ Իւսուֆի ամբողջ բանակը իւր վրայ գար։

Պսակը հետզհետէ իջնում էր ցած, գալարվում, թռիչքներ անում վերև ու ներքև և կրկին կանգ առնում։

Յանկարծ Դաւթի տէրը, այն յաղթանդամ հսկան սառսռեցաւ, նրա մարմնով անցաւ մի այնպիսի դող որ քիչ մնաց նրա արիւնը սառեցնէր երակների մէջ և ցնդէր ուղեղը։

Նա տեսաւ իւր առաջ Սմբատ հայոց թագաւորին, որ իւր գունատ և թալկացած աչքերով նայում էր նրան։

Աղաչանքի և աղերսանքի հայեացք էր այդ

հայեացքը, որ ուղղուած էր դէպի իշխանը, որ ապուշ կրթած նայում էր նրան։

Այդ թալկացած և աղերսող աչքերի եաև կարծես թագնուած լինէր վրէժխնդրութեան և ատելութեան սարսափելի բոցը, որ դէպի հուր ու մոխիր էր քաջալերում։

Այդ բոցը հալում էր իշխանին, նրա դէմքի մկանունքները ցնցւում էին, երեսին պատում էր մեռելային գունատութիւնն, այն ինչ նա իւր աչքերով կլանում էր Սմբատ արքայի սուրերի իւրաքանչիւր շարժողութիւնը, նրա դէմքի ամեն մի դիծը, աչքերի թափանցող հայեացքը, որ վիշտ և զարհուրանք էր պարունակում իւր մէջ...

Սուրերի հոգեկան այդ բուռն զգացմունքը շատ խոր թափանցում էր իշխանի սրտում և այնտեղ իւր աւերմունքն անում, իւր խոր, անջնջելի հետքերը թողնում։ Սոսկալի էին այդ հետքերը, զարհուրելի նրա աւերմունքը։

Եռուն կեանքով լի, անյաղթելի ուժի տէր մարդու մարմնով կարծես բիւրաւոր մրջիւններ էին վազում, որոնք վշաքաղում էին նրա մարմինը. նա հեզհեզ կարծես սառչում էր, դադարում էր կենդանական շարժողութիւնը, դիտակցութիւնը լռում էր և դառնում որպէս կենդանի արձան։ Ի՞նչ դրութեան մէջ էր նրա հոգին, ո՛ւր և ո՞րտեղ էր սուսուռնում— յայտնի չէր, միայն թէ նա տանջվում էր, այդ երևում էր նրա դժգոյն, մեռելային դէմքից, ուր շարուել էին արտասուքի խոշոր բայց սառն կաթիլներ...

Աշխարհս գոյութիւն չունէր նրա համար և ինքը իւր ամբողջ էութեամբ ամփոփուած էր սուրերի աչքերի մէջ, այդ էր այդ րոպէին նրա աշխարհը, որ մեծ էր քան տիեզերքը, ահարկու և սոսկալի քան դժոխքը։ Նա հասկանում էր այդ աշխարհը, նա ճանաչում էր այդ աշխարհի հոգեկան վիշտը— և սուսուռում... Նայեց նա սուրերին, նայեց և յանկարծ խուլ, գերեզմանական ձայնով ասաց.

—Երդվում եմ, հայր, որ ոչ մի բարբարոս չթողնեմ Հայաստանում և քո վրէժը սանձապատիկ առնեմ Իսուֆի հրոսակներից։

Այդ միջոցին սուրերը ժպտաց, ուրախացաւ, մի տեսակ անհուն երանութիւն անցաւ նրա գունատ դէմքի վրայ. ապա երերաց, ցնցուեց, հեռըզհետէ նոսրացաւ, լուծուեց օդի մէջ և պսակի հետ չքացաւ...

Տերեց կրկին խորին խաւարը։

Վեր կացաւ իշխանը և վրէժխնդրութեամբ լի աչքերը չորս կողմը շրջեցնելով մի ահռելիսի մռնչիւն արձակեց, կարծես սար ու ձոր դողացին։

Այդ միջոցին շտապով մօտեցաւ իշխանին Դաւիթը և ասաց նորան.

—Տէր, հինգ թէ վեց հոգի Իսուֆի զինուորներից դէպի մեզ են գալիս, եթէ մեզ ճանաչեն, կռիւն անխուսափելի է։

—Թող դան։ Այդ շներին բոլորին էլ պէտք է կոտորած։

—Բայց, տէր իմ, նրանք կարող են ազմուկ հանել...

Վեց հոգուց բաղկացած խումբը մօտեցաւ նրանց և Դաւթի տերը յանկարծակի մէկին այնպիսի աքացի տուեց, որ դիպչելով միւսին, երկուսն էլ վայր գլորուեցան։ Միւսները նկատելով այդ սրերը մերկացրին։

Հսկան ժպտաց և աներկիւղ մօտենալով նրանց, նրանցից երկուսին բռունցքով այնպիսի հարուած տուեց, որ սրերը երեք գազ ու կէս այն կողմը շպրտուելով իրանք անշունչ վայր ընկան իրանց ընկերների մօտ։

Ամբից մի հոգու գլուխը Դաւթին էր կըտրում, իսկ մէկը սարսափից վախուստ էր ուզում տալ, երբ հսկան բռնելով նրան տապալեց գետին և ապա հուպ տալով որկորին գոռաց խրոխտաձայն։

—Անհաւատ շուն, քեզ կենդանի եմ թողնում, որ համբաւ տանես Իսուֆին, թէ Աշոտ Երկաթ Շահնշահ՝ Ամբատի անդրանիկը, սուրբ վրէժխնդրութեան հոգով զինուած, պիտի հալածէ Իսուֆին և նրա հրոսակներին։ Կարճ ժամանակ չի անցնի և դրանց հետքը չը պիտի գտնուի Հայաստանի մէջ։

Այդ ժամանակ զինուորը Աշոտի մատների ճնշումից խրխռացնում էր և մօտ էր խեղդուելու։

—Հը՛, սատակում ես, ինչ է, ուր գնաց ձեր քաջութիւնը, որ մի մատի այժին էլ չէք դիմանում, ասաց Աշոտը, Ամբատ նահատակի որդին, և մի աքացի տալով նրան, դիմեց Դաւթին։

—Դէհ, ժամանակ է գնալու, շուտով արշալոյսը կը բացուի, հասաւ վրէժխնդրութեան ժամանակը, անօրէնների հետքն անգամ չպէտք է թողնել, ասաց նա և ապա հեծնելով իրանց ձիերի վրայ, երեսները շուռ տուին դէպի Բագրեւանդ և գիշերային մթութեան մէջ սլացան առաջ...

Ը.

Այժմ մի փոքր կանգ առնենք և տեսնենք թէ ինչ դրութեան մէջ էր Հայաստանը Ամբատ արքայի նահատակուելուց յետոյ և ուր էր Աշոտ Երկաթը։

Արաբաց տիրապետութեան ժամանակ Հայաստանի մէջ գտնւում էին բազմաթիւ մեծ և փոքր իշխանական ցեղեր, որոնցից չորսը ձգտում էին առաջնակարգ դեր խաղալ Հայաստանի մէջ։ Այդ մեծ իշխանական ցեղերն էին՝ Արծրունիք, Սիւնիք, Մամիկոնեանք և Բագրատունիք։ Սրանցից երկու առաջինները արդէն վաղուց ձգտում էին հայոց թագաւորութեան հասնելուն, բայց իրանց ներելի և աններելի դիմած մի շարք յանցանքներով աւելի գործը փչացրին և իրանց ցանկացած նպատակին չը հասան։ Մամիկոնեանք թէև նորագոյն

եկամուտ նախարարութիւն էին կազմում, բայց նրանց նպատակն էր լոկ ազգին ծառայելը, ամենից վեր դասելով ազգութեան շահերը քան թէ ձգտումը դէպի թագաւորութիւնը և այդ է պատճառը որ սրանք թէև ընդհանուր սպարապետի պաշտօններ էին կատարում և այժը իրանց ձեռքին էր, բայց չօգտուեցան այդ այժից և հետզհետէ, իններորդ դարի կէսին, կորուեց նրանց շառաւիղը Գրիգոր Մամիկոնեանի մահուամբ։

Բագրատունեանց տոհմը, որ հանդէս եկաւ Պարթևաց օրով և թագադիր ասպետութեան պաշտօնն ունէին, հետզհետէ առաջնակարգ դեր էին կատարում հայոց մէջ։ Սրանց միջից դուրս եկան քաջ և իմաստուն զօրավարներ, որոնք Բագրատունեաց անունը փառաւորեցին։ Իսկ իններորդ դարի վերջերին արդէն յաջողեցաւ թագաւորի տիտղոս առնել (885 թ.)։

Հայոց բնաւորութեան համեմատ, հէնց որ Բագրատունիք ձեռք բերին թագաւորական տիտղոսը, միւս նախարարներն էլ թէ մեծ թէ փոքր սկսեցին գլուխ բարձրացնել և ձգտել դէպի անկախութիւնը։

Արծրունիք առաջինն եղան, որ Գագիկ Արծրունու ջանքերով ձեռք բերին և կազմեցին Վասպուրականի մէջ անկախ տէրութիւն (908 թ.)։ Դրանից վաթսուն տարի յետոյ քայքայուեց նաև Բագրատունեաց տէրութիւնը, որ գտնվում էր Արարատեան երկրում և Վանանդ երկրում կազմեցին առանձին թագաւորութիւն կարս մայրաքաղաքով, այն ինչ այդ միջոցներին քայքայուեցաւ նաև Վասպուրականի տէրութիւնը կազմելով Ռշտունեաց և Անձեացեաց անկախ տէրութիւնները և ապա հետզհետէ Սիւնեաց, Բագրատունեաց, կիւրիկեան թագաւորութիւնը Լոռւոյ մէջ և բազմաթիւ մանր մունր իշխանութիւններ, որոնցից ամեն մէկը ուզում էր անկախ լինել և առանձին տէրութիւն կազմել։ Անմիաբանութեան և խռովութեան հոգին բուռն կերպով տիրապետում էր հայերի մէջ։ Յոյները և արաբները դրա որոշները միայն ցանել էին հայերի մէջ, որ այդպէս առատ հունձ էր տալիս հայերի մէջ, քայքայելով իրանց ոյժերը և մէկ իշխան միւսի դէմ յարուցանելով...

Բագրատունեաց առաջին թագաւորը եղաւ Աշոտ Ա. որի մահուանից յետոյ թագաւորական գահը բարձրացաւ Սմբատը, որը երեք որդի ունէր Աշոտ, Մուշեղ և Աբաս։ Սմբատի գլխաւոր ջանքը լինում է անկախ մանր տէրութիւնները միացնել իրար հետ, բայց այդ չէ յաջողվում իրան, որովհետև չարանենգ Իւսուֆը, կասկածելով Սմբատի հաւատարմութեան վրայ և նրա ուժեղանալուց վախենալով հետամուտ է լինում բռնելու նրան, բայց Սմբատը իր որդիներով դիմադրում է Իւսուֆին։ Սմբատի անդրանիկ որդին՝ Աշոտը և Մուշեղը նիզակաւոում ճակատամարտում են Իւսուֆի զինուորների դէմ, ուր յաղթուելով Մուշեղը գերի է ընկնում և տարուե-

լով Դուին մահացու դեղով սպանվում է և ապա թաղվում Բագարանում*)։

Այնուհետև Սմբատ արքան կապոյտ բերդում անձնատուր լինելուց յետոյ նրա երկու որդիքը՝ Աշոտը և Սբասը փախչում են Հայաստանից Իւսուֆի վրէժխնդրութիւնից վախենալով, որոնցից առաջինը գնում է Կոստանդնուպոլիս Յունաց Լևոն կայսեր մօտ, իսկ երկրորդը գնում է Վրաստան և փեսայանում վրաց թագաւորին**)։

Աշոտը, որ իւր քաջապինդ արիութեան համար երկաթ մականունն ստացաւ, որ իւր մատներով կարողանում էր երկաթը ոլորել և գարմացնել բոլորին, իւր հօր մահից յետոյ Լևոն կայսեր հրամանով դառնում է Հայաստան, առնուանում իրան շահընշահ. այսինքն թագաւորաց թագաւոր, և հալածում արաբացիներին ***)։

Ահա այս դրութեան մէջ էր Հայաստանը, երբ երևաց Աշոտ երկաթը։

Թ.

Ագրևանդ****) գաւառում, այնտեղ, ուր սկիզբն է առնում Եփրատի մի վտակը և ուր Գրիգոր Լուսաւորիչը մկրտեց Տրդատ թա-

*) Յով. կաթ. երես 122։

**) Ասողիկ Տարօնեցի գ. հանդէս գլուխ գ. երես 165։

***) Նոյն գլուխ գ. երես 169։

****) Այժմեան Ալաշկերտի գաւառը։

գաւորին և հայերին, Նպատ լերան լանջի վրայ բարձրանում էր մի մենաստան, որ իններորդ դարի վերջին ծաղկած և փարթամ դրութեան մէջ էր գտնվում։ Այդ մենաստանը, որի մէջ քառասունից աւելի կրօնաւորներ էին գտնվում, կրում էր սուրբ Գրիգոր անունը, ուր հայկական նախնական սովորութեան համեմատ ամեն մի ճանապարհորդ հասնելով այդ տեղ, յոգնած և բեզարած կանգ էր առնում և ընդունում էր վանականների լիառատ հիւրընկալութիւնը։

Դեռ շատ հին դարերում, երբ հայերի մէջ չէր մտել քրիստոնէութիւնը, երբ պաշտում էին նրանք չաստուածներին, այդ մենաստանը կրկին գոյութիւն ունէր և ծառայում էր իբրև հիւրընկալութեան կենդրոն, միայն թէ այն ժամանակ չէր կրում այդ անունը, այլ դա կոչվում էր Բագաւան, Բագնայ աւան և կամ Դից աւան։ Բագաւանը այդ ժամանակ մեծ դեր էր կատարում հայոց մէջ։ Այդ տեղ էր գտնվում քրմապետ Մաժանի և նրա եղբօր Տիգրանի գերեզմանները, ուր գտնվում էր նաև Վանատրի հիւրընկալութեան և ամանորաբեր նոր պտղոց չաստծու բագինը։ Այդ բագինը, Խորենացու ասելով, շինել էր վերջին Տիգրան հայոց թագաւորը, որ իւր քրմապետ եղբօր՝ Մաժանի գերեզմանի վրայ, կամայեց բագին շինել, որ դրանց մատուցած պոհերից օգտուին ամեն ճանապարհորդ և հիւրեր և ապա վաղարշ թագաւորը նաւասարդի առաջին օրը աշխարհախռամբ տօն կարգեց այդ բագնին։

Անցաւ ժամանակ. քրիստոնէութիւնը մուտ գործեց Հայաստանում և սուրբ Գրիգոր Լուսաւորիչը վերցնելով այդ կուռքը, դրա տեղ Քրիստոսի յաղթական խաչը տնկեց, բերելով այդտեղ սրբոյն Յովհաննու և Աթանագինէի նշխարները։

Բայց որովհետև նաւասարդի առաջին օրը մեծ հանդէսով տօնվում էր այդ տօնը, երբ միևնոյն ժամանակ տօնվում էր նոր պտուղների, բերրիութեան տօնը, այդ պատճառով, նոյն իսկ այդ օրը, Գրիգոր Լուսաւորիչը նշանակեց սուրբ Յովհաննու Մկրտչի և Քրիստոսի վկայի Աթանագինէի տօն. այդպիսով հետզհետէ մոռացութեան տրուեցան հին կռապաշտական տօնախմբութիւնները և տեղի տրուեցան քրիստոնէական տօներին։

Այդ իսկ մենաստանում*), ինչպէս ասացինք, իններորդ դարու վերջերին, ապրում էին քառասնից աւելի վանական իսկ տասներորդ դարի սկզբներին հազիւ մնացել էին մի քանի վանա-

*) Արածանի գետի վրայ Նպատ սարի հիւսիսային սառրոտում կայ այժմ մի մեծ եկեղեցի Ուչքիլիսէ անունով, որ շինուած է է. դարում. այդ եկեղեցին կամ մենաստանը այնտեղն է, ուր եղել է հին ժամանակներում Մաժան քրմապետի գերեզմանը և վանատրի մեհեանը, որոնց կործանելով Գրիգոր Լուսաւորիչը մատուռ շինեց և Յովաննու Մկրտչի մասունքներն ամփոփեց. այս պատճառով Ուչքիլիսէն կոչվում է և Բագրեւանդայ սուրբ Յովաննէս և մինչև հիմա էլ մեծ ուխտատեղի է։

*հմմտ. Կ. Պոստանեանի 19—92.

կան և նա զրկուել էր իւր զարդարանքներից, ոսկուց և արծաթից։

Իւսուֆի հրոսակները մտնելով Բագրեւանդայ գաւառը, ամեն ինչ տակն ու վրայ էին արել. չխնայելով անգամ այդ մենաստանին, ուր ամեն ինչ յափշտակելով, սրի էին անցկացրել քառասնից աւելի վանականներ, իսկ մնացածներին փախուստ դարձրել։ Սակայն վանականներից մէկը վերադառնալով վանք, ամայի պատերի մէջ շարունակում էր իւր թշուառ գոյութիւնը, ամեն րոպէ մահուան սպասելով այն արաբ իշխանից, որը նստած էր Բագաւանում և չորս կողմը մահ էր սպառնում։

Ծերունի վանական էր այդ մենաստանի վանահայրը. քանի-քանի թշուառութիւնները անցել էին նրա գլխով, քանի-քանի փորձանքների էր հանդիպել նա, բայց նրա հոգու մէջ այնպիսի խոր վիշտ չէր ընկել ինչպէս հիմա։ Երբ նայում էր վանքի մերկ, զարդարանքներից զուրկ պատերին, երբ մտնում էր վանքի ամայի և դատարկ ամբարներն ու մառանները, նրա սիրտը քաղվում էր, նրա աչքերից ընկնում էին արտասուքի կաթիլներ։

Մարտիրոս էր այդ ծերունի վանահօր անունը, որ իր ընկերակիցների կոտորածից յետոյ, գեռ մի քանի ամիս չկար ինչ վերադարձել էր վանքը իւր մի քանի ծառաներով։

Երեկոյեան դէմ էր։ Արևը նոր հանգիստ էր առնում Սուկաւ կամ Ջրաբաշխ լեռների կատար-

ներին, երբ Մարաիրոսը լուռ շրջում էր վանքի գաւթում և երբեմն նայում հորիզոնին, ուր մանում էր արևը իւր եակից թողնելով կարմրածիրանագոյն շերտեր... Ծառաներից երկուսն էլ մտախոհ նստած էին մի քարի վրայ և ինչ որ խօսում էին։

—Տղերք, դարձաւ նրանց վանահայրը, դռները պինդ փակեցէք և ոչ ոքի այլևս ներս չթողնէք, արևը արդէն մայր մտաւ և շուտով խաւարը կըտիրի։

—Պարսպի բոլոր դռները պինդ են փակուած, հայր սուրբ, ասաց ծառաներից մէկը ոտքի կանգնելով։

—Իսկ նիգերն ամրացած են։

—Այո՛, այնքան ամուր են, որ եթէ Իսուֆը ինքը իւր բանակով այստեղ գայ, կրկին չի կարող ներս մանել, ասաց հեգնութեամբ ծառան։

—Հը՛մ, Իսուֆը...հա, հիմա գայ, ինչ պիտի տանի. ամեն բան տարաւ, բոլորին կոտրեց, էլ ինչու համար է գալիս, ինչին է պէտք վանքի սուռ քարերը, մրմրաց ինքն իրան վանահայրը և սկսեց կրկին իւր աէրոդորմեան ձգել։

Այդ միջոցին լսուեցաւ վանքի պարիսպների դռան բաղխիւնը. ով որ բաղխում էր դուռը ուժգին և շտապ հարուածներով։

Ծառաները ոտքի կանգնեցին և երկիւղից սկսեցին իրար երեսին նայել, այն ինչ վանահայրը տեղն ու տեղը կանգ առնելով դադարեցրեց աէրոդորմեայի համարելը և շփոթուած դէպի դուռը նայեց։

«Ո՞վ պիտի լինի, որ այդպէս շտապ շտապ ծեծում է դուռը», մտածեց նա և նրա մտքի մէջ անցաւ Բագաւան գիւղի արաբաց իշխանը և իւր հրոսակները ու խեղճ վարդապետի մարմնով սառը դող անցաւ, երբ մտաբերեց նրանց առաջին արշաւանքը և վանքի աւերմունքը։

—Ով էլ որ լինի, լաւ բանի համար չի լինի եկած, բայց թէ պէտք է իմանալ և ընդունել։ Ի՞նչից պէտք է վախենալ, քանի որ ոչինչ չկայ վանքում կողոպտելու, իսկ իւր կեանքի վերջին մնացորդները իրան այլևս պէտք չեն։

—Տղերք, գնացէք տեսէք ո՞վ է և ի՞նչ է ուզում, բայց առանց իմ հրամանի դուռը չբացնաք։

Ծառաները դէպի դուռը վազեցին, որ քիչ էր մնում չարդուփշրուի էր լինում ծեծելուց։ Ինչպէս երևում էր այցելուն շտապ գործ ունէր կամ համբերութիւն ամենևին չունէր։

Շփոթուած վանահայրը դեռ կանգնած էր տեղն ու տեղը երբ ծառաներից մէկը գոռնալով յայտնեց.

—Հայր սուրբ, վիթխարի տեսքով մի գիւղացի է դռան եակը կանգնած և սպիտում է դուռը բանալ. նա կարևոր գործ ունի քեզ հետ։

—Միայնա՞կ է նա։

—Այո՛, միայնակ, ուրիշ ոչ ոքի չտեսանք հետը։

—Բայց լաւ դիտեցիք շուրջը։

—Այո, չորս կողմը լռութիւն է տիրում և նա միայնակ ծեծում է դուռը, եթէ չբանաք, ասում է, դուռը կը կոտրատեմ։

—Չէնք ունի, հարցրեց վանահայրը։

—Ոչ մի չէնք չտեսանք վրան, բայց մի այնպիսի ուժեղ բազուկներ ունի, որ հազար չէնք արժէ։

—Լաւ, ներս թողէք, բայց դռները իսկոյն փակեցէք և դուք էլ գոյշ մնացէք։ Ո՛վ գիտէ ինչ մարդ է, թշնամի է թէ բարեկամ. մեր ժամանակներում ամեն բանի վրայ պէտք է կասկածել, ամեն բանից պէտք է վախենալ, ասաց վանահայրը ինքն իրան և լուռ դէպի դուռը նայեց, որ ճռճռալով բացուեց և մի յաղթանդամ մարդ գիւղական հագուստով, երկար փայտը ձեռքին ներս մտաւ և ուղղակի դէպի հայր սուրբը գալով խոնարհ գլուխ տուեց նրան։

Մարտիրոս հայրը իւր փոքրիկ, բայց փայլուն աչքերը դէպի նա սևեռելով, ոտքից մինչև գլուխ զննեց նրան և ըստ երևոյթին լաւ տպաւորութիւն թողնելով իւր վրայ, մեղմ ձայնով հարցրեց.

—Ի՞նչ կը կամենայիր, որդեակ, որ այս ժամին վանքի դուռն ես ծեծում, երբ ոչ ոքի այլ ևս չենք ընդունում։

—Քո օրհնութիւնը Մարտիրոս հայր, ասաց գիւղացին և մօտենալով աչն ուզեց համբուրել։

Վանահայրը աչը տուեց նրան և հարցրեց։

—Դու ո՞րտեղից գիտես իմ անունը։

—Բարի մարդկանց անունը միշտ ամենքը կ'իմանան, բայց ես առանձին գործ ունիմ քեզ հետ, հայր սուրբ, հրամայիր ծառաներիդ հեռանալ կամ մտնենք խուցդ։

—Գնանք, որդեակ, ասաց վանահայրը, առաջնորդելով նրան դէպի իւր խուցը և երբ նրանք միայնակ մնացին, այն ժամանակ այցելուն սկսեց իւր հարց ու փորձը։

—Հայր սուրբ, դու լաւ տեղեկութիւն կ'ունենաս Բագաւանից, թէ այնտեղ ո՞րքան արաբաց զօրք կայ և ինչ դրութեան մէջ են։

Հայր սուրբը աչքերը չռեց, երբ լսեց այդ հարցը։

—Ի՞նչ հարկաւոր է քեզ, որդի, անօրէններն այնքան շատ են, որ համարել չէ կարելի։

—Էլի ինչքան շատ լինին, մօտաւորական թիւը քեզ յայտնի կը լինի, որովհետև նրանք քեզանից մօտիկ են և քո ծառաները միշտ երթևեկութիւն ունին գիւղի հետ։

—Ի՞նչ ասեմ, մօտ հինգ հազարի չափ կը լինին, որոնց կէսը նստում են Բագաւանում, կէսը վաղարշակերտում։

—Հ՛ըմ... հինգ հազար... երկու հազար և հինգ հարիւր... է... հոգ չէ, ինքն իրան մրմրաց այցելուն։

—Ի՞նչ էր որ...

—Ոչինչ, փոքր ժամանակից յետոյ դրանց հետքն էլ չի լինի Բագաւանում։

—Ի՞նչպէս, ասաց վանահայրը և դողդոջիւն ձեռքերով բռնեց այցելուի ձեռքը. դու ուզում ես միայնակ նրանց հետ կռիւ տալ, կոտորել նրանց...

—Չէ, ես չէ, այլ Աշոտ Երկաթ շահնշահը։

Մի ելեքտրական սարսուռ անցաւ Ծերունու մարմնով, երբ լսեց Աշոտ Երկաթի անունը և նրա աչքերում փայլեց ուրախութիւն։

—Իսկ դու ո՞վ ես, որ նրանից տեղեկութիւն ունիս, ո՞ւր է նա, նահատակ Սմբատի որդին։

—Ես ո՛վ եմ, ես նրա զինուոր Դաւիթն եմ, որ առաջուց եկել եմ յայտնելու քեզ, որ այս երեկոյ պատրաստ լինիս նրա վեց հարիւր քաջերին ընդունելու, որովհետև մի փոքր ժամանակ այստեղ հանգստանալուց յետոյ գիշերս պիտի յարձակում գործենք Բագաւանի վրայ, ուր վաղ առաւօտ էլ ոչ մի արաբ զինուոր չի մնայ։

—Դէհ, հայը սուրբ, ծառաներիդ հրամայիր, որ իրանց խուցը մաքուր քնելու, իսկ դուն բանալիները ինձ յանձնեն։ Ժամանակ պէտք չէ կորցնել, ես դուրս կ'երթամ շրջակայքը աչքի անցկացնելու և կարճ ժամանակից յետոյ կրկին կըգամ, ասաց Դաւիթը և վեր կենալով տեղից դուրս եկաւ խուցից։

Շուարած վանահայրը չգիտէր երազ է թէ իրողութիւն, բայց թէ նա հրամայեց բանալիները յանձնել Դաւթին և պատրաստութիւն տեսնել դիմաւորելու Աշոտ Երկաթին։

Դ.

Դաւիթը վանքի բանալիները գրպանը դնելով կամաց սկսեց կանաչով պատած բլուից ցած իջնել դէպի ձորը։ Յուսահատ և տրտում էր նրա դէմքը։ Այն մարդը, որ այնպէս աներկիւղ էր դէպի մահը, այն մարդը, որ իւր կեանքը դրել էր արդարութեան և վեհանձնութեան համար, նա որ արհամարհեց Գագիկ Արծրունու գովինները իւր տիրոջ մօտ գանուած վշտի հետ, այժմ սաստիկ յուսահատուած էր և տխուր։ Մի տեսակ ծանր միտք, մի տեսակ անորոշ ճնշում տակն ու վրայ էր անում նրա սիրտը և խռովում նրա հոգին։ Ի՞նչ բան կրծեց նրա սիրտը, ի՞նչը վրդովեց նրա հոգին, երբ նա առաջին անգամ ոտք դրեց Բագրեւանդ գաւառը, այն ինչ մինչև այդտեղ ոտք դնելը նրա հոգու մէջ սիրապետում էր լի յոյսը դէպի ապագան... իսկ հիմա, երբ նա աչքի անցրեց այդ գաւառը, ամեն ինչ ոչնչացան, ամեն յոյսեր ջարդուփշուր եղան...

Նա իջաւ բլրից, մտաւ ձորը, նոր բլուր բարձրացաւ և կրկին նոր ձոր մտաւ, այնտեղ նա կանգ առաւ և խորը, շատ խոր ախ քաշեց, որից կարծես նրա թոքերը պատառոտուեցան և այդ արի մարդու աչքերում երևեցան արտասուքներ... Նա նայեց իւր ոտքերի տակ, ուր փռուում էր

մի խումբ քարափոյտներ, որոնք ցոյց էին տալիս թէ դրանք աւերակ գիւղի հետքեր են, որտեղից անցնելով ահռելի փոթորիկը ամեն ինչ քանդել, ոչնչացրել է չթողնելով քար քարի վրայ... Ձորի վերին կողմը միայն երևում են մի քանի ողկոյզի որթեր, որոնք բաղդի բերմամբ ազատ մնալով փոթորկի մահաբեր շնչից նոր ծաղկել էին, արձակելով թարմ, քնքոյշ տերևներ...

Բայց ո՛ւր են դրա բնակիչները, ինչ եղան, աշխարհիս ո՞ր կողմը ցրուեցան, կամ կենդանի են թէ՞ մեռած, ահա հարցեր, որոնք պատվում էին Դաւթի ուղեղի մէջ, բայց ոչ մի պատասխան չէին ստանում, ոչ մի եզրակացութեան չէին գալիս։

Դաւիթն առաջ անցաւ և կանգ առաւ մի կիսաւեր խրճթի առաջ և երկար շատ երկար նայեց այդ, գետնի մէջ տարածուած, կիսաքանդ խրճթին։ Նա ճանաչում էր այդ տունը, քանի՛ քանի՛ անգամ տուն ու դուրս էր արել այդ տան մէջ, քանի՛ անգամ սրտատրոփ մօտեցել էր այդ տանը և վայելել ուրախ և երջանիկ ժամեր։ Հիմա էլ եկաւ վայելելու վաղուց սպասած ուրախ այդ ժամը, բայց ինչ տեսաւ... Առաջ այդ տան մէջ հնչում էր ուրախ խօսակցութիւն, շարժվում էր եռուն կեանքը, իսկ հիմա տիրում էր մեռելութիւնն ու անշարժութիւնը։ Առաջ նրան դիմաւորում էին իր նշանածի՝ Աստղիկի փափուկ բազուկները, նրա ուրախ ժպիտը, այժմ անմռունչ և սառը քարերը, որոնք մահուան չափ

սարսուռ էին ազդում Դաւթի մարմնի մէջ...

Հինգ երկար և ձիգ տարիներ էին ինչ որ չէր տեսել Աստղիկին, հինգ ամբողջ տարիներ էին որ նա փափագում էր տեսնել իւր Աստղիկին և այժմ երբ մօտ էր այդ րոպէն վայելելու. երբ սրտատրոփ վազում էր դէպի գիւղը գրկելու իւր նազելիին և աւետելու Աշոտ երկաթի երևալը,—ամեն ինչ ոչնչանում էր և խորտակվում... Ի՜նչ այլանդակ փոփոխութի՛ւն...

Ո՞վ գիտէ այժմ մեռած էր իւր Աստղիկը թէ կենդանի և եթէ կենդանի է ո՞ւր է նա։ Ո՞ր անօրէն արաբ իշխանի հարէմումն է նստած կամ ինչ տաժանելի տանջանքներ է կրում նըստած մութ բանտի խոնաւ յատակի վրայ։ Այդ մտքերը նրան տանջում էին և անիծում էր իւր բաղդը, որ գոնէ մի կենդանի արարած չէ գըտնվում, որ հարցնի գիւղի աւերման ժամանակը և նրանց բնակչաց ո՞ւր ցրուելը։

Նա փեշով սրբեց արցունքները և լուռ քայլերն ուղղեց դէպի Բագաւան գիւղը, ուր կար շարժողութիւն և կենդանութիւն և ուր զետեղուած էին Իւսուֆ իշխանն ու արաբաց մի գունդը։

Գիշերն արդէն պատել էր, նա դեռ շատ բան ունէր կատարելու մինչև Աշոտ երկաթի վանք ժամանելը։

Շուտով նա մտաւ գիւղը և անցնելով մի քանի փողոցներ, կանգ առաւ մի տան առաջ որտեղից լսվում էին թմբուկի և երգի ձայներ։

Այդ տունը արաբաց գնդի իշխանի տունն էր, որ ինչպէս երեւում է անձնատուր էր եղել ուրախութեան և կեր ու խումի։ Ինչպէս երեւում էր տան մէջ հաւաքուած էին արաբաց բոլոր մեծամեծները և անդոգ ժամանակ էին անցկացնում։ Դաւիթը առաջ անցաւ և այժմ զօրքերը սկսեց լրտեսել, որոնք իրանց իշխանի օրինակին հետևելով կրկին կերուխումի և անհոգութեան էին դատապարտուած, ցրուած լինելով զանազան տներում։ Դաւթի մարմինը դողաց, դրանից լաւ յարձակում գործելու ժամանակ չէը լինի, պէտք էր շտապել, հասնել վանքը, սպասել Աշոտ Երկաթին ու նա իւր ձեռնափայտը շարժելով սկսեց շտապ քայլերով առաջ գնալ, երբ նրա առաջը կտրեց զինուորներից մէկը։

—Ո՞ւր ես վազում, այ շուն, ասաց նա բռնելով նրա օձիքից։

Դաւիթը մեքենայաբար ձեռքը դէպի իւր սուրը տարաւ, որ թագնուած էր իւր շորերի տակ, բայց իսկոյն խելքը պլուխ ժողովեց որ դրանով նա ամէն բան կըփչացնի, ուստի նա դուրս պոկուելով զինուորի ձեռքից ասաց.

—Թող լինձ, ձեր իշխանը ուղարկեց գառը բերելու, մի բռնիր լինձ, թէ չէ վատ օրի կը հանես։

—Հա, եթէ իշխանն է ղրկել գնա, բայց մեւս անգամ այդպէս մի վազիր, թէ չէ տեսնում ես այս կեռ սուրը, թափանդ վեր կածեմ։

—Ես ինչ մեղ ունիմ, որ իշխանը շտապեցնում է, ասաց Դաւիթը և շտապով հեռացաւ զինուորի մօտից, ուրախանալով որ այդպէս հեշտ պրծաւ նրանից։

Շատ շուտով նա բարձրացաւ վանքը և նրա տեղով դռների մօտ սկսեց սպասել Աշոտ Երկաթին։

Փոքր ժամանակ անցնելով, նա մթութեան մէջ նկատեց, որ վեց հարիւրի չափ զինուորներ զգուշութեամբ մօտենում էին վանքին։

Աշոտ Երկաթը ճանաչեց Դաւթին և մօտենալով նրան կանչեց.

—Դաւիթ։

—Այստեղ եմ, տէր իմ։

—Իսկ ամէն բան պատրաստ է։

—Պատրաստ է։

—Իսկ Բագաւան գնացէր, ինչ կայ, որքան զօրք տեսար։

—Զօրքի թիւը երկու հազարից անց է և յարձակում գործելու ամենայարմար ժամանակը հիմա է երբ նրանք անձնատուր են եղած կերուխումի և ոչ մի բանի վրայ չեն մտածում, բացի իրանց որովայնը։

—Լաւ ուրեմն, մի քիչ կանգ առնենք այստեղ և իսկոյն կարշաւենք Բագաւանի վրայ։

Նրանք նեռս մտան պարիսպներից և վանահայրը նկատելով Աշոտ երկաթին և իւր եղբայր Աբասին խաչ ու խաչվառով դուրս եկաւ նրանց դիմաց։ Ապա Աշոտ Երկաթը մտաւ վանքը, ծունկ չոքեց և ջերմ արտով աղօթեց Աստուածոյն։

Մարտիրոս վանահայրը պահպանիչ ասաց նրանց գլխին, ուր մի փոքր հանգստանալուց յետոյ, կտրիճների այդ խումբը գոյչ քայլերով մտեցաւ Բագաւան գիւղին։

Ը.

Նապելի կոյսը չքնաղ դէմքով տխուր ու տրտում կանգնած է սենեակի մէջ և իւր արտասուալից աչքերը դարձրել է դէպի դուռը։ Տրտում ու տխուր է կոյսը, խուրին թախիծը պատել է նրա սիրուն դէմքը և տխրութեան անշուք մեգը պատել է նրա անհման երեսը։ Հեռու այդ քողը. ինչ մեգ է, որ պատել է նրա դէմքի ուրախ ժպիտը։ Ինչ ցաւ է, որ տիպում է նրան արցունքները թափել, վշտանալ, տխրել, ցաւել ու տանջուել, երբ այդ հասակում պիտի միայն ժպտալ և ուրախանալ։ Ո՞ր անգութ ձեռքը կաշկանդեց նրան այդ սենեակի մէջ, ուր ամբարուած են թանկագին կերպասներն ու օծոցները, անգին գմբուխտներն ու ակները, ոսկին և արծաթը, բայց ուր չկայ կապոյտ երկինքը և ազատ, անոյշ բուրմունքով օդը... Ո՜հ, նեղ է, շատ նեղ այնտեղ, ուր չի լսւում թռչունների անուշ ճռուողիւնը, առուակի ուրախ կչկչոցը, քամու սուգն ու շիւանը, ամպի խաղն ու պարը... Ե՛ նապելի կոյսը տրտում ու տխուր

էր, բանտարկուած լինելով Բագաւանի արաբաց իշխանի՝ Ահմէդի սենեակներից մէկում, ուր շրջապատուած էր աշխարհային ամեն տեսակ բարիքներով ու վայելչութիւններով, բայց որոնք մահու չափ տխրեցնում էին կոյսին։

Նա յիշում էր իրանց գիւղը, որտեղից գերի էր վերցրել իրան Ահմէդը և խոր հառաչում. նա մտաբերում էր իւր հօրն ու մօրը, փոքրիկ եղբօրը և քոյրիկին և դառն արտասուքները խեղդում էին նրան... Նա յիշում էր իւր փոքրիկ եղբօր ճիչն ու աղմուկը, մօր արտնեղութիւնը, ապա դուրգուրմունքը և նրա սիրտը յուզվում ու տակն ու վրայ էր լինում։ Ա՜խ, ինչպէս այն քաղցր էր, ինչպէս անուշ, իսկ հիմա ինչպէս տանջում են իրան այս ոսկին ու արծաթը, թանկագին կերպասն ու օծոցը, որոնցով շրջապատել է իրան Ահմէդը... Ինչպէս դառն, սոսկալի և աւերւի է այն շքեղութիւնը, որի վրայ չի կպչում մարդուս սիրտը, և ինչքան քաղցր է այն տանջանքն ու չարչարանքը, որ կրում է կամովին յանձնառու լինելուց։

Բայց կոյսը դողում է և ամեն մի փոքրիկ շշունջ լսելիս փշաքաղվում է նրա մարմինը, նա սպասում է իւր դաժան տիրոջը, ահա ուր որ է ներս կը գայ և կը սկսուի իւր սոսկալի չարչարանքը... Րոպէներն անցնում են դանդաղ ինչպէս յաւիտենականութիւն, աշխարհս շրջեցնում է իւր անիւը, երկնքի աստղերը լուռ խոնարհում են դէպի երանց մուտքը, բայց դեռ Ահմէդը չկայ։

Ի՞նչ կայ, ձուր է նա. ախ, երանի թէ յաւիտեան չգար և կամ շուտ բացուէը արշալոյսը...

Բայց չէ, հեռուում ճրագ է երևում, այնտեղից լսւում է իւր տիրոջ խրոխտ ձայնը, այնտեղ է նա, որ անձնատուր է կեր ու խումի, չի անցնի կարճ ժամանակ և նա իւր գաժան տեսքով կը հանդիսանայ իւր առաջ։ Արդէն տեսնում է թէ ինչպէս բացվում է այդ դուռը, լսում է Ահմէդի ոտքերի ձայնը, նա բաց է անում իւր սենեակի դուռը և կոյսը նայելով նրա վայրենի դէմքին մի ճիչ է արձակում և փռվում է դետնին...

Մօտենում է Ահմէդը, իւր պիղծ ձեռքերով գրկում կոյսին, համբուրում նրա մարմարիոնի նման սպիտակ շրթունքները և ուշքի բերում կոյսին։

— Զարթիր, նազելի կոյս, եդեմի անմահ վարդ, ասում է նա ծունկ չոգած նրա ոտքերի տակ և շփում է նրա երեսը մի ինչ որ անուշահոտ ջրով։

Կոյսը բաց է անում իւր աչքերը և նայում է չորս կողմը, նա դեռ չի հասկանում թէ ինչ է կատարվում շուրջը. բայց երբ խելքը գլուխն է ժողովում, այն ժամանակ սառը մահուան դողը պատում է նրա մարմինն ու նա լուռ իւր հայեացքը իջեցնում է ցած։

— Իմ սիրելի, իմ անույշ վարդ, սիրիր ինձ և ապրիր ինձ հետ երջանիկ կեանքով, ես քեզ թագուհու նման կը պահեմ, ոսկեմանեակներով կը

շրջապատեմ ճակատդ, թանկագին բեհեզներ կը հագցնեմ քեզ, ասում է Ահմէդը բռնելով կոյսի ձեռքը, որ աշնան տերևի նման դողում է։

Կոյսը ձայն չի հանում և միայն մի խոր հոգոց է քաշում։

— Թող քո անօրէն հաւատը և ընդունիր մեր ճշմարիտ կրօնը, այն ժամանակ մենք երջանիկ կը լինենք քան Բաղդատի ամիրան և մեր երջանկութիւնը կ'օրհնէ մեծ մարգարէն, Մահմէդը։ Ով կոյս, քո առաջդ եմ չոգած և քեզ եմ խնդրում, կատարիր խնդիրս և ուրացիր քո պիղծ հաւատը և սիրիր ինձ...

— Հեռացիր ինձանից, պիղծը ձեր հաւատն է, ասում է կոյսը և նրա աչքերը շանթեր են արձակում։

Ահմէդը նայում է նրան. նայում և խորը մտածում. նրա հոգու մէջ կռվում են կոյսի գեղեցկութիւնը և իւր կիրքը. ինչպէս կը տանէր նա պիղծ գեաւուրի այդ խօսքերը, եթէ կաշկանդուած չլինէր նրա գեղեցկութեամբ ու նա կըրկին և կրկին ազերուում է սիրել իրան և ուրանալ իւր հաւատը, այն ինչ կոյսը աւելի և աւելի տեղութիւն և արհամարանք է ցոյց տալիս։

Հասնում է Ահմէդի համբերութիւնը և տեսնելով որ ազերսանքն ու պաղատանքը ոչինչ ազդեցութիւն չեն ունենում կամակոր աղջկայ վրայ, հանում է սուրը և շողշողացնելով կոյսի հէնց կրծքի մօտ, այնտեղ՝ ուր արագ արագ տրոփտրոփում է նրա կուսական անմեղ սիրտը—գոռում է.

—Համակոր աղջիկ, մինչև ԷրԷ ինձ պիտի տանջես, մինչև ԷրԷ ինձ պիտի չարչարես. ասա, ուրանո՞ւմ ես հաւատդ և սիրո՞ւմ ինձ, թէ ուզում ես որ այս սուրը մղուի կրծքիդ մէջ և լերդ ու թոքդ դուրս թափի...

Տիրում է լռութիւն: Կոյսը աղօթք է մրմնջում. իսկ Ահմէդը կատաղի աչքերով պատասխան սպասում. այն ինչ այդ ժամանակ դուրսը, փողոցում, վայնասունի և ճչի ազմուկ է լսվում: Բայց Ահմէդը ոչինչ չէ լսում: Նա սպասում է պատասխանի, որ կամ սուրը մղէ նրա կուրծքը և կամ գգուի և համբուրի նրան...

—Լսո՞ւմ ես, ինչ եմ ասում, պատասխանէ՛ք, քո կեանքը քեզնից է կախուած, ընտրիր երկուսից մէկը կամ մահը կամ անոյշ կեանքը:

—Մահն եմ ընտրում, անօրէն զազան, շո՛ւտ, վերջացրու տանջանքներս, էլ ինչու ես ուշացնում, գոռում է կոյսը և արտասուքները լիառատ պլորվում են նրա աչքերից:

—Բայց ես քեզ չեմ կարող սպանել, ով անման հրեշատակ, սուրը մի կողմն է քաշում Ահմէդը ապա ուզում է գրկել նրա նազելի մէջքը, բայց կոյսը հրում է նրան ձեռքերով և դուրս է պրծնում նրանից: Ահմէդը կատաղում է, բարկութեան փրփուրը պատում է նրա բերանը և նա կայծակի նման սուրն առնելով վազում է կոյսի վրայ, այդ ժամանակ դուռը ճարճատելով ընկնում է ցած և երևում Աշոտ Երկաթը:

Կայծակնահարի նման կանգ է առնում Ահ-

մէդը և նայում է իւր առաջը կանգնած ժպտահայ մարդուն, որի ձեռքին բռնած սրից կաթկաթում է արիւնը: Ո՞վ է նա և ինչպէս համարձակուեցաւ ներս մանել և ո՛ւր են իւր զինուորներն ու պահապանները, մտածում է նա և յանկարծակի թռիչք անում դէպի Աշոտ Երկաթը:

Աշոտ Երկաթը ժպտում է դառն ժպիտով, որից հալչում է Ահմէդի մարմինը և դեռ իւր սուրը չբարձրացած արիւնաթաթախ գլորվում է գետին:

Այդ ժամանակ ներս են մտնում նաև մի քանի հայ զինուորներ, որոնց դիմելով Աշոտ Երկաթն ասում է.

—Բազաւանում վերջին անօրէնը սատակեցաւ, չնչուեցին նրանք, բայց լաւ ժամանակ հասանք, մի անմեղ գոհ ազատեցինք, ասաց նա և արիւնաթաթախ սուրը պատեանը դրեց...

ԺԲ.

Տխուր է Դաւթի հոգին...

Ուրախութեան ոչ մի ժպիտ չի փայլում նրա երեսին, յուսոյ ոչ մի նշան չէ ուրախացնում նրան... Ամէն ինչ յուսահատ, ամէն ինչ ախուր է նրա համար: Չկայ իւր Սատիկը, չկայ իւր հրեշատակը:

Գնում է Դաւիթը մի երիվարի վրայ նստած

դէպի վաղարշակերտ ու խոր մտածում։ Էլ ոչ մի քան նրա աչքին չէ դալիս, էլ ոչնչի վրայ չի մտածում։ Նրա մտքերը կանգ էին առել նրա գլխի մէջ և ոչինչ շարժողութիւն չէին ցոյց տալիս. կարծես նա զրկուել է դատելու ընդունակութիւնից։ Նա անգիտակցօրէն իջնում է ձիուց, սանձը ձեռքն առնում և դանդաղ քայլերով առաջ գնում։ Ապա շեղվում է ճանապարհից և սկսում է ծաղիկներով ծածկուած դաշտի միջով քայլել։ Նա պոկում է դաշտի ծաղիկները, մէկ մէկ ուշադրութեամբ դիտում, գլուխը շարժում և ապա միտեղ ժողովելով մի փունջ կազմում. Ո՛րմ հատը է կազմում երփներանգ ծաղիկների այդ փունջը, որի գլուխը պիտի պսակի դաշտի այդ ծաղիկներով, յայտնի չէ։

Պոկեց նա մի ծաղիկ, որ արեան գոյն ունէր և խոր հոգոց քաշեց այդ ծաղկի անունը մտաբերելով, «Եօթն եղբօր կռան արիւն» էր կոչվում այդ ծաղիկը, այդ ասել էր իրան իւր Աստղիկը, որ այժմ չկար։ Եօթն եղբայր արիւն էին թափել և այդ թափած արիւնից գոյացել էր այդ ծաղիկը, որ այնպէս սիրուն, այնպէս քնքոյշ ծաղկում էր դաշտի մէջ։

Իսկ ի՞նչ եղաւ իւր Աստղիկը, արդեօք նա էլ թողել է մի յիշատակ, մի ծաղիկ և որն է այդ ծաղիկը. անշուշտ նա կարմիր արեան գոյն չի ունենայ, այլ սպիտակ, որ նշան է անմեղութեան։ Անմեղութեամբ, անարատութեամբ նա երկինք կը լինի գնացած իւր յիշատակը թողնելով մի սպիտակ ծաղիկ, որ ինքը քաղի, հոտոտի և իւր կարօտը առնի...

Նա պարտում է, պոկում է դանազան տեսակ սպիտակ ծաղիկներ, հոտոտում է նրանց, բայց ոչ մէկը նրան դուր չէ գալիս, և սրտնեղած դէն շպրտում այդ ծաղիկները և յօնքերը կիտած շտապեցնում իւր քայլերը։

Նա մինչև անգամ չի նկատում թէ ինչպէս հետզհետէ թանձրանում է խաւարը և թէ ինչպէս հեռուում, լեռների քամակին, կամաց-կամաց ծածկվում է բարակ եղջերաձև լուսինը... Օդը հետզհետէ սկսում է ցրտել, լռում է թռչունների ուրախ կչկչոցը, բզեզների և մրջիւնների աղմուկն ու ժվոցը։ Կենդանական թագաւորութիւնը լռում է, բուսականը հանգիստ քուն մտնում, երկինքը վառում իւր ճրագները...

Յանկարծ Դաւիթը կանգ առաւ. իւր առաջը խոխոջալով անցնում էր լեռնային մի վտակ, որ գոռում ու գոչում էր, ուժգնութեամբ դիպչում էր ժայռի կրծքին, փրփրում ու վազում առաջ։ Դաւիթը գլուխը վեր բարձրացրեց և մի տեսակ դող անցաւ նրա մարմնով. այդ ո՛ւր էր հասել և ո՛ւր էր Աշոտ Երկաթը իւր խմբով, որոնց հետ նա միասին գնում էր տանն ու վրայ անելու վաղարշակերտը...

— Է... հէ... այ քեզ ի՞նչ է նշանակում մտքի հետ ընկնել, մրմռաց ինքն իրան, նորից ձի հեծաւ և դէպի գետի հակառակ ուղղութիւնը քշեց, առանց իմանալու թէ ու՞ր պիտի գնայ։

—Էհ, հոգ չէ, որ ես յետ մնացի, ինչևիմ եմ պէտք ես Աշոտ Երկաթին: Աստուած Հայաստանին մի այնպիսի առիւծ է շնորհել, որի առաջ ոչ մի արգելք չի դիմանայ: Խեղճ Իւսուֆ, Սմբատ արքային նահատակեց և կարծեց թէ Հայաստանին տէր դարձաւ, մոռանալով, որ նրա կորիւնը կարող է նրանից վրէժ առնել: Այդպէս էլ պէտք է, մինչև երբ այդ անիծուածները մեր արիւնը խմեն. վերջապէս մի օր հանգստութիւն է պէտք մեզ, այս ինչ է մեր օրը՝ որդին հօրը չէ գտնում, մարդը կնոջը, երեկուայ շէն գիւղը աւերակ, վանքերը քանդուած, եկեղեցիները պղծուած, խաչերն անպատուած... Էլ Հայաստանում չմնացին սիրուն հարսներ ու կոյսեր, ամենքին դերի տարան: Ամենքին տարան, ամենքին... Աստղիկին էլ... Այդպէս մտածում էր նա, երբ հեռում, մացառների և թփերի միջից երևացող ընդհատուող կրակի բոցը նրա ուշքը գրաւեց:

Կրակի բոցը երբեմն երևում և երբեմն հանդչում էր: Դաւիթը կանգնեցրեց ձին. սկսեց ուշադրութեամբ դէպի այդ լոյսը նայել: Ինչ լոյս էր այդ լոյսը, քաջքերն էին վառել թէ մարդիկ, և եթէ մարդիկ, այդ գիշերուան պահուն ինչ էին շինում այդտեղ և ովքեր էին դրանք: Մի շարք հարցեր, որ կայծակի արագութեամբ անցան նրա մտքով: Նախ վախեցաւ քաջքերից ու երեսը խաչ քաշեց, բայց լոյսը կրկին երևում էր, խաչ քաշելը չօգնեց նրան, ուստի համոզուեց որ այդ

խմանալ թէ ինչ մարդիկ են դրանք: Զգուշութեամբ ձին առաջ քշեց և մի քանի րոպէում մօտեցաւ լոյսին: Նա տեսաւ այդտեղ կրակի շուրջը բոլորուած մի ամբողջ ընտանիք, բազկացած կանանցից, աղջկերանցից և երեխաներից, որոնք տեսնելով իրանց առաջ զրահաւորուած ձիաւոր մարդուն, սարսափահար յետ ու յետ գնացին:

—Մի վախենաք, ասաց Դաւիթը ցած թողնելով ձիուց, ես ձեր թշնամին չեմ, այլ բարեկամը:

Հասակաւորները դեռ զարմացմամբ պիտում էին Դաւթին, որ ձին թողնելով արած էր, ինքը մեկնուեցաւ կրակի մօտ և նրանց դառնալով ասաց.

—Ինչպէս երևում է դուք փախուստ էք տալիս Իւսուֆի զինուորներից. վախ չկայ, շուտով այդ ժամանակը կանցնի և ամենքդ հանգիստ ձեր տեղերը կը դառնաք:

—Հա, դուրբան լինինք քեզ, մեր գիւղը տակնուվրայ արին այդ անօրէնները և մենք լեռները ընկած ենք ապաստանվում, ասաց ընտանիքի ամենահասակաւորը, որ մօտ վաթսուն տարեկան ժիր տղամարդ էր:

—Ո՞ր գիւղից էք դուք:

—Բերդկունք գիւղից ենք:

—Բերդկո՞ւնք, ասաց Դաւիթը և նրա սիրտը սկսեց սաստիկ արոփալ, այդ գիւղը մօտ էր իւր Աստղիկի գիւղին՝ Արծակին:

—Իսկ ի՞նչ տեղեկութիւն ունիք Արծակից,

ճանաչում էք դուք Ծերունի Մաթոսին, նրա աղջկան Ասաղիկին, շտապով հարցրեց Դաւիթը, և անհանգստութիւնը տիրեց հոգուն:

—Է՜... բարեկամ, ինչպէս չեմ ճանաչում, երկու գիւղն էլ մի քանի ամիս առաջ կործանուեցան, խեղճ Մաթոսին իմ աչքերի առաջ արիւնուայ արին, իսկ թէ յետոյ ուր վախան նրանք, ես չգիտեմ: Մենք իրարից բաժանուեցինք լեռներում և նա Ասաղիկի հետ ուրիշ կողմը գնաց...

—Վայ, անօրէնները, ուրեմն նա դեռ կենդանի է և այդ անօրէնների ձեռքին, խօսքը կարեց Դաւիթը ու վեր թռաւ տեղից:

Ասաղիկը երկիւղից կուչ եկաւ, չհասկանալով թէ ինչ է կատարւում Դաւթի հետ:

—Ո՛ր կողմը տարան և ո՞ւր է Ասաղիկը, ի սէր Աստուծոյ, ասացէք ինձ, ես նրա նշանածն եմ, Դաւիթ Գնունին, Աշոտ Երկաթի պինուորը:

—Իմ քեռորդին, գոչեց յանկարծ Ծերունին և փաթաթուեցաւ Դաւթի վրայ:

—Ի՞նչպէս, մի՞թէ դու ես, կարօն, օ, ասա, կարօ ջան, ասա, ո՞ւր է Ասաղիկս:

—Ի՞նչ ասեմ, որդիս, թէ ուր տարան նրան անօրէնները: Հաւանական է, որ նա մի որևէ աբար իշխանի սարկաւագի լինի դարձած և կամ սպանած լինին նրան...

—Չէ, ես պիտի փնտրեմ նրան, ես պիտի գտնեմ նրան, իսկ եթէ չգտայ, վայ Իւսուֆին, վայ նրա բանակին, կատաղաբար գոչեց Դաւիթը,

որից ձի հեծաւ, մտրակեց նրան և անյայտացաւ խաւարի մէջ...

ԺԳ.

Սոված և ծարաւ ուրուրի նման սլանում էր Աշոտ Երկաթը իւր խմբով դէպի առաջ և որս փնտրում... Նա ծարաւի էր արեան: Արիւն էր ուզում, անհաւատների արիւն, որ յագեցնէր իւր ծարաւ սիրտը, հանգցնէր վրէժն ու բարկութիւնը... Օ՜... սոսկալի էր նա, զարհուրելի էր նրա վրէժխնդրութիւնը: Ո՛վ կը դիմանայ սոսկալի մրրկին, ահեղ փոթորկին. նրա աչքերից կրակ ու հուր է ցայտում, նրա հայեացքից սարեր ու քարեր են հալչում... Գնում է նա առաջ, ամպի նման փոշին նրա ձիու սմբակների տակից երկինք է բարձրանում:

Դողում է երկիրը, առուն լռում է, թռչունները երկիւղից պահվում են ու դիւցազնին նայում... Գոռում է Աշոտը, սուրը պատենից հանում և սլանում առաջ: Այո, նրան միշտ քաջալերում է իւր հօր սուրը, նա միշտ իւր հետն է, գիշեր թէ ցերեկ: Եւ նա նայում է իւր առաջ, օդի մէջ և տեսնում է նրան, իւր հօրը, Սմբատ արքայի թալկացած աչքերը, որոնք դէպի վրէժ են մղում: Նա նայում է նրան և նրա մարմինը դողում է, սուսիները կրճատացնում է, մա-

գերը փշաքաղվում և ապա մի այնպիսի մռնչիւն է արձակում, որ սար ու ձոր դողում է, քարերը լեզու են առնում և գոռում «եկաւ հա եկաւ, Աշոտ երկաթը եկաւ» լսում են Իւսուֆի իշխաններն ու զինուորները և լեզուապատառ լինում, մահուան գունատութիւնը պատում է նրանց դէմքերին... Իւր քաջերով մտնում է նա վարարշակերտ, արաբները երկիւղից փախուստ են տալիս, իսկ մի քանիսը զէնքի վազում: Աշոտը ժըպտում է. դառն և սոսկալի է այդ ժպիտը, որի ազդեցութեան տակ դողում են անհաւատները և սրերը գլորում քաջի ոտքերի տակ և գթութիւն խնդրում: Բայց չկայ գթութիւն, չկայ թողութիւն, քաջի սիրտը լեռ քարի նման կարծր է և ամուր, այնտեղ չի շարժվում գութի ոչ մի թել, այնտեղ չի հասնում ողբասանքի և լացի ոչ մի ձայն: Անզգայ է նա, արիւն, արիւն է ուզում, նրա սիրտը կրակ է ընկած և լափվում է բոցերով, անհաւատների արիւնն ու տանջանքը միայն սփոփում են նրան ու ամոքում նրա սիրտը...

Թէև նա հրամայում է նոյն տանջանքներով տանջել անհաւատներին, ինչով նրանք տանջել են հայերին և սրանով էլ չբաւականանալով հրամայում է սիկեր շինել նրանց կաշուից և պարսպի վրայ կախել...

Մաքրվում է Բագրեւանդի գաւառը անհաւատներից և նա թռչում է Շիրակ: Այնտեղ էլ հուր ու մահիր է տարածում, կոտորում, ջնջում

Իւսուֆի հրոսակներին... Ապա թռչում է իւր աշխարհի չորս կողմը, աջ ու ձախ մահ սփռում և հալածում թշնամիներին: Կարճ ժամանակ է անցնում և իւր երկրի բոլոր բերդերն ու քաղաքներն առնում է անօրէնների ձեռքից, թշնամիների հետքն անգամ չթողնելով այնտեղ:

Ազատ շունչ են քաշում հայերը և օրհնում դիւցազնին: Եկեղեցիների և վանքերի մէջ սկսվում են ժամերգութիւնները ու պատարագը, սրբոց պատկերների խնկարկութիւնն ու շարականների անուշ երգեցողութիւնը...

Բայց Աշոտը դեռ ծարաւի է. վրէժխնդրութեան հուրը դեռ չէ շիջել, նա պատում է իւր երկրի սահմաններից դուրս դէպի Գուգարաց աշխարհը, որտեղից հալածելով թշնամիներին Գնթունեաց երկու եղբայրներին՝ Վասակին և Աշոտին կառավարիչ է կարգում, ապա պատում է դէպի Տփխիս, ուր զինուորների մեծ բազմութիւն նախարարների հետ միասին հանգիստ անց էին կացնում իրանց օրերը:

Նախարարներին երկաթէ շղթաներով շղթայելով բանտարկում է, որպէս զի կարողանայ փոխանակել հայոց գերիների հետ ապա դիմում է Ուտի, վերակացու կարգելով քաջ և վիթխարի Մովսէսին ու դառնում է Տաշրաց գաւառը:

ԺԴ.

Տաշիր կամ Տաշրաց գաւառը, այլապէս կոչվում է Լոռի, ուր կանգ առաւ Աշոտ Երկաթը։ Բնութիւնից հրաշապէս վարձատրուած երկիր է Լոռին իւր կանաչապատ լեռներով, գոյնզգոյն ծաղիկներով զարդարուած դաշտերով ու մարգագետիններով և առուներով ողողուած։

Մի կողմից ձգվում են վիթխարի լեռների շարքերը, որոնց սառոռանների տակ տարածվում է ընդարձակ դաշտավայրը։ Այդ ընդարձակ դաշտավայրի միջով ձգվում է մի խոր ձոր, որի միջով անցնում է Լոռուայ մի գետակը և դաշտավայրը երկու կէս անում։

Այժմեան Ջալալօղլիից ցած, դէպի հիւսիս-արևելք, երեք թէ չորս վերստ հեռու Ջալալօղլուց, խոր ձորի գլխին, այժմ էլ երևում են կիսաքանդ պարիսպների փշրանքները, որոնք յիշեցնում են հին հին, անցած գնացած ժամանակի բերդի յիշատակները։ Դաշտի կողմից ձգվում են բերդի հասա ու պինդ պարիսպները, այն ինչ երեք կողմից կազմում են դրա սահմանը խոր և անհաղթ ձորերը, որոնց միջով պատյանները անելով անցնում է գետակը և փրփրալով և քաուելով ցից ցից ժայռերին լիզում բերդի պարիսպների տակ գտնուած յաւիտենական հիմ-

քերին և երեսը դարձնելով դրանից, գլուխն առնում է և առանց ճնաս բարև ասելու կորչում հեռու և հեռու...

Դարեր են անցել, նոյն գետակը կրկին երկիւղով մօտենում է նրան, կրկին լիզում և կրկին վազում առաջ, բայց առաջուայ նման նա չէ գոռում, կատաղի յորձանք չէ տալիս դէպի բերդը, այլ այժմ աւելի հանդարտ, աւելի մեղմ է հոսում նրա տակով...

Ժամանակի աւերիչ հետքը դրան էլ է նիհարացրել, դրա ձայնն էլ է կարել, այն ինչ առաջ, երբ շէն էին պարիսպները, երբ այնտեղ եռում էր կեանքը, ինքն էլ դէր էր և վարար...

Այդտեղ ահա, այդ բերդի*) մէջ կանգ էր առել Աշոտ Երկաթը իւր վեց հարիւր քաջերով, որպէս զի մի փոքր հանգիստ առնի և անելիքը մտածի։

Բայց ինչ հանգստութիւն. նրա համար չկայ հանգստութիւն։ Ամբողջ գիշեր նրա աչքին քունը մօտ չէր գալիս և նա դուրս եկաւ իւր օթևանից շնչելու թարմ օդ։ Տխուր նստեց նա մի քարի վրայ և մտածմունքները մինը միւսի ետևից պաշարեցին նրա հոգուն։

Մի ամբողջ տարի անցաւ իւր հօր մահուանից յետոյ և այդ կարճ ժամանակում որքան

*) Լոռուայ բերդի հիմնարկողը անյայտ է, վերագրում են դրա նորոգութիւնը ԺՍ. գարում Դաւիթ Անհողին։

փոփոխութիւն կրեց իւր աշխարհը։ Մի տարի առաջ բարբարոս Իսուֆի զինուորները կոխկռտում էին իւր երկիրը տակն ու վրայ էին անում, մոխիր դարձնում ամեն ինչ, իսկ հիմա, այդքան կարճ ժամանակից յետոյ, նրանց հետքն էլ չկայ...

Սուգն ու շիւանը կրկին ուրախութեան փոխուեցան, երկիրը խաղաղացաւ, լսուեց հօտաղի ուրախ երգը, երկրագործի օրհնանքը... Ո՜հ, ինչ բերկրանք, ինչ ուրախութիւն... բայց արդեօք երկաը պիտի տևի այս թէ նորից սև սուգը պիտի տարածուի... Ահա հարցեր, որոնք շփոթեցնում էին Աշոտ Երկաթին, որոնք սպիտում էին մտածութեան մէջ ընկնել։

Ի՞նչ պիտի անէր ինքը միայնակ առանց օգնականի, Իսուֆը ուր որ է պիտի նորից ոտղի իւր երկիրը և այն ժամանակ ինքը միայնակ անկարող պիտի գտնուի դիմադրելու նորա անթիւ հրոսակներին։

Իսկ ի՞նչ էին շինում հայ նախարարները, որոնք օգնութեան ձեռք կարող էին մեկնել Իսուֆի դէմ. նրանցից ամեն մէկը, որ մինչև Աշոտ Երկաթի քաջագործութիւնները փակուած էին իրանց բերդերում, կամաց-կամաց իջնում էին ցած, մանր յարձակումներով նեղում էին Իսուֆի զինուորներին և միմեան իրանց երկիրը մաքրում թշնամիներից, ապա սիրտ առնելով իրանց բերդերն ամրացնում և այդ սուրը Աշոտի դէմ դարձնում։

Լուռ հետևում էր Աշոտ Երկաթը դրանց և ապատում հետևանքին։ Նորին թախիծը պատում էր նրա սիրտը, բայց դեռ չէր ուզում նրանց գէնքով հնազանդեցնել և ճանաչել տալ իւր գերիշխանութիւնը։ Նա մտածում էր միացնել հայ նախարարութիւնը իրեն հետ և այդպիսով վերջնական հարուած տալ Իսուֆին։ Բայց այդ անկարելի էր առժամանակ... Մտածում էր արին Աշոտ և այդ մտածմունքների մէջ ընկղմուելով նրա քունը տարաւ։ Վրդովալից էր նրա քունը, սոսկալի և դառն երազները շփոթեցնում էին նրան, այն ինչ ձորերի մէջ վազող գետակը իւր օրօրն էր ասում... Նա տեսնում էր հեռու, շատ հեռու ապագան, որ պատած էր թանձր խաւարով, ուր ճչի, վայնասունի և աղիողորմ հեծկլտանքի ձայներ էին լսվում խաւարի միջից, ուր երբեմն երևում էին կմախքի նման մարդիկ, որոնք ուրուականների նման առաջ գալով, խաւարի միջից ձեռքերը վեր էին կարկառում, գթութիւն խնդրում, բայց այդ իսկ վայրկեանին աներեւոյթ ձեռքը սուր մանգաղով հնձում էր նրանց և նրանք դիաթաւալ ընկնում էին ցած...

Բայց այն ինչ է, խաւարի մէջ, հեռուում, երբեմն երբեմն երևում են կրակի լեզուներ, որոնք լափում են շինութիւնները, որոնք կործանվում են մէկ մէկ՝ մինը միւսի հետևից, մեծերը փոքրերին հետևելով վերջնական մի բռնկոց է լսվում, վայրկենական լոյսով լուսաւորվում է խաւար հորիզոնը, որի միջից երևում են փլա-

տակ աշտարակների և բուրգերի ճնշացորդները և ապա խորին խաւարը սիրում է հորիզոնին։

Սարսափած վեր է թռչում Աշոտ Երկաթը և վայրենաբար չորս կողմը դիտում։

Գիշերն անցել էր և լոյսը բացուել, հեռու հորիզոնից ծանր կերպիւ բարձրանում էին սև կպրանման ամպեր և հետզհետէ ծածկում հորիզոնը։ Ամպերի միջից լսվում էին որոտման խուլ հառաչանքները և փայլակները մէկը միւսի ետևից շտապ-շտապ յայտնվում էին երար։

Սպառնալից ամպերը հետզհետէ բարձրանում էին վեր և փոթորիկ գուշակում։ Վեր կացաւ Աշոտ Երկաթը և դէպի իւր սենեակն էր ուզում գնալ, երբ տեսաւ իւր առաջը զրահաւորուած մի զինուոր կանգնած։

Աշոտ Երկաթը ժպտաց։

— Դու լաւ պահպանութիւն ես անում ինձ, Դաւիթ, ասաց նա դիմելով այդ զինուորին։

— Ես իմ պարտքս եմ կատարում։

— Ապրիս, այդպէս էլ պէտք է, երանի թէ քեզ նման պարտաճանաչ ամենքը լինէին։

ԺԵ.

Կարճ ժամանակ անցնելուց յետոյ, Աշոտ Երկաթը իւր խմբով ճանապարհ էր գընում Աղստափայի Ծորաձոր ամրոցը, ուր կենդրոնացած էր Թշնամու բանակը։

Լոռուայ կապոյտ երկինքն արդէն հետզհետէ ծածկում էին ամպերը, խուլ մռնչիւններն աւելի և աւելի լսելի էին լինում և մի տեսակ ծանր բայց խաղաղ օդ սիրում էր չորս կողմը։ Բնութիւնը լուռ էր. ամեն ինչ դադարել էր, ամեն շարժողութիւն կտրուել, դաշտի բոյսերն ու ծաղիկներն էլ լուռ իջեցրել էին գլխները և սպասում էին մի ինչ որ երկիւղալի բանի, որ բերում էր իւր հետ փոթորիկը։ Լոռուայ խաղաղ բնութիւնը սպասում էր փոթորկին, լուռ, անձայն. նա վախենում էր դրանից, որ իւր համար խաղ ու պարի ասպարէզ էր շինել Լոռին և յանկարծ երևալով հեռու հորիզոնից իւր մեռելութեան և անշարժութեան ազդեցութիւնը տարածում էր բնութեան վրայ, վայրկենաբար պատում ամբողջ հորիզոնը մի ծայրից մինչև միւսը և ապա սկսում իւր աւերմունքը։

Եւ Աշոտ Երկաթը սպասում էր Լոռուայ այդ ահեղ փոթորկին, բայց նրանից չէր վախենում, գիտէր նա դրա արհաւիրքները, դրա խաղն ու պարը, դոռունն ու գոչիւնը, բայց կրկին առաջ

էր սլանում։ Նրա միտքը կաշկանդուած էր ուրիշ բանով. նրա ամբողջ էութիւնը բռնուած էր ուրիշ մաքերով։ Փոթորիկը կը գայ և կ'անցնի, կապոյտ երկինքը կը ծածկուի սև-սև ամպերով, այնտեղից կը լսուի գոռոզն ու գոչիւնը, շանթերը կը փայլատակեն չորս կողմը, բայց չի անցրի կարճ ժամանակ և նա ինքն իրան կը դատարի, արևը կը ժպտայ, բնութիւնը կը կենդանանայ, մարդիկ դուրս կը գան իրանց բնակարաններից, թռչունները կըսկսեն անուշ ծլվլոցը և բնութիւնը կրկին կը կենդանանայ։ Հոգ չէ, երբ փոթորիկը ի վերուստ է գալիս, վայ է միայն, երբ այդ փոթորիկը անհաւատ Իւսուֆի հրոսակներն են առաջացնում։

Ու գնում էր առաջ Աշոտ երկաթը և իր հայեացքը դարձրել էր ճանապարհի ուղղութեամբ, որ ոլոր մոլոր պատյաններով ձգվում էր իր առաջ։

Յանկարծ իր առաջ, ճանապարհի հէնց մէջտեղը, փոշու մի ամպ բարձրացաւ։ Աշոտ երկաթը իր աչքերը լայն բացեց և ուշադրութեամբ դէպի փոշին նայեց, որ սկսեց պատյանները անել և սիւնաձև բարձրանալ վէր, միշտ վեր, դէպի սև ամպերը։ Ճախարակի նման անդադար պտտում էր այդ փոշին և ճանապարհի ուղղութեամբ առաջ գնում, կարծես նա ուզում էր ծաղրել Աշոտ երկաթին և նրա խմբին, որոնք բնութեան արհաւիրքներից չվախենալով, այնպէս առաջ էին գնում։ Աշոտ երկաթը յօնքերը կիտեց, նա չէր

սիրում այդ տեսակ «քաջքաջամիները», որ այնպէս յամառ կերպով շարունակում էր պատուել իւր առաջ. ձին առաջ քշեց և ուզեցաւ կտոր կտոր անել փոշու այդ սիւնը, որ մինչև երկինք էր հասնում, երբ նա կարծես ժպտալով դրա դէմ, պոչը հաւաքեց և թռաւ հեռու և հեռու, ո՞վ գիտէ ուր, ո՞ր ձորի կամ ո՞ր լեռան գագաթին կրկին իւր պարը շարունակելու։

Վերջացաւ, պրծաւ քաջքաջամին, հեռքն էլ չմնաց և յանկարծ խորին լռութեան մէջ լսուեցաւ որոտման ահռելի ձայնը, մի վայրկեան էլ և ահա սկսուեց Լոռուայ հեղեղը... ինչ էր դա, ծովը իւր բերանն էր բացել, երկինքը պատառուել, թէ՞ ովկիանոսը երկնքի վրայ շուռ եկել։

Բոլոր բնութիւնը խառնուել էր իրար, էլ ոչինչ բան չէր երևում ոչ ծառ, ոչ թուփ, ոչ լեռ և ոչ ձոր, ամեն ինչ միախառնուել էր, ամեն ինչ ձուլուել իրար հետ և դարձել ջրային մի զանգուած։

— Տղերք, կանգ առէք, մի քայլ անգամ անկարելի է առաջ գնալ, կանչեց Աշոտ երկաթը և ինքը իսկոյն ձիուց ցած թռաւ, նրան հետևեցին իւր ձիաւորները, որոնք իջնելով ձիերից մի շղթան կազմեցին և սկսեցին սպասել փոթորկի անցնելուն։ Գուռ, գուռ, գուռ ձայն էր հանում հեղեղը և ճանապարհորդների գլխին կժերով ջուր թափում, որոնք մինչև ոսկորները թրջուել էին և ցրտից դողդողացնում էին։

— Այ քեզ հեղեղ, ասաց զինուորներից մէկը,

որի միրուքից և գլխից առուի պէս հոսում էր ջուրը:

—Այդպէս էլ պէտք էր, մենք վաղուց է որ չէինք լողացել և Աստուած մեզ լողացնում է, ինչ կայ որ, պատասխանեց մի ուրիշը, որ իւր ահագին վահանի տակ պատսպարուել էր հեղեղից:

Այդ միջոցին լսուեցաւ հեռուից մի տեսակ խուլ և անորոշ ձայն, կարծես այնտեղ ձորի միջից թռչում են հազարաւոր թռչուններ կամ թէ ինչպէս թէ հեռու լեռան քամակին քանդվում են աշտարակի պարիսպները:

Աշոտ Երկաթը, որ լուրջ կերպով հետևում էր ամեն բանի, իսկոյն գլխի ընկաւ թէ ինչ վտանգ է սպառնում իրանց և նա դառնալով դէպի իւր խումբը, գոռաց բարձր ձայնով.

—Հեծնել ձիերը, բարձրանալ աջ, դէպի բլուրը: Խումբը իսկոյն կատարեց նրա հրամանը և քաշուեցաւ վեր դէպի բարձրութիւնը, այն ժամանակ նրանք տեսան, թէ ինչպէս հեղեղաւոր լեռան պէս գլուխը բարձրացրած եկաւ ողողեց այն տեղը, ուր կանգնած էին մեր կարիճները:

Անցաւ մի փոքր ժամանակ. ամպի որոտմունքը հետզհետէ կորուեց, դադարեց հեղեղը, վերջացաւ անձրևը և կապոյտ երկինքը ցոյց տուեց իւր ուրախ դէմքը, ոսկերքը ազատ շունչ քաշեցին և ամեն մէկը սկսեց իւր թաց շորերը քամել· քիչ ժամանակից յետոյ վառեցին մի ահագին խարոյկ և ամեն մէկը սկսեց իւր շորերը ցամաքեցնել: Աշոտ Երկաթը նայեց իւր կարիճներին և նրա հոգին լցուեց գոհունակութեամբ: Վեց հարիւր մարդուց ոչ մէկը արտունչ չէր յայտնում, ոչ մէկի դէմքը մռայլ ու յոգնած չէր, այլ ուրախութեան ժպիտը փայլում էր նրանց դէմքերին, երևում էր, որ ամենքը իրանց կեանքը Աշոտ Երկաթի համար էին դրել...

Երբոր մի փոքր հանգստացան, նրանք կրկին իրանց ճանապարհը շարունակեցին և մութը դեռ նոր էր պատել, երբ զգուշութեամբ վանք առան Խորաձոր ամրոցի պարիսպների առաջ:

Աշոտ Երկաթը հրամայեց իւր քաջերին մի փոքր հանգիստ առնել և կէս գիշերուան դէմ անակնկալ կերպով յարձակում գործել բերդի վրայ...

ԺԴ.

Թողնենք Աշոտ Երկաթին Խորաձոր ամրոցի պարիսպների տակ, թողնենք Դաւթին իւր Աստղիկին որոնելիս և մենք դանք Վասպուրական երկիրը, Գագիկ դաւաճանի աշխարհը, ուր ծփում են Աղթամարայ կամ Վանայ լճի կապոյտ ալիքները:

Գագիկ Արծրունին խղճահարուած իւր ստոր դաւադրութիւնից, որ արել էր Սմբատ արքայի դէմ, բայց աւելի երկիւղ ունենալով Իւսուֆից իւր կեանքի համար, խոյս տալով Իւսուֆից, մտաւ իւր երկիրը և իւր առաջին գործը եղաւ քաշուել

ամուր տեղերը և ապասել հանգամանքների, մինչև որ կարողանար իւր մտադրութիւնները առաջ տանել։

Մինչև Աշոտ Երկաթի երեսալը նա դեռ վախենում էր Իւսուֆից և չէր համարձակվում իջնել բերդերից, թէև տեսնում էր իւր ժողովրդի հալածանքը, տառապանքը և թշուառութիւնը. բայց հէնց որ լսեց Աշոտ Երկաթի քաջագործութիւնները, հէնց որ իմացաւ Իւսուֆի զօրքերի յաղթուիլը, նա սիրտ առաւ և ինքն էլ Աշոտ Երկաթի օրինակին հետևելով սկսեց նեղել Իւսուֆի հրոսակներին և քշել նրանց իւր երկրի սահմաններից։ Հեռատես և խելօք մարդ էր Գագիկը. նա հասկացաւ որ նախ իւր երկիրը պէտք է մաքրի արտաքին թշնամիներից, իւր երկրում պէտք է իւր համար մի ամուր յենարան պատրաստի և ապա թէ ձգտի իրագործելու իւր մտքերը։ Նա արդէն վասպուրականի տէրն էր, թագաւորն էր, բայց դրանով չէր յագենում նրա փառասիրութիւնը, դրանով նա դոհ չէր։ Նա ուզում էր լինել թագաւորաց թագաւոր և օրինական գահը յափշտակելով լինել միահեծան տէր, այդ էր նրա ձգտումը, այդ էր նրա մտածութեան միակ առարկան։ Իւսուֆի օգնութեամբ ուզում էր իւր այդ միակ ձգտմանը հասնել, բայց շուտով հասկացաւ իւր սխալը և այժմ ինքը միանգամ սկսեց ձեռնարկել այդ նպատակին հասնելու։

Զշփոթեցրին նրան Աշոտ Երկաթի քաջագործ-

ծութիւնները, այլընդհակառակը նա ուրախացաւ, որ առիթ տուեց Իւսուֆի ոյժերը դուրս քշելու իւր երկրի սահմաններից էլ և նա իւր եղբայր Գուրգէնի հետ միասին յարձակուեցաւ Իւսուֆի զինուորների վրայ, հալածեց նրանց մինչև Աղապատականի սահմանները և ապա իջնելով ամուր բերդերից, սկսեց իւր երկիրը կարգի ձգել։

Մես հայ իշխաններն ու նախարարներն էլ՝ հոգի առած այդ յաղթութիւններից, սկսեցին իրանց երկիրներից հալածել թշնամուն։ Ամենքը հալածում էին Իւսուֆի հրոսակներին ինքնուրոյն և ինքնակամ կերպով, չկար դրանց մէջ մի ընդհանուր կապ, չէին ճանաչում նրանք մի ընդհանուր դեկավար, չունէին մի որոշ ծրագիր։

Եւ Իւսուֆը դեռ համբերում էր. նա ճանաչում էր հայերին, նա գիտէր նրանց անմիաբանութիւնը, նա հասկանում էր որ վաղ թէ ուշ այդ նախարարները իրանց սրերը իրար դէմ կը դարձնեն և այն ժամանակ ինքը գիտէ թէ ինչպէս կողոպի հայոց երկիրը արիւնով թէ ինչպէս իւր վրէժը սաստիկ կառնէ հայերից։

Բայց Գագիկի հոգը չէր թէ կը կործանուէին փոքրիկ նախարարութիւնները, թէ կը տառապէր ժողովուրդը, կը թափուէր հայոց արիւնը. նա միայն ամեն միջոց գործ էր դնում իւր իշխը ի կատար ածելու։

Նստած էր նա Վան քաղաքում Շամիրամից հիմքը ձգած ամուր բերդում և սկսում էր գանազան նորոգութիւններ անել և ամրացնել բեր-

դը: Դէպի Բզնունեաց ծովը նայող կողմը շինեց նա պեղեցիկ պալատ, պեղեցիկ ճեմելիքներով, որտեղից զբօսնողի առաջ տարածվում էր վա- նայ լճակի անսահման կապոյտ ջուրը, ուր եր- բեմն-երբեմն լողում էին փոքրիկ մակոյկները իրանց սպիտակ փոքրիկ առագաստներով, որ մի- մի վայրենի կարապների էին նմանում:

Գագիկը գոհունակութեամբ նայում էր հրա- շալի տեսարանին և մտածում աւելի ճոխացնե- լու և նորանոր շինութիւններ*) աւելացնելու, բայց նրա հոգին խաղաղ չէր, նա գոհ չէր, աշ- խարհի այդ հրաշալի անկիւնով...

Տխուր էր այսօր Գագիկը. շատ շուտով նա մտածում էր բաժանուել իւր ընտանիքից, իւր սիրուն աղջկանից, որին հոգու չափ սիրում էր:

Հայոց երկիրը խաղաղացել էր, Իւսուֆի հրո- սակներից մի փոքր ազատ շունչ էր քաշել հայ ժողովուրդը, և ահա այժմ ինքը մտածում էր այդ խաղաղութիւնը խանգարել, առաջին սուրը ինքը բարձրացնել հայոց դէմ:

Նախջուան քաղաքը նրա մտքից չէր անց- նում, որ խլելով Մարբատ արքան յանձնել էր Սի- սակեանց իշխանին և որ այնքան գժտութիւննե- րի առիթ էր տուել: Եւ Գագիկը պատրաստու- թիւն էր տեսնում յարձակում գործելու Նախ- ջուանի վրայ և յետ խլելու Սիսակեան իշխանից այդ քաղաքը:

*) Յետոյ շինեց երկու եկեղեցի ս. Գրիգոր և ս. Սիօն անուամբ:

Դառն յիշողութիւնները անցնում էին նրա մտքով և նա լուռ դիտում էր արևի մուտքը, որ թագնվում էր հեռու հորիզոնի տակ, երբ ան- նկատելի կերպով դուրս եկաւ նրա աղջիկը՝ Հե- ղինէն, իւր երկու նաժիշտների հետ և առանց նկատելու հօր ներկայութիւնը յենուեցաւ պարա- պի վրայ և իւր հայեացքն ուղղեց դէպի Բզնու- նեաց ծովի ջրերը, որոնք մեղմ ծփում էին և պիպչելով ժայռերին փրփրում... Նազելի և քնք- քոյշ օրիորդ էր Հեղինէն, դեռ տասն և վեց տա- րին չլրացած: Սև սաթի նման յօնքերը բարակ աղեղի նման կամար էին կապել նրա փայլուն, բայց թախիծով լի աչքերին: Նա լուռ դիտում էր փոքրիկ ալիքների վխտալուն, որոնք պար էին բռնում արևի վերջին ճառագայթների տակ... Ա՜խ, ինչքան շատ էին այդ ալիքները, մի ալիք չարդվում, փշրվում և ոչնչանում էր, միւսն էր գալիս. նա էլ էր ոչնչանում, մի ուրիշն էր գա- լիս, ապա դարձեալ ծնվում նորը, նա էլ մեռ- նում և տեղը ծնվում նորը և նորը... մտածում էր Հեղինէն և ապա իւր անթարթ աչքերով դի- տում էր հեռուն և հեռուն, ալիքներից հեռու, դէպի հորիզոնը, դէպի լեռները, որի հետ գըտ- նվում է Այրարատեան աշխարհը, ուր այնպիսի հպարտութեամբ երկինք է հասցրել իւր ալեոր գագաթը հսկայ Մասիսը և ուր շրջում է դիւ- ցազն Աշոտ Երկաթը, հայոց օրինական թագա- ւորը...

Մի փոքր ժամանակ լուռ դիտում էր Գա-

գիկը ուր աղջկան և ապա մօտենալով նրան քաղցր ձայնով ասաց։

—Աղջիկս

Հեղինէի մարմնով մի սեռակ սարսուռ անցաւ լսելով հօր ձայնը, բայց երբ նայեց նրա կոպովով լի աչքերին, փաթաթուեց հօրը և լուռ սկսեց նայել նրա աչքերին։

Գագիկը մի համբոյր դրոշմեց նրա մարմարիոնի նման ճակատին և նրա ձեռքերը իւր ափի մէջ առնելով կանչեց։

—Դու տխուր ես, Հեղինէ, ինչն է արդեօք տխրեցնում քեզ. մի՞թէ գոհ չես այս սքանչելի տեղով և այն վայելչութիւններով, որով շրջապատուած ես դու, ասա, հոգիս, ինչ բան վրդովեցնում է քեզ և ես իսկոյն կը կատարեմ քո ամեն մի ցանկութիւնը...

—Չէ, հայրիկ, ես երջանիկ և բաղդաւոր եմ, իմ միակ ցանկութիւնն է, որ դու միասս մեզ հետ անբաժան։ Վասպուրականը ընդարձակ երկիր է, բաւականացիր նրանով և մենք երջանիկ կը լինենք։

Մի սեռակ մոայլ քող անցաւ Գագիկի դէմքի վրայ լսելով այդ խօսքերը և նա իսկոյն պիտի ընկաւ թէ ինչ է ուզում ասել Հեղինէն։ Այդ միևնոյն բանը միշտ կրկնում էր նաև իւր մայրը։

—Չէ, աղջիկս, ես շուտով պիտի արշաւեմ դէպի Նախջուան, տղամարդու գործը չէ տանը նստելը. իսկ կանանց գործ չէ մարդոց գործերի

մէջ խառնուելը, դուր դու և քո մայրը աշխատում էք եա կանգնեցնել իմ նպատակից։

—Իսկ Աշոտ Երկաթը մի՞թէ թոյլ կըտայ դրաւելու այդ քաղաքը։

—Աշոտ Երկաթը... հը՞մ... դա արդէն իմ գործն է. բայց դու գնա սենեակդ, փչում է արդէն երեկոյեան սառը քամին և դու կարող ես մրսել, ասաց Գագիկը և չսպասելով պատասխանի ներս գնաց իւր պալատը, թողնելով Հեղինէին միայնակ, նաժիշտների հետ։

Հեղինէն նայեց հօր եաևից և ապա մի դառն ժպիտ խաղաց նրա երեսին։

—Ո՛չ, ամեն բան կը գոհեմ, որդիական պարտաւորութիւնս կը մոռանամ և այն սև կնիքը, որ ուզում է դնել հայրս իւր անուան վրայ, ես իմ թոյլ տեղովս կը քաւեմ։ Չեմ թոյլ տայ, որ Աշոտ Երկաթից օրինական գահը յափշտակուի... Ես քեզ հետ եմ, ով քաջ դիւցազն, քեզ համար եմ միայն աղօթում, քո յաջողութեան վերայ եմ մտածում... Թոյլ բազուկներով կը խորտակեմ նոյն իսկ հօրս բոլոր ջանքերը և նրա բոլոր մտադրութիւնները ի դերև կը հանեմ... Շուտով, շատ շուտով կիմանաս, որ մի աներևոյթ ձեռք, ամեն դաւադրութիւններից քեզ պահպանում է,—այդպէս ասաց ինքն իրան Հեղինէն և այն է ուզում էր ներս գնալ, երբ մի քահանայ խոր գլուխ տուեց նրան։ Մի սեռակ հեռաքրքրութիւն պատեց օրիորդին և իսկոյն հեռացրեց նաժիշտներին։

—Չ՛ը, տէր Սահակ հայր, լուռ ունիմ։

—Այո, իշխանուհի, ուղարկուած մարդը դարձաւ և Աշոտ Երկաթը ողջ և առողջ է։ Ամբողջ երկիրը մաքրել է անօրէններից և այժմ ճակատած է Ադատափա ամրոցի դէմ, որ կատկած չկայ, այժմ առած կը լինի։

—Գոհութիւն Աստուծոյ, լաւ լուրերը ես բերել, տէր հայր, բայց հարկաւոր է նրան մի քանից զգուշացնել։ Այս իրիկուն նամակ կը գրեմ և այդ թուղթը անյապաղ պիտի Աշոտին հասցնէք։

—Պատրաստ եմ քո հրամանը կատարելու, իշխանուհի, ասաց տէրտէրը, որ Գագիկի ընտանեաց քահանան էր և խոր գլուխ տալով հեռացաւ Սրծրունեաց օրիորդից։

Միւս օրը առաւօտեան ձիաւորը սրարշաւ գնում էր դէպի Աշոտ Երկաթը, հետը տանելով Հեղինէի նամակը։

ԺԲ.

Մի մռայլ գիշեր էր...

Լեռների ցուրտ քամին էր, որ փչում էր ու ոռնում և տարաբաղդ մի խումբի յուսաբեկ սիրտը աւելի յուսահատեցնում։

Դէպի Վաղարշակերտ տանող ճանապարհի վրայ հայ գերիների այդ խումբը շրջապատուած Իւսուֆի զինուորներով դանդաղութեամբ առաջ էր քայլում։

Սրտաճմլիկ պատկեր էր ներկայացնում այդ տեսարանը։

Կին, աղջիկ, ծեր թէ երիտասարդ ծանր շղթաներով և պարաններով կապկապած ցաւից տնքում էին ու ծանր հառաչում։ Այդ հառաչանքները երբեմն երբեմն խանգարւում էին քամու ուժգին շառաչով և մարակների հարուածների ձայներով, որպիսիները իջեցնում էին ամբողջ զինուորները այս ու այն հայի գլխին, որոնք դանդաղ էին քայլում։

Գերիների խումբը գնում էր առաջ...

Մութ խաւարն էր նրան ուղեկցում. սև տանջանքը ընկերակցում և անյոյս վիշտը կրծում նրա սիրտը։

Ջոր ու խոպան գետնի վրա բաւական երկար՝ անցնելուց յետոյ, գերիների առաջ բացուեցաւ մի ձոր, ուր պարզ ու վճիտ առուակը խոխոջալով անցնում էր առաջ և գիշերային խաղաղութեան մէջ իւր անուշ կարկաչիւնը հնչեցնում։

Գերիների խումբը կանգ առաւ։

Ինչպէս երեւում էր պահապաններն էս յոգնած էին ու հանգստութեան կարօտ։ Նրանք կանգ առան և քիչ յետոյ խարոյկների լոյսը լուսաւորեց գերիների խումբը, որոնք ով ինչպէս կարողացաւ թեք ընկաւ գետնի վրայ և լուռ ընկղմուեցան անծայր վշտերի մէջ։

Ամբից մի քանի քայլ անջատ, լեռ քարի վրայ նստած էր մի ծերունի, իսկ ծերունու ծընկ-

ների վրայ պլուխը դրած պարկած էր մի դեռատի աղջիկ ու լուռ արտասուում էր։

Հայր ու դուստրն էին դրանք, որոնց երկուսին էլ տանում էին գերութեան և ծերունի հօրը խնայել էին կեանքից զրկելուց միմիայն աղջկայ գեղեցկութեանը խնայելով։ Մահաբեր սուրը պէտք է կտրէր Թշուառ ծերունի վիզը, երբ դուստրը աղի արցունքով փրկեց նրա կեանքը։

Հայր ու դուստր լուռ էին, երբ այդ լռութիւնը խզեց դուստրը և արտասուաթոր աչքերով դառնալով հօրը ասաց.

—Մ՛ա, հայրիկ, ինչքան ծանր է գերութիւնը... Աստուածդ, խղճա մեզ։ Հայրը շփեց մօրուքը, յուսահատ մի ցնցուն արաւ, վեր նայեց, դէպի անողոք երկինքը ապա շոյելով աղջկայ գլուխը դառնացած սրտով կանչեց.

—Հա, Աստուածդ, խղճա մեզ... մեղայ Քեզ։ Աստղիկ ջան, Աստուածդ մեզ չի խղճայ, որովհետև մենք մեր ձեռքերով ենք մեր գերեզմանը փորում... Հայի Աստուածը այստեղ մեզ չունի, աբրաթի Աստուածն է մեր երկրին տիրապետում։ Մեր իշխանները հայի Աստուածուն մոռացած, աբրաթի Աստծուն են երկրպագութիւն տալիս, նրա ամիրապետի փեշի տակ մտնում ու մեզ անտէր ու անտիրական թողնում... Անտէր ենք, աղջիկս, անտիրական, որը և անօգնական... կանչեց ծերունիկը մի այնպիսի ցաւոտ հնչով, որ արաբ պահապանը կանգ առաւ ու նիզակը ճօճելով կանչեց.

—Լռի՛ր, անհաւատ, բաւական է ինչքան խօսեցիր։

Ծերունիկը մի րոպէ լռեց, կատաղութեամբ լի աչքերով մէկ արաբ զինուորին նայեց ու մէկ նրա նիզակի ծայրին։ ապա ծերունի կուրծքը առաջ ցցեց ու խորին վշտով կանչեց.

—Լռի՛մ... ինչու՞ ինչու՞ լռեմ... եթէ ես լռեմ, քարերը կը խօսեն։ Մեր իշխանները մեզ անտէր թողած ձեր փեշի տակն են մտել ու ձեզ են ծառայում իսկ մեզ անտէր թողնում։

—Ներանք խելօք են վարվում, դուք էք յիմարը, որ մեր սուրը հաւատը չէք ընդունում և մեր ամիրապետի դէմ ապստամբում էք, ասաց զինուորը և կրկին սկսեց իւր չափաւոր քայլուածքը։

—Այո, մենք յիմար ենք, ճիշտ է ասում արաբը, դարձաւ Աստղիկը հօրը։ Յիմար ենք, որովհետև մեր կեանքի անդորրութեան մասին չենք մտածում ու հաւատներս չենք ուրանում... Օ՜, եթէ մենք էլ մեր հաւատն ու ազգը մոռանայինք, իսլամին երկրպագութիւն անէինք այն ժամանակ այս գերութեան մէջ չէինք լինի։

—Ջէ, աղջիկս, մեղք մի՛ անի, մենք ենք, որ մեր ազգն ենք պահում։ Մենք ենք, որ Լուսաւորչի լուսաթաթախ հաւատն ենք պահպանում։ Ժողովուրդը, հասարակ ամբոխը եթէ չլինէր, հայ ազգն ու կրօնը վաղուց վերջացած կլինէր։ Դառն օրերն ու տանջանքները Աստուած մեզ է տուել ու մենք պիտի քաշենք։ Լացն ու

արցունքը մեզ է վիճակուած կրելու իսկ իշխանին քէֆն ու անդորը կեանքը... Մենք պիտի անքանք ու հառաչենք, իսկ իշխանը խնդայ և ուրախանայ...

—Բայց մինչև ե՞րբ, հայրիկ, խաւարում է կեանքիս գարունը, դեռափթիթ արևս մթնում...

—Համբերիր, զաւակս, համբերիր... Համբերութիւնն է մեր բաժինը: Ա՜խ, իմ արան ու անդաստանը, մահն ու լծկանը անտէր մնացին, անօրէն արարին աւեր եղան:

Այդ ժամանակ պահապան գինուորը նորից կանգ առաւ ու մարակի հարուածը իջեցնելով խեղճ ծերուկի մէջքին ասաց.

—Լռիր, շուն, թէ չէ կաշիդ կը քերթեմ:

Աստղիկի սիրտը մորմոքուեց ու նա իւր մարմնով պատսպարելով հօրը դիմեց պահապանին:

—Ինձ զարկ, անօրէն, բայց հօրս ձեռք մի տալ: Սպանիր ինձ, որ վերջ տրուի իմ թշուառ կեանքին:

Արաբ գինուորը ժպտաց ու դառն հեգնանքով Աստղիկին դիմելով ասաց.

—Չէ, մահը քեզ համար չէ, այլ այս զառամեալ ծերինը: Դու չես մեռնի, խելառ աղջիկ: Դու սիրուհես և գեղեցիկ ու մեր ամիրապետը եթէ գեղեցկութիւնդ տեսնի, քեզ իւր հարեմը կը տանի ու դու այնտեղ երջանիկ կապրես:

—Թշուառ անհաւատ, մի՛թէ կարծում ես թէ ես կենդանի նրա ձեռքը կընկնեմ:

—Օ՜... քեզ նման կամակոր աղջիկները շատ

են եղել, որոնք այդպէս են խօսել, բայց վերջը իրենց երջանկութիւնը մեր իշխանների գրկի մէջ են գտել: Կը գայ ժամանակ, երբ դու էլ մեր ճշմարիտ կրօնն ընդունելով երջանիկ կապրես... Ա՜յ, եթէ Իսուֆը կամ մեր իշխանները քեզ չվերցնեն ես քեզ ուրախութեամբ իմ տունը կը տանեմ: Բայց ինչ անես, որ հէնց վաղը դու մեր իշխանի գրկում կլինես իսկ այս զառամեալ ծերուկի դիակը շները կլափեն...

—Հայրիկ, այս ինչ է ասում... ա՛խ, մահը լաւ է ինձ համար քան սրանց պիղծ ձեռքերը:

—Մահն է մեր բաժինը, աղջիկս, աւելին մի՛ սպասիր... Մենք պիտի մեռնենք, որ իշխանը ապրի: Սև ճակատագիրն է մեր բաժինը, ասաց ծերունին, գրկեց աղջկան և լուռ կացաւ:

Լուռ էին և միւս գերիները այն ինչ արաբ գինուորները կրակի շուրջը բոլորած ուրախ քըքիչով ընթրիք էին անում և լսիրշ հայհոյքով դէպի գերիները նայում...

Ժ-ը.

Գիշերը իւր սևաթոյր թևերը տարածել էր ամեն կողմը և խորին խաւարի մէջ ընկղմել Աղտատափա կամ Մորաճոր*) ամրոցը

*) Պէտք է ենթադրել որ այդ բերդը այժմ Դիւի-

որ աժդահայ գազանի նման դուրս էր ցցուել ժայռի գլխին և հպարտութեամբ նայում էր ցած, իւր ոտքերի տակ, ուր ահռելի խոր ձորի մէջ լռիկ ու մէջիկ հոսում էր Ազատափի գետակը...

Ձորս կողմը սիրում էր խորին լռութիւն, երբեմն երբեմն միայն սուլելով անց էր կենում քամին, խրոխտալով յարձակվում պարիսպներին և ապա յաղթուելով նրանից, չեռ էր նահանջում պատերից և ոռնալով և հառաչելով փախչում հեռու և հեռու... կէս գիշերից արդէն անց էր. բերդի մէջ ամեն ինչ լուռ էր. խոր քուն էին մտել ամենքը՝ սկսած արաբ իշխանից մինչև չեռին գինուորը. քաղցր նիրհը պատել էր ամենին և ամենքը արդէն գտնվում էին երազական այն աշխարհում, ուր դիւթական, անուռ պատկերներ միմիայն գոյութիւն ունին... Պահապաններն անգամ, որոնք ձանձրացել էին քամու ոռնալուց և սուլելուց, չկարողանալով տանել դրա միատեսակ և անտանելի ողբը, ամեն մէկը կուչ էր եկել մի անկիւնում և ընկել էր մի տեսակ մրափման մէջ. երբեմն երբեմն միայն, երբ որ հեռուում, ձորի միջից լսվում էր վայրենի բորենու և գայլերի ոռնոցը, նրանցից մի քանիսը բարձրացնում էին իրանց ծանրացած գլուխները և անիծում էին այդ գազաններին, որոնք իրանց քունը խանգարեցին...

լինի և Բարվանսարա գիւղերի մէջ գտնուող Ղզղղալասի կոչուած բերդն է, որ կառուցուած է Ազատափա գետակի վրայ խոր ձորի մէջ։ Բ. Ա.

Բայց քամին իւր նուագն էր շարունակում և բուռն զօրութեամբ առաջ քշում երկնքի վրայ մռայլոտ ամպեր, որոնք արագութեամբ հեռանում էին հորիզոնից, մէկը միւսին հետևելով, մի ամպի կատր միւսի հետ խառնուելով և ձուլուելով...

Հէնց այդ միջոցին Աշոտ Երկաթը իւր երկու հարիւր կռիւներով զգոյշ մագլցում էր ժայռից ժայռ, քարից քար և մօտենում էր բերդին։ Ձորի կողմից մուտքը բաց էր և այդ կողմից ապահով կարծելով երկու պահապան միայն նշանակուած էին, որոնք հէնց նոր քուն էին մտել և ընկել էին դիւթական աշխարհը....

Հայ կռիւները բարձրանում էին վեր. ոչ մի շշունչ, ոչ մի ձայն չէր լսվում, ոչ մի քար, ոչ մի խիճ չէր պլորվում նրանց ոտքերի տակից. այլ գևերի նման նրանք աներկիւղ բարձրանում էին վեր, իրանց ոտքերի տակ թողնելով ահռելի ձորը, ուր ընկնողը պատառ պատառ պիտի լինէր։

Յամբի առաջ գնում էր Աշոտ Երկաթը, ինչպէս մի հասարակ զինուոր, ահա բարձրացաւ նա վեր և կանգ առնելով ազատ շունչ քաշեց և սրբեց ճակատի քրտինքը. նա չնկատեց անգամ, որ հէնց իւր ոտքի տակ տարածվում է քնած պահապանի մարմինը։ Յանկարծ նա լսեց մի տեսակ խուլ ձայն, որ ասում էր.

— Գալիս են, գալիս, Շահրնշահը...

Աշոտ Երկաթը սուրը մերկացրեց, բայց նայելով իւր ոտքերի տակ փռուած պահապանին,

սուրը կրկին պատեանը դրեց և ինքն իրան ասաց.

—Է՜հ, սրա համար չարժէր սուր հանել, և նկատելով որ ձորից բարձրանում են իւր կուրիճները, միայն իւր ոտքը դրեց պահապանի կրծքին։

Այդ միջին բոլոր կուրիճները արդէն ժողովուել էին Աշոտ Երկաթի շուրջը և նրա հրամանին էին սպասում, երբ լսուեցաւ մի տեսակ թրմփոցի ձայն, կարծես ով որ ցած գլորուեց ձորը։

—Ո՞վ ընկաւ, հարցրեց Աշոտ Երկաթը ցած ձայնով դիմելով իւր կուրիճներին։

—Ոչ ոք, պատասխանեց զինուորներից մէկը առաջ գալով, պահապաններից մէկին Մահմէդի գոգն ուղարկեցինք։

—Շատ լաւ արիք, այժմ հարկաւոր է գոյշ առաջ գնալ և սկսել կոտորածը, բայց հէնց որ լսէք թէ իմացան մեր բերդ մտնելը ամէն կողմից ահագին աղմուկներ բարձրացրէք և շփոթեցէք բոլորին։ Զինայել ոչ ոքի, մինչև որ զէնքերը վայր չդնեն։ Դէ, իմ կուրիճներ, սկսեցէք գործը, ժամանակ պէտք չէ կորցնել, ասաց Աշոտը և նրանք մի քանի խմբերի բաժանուելով սկսեցին կոտորածը։

Քնած զինուորները չգիտէին մարդիկ են իրանց գլուխները կտրում թէ գևեր, նրանք մինչև անգամ ժամանակ չունեցան զէնքի դիմելու, մի քանիսը միայն խելքի եկան, բայց հայ կուրիճների սուրը նրանց էլ վերջ տուաւ։ Զանգաւ կարճ ժամանակ և գեռ արշալոյսը նոր էր բացվում,

երբ ամբողջ բերդի մէջ գտնուած արաբաց գընդից կէսը կոտորուած էր. իսկ միւս մասը գերի բռնուած։

Աշոտ Երկաթը ազատ շունչ քաշեց, երբ զգաց, որ վերջին հարուածը տուեց Իւսուֆի զինուորներին, որոնք այլ ևս չէն համարձակուի անհանգիստ անելու իրան... Իւսուֆի վերջին զօրութիւնը չախջախելով, Աշոտ Երկաթը շտապեց դառնալ Արշարունեաց երկիրը։

915 թուականն էր երբ հայ իշխանները ակնածելով դրա քաջագործութիւններից և կարճ ժամանակում ցոյց տուած յաղթութիւններից, ի մի ժողովուելով Ափխազաց Գուրգէնի և վրաց Աւրներսէհ արքայի հետ միասին, թագաւորեցրին նրան իւր հօր փոխարէն։

Այնուհետև նա սկսեց խնամել երկիրը իբրև հայր։ Նա փառքի համար չէր մտածում, այլ նրա միակ ցանկութիւնն էր տեսնել իւր ժողովրդի բարօրութիւնը, սակայն այդ հանգստութիւնը երկար չտևեց և հայոց խաղաղ երկիրը նորից ալեկոծուեցաւ, նորից արեան և կոտորածի ասպարէզ դարձաւ, որ շփոթեց Աշոտ Երկաթի սիրտը։ Այս անգամ վէրքը շատ ծանր էր։

ԺԹ.

Ինչպէս հայր իւր ժողովրդեան, ինչպէս հասարակ մարդ, Աշոտ Երկաթը իւր սուրը մի կողմը թողած, շրջում էր իւր ժողովրդի մէջ և նրա երկարամեայ վէրքերը բուժում, նրա կարիքներին դարման տանում։ Նա մանէր գալիս քաղաքից քաղաք, գիւղից գիւղ, ծանօթանում էր ժողովրդի դրութեան հետ, երբ անակնկալ դիպուածը ստիպեց նրան ընդհատել այդ և նորից գէնքի դիմել, նորից արեան ասպարէզ գնալ։

Մի երեկոյ, երբ նոր վերադարձել էր ժողովրդի մէջ շրջագայելուց նրան յանձնեցին մի փոքրիկ նամակ, որ գրուած էր մանր բայց գեղեցիկ գրերով։

—Ո՛վ բերեց այս նամակը, հարցրեց Աշոտ Երկաթը իւր ծառաներին, երբ նա դեռ զարմացած զարձնում էր նամակը։

—Մի գիւղացի, որ իւր անունը և որտեղից լինելը չուզեց յայտնել, պատասխանեց ծառան։

Աշոտ Երկաթը շտապով բաց արաւ նամակը և սկսեց կարդալ, նա իւր աչքերին չէր հաւատում։

«Քաջդ Աշոտ Շահընշահ, գրած էր նամակի մէջ, մի կարծիր, թէ միայն նրանք են քո բա-

րեկամները, որոնք քեզ անձամբ ճանաչում են։ Ես քեզ չեմ տեսել, բայց լսելով քո քաջագործութիւնները սիրում եմ քեզ։ Սիրում եմ իմ հարազատ ծնողներից աւելի. ինչպէս իմ հարազատ եղբօր։ Իմ մտածութեանց առարկան միայն այն է, որ քեզ, թագաւորաց թագաւոր, միշտ յաջողութեան մէջ տեսնեմ և ես միշտ աղօթում եմ Տիրոջը, որ նա քո կեանքը երկար պահի այն ժողովրդի համար, որ մինչև քո երևալը տառապում էր։ Ինձ դու չես տեսնի, չես ճանաչի, բայց ես միշտ քեզ վրայ պիտի մտածեմ և քո բարիքները յանկանում։ Ուրախացաւ սիրտս, երբ լսեցի քո քաջագործութիւնները, իսկ այժմ տառում է սիրտս, որ քեզ տխուր լուրեր պիտի հաղորդեմ և վրդովեմ քո խաղաղութիւնը։ Գիտեմ դու չես վհատուիլ. վհատութիւնը դիւցազնի գործը չէ, այլ թոյլ և վախկոտների, իսկ դու դիւցազների դիւցազն ես։ Հայաստանը նորից պիտի աւերմունքի ասպարեզ դառնայ և այդ աւերմունքի պատճառը լինելու է Գագիկ Արծրունին, որ մօտ օրերս պիտի արշաւի Սիսական իշխանից Նախիջևան քաղաքը գրաւելու։ Զգուշացնում եմ քեզ, այդ սուրը նաև քո դէմ է գարձնելու. նա արդէն որոգայթներ է պատրաստում քեզ մէջը ձգելու, բայց նրա ամեն մի որոգայթը իզուր պիտի անցնի, քանի որ ես ամեն անգամ քեզ պիտի տեղեկութիւն տամ նրա մտադրութիւնների մասին։ Առայժմ այսքան։ Քեզ պաշտող իշխանուհի»։

Աշոտ Երկաթը երազի մէջ էր իրան կարծում. այնքան անակնկալ էր այդ նամակը։ Ո՞վ պիտի լինէր այդ իշխանուհին, որ զգուշացնում էր իրան Գագիկ Արծրունու դաւադրութիւնից և ինչո՞ւ Գագիկը կրկին վրդովում էր հայոց խաղաղութիւնը։ Նա երկար ոչ մէկի վրայ մատնանիշ չկարողացաւ լինել։ Արդեօք Գարգմանաց Սեւադայի աղջիկն էր, որի աչքերից շատ անգամ յափշտակուել էր և եթէ նա էր ինչո՞ւ ստորագրութիւն չկար, կամ ինչո՞ւ ինքը Գարգմանաց իշխանը անձամբ չէր հաղորդում այդ մասին, եթէ գիտէր Գագիկի այդ սուր մտադրութիւնները։ Ինչ և է, պէտք էր սպասել և տեսնել թէ որքան ուղիղ էին իշխանուհու այդ ցուցմունքները։

Եւ Աշոտ Երկաթը ծալեց նամակը ու մի կողմը դրեց, բայց չանցաւ մի քանի օր և ահա լուր ստացաւ, որ Գագիկը յիրաւի պաշարել է Նախիջևան քաղաքը, բայց նա տեղից չշարժուեց սպասելով հետևանքին։ Նախիջևանը առաւ Գագիկը և ահա Սիսականոց իշխանը, որին պատկանում էր այդ քաղաքը բարկութեամբ լի յարձակուեցաւ Վասպուրականի վրայ, սկսեց նրա երկիրները հուր ու մոխիր դարձնել։ Երկպառակութեան քարը պլորուած էր և սկսուեց Արծրունեաց և Սիսականոց արիւնը թափուել. այդ ախտը տարածուեցաւ նաև միւս հայ իշխանների մէջ, որոնք դուրս գալով իրանց երկրի սահմաններից սկսեցին հարևան հայ երկիրներն ու գաւառները աւերել և սրոյ ճարակ դարձնել։

Կատաղեց Աշոտ Երկաթը, մռնչաց սոսկալի մռնչմամբ, որ սար ու ձոր դողացին և ապա կրկին սուրը պատեանից հանելով սկսեց հայ նախարարների վրայ վազել։ Երկիրը նորից փոթորկուեց, նորից սուգն ու շիւանը տարածուեց, նորից գիւղերն ու քաղաքները ամայացան և թշուառ ժողովուրդը նորից սկսեց հեծեծել հայ նախարարների ըմբոստութեան և փառասիրութեան պատճառով։ Արտաքին թշնամին այժմ չկար, բայց ներքին խռովութիւնները աւելի խոր խոցեցին խեղճ ժողովրդին քան արտաքին թշնամին։

Բայց արտաքին թշնամին էլ հեռու չէր, Իւսուֆը, որ միշտ առաւելները կրճատացնում էր Աշոտ Երկաթի վրայ և մտածում նրանից վրէժխնդիր լինելու զօրքերին այնպէս չարաչար հալածելու պատճառաւ, այժմ սիրտ առաւ և կամաց կամաց իւր պատրաստութիւններն էր տեսնում Հայաստանի վրայ յարձակուելու։ Նա ուրախանում էր հայ նախարարների անմիաբանութիւնը տեսնելով և ազատ էր թողել նրանց իրար դէմ կռուելու, իրար ոչնչացնելու. նրան նպաստողը միայն այդ էր, ապա թէ ոչ վախենում էր նա Աշոտ Երկաթի վրայ յարձակուելուց։ Ժամանակը արդէն մօտեցել էր։ Եւ Իւսուֆը հրամայեց իւր բոլոր զօրքերին ժողովուել միասին Աւարպատական և այնտեղից մտնել հայոց երկիրը։ Նրանք արդէն կամաց կամաց մօտե-

նում էին հայոց երկրին, այն ինչ հայ իշխանները դեռ իրար արիւն էին թափում...

Ինչպէս անձրևից առաջացած հեղեղատը այնպէս ներս խուժեցին Իսուֆի հրոսակները հայոց երկիրը և սկսեցին անցած տեղերը քանդել, աւերել և կոտորել։ Ինչպէս հեղեղատը ողողում է և աւերում նախ առաջին հանդիպած տեղերը և ապա պանդան ուղղութեամբ ցրուելով վազում է միշտ առաջ, առանց հարցնելու տեղն ու դիրքը, այնպէս էլ արաբաց հրոսակները նախ սկսեցին աւերել իրանց մօտի երկիրները և ապա մտնել աւելի խորը, երկրի ներսը, ուր ազատ ասպարէզ գտնելով իրանց համար, մոխրի կոյտեր դարձրին շէն դիւղերն ու քաղաքները... Իրանց հետից նրանք թողնում էին միմիայն աւերակներ, սուզ, լաց ու շիւան... ամեն ինչ ոչնչանում էր նրանց բարբարոս ձեռքերից, ամեն ինչ կործանվում և արիւնով ողողվում մոխիր դարձած աւերակները... Ո՞վ էր խեղճ ժողովրդի պաշտպանը, նրանց մասին հոգացողը — ոչոք։ Իշխաններից ոմանք իրար հետ էին կռվում, իսկ ոմանք ամրանում էին

իրանց բերդերում, անպաշտպան թողնելով խեղճ ժողովրդեան, որի քրտինքով ապրում էին իրանք... Այո, ծանր էր, խիստ ծանր ժողովրդի դրութիւնը, ամեն հալածանք, ամեն տանջանք նրա գլխին էր թափվում և նա անօգնական, իր իշխաններից մոռացուած, ձեռքերը երկինք էր բարձրացնում և Տիրոջից օգնութիւն խնդրում։

Եւ նա, ամեն յոյսը կտրած, ամենից մոռացուած, սարսափով պատած, երկիւղից գլուխը կորցրած, թողնում էր իւր տուն ու տեղը, դաշտն ու արտերը և դէպի լեռները փախչում. ամեն կողմը թէ սարերում, թէ ձորերում, թէ տանը դիւղի մէջ և թէ դուրսը դաշտում մահ էր սպառնում նրան։

Կանգ առաւ Աշոտ Երկաթը, երբ լսեց ժողովրդի հեծեծանքը և քաջի սրտի մէջ անցաւ խորին կսկիծը։ Նա ձայն տուեց իշխաններին, ձայն տուեց նախարարներին, նրա ձայնը տարածուեցաւ լեռների և ձորերի մէջ, արձագանք տուեց. բայց ոչ մի իշխան, ոչ մի նախարար տեղից չշարժուեց, ոչ մէկը պատասխան չտուեց նրա կանչին, ամենքը կարծես խուլ լինէին և չը լսեցին քաջի ձայնը։

Սպասեց Աշոտ Երկաթը, շատ սպասեց, մի թոյլ ձայն անգամ չլսեց ու վրդովուեց քաջի սիրտը. նրա աչքերում երևացին արցունքներ, որոնք գլորուեցան ցած և խառնուեցան իւր սիրած ժողովրդի արտասուքների հետ։ Դիւցազնը լալիս էր, լալիս էր ոչ թէ մահից վախենալով,

այլ լալիս էր որ ինքը չի կարող բիւրի դէմ կենալ... Ապա խոցուած սրտով նայում է իւր մի բուռն քաջերին, որոնք լուռ նրա հրամանին են սպասում, ու նրա սիրտը լցվում է գոհունակութեամբ, նրա աչքերից հուր է ցայտում, դէմքն ընդունում է վեհ և խրոխտ կերպարանք և դառնալով նրանց ասում է.

— Տղերք, մենք միայնակ ենք հազարաւորների դէմ, մենք ամենքս պիտի մեռնենք, մահը միանգամ միայն գալիս է: Աւելի լաւ է քաջի պէս մեռնենք, սրերը ձեռքներս, քան թէ անօրէններից գերուենք և բանտի մէջ մաշուենք...

Ասում է նա, սուրը օդի մէջ ճոճում և թրըչում առաջ:

— Ապրի Աշոտը, կեցցէ Շահրնշահը, գոռում են կարիճները և նրա եակից սլանում...

Ու թռչում է Աշոտը, մէկ այստեղ է կոտրում թշնամիներին ու յանկարծ անհետանում, մէկ երկրի միւս կողմը: Անակնկալ ժամին յարձակվում է նա թշնամիների վրայ և յանկարծ չքանում...

Զարհուրանքը պատում է Իւսուֆի զինուորներին և նրանք ամեն րոպէ սպասում են նրան, ինչպէս երկնքի պատուհասի բայց նրանք կրկին առաջ են գալիս, կրկին աւերում և կոտորում, տաճանք տանջանքի վրայ աւելացնում հայ ժողովրդին: Նրանք չեն յուսահատվում Աշոտ Երկաթի մասը յարձակումներից, նրանք գիտեն, որ

իրանք շատ են, զօրաւոր, անթիւ, անհամար, իր մէկին կը կոտորի Աշոտ Երկաթը...

Ու անհերկիւղ, անօրէնները տանջում էին անպաշտպան ժողովրդին, պառաւներին և ծերերին նրանք կոտորում էին անխնայ, ծծմայրերի ձեռքերից դուրս էին կորզում նրանց սիրելի մանուկներին և գետնին խփելով մայրերի աչքի առաջ սպանում, յաղ կանանց կոխկռտում էին ոտքերի տակ և սպանում նրանց, իսկ միւսների որովայնը պատառելով, դուրս էին կորզում պտուղը *) և օդի մէջ շպրտում: Մեծամեծներին դանազան տանջանքներ էին տալիս, որ ցոյց տան իրանց պահած գանձերը և երբ սատանում էին ամեն ինչ կամ սպանում էին նրանց կամ եթէ առոյգ և քաջ է, գերութեան վարում և սաիպում հաւատան ուրանալու: Գերիներին պահում էին առանձնասոսկալի կերպով և երբ նրանք չէին ուրանում իրանց կրօնը, սարսափելի տանջանքներով մահացնում էին նրանց, մի քանիսին կենդանի էին թողնում, մի քանիսին ծանրութեան տակ ճկում, իսկ ոմանց կրծքից սկսելով սրով երկու կէս էին անում կամ կենդանի մաս-մաս էին անում սկսելով կտրատել ոտքերի կամ ձեռքերի ծայրից...

Անհնարին է մի առ մի յիշել այն սոսկալի տանջանքները, որ գործ էին դնում անհաւատները...

---

*) Զամչեան, Պլ. ժէ. երես 765:

ԻԱ.

Մութը նոր պատել էր աշխարհը, երբ Աշոտ Երկաթը իւր յոգնած կարիճներով դանդաղ առաջ էր գալիս։

Յանկարծ Աշոտ Երկաթի ձին ականջները ցցեց և գլուխը ճանապարհի մի կողմը թեքելով նայեց այն կողմը։

Աշոտ Երկաթը հասատում էր իւր ձիու ուշիմութեանը, նրա գլուխը բարձրացնելուն պէս, ինքն էլ այն կողմը նայեց, բայց մթութեան մէջ ոչինչ չնկատեց. ուստի շոյելով ձիուն ասաց.

— Ի՞նչ է, իմ նժոյգս, ինչից վախեցար. թէ քաղցած ես և շտապում ես կերակուր գտնել. սպասիր մի փոքր էլ, Աստուած մեզ էլ ու քեզ էլ կերակուր կտայ։

Այդ ժամանակ ձին կանգնեց նորա հետ միասին կանգ առաւ խումբը, Հեռու լանջի վրայ երևում էր մի շինութիւն, որ վանքի էր նմանում, որտեղից երևում էր ճրագի ազօտ լուսաւորութիւնը։ Բայց այդ չկանգնեցրեց ձիաւորներին, ընդհակառակը նրանք շատ ուրախացան երբ տեսան ճրագի լոյսը, քանի որ հանգստութեան էին կարօտ. իսկ թէ թշնամի էր այդտեղ թէ բարեկամ այդ միևնոյն էր. եթէ բարեկամ էր հօ լաւ, իսկ եթէ թշնամի, մի փոքր չանք էր հարկաւոր միայն որ նրանց այդ տեղից դուրս քշէին։

Ձիերի կանգնելուն պէս, ճիշտ այդ ճրագի հակառակ կողմից լսեցին նրանք մի տեսակ խուլ, գերեզմանական ձայն. կարծես գետնի տակից ով որ հառաչում էր։ Նրանք սկսեցին աւելի ուշադրութեամբ ականջ դնել. այո, ով որ հառաչում էր, ով որ տանջւում էր, որի հառաչանքը կարծես գերեզմանի միջից էր դուրս գալիս։ Վանքի մօտ անշուշտ գերեզմաններ կը լինեն և մեռելները յարութիւն են առել, մտածեցին մի քանիսը և սարսափը պատելով նրանց, նրանցից մի քանիսը սկսեցին լուռ աղօթք մրմնջալ և երեսներին խաչ քաշել։

Աշոտ Երկաթը ձին առաջ քշեց դէպի ձայնը. նրան հետևեց խումբը։

Մի փոքր առաջ գնացին և յանկարծ սարսափահար կանգ առան։ Մթութեան մէջ նրանց աչքին ներկայացաւ մի սոսկալի պատկեր, որ ցնցեց բոլորի ուղեղը և փշաքաղեց նրանց մարմինը։ Խմբի միջից մի քանիսը մինչև անգամ ուզում էին յետ դարձնել ձիերի գլուխը և փախչել այդ զարհուրելի տեսարանից, որ նրանց մտքի մէջ ծնեցրեց հազարաւոր հրէշաւոր երևոյթներ, բայց Աշոտ Երկաթը ամեն բան հասկացաւ և շուտով փարատեց իւր զինուորների անոտիապաշտութիւնը։

— Տղերք, տեսնում էք ինչպիսի տանջանքներով են տանջում հայերին, ասաց նա և ցած թռաւ ձիուց։

Փայտերի վրայ ամուր, գլխի վայր, կապուած

էին երկու մերկ կանայք, իսկ մի քանի գլուխներ սարսափահար դուրս էին ցցուել հողի մակերևոյթից։

—Ցրեք, հետ ածեցէք և ազատեցէք գոնէ այս երկուսին, որոնք դատապարտուած են կենդանի թաղուելու, բայց դեռ շունչը բերանները է, ասաց Աշոտ Երկաթը և ինքը մի կողմը գնալով նստեց կանաչ խոտի վրայ և ընկաւ խոր վշտի մէջ։

Դաւիթը և մի քանիսը շտապով յետ քանդեցին հողը և ազատեցին երկուսին, որոնք թուլացած ընկան գետին։

Ուշադրութեամբ նայում էր Դաւիթը թշուառների դէմքի գծագրութեանը երբ յանկարծ նա կանգ առաւ և ապուշի նման սկսեց դիտել մէկի դէմքը. նրա ձեռքերը թուլացան և կարծես աբիւնը սառեց երակների մէջ։ Այդ դէմքը ծանօթ էր իրան, բայց նա վախենում էր այդ նմանութիւնը տալ, վախենում էր, որ նա լինէր, ում վրայ կասկածում էր։

Նայեց, նայեց և ապա յանկարծ փաթաթուեց նրա վզով և սկսեց խելագարի նման համբոյրներ տալ նրան, մինչ զինուորները երկիւղով նայում էին նրան և կարծում թէ Դաւիթը խելագարուեցաւ։ Լուրը հասաւ Աշոտ Երկաթին. նա վերկացաւ տեղից և մօտեցաւ Դաւիթին, որ դեռ համբոյրներ էր տալիս, առանց կարենալու խօսելու։

—Ի՞նչ ես անում, Դաւիթ, ասաց Աշոտ Երկաթը բռնելով նրա ձեռքը։

Դաւիթը դադարեց համբուրելուց և խեղդուող ձայնով ասաց.

—Ա՛խ, տէր իմ, իմ աներս է, Մաթոսը, իսկ ո՛ւր է Աստղիկս, իմ նշանածը։

Ազատուածը, որ դեռ չէր հասկանում թէ ինչ է կատարվում իր շուրջը, երբ լսեց իր և Աստղիկի անունը, լայն բաց արաւ աչքերը, նայեց Դաւթին և ուշաթափուեց։ Ծերմ մարդ, նա ճանաչեց իր կորած փեսային։

Երբ անցաւ ուշաթափութեան րոպէն, երբ նրանք մի փոքր հանգստացան, այդ ժամանակ սկսեցին իրար հարց ու փորձ անել, իրար դրութիւնն իմանալ։

—Աւա՛, ո՛ւր է իմ Աստղիկը, դողդողալով հարցրեց Դաւիթը։

—Այնտեղ, ասաց Մաթոսը և ցոյց տուեց դէպի մօտին երևացող վանքը։ Դաւթի սիրտը տրոփտրոփաց. նա ուզում էր վեր կենալ և թըռչել դէպի վանքը, այդ բանը նկատեց Մաթոսը և նա կանգնեցրեց նրան։

—Սպասի՛ր, ո՛ւր ես դնում. այնտեղ, վանքում արաբաց զինուորներով լի է։ Մենք մեր գիւղից փախուստ էինք տալիս երբ հանդիպեցինք մի խումբ արաբների, որոնք անխնայ ծեծելով մեզ ամուր շղթաներով շղթայեցին ու բերին մինչև այստեղ։ Անասելի տանջանքներ տուին մեզ այստեղ։ Շատերին սպանեցին, միքանիսներին այսպէս հողումը թաղեցին, այն ինչ այս երկու կանանցը, որոնց տեսնում էք գլխի

վայր կապած այնքան ծեծեցին, մինչև որ շունչները կտրուեց։ Խեղճերը ուզում էին փախչել, բայց չյաջողեցաւ նրանց...

—Իսկ Աստղիկը, անհամբերութեամբ խօսքը կտրեց Դաւիթը։

—Աստղիկիդ և ուրիշ օրիորդների բռնեցին ու տարան վանքը։ Նա կենդանի է, բայց թէ ինչ վիճակի մէջ, այդ Աստուածն է յայտնի։

—Քանի մարդ են, հարցրեց Աշոտ Երկաթը որ մինչև այդ ժամանակ լուռ լսում էր։

—Զգիտեմ, պէտք է որ մօտ երեք հարիւր լինին։

—Լաւ ուրեմն։ Տղերք, ձիանները թողէք տեղն ու տեղը և հետևեցէք ինձ, ասաց Աշոտ Երկաթը և առաջ անցաւ։

Դաւիթը ուզում էր ամենից առաջ անցնել բայց զսպում էր իրան, այն ինչ նրա սիրտը պատառ պատառ էր լինում։

Թ.

Վանքը, որին մօտենում էին մեր կտրիճները, գտնվում էր Մասեաց լեռան հարաւային ստորոտներից մինի վրայ, մի խոր ձորում, որ ծածկուած էր մացառներով և թփերով։

Այդ ժամին, երբ Աշոտ Երկաթը մօտենում

էր պարսպին, վանքի ներսը վանականների ընդարձակ սենեակներից մէկում կատարվում էր հետևեալ տեսարանը։ Բազմոցի վրայ, ուր առաջ սովորութիւն ունէր թիկն տալու վանքի վանահայրը, այժմ նստած էր արաբաց այդ փոքրիկ գնդի մեծաւորը։

Նա խրոխտ, վայրենի դէմք ունէր, գլխին սպիտակ չալմա, իսկ մէջքից կախուած էր կեռ սուրը։

Նրա մօտ, նրանից մի փոքր ցած, նստած էին ուրիշ մարդիկ, որոնք ըստ երևոյթին նրա սատրապրեալներն էին։

Դրանից առաջ կանգնած էին երեք հայ աղջիկները, որոնք ամօթից և երկիւղից իջեցրել էին իրանց գլուխները և լուռ հեկեկում էին։ Սարսափը պատել էր խեղճ աղջիկներին և նրանք դողդողում էին երկիւղից, այն ինչ երեք զազանը ամենայն ուշադրութեամբ նրանց էին նայում և իրանց մտքում ընտրում էին ամենագեղեցկին։ Վայրենի կիրքը և անասնական ձգտումը բոլոր բոլոր գրգռվում էր նրանց մէջ և նրանց աչքերը արիւն բորբոքվում էին մոլութեան կրակով։

Բայց հայ աղջիկները ամօթից գետինն էին մտնում և ամէն կերպ աշխատում էին իրանց երեսները թագցնել։

—Մօտեցէք ինձ, մի՛ վախենաք, ես ձեզ վնաս չեմ տալ, ասաց մեծաւորը նշանացի անելով աղջիկներին, բայց աղջիկները տեղներից չշարժուեցան։

— Ձէք լսում, երեկ էլ երդուեցի, որ ձեզ ոչ մի վնաս չպիտի տամ թէև դուք անհաւատի աղջիկներ էք. բայց երդուում եմ Ալլահով, որ եթէ ձեր նզովեալ հաւատը ուրանաք և ընդունէք ճշմարիտ կրօնը, դուք մեր ամիրապետի հարեմում ամենասիրուն աղջիկներից մէկը կը լինէք։

— Դեաւուրի աղջիկներ, լսել էք ինչ է, որ տեղներիցդ չէք շարժվում. թէ ուզում էք որ այս կեռ սրովս ձեզ մաս-մաս կարատեմ, գոչեց մեծաւորը բարձրաձայն և վեր թռչելով տեղից բռնեց ամենասիրուն աղջիկներից մէկի ձեռքը, որ հազիւ տասնևհինգ տարեկան լինէր։ Նա քարշ տուեց նրան իւր մօտ և չնայած աղջկայ ընդդիմութեան, գրկեց նրա նազելի իրանը, ամուր և ամուր սեղմեց իւր կրծքին։ Նոյնը արեցին և միւս երկու արաբները, հետևելով իրանց մեծաւորի օրինակին։

Ապա մեծաւորը զօրով բարձրացրեց կիսաուշաթափ օրիորդի գլուխը և հիացած սկսեց նայել նրա գեղեցիկ դէմքին և փոքր ժամանակից յետոյ իւր զգուելի շրթունքները մօտեցնելով նազելի կոյսին, մի համբոյր դրոշմեց թշուառ աղջկայ գունատ շրթունքների վրայ։

— Ալլահը վկայ, Ասկեար, գարձաւ նա իւր ընկերներին, որ հայերի աղջիկների նման սիրունը աշխարհիս երեսին չկայ, միայն ափսոս, շատ ափսոս, որ սրանք միւսիւլման չեն։ Ապա նա սկսեց վաւաշոտ աչքերով նրան նայել, նրա գեղեցկութեամբ զմայլուել... Անցան մի քանի

րոպէներ, գարնուրանքի և տանջանքի րոպէներ, երբ յանկարծ դրսից լսուեցին սոսկալի աղաղակներ, վայնասունի ձայներ և սրերի հարուածներ... Երեքն էլ բաց թողին կոյսերին և վեր թռչելով տեղերից սրերը մերկացրին։

Այդ իսկ միջոցին դուռը ճարճատիւնով փըշրուեցաւ և այնտեղ երևեցաւ Աշոտ Երկաթը և Դաւիթը։ Դաւիթը նայեց աղջիկներին, նայեց մեծաւորի ոտքերի տակ փռուած ուշաթափ աղջկան և ճանաչեց իւր Աստղիկին։ Սոսկալի ճիչ արձակեց նա և խելակորոյս վրայ ընկաւ դէպի Աստղիկը և գրկեց նրան։ Այդ միջոցին նրա գլխին օրօրուեց արաբ մեծաւորի կեռ սուրը, մի մահաչափ էլ և Դաւթի գլուխը պիտի կէս լինէր, երբ հասաւ Աշոտ Երկաթը և տեղն ու տեղը պարկեցրեց մեծաւորին։ Միւս երկուսն էլ կատաղաբար վրայ վազեցին դէպի Աշոտ Երկաթը, բայց իրանք արիւնլուայ դեռին գլորուեցան, այն ինչ դուրսը վանքի մէջ նրա կարիճներն էին հունձն անում։ Փոքր ժամանակ անցաւ և գադարեց կռիւը. թշնամիներից մի մասը կոտորուած էր, իսկ միւս մասը փախուստ էր տուել։

Աշոտ Երկաթը թողեց Դաւթին, որ նա նշանածից կարօտն առնի, իսկ ինքը մի կողմը քաշուեցաւ, հրամայելով որ ամեն մէկը հանգստանայ, որ շուտով կրկին ճանապարհ ընկնին. նա գիտէր, որ փախստականները նորից վերադառնալու են նոր ոյժով և այն ժամանակ ինքը ծուղակի մէջ կընկնէր։ Եւ չսխալուեց Աշոտ Երկաթը։

Դեռ Դաւիթը իւր կարօտը չէր առել իւր Աստղիկից, դեռ նրա կուրծքները չէին հանգստացել և դեռ մոլթն ու խաւարը նոր բաժանվում էին իրարից, դեռ արևելքում նոր մժմժում էր արշալոյսը, երբ մի ահագին արաբացոց խումբ շրջապատեց մեր կուրիճներին։

—Է՛... ամեն մեկիս տասից աւելի կընկնի, ասաց Աշոտ Երկաթը՝ երբ տեսաւ նրանց բազմութիւնը։

Եւ ժամանակ չտալով որ իւր վրայ յարձակուին, հրամայեց առաջին յարձակումը գործել և շփոթեցնել արաբներին։ Աղջիկներին յանձնեց հինգ զինուորի, որ զգոյշ պահեն և աշխատեն շուտով կռուատեղից հեռացնել. ապա ահագին դղրդիւնով վրայ վազեցին արաբացոց վրայ և ճղելով նրանց շարքերը ճանապարհ բացին և սկսան խոնուելով յետ նահանջել։ Արդէն բաւական տեղ հեռացել էին երբ Աշոտ Երկաթը նկատեց, որ զինուորներից մեկը ետ էր մնացել և ամբողջ գունդը նրան էր պաշարել, այն ինչ այդ մեկը աջ ու ձախ կոտորածներ էր անում և ուզում էր հարթել իւր ճանապարհը։ Բայց թշնամիները շատ շատ են, նա յոգնում է, հազիւ է կարողանում սուրը շարժել։ Աշոտ Երկաթը ուզում է թռչել, օգնութեան հասնել նրան. բայց այդ ժամանակ տեսնում է թէ ինչպէս տասը քսան մարդ ետևից գրոհ տալով բռնում են նրան, խլում սուրը և ամուր չուաններով կապկպում։ Աշոտ Երկաթը իւր աչքերը դարձնում է իւր խմբին,

ում որ պարում է, բայց նա չկայ։ Նրա աչքը հանդիպում է աղջիկներին, Աստղիկին, ապա նա խոր հոգոց է հանում և քաշվում յետ։

Դաւիթը չկար նրա կուրիճների մէջ, նա էր որ գերի բռնուեցաւ արաբներից, այն քաջ զինուորն էր, որ պակասեցաւ և խոր կսկիծ թողեց Աշոտ Երկաթի սրտում։

Այժմ ի՞նչ պիտի անէր խեղճ Աստղիկը առանց Դաւթի։

Թ.

Աշոտ Երկաթը իւր կարիճներով խոյս տալով Իւսուֆի անթիւ բազմութիւնից, կէս օրուան դէմ, կանգ առաւ Շիրակայ դաշտավայրում, մի բլրի ստորոտին, որտեղից հեռուում երևում էր Արագած լեռան գագաթը, որ դեռ ևս ծածկուած էր սպիտակ ձիւնով։

Տղերքը սկսեցին ճաշուան պատրաստութիւն տեսնել, այն ինչ Աշոտ Երկաթը թիկն տալով մի քարի, իւր պղտոր հայեացքը դարձրել էր դէպի Արագածի բարձրութիւնները և լուռ նայում էր նրան։ Ի՞նչ էր անցնում նրա հոգու մէջ յայտնի չէր, միայն նա սաստիկ տխուր էր։

Նա նայում էր հեռուն, դէպի ձիւնամանան բարձրութիւնը, դէպի Շիրակայ ընդարձակ դաշտավայրը, ուր այդ ժամանակ տիրում էր կա-

տարեալ ամայութիւն և նրա սիրտը յուզվում ու պղտորվում էր. նա յիշում էր Շիրակի պղպատէտութիւնը, նրա ցորենի արաեղի շքեղ կանաչելը. այդ դաշտի մէջի գիւղականների ուրախ երգն ու պարը, այն ինչ հիմա, նոյն այդ դաշտը, որ երբեմն Շարայի որկորն էր յագեցնում, ներկայացնում էր մի սրտաճմլիկ ամայութիւն...

Արդեօք ինչ պիտի լիներ սրա վերջը...

Կարծես մահաբեր հուրը մի ակնթարթում կոտորել էր բոլոր բնակիչներին և աւերել այն բերրի և պտղատու դաշտերը, որոնք ժիր ձեռքերի տակ պտղաբերվում և աճում էին...

Ապա նա փակում էր աչքերը, որպէս զի չտեսնի իւր երկրի ամայութիւնը, չը վրդովի իւր սիրտը, բայց հէնց այդ ժամանակ նրա միտքը պաշարում էին աւելի զարհուրելի մտքեր, որոնք փշաքաղում էին իւր մարմինը:

Նա թագաւոր էր հայոց, դիւցազն էր, հայը իւր ժողովրդեան. նրա պարտքն էր խնամելու, փայփայելու և դարման անելու այդ ժողովրդի բազմաթիւ վէրքերին... բայց ինչ էր անում նա, կարողանո՞ւմ էր արդեօք խնամել, գէթ ազատ պահել բազմաթիւ տառապանքներից: Ի՞նչ պիտի անէր մի դիւցազն, որի ձեռքն ու ոտքը շղթայել էին, որի կեանքի դէմ դաւադրութիւններ և որոգայթներ էին լարում նոյն իսկ հայ նախարարները, և դրանով չբաւականանալով միանալով թշնամեաց հետ իրանց սուրը իւր դէմ էին դարձնում:

— Այո, ասում էր ինքն իրան Աշոտ Երկաթը, վաղ թէ ուշ ես կը խորտակեմ հայ նախարարների եսամոլութիւնը, վաղ թէ ուշ ձեռք կառնեմ ես մի զօրաւոր իշխանութիւն հաստատելու, որից կախնածեն մեր թշնամիները և այլ ևս չեն համարձակի մեզ անհանգիստ անելու, բայց ինձ հարկաւոր է մի շատ կարճ ժամանակ հանգստութիւն, որպէս զի կարողանամ այդ բանը յաջողեցնել, ապա թէ ոչ ներկայիս անհնար է այդ:

Մի հոգեորականութիւն ունենք, որի գլուխն է կանգնած Յովհաննէս կաթուղիկոսը, որով կարելի էր անագին փոփոխութիւններ անել, ուժովացնել օրինական թագաւորութիւնը, բայց այդ գլուխն էլ, լոկ միայն ողբով է անցնում իւր օրերը և իւր կեանքի ապահովութեան համար զանազան կոմը թափառում... Ի՞նչ անեմ ես միայնակ, մի բուռն քաջերով. ժողովուրդը, հասարակ ժողովուրդն է որ այժ է կազմում. դրա մէջն է ազգի վերկութիւնը, բայց ներկայիս այդ ոյժը այնքան տառապած է, այնքան խոցուած, որ նախ պիտի դարման տանել նրա վրայ և ապա թէ վատահ նրա վրայ յենուել...

Վեր կացաւ Աշոտ Երկաթը թիկն տուած տեղից և շրջելով սկսեց ծրագիրներ կազմել, թէ ի՞նչպէս պիտի կարենայ իւր մտադրութիւնները ի կատար ածել և այդքան մանր իշխանութիւններից մի զօրաւոր մարմին կազմել:

Կերան, խմեցին, հանգստացան և փոքր ժա-

մանակից յետոյ խումբը առաջ շարժուեց, բայց Աշոտ Երկաթի մոքից չէր անցնում Դաւիթը և նա մտածում էր մի հնարքով նրան դուրս կորզել անհաւատների ձեռքից: Նա ափսոսում էր այդ մարդուն, որ իւր հաւատարմութեամբ և քաջութեամբ առաջինն էր իւր կարիճների մէջ:

Ազատած աղջիկներին և Աստղիկին Հռիփսիմեան վանքում տեղաւորելով մի քանի օրից յետոյ նա կրկին պատում էր, Մասեաց սարորտաներում, ուր կորցրեց Դաւթին և ամեն կերպ աշխատում էր նրա մասին տեղեկութիւններ հաւաքել, բայց ոչ մի տեղից որոշ ոչինչ չէր իմանում: Նա միայն լսում էր որ գերիներից մի մասին անխնայ կոտորում էին, իսկ միւսներին, որոնք քաջ և կորովի էին, ուղարկում էին Դուին սպարապետի մօտ, ուր ամեն տանջանքներ տալիս էին նրանց իրանց հաւատից խախտելու: Աշոտ Երկաթը մի փոքրիկ գումարտակ ջարդելուց յետոյ, բռնեց նրանցից մի քանիսին և սկսեց հարց ու փորձ անել:

—Աւա՛, անհաւատ, դու տեղեկութիւն չունե՞ս Դաւթի մասին, ո՞ւր է, նա կենդանի է թէ մեռած:

Չինուորները դեռ լուռ էին, բայց խարազանի հարուածները նրանց խօսեցնել տուեց:

—Մի՛ վախէք, խօսեցէք, ես կընծայեմ ձեզ ձեր թշուառ կեանքը...

—Ո՞ր Դաւիթը, այն որ գերուեցաւ վանքի կռուի ժամանակ:

—Այո՛, հէնց նա:

—Նրան արդէն տարան Դուին, սպարապետի մօտ: Այնտեղ նրան մեր հաւատի կը բերեն, այդպիսի քաջը ափսոս է, որ ձեր պիղծ հաւատն ունենայ:

—Լաւ՛ր, անհաւատ, նա այն մարդը չէ, որ իւր հաւատն ուրանայ:

—Տանջանքները նրան խելքի կը բերեն:

—Ի՞նչ է. դու չե՞ս ուզում լսել, ինչպէս եւ ինչում է կեանքը քեզ ձանձրացրել է, իմացէք ուրեմն որ մենք էլ ենք ձեզանից տանջելու ձեւերը սովորել: Տղերք, դարձաւ նա իւր զինուորներին, սրանց գլխիվայր կախեցէք և մարակների համը ցոյց տուէք:

Զինուորները մերկացրին նրանց, ապա գլխիվայր կախելով պատրաստեցին ճիպոտները: Ամբաւ զինուորները դեռ լուռ էին և սարսափահար նայում էին Աշոտ Երկաթին, արիւնը կամաց-կամաց լցվում էր նրանց աչքերում, որոնք սկսում էին դուրս թափուել և սոսկալի կերպարանք ստանալ: Ճիպոտների հարուածը լսուեցաւ նրանց մերկ մարմնի վրայ և արիւնը սկսեց առատութեամբ բղխել վէրքերից, ցաւը սոսկալի էր, մինչև այդ ժամանակ նրանք լուռ էին, բայց այժմ սկսան բառաչել և գթութիւն խնդրել:

Ճիպոտների հարուածները դեռ շարունակվում էր—գթութի՛ւն, խղճացէ՛ք, կանչում էին նրանք աղիողորմ ձայնով:

—Դադարեցրէք, ասաց Աշոտ Երկաթը, երբ

լսեց նրանց աղիողորմ բառաչիւնը և տանջանքը. քաջի սիրտը չդիմացաւ իւր թշնամեաց սոսկալի տանջանքը տեսնելով։

ԻԴ.

Երշալոյսը նոր ուզում էր բացուել, արդէն արևելեան հորիզոնի վրայ նկատելի էր լուսոյ թոյլ շողշողմունքը, երբ որ առ յոյսի պարզվում, պայծառանում էր հորիզոնը, բայց աղօտ խաւարը դեռ տիրապետում էր երկրին։ Բազրևանդայ Ս. Գրիգոր վանքի շրջակայքում տիրում էր խորին խաւար, տեղ տեղ միայն, թփերի ու մացառների մէջ, լսվում էին մի տեսակ թոյլ ձայներ. արտուտները թափահարում էին թևերը և ապա այդտեղից նետի արագութեամբ դուրս էին սլանում և թռչում վեր, իսկ այնտեղից սկսում էին երգել իրանց տաղերը... Տխուր և յուսահատ էին այդ տաղերը։

Հէնց այդ միջոցին Ս. Գրիգորի վանքի բեմի առաջ ինչպէս մարմնացած արձան, ծունկ էր չոքած ծերունի վանահայր Տէր Մարտիրոսը և ձեռքերը դէպի երկինք պարզած աղօթում էր... Անշքացած եկեղեցու բեմի վերայ դրուած էր Քրիստոսի խաչելութիւնը, որի առաջ վառվում էր կանթեղը և իւր թոյլ լոյսով լուսաւորում էր խաչելութիւնը և աղօթող ծերունուն։

Նորին դերեզմանական լռութիւնը տիրում էր չորս կողմը։

Երբեմն երբեմն միայն շարժվում էր ծերունի վանահօր ալեզարդ մօրուսը, որի վրայ մերթ ընդ մերթ գլորվում էին արտասուքի կաթիլները և թրջում քարէ յատակը...

Ջերմ և պատուաւոր էր վանահօր աղօթքը. այդ աղօթք չէր ձևի համար, ոչ այլ նա մոռացած իւր դիւցազնութիւնը, մոռացած աշխարհը, մոռացած ուրախութիւնն ու տառապանքը, իւր ամբողջ էութեամբ ամփոփուած էր միայն այդ աղօթքի մէջ։

Յանկարծ նրա շրթունքները շարժուեցան և մեղեդային լռութեան մէջ լսուեցաւ նրա ձայնը.

—Ո՜հ, Տէր, ասում էր նա, տուր ինձ ոյժ իմ տկար բազուկներին և իմ հոգուն արիութիւն, որ ես կարողանամ ի կատար ածել իմ մտադրութիւնները... Անմեղ ժողովուրդը տառապում է, նա հալածւում է անօրէնների Քո սուրբ անուան համար, տուր ինձ կարողութիւն, որ ես կարողանամ մտնել ժողովդի մէջ, ոգևորել նրան Քո խաչը ձեռքիս, որ նա մի սիրտ, մի հոգի դարձած կռուի իւր հալածիչների դէմ... Տէր, խնայիր Քո ժողովրդին, խնայիր այդ տառապեալ ժողովրդին, միութեան և համերաշխութեան ոգի ներշնչիր Դու նախարարների մէջ, որ նրանք ձեռք մեկնեն օրինական թագաւորին, Աշոտ Երկաթին և այդպիսով դուրս հալածեն թշնամիներին, Տէր, խնայիր մեզ... Ապա նա նայում էր

խաչելութեանը ու հոգեկան բուռն ալիքները եռ-
բևռում էին նրա դէմքի վրայ:

Նրա աչքերը լցվում էին ոգևորութեամբ,
երակների մէջ կարծես վազում էին թարմ և ե-
րիտասարդական արիւն. ծերութեան կնճիռները
կարծես անհետանում էին նրա դէմքի վրայից:
Մի տեսակ գերբնական զօրութիւն կամաց կա-
մաց ներս էր շնչվում նրա երակների մէջ:

Այդ իսկ միջոցին լուսոյ ազօտ լուսաւորու-
թիւնը տարածուել էր վանքի մէջ: Վանահայրը
վերջին անգամ իւր «Հայր մերը» մրմնջաց, վեր-
ջին անգամ համբուրեց խաչելութիւնը և վեր
թռաւ տեղից, կարծես 20—30 տարով ջահելա-
ցած:

Այդ միջոցին վանքի դուռը կամաց յետ բա-
ցուեցաւ և երևեցաւ Տէր Մարութիրոսի ծառան:

—Հայր սուրբ, ձիերը պատրաստ են, ա-
ռաց նա:

—Այս րոպէիս, որդի, առաց նա և դուրս
եկաւ վանքից: Մի փոքր ժամանակ անց վանա-
հայրը և իւր ծառան հեծնելով ձիերը, թողին
վանքը: Երկար ժամանակ նրանք առաջ էին գնում
մինչև որ կէսօրուան դէմ կանգ առան մի գիւ-
ղում, որ մի փոքր հանգստանան և ապա կրկին
ճանապարհները շարունակեն:

Գիւղի մեռելութիւնը Մարութիրոս հօր վրայ
աւտակ վատ տպաւորութիւն թողեց: Այստեղ
այնտեղ գետնափոր խրճիթների միջից երբեմն

երևում էին գլուխներ, որոնք երկիւղով նայում
էին ճանապարհորդներին:

Գիւղի մէջտեղը կանգ առաւ Մարութիրոս
հայրը և նրան իսկոյն շրջապատեցին գիւղացի-
ները և սկսան նրա աջը համբուրել: Ներեցները
նրա ալեզարդ մօրուքից խաբուելով կարծում էին
թէ եպիսկոպոս է շնորհ բերել իրանց գիւղը ու
նրանցից ամեն մէկը ձիու սանձը բռնելով խընդ-
րում էին իրանց տուն հանգստանալու:

—Ո՞ւր է գիւղի քահանան, հարցրեց Մա-
րութիրոսը:

—Հայր սուրբ, գիւղի քահանային գեռ ան-
ցեալ տարի սպանեցին անօրէնները, մենք այժմ
քահանայ չունենք:

Մարութիրոս հայրը ոչինչ չպատասխանեց. նա
իջաւ ձիուց և մտաւ հանդիպակաց խրճիթը: Գիւ-
ղականները բոլորը տխուր և յուսահատ էին, խո-
րին թախիծը պատել էր նրանց դէմքերը, նրանք
և իրանց երեխաները մերկ և բոկոտն էին, մի
քանի ցնցոտիներ միայն ծածկում էին նրանց
մարմինը:

—Ի՞նչպէս էք, զաւակներս, հարցրեց Մա-
րութիրոսը, թէև համոզուած էր, որ տրտունջից ա-
ւելի ոչինչ չպիտի լսի:

—Է՜հ, հայր սուրբ, ինչպէս տեսնում էք՝
սոված, քաղցած, մերկ և տանջուած: Ամեն բան
խլեցին մեզանից անօրէնները, ամեն բան տարան,
ամեն անգթութիւն գործեցին, մեր մէջ էլ չմնաց
ոյժ, զօրութիւն տանելու այսչափ տառապանքնե-

բը։ Խոփը ժանգոտեց, դաշտերնիս մնաց առանց վարելու, առանց ցանելու. հացերնիս սկսում է պակասել։ Մեր տէրը դուք էք, եթէ դուք օգնութիւն չանէք, մենք կորած ենք։

— Մի յուսահատուիք, զաւակներս, յոյսերդ դրէք Աստուծոյ վրայ։ Նա է գթածը և ողորմածը կարճ ժամանակ կանցնի և ամեն տառապանքները կը վերջանան, հնազանդ եղէք միայն ձեր թագաւորին, կաթողիկոսին, ահա ես գնում եմ ընկնելու Աշոտ երկաթի և կաթողիկոսի ոտքերը, որ մի ճար անեմ ազգի փրկութեան համար։

— Օրհնեալ լինիք, հայր սուրբ, որ կանգնած էք ժողովրդի համար և նրա մասին էք հոգում։

Այդ ժամանակ հայր սուրբի համար բերեցին բոքոնի կաթ և մի քանի խաշած ձու։

— Ներողութիւն կանէք, հայր սուրբ, գիւղի մէջ սրանից աւել բան չգտանք ձեզ պատուելու, ասաց տանտէրը, որ մի պատկառելի ծերունի էր։

Հայր սուրբը ժպտաց։

— Ի՞նչ հարկաւոր է ինձ համար շքեղ ճաշեր, քանի որ իմ ժողովուրդը տառապում է։ Ժողովրդի թէ ցաւը և թէ ուրախութիւնը մերն է, մենք աւելի սոված պիտի մնանք, երբ տեսնում ենք որ մեր ժողովուրդը սոված է։

Համեստ ճաշը վերջացրեց Մարտիրոս հայրը, քաջալերեց, յոյս տուեց գիւղականներին և ապա կրկին ճանապարհը շարունակեց։

Իե.

Ամսիս սարի ստորոտում Դաւթին ձերբակալելուց յետոյ նրան շղթայեցին և ձգելով վանքի ախոռներից մինի մէջ, պահապաններ կանգնեցրին։ Անցաւ ամբողջ օր, բայց դեռ Դաւիթը մի պատառ հաց չէր դրել բերանը. բայց հոգեպէս ամենևին ընկճուած չէր, ինչ փոյթ թէ իրան մաս-մաս կը կտրատեն անօրէնները, դոնէ նա ազատեց Աստղիկին, վերջին անգամ տեսաւ նրան։ Իւր դրութիւնը մոռացած նա միայն իւր Աստղիկի վրայ էր մտածում, նա չնկատեց անգամ թէ ինչպէս ախոռի դուռը յետ բացուեցաւ և մի գինուոր նրա առաջը դրեց խեցէ ամանով կեղտոտ ջուր և հացի փշրանքներ։

Սրաբ գինուորը կանգ առաւ մի փոքր և տեսնելով նրա մտախոհ դէմքը ասաց.

— Չը, անհաւատ շուն, ինչ ես մտածութեանց մէջ ընկել, ուր գնաց քո քաջութիւնը, որ մահիդ առաջ այդպէս սարսափի մէջ ես ընկել։

Դաւիթը ոչինչ չպատասխանեց, ապա տեսնելով իւր առաջ դրուած հացի կտորտանքը և խեցիով ջուրը, ժպտաց։

— Չը, ինչ ես ժպտում, բաւական չեմ դրանով. ձեզ նման շներին սոված պէսքէ ապահնել ուր մնաց թէ հաց ու ջուր տալ։

— Ջեռ կորչի այստեղից, ասաց Դաւիթը,

ցանկանալով վերջ դնել նրա վայրահաչուքեանը և իւր հրացան աչքերը ուղղեց գինուորի վրայ։

—Սպասիր, շուտով քո կաշին էլ կը քերթենք, ափսոս միայն որ մեր իշխանը չի թոյլ տալիս քո դառաստանը այստեղ անել, բայց գնաս չկայ, Դաւինուհին էլ չես ազատուի մահից, ասաց գինուորը և դուրս գնաց։

Զանցաւ մի քանի ժամ և ահա նա գալաց, որ ով որ աքացի է խփում իրան։ Շփոթուած վեր թռաւ տեղից. իւր սուրը միան եկաւ և ձեռքը անզիտակցօրէն դէպի գօտին տարաւ, բայց սուրը չկար. նրա տեղ շղթաներն էին գնգղնգում. խելքի եկաւ նա, իւր վերաբերմունքը մտաբերեց և յաղագած աչքերը շուրջը դարձրեց։ Կանթեղի թոյլ լուսաւորութեան տակ հինգ թէվեց գինուոր նկատեց սրերը և նիզակները ձեռքերնին, որոնցից մի քանիսը վրայ ընկնելով նրան պինդ չուաններով սկսեցին կապկապել։ Շղթաներով գոհ չէին, պարաններով էլ էին կապում։ Դաւիթը լուռ թոյլ էր տալիս իրան կապկապելու։

Կապկապելուց յետոյ նրան ձի նստացրին և յիսուն գինուած գինուորներով ճանապարհ ընկան։ Մթութեան մէջ Դաւիթը ճանապարհներին էր նայում. նա հասկացաւ, որ իրան Դուին են տանում, ուր նստած էր Իսուֆը։ Զգում էր Դաւիթը, որ Դուին ընկնելուց յետոյ էլ փրկութեան յոյս չկայ, ուստի նա ոյժ էր անում պատռաններն ու շղթաները կտրատելու, բայց նրանք

շատ ամուր էին։ Ա՛խ, եթէ ազատ լինէր և իւր սուրը ձեռքն ունենար, այն ժամանակ վայ իրան շրջապատողներին, հոգ չէր թէ գրանք յիսուն հոգի էին, իսկ ինքը միայնակ։

Մի ւս օրը երեկոյեան դէմ նրանք Դուին մտան։ Դաւիթը սպասում էր տաժանելի չարչարանքների և խոնաւ ու մութ բանտի, բայց շատ զարմացաւ, երբ ետ արին չուանները թողնելով միայն երկաթէ շղթաները և իրան մի մաքուր սենեակ տանելով, պատուական ճաշ հրամայեցին իրան։

—Նայենք, այս ճաշը դեռ ուտենք, տեսնենք յետոյ ինչ է դուրս գալիս. բայց այս ընդունելութիւնը լաւ նշան չէ, մտմտաց ինքն իրան Դաւիթը։ Այնքան դիւր եկաւ ճաշը, որ քիչ մնաց ամաններն էլ հետը ուտէր։

Անցաւ մի քանի օր և ահա նրա սենեակի դուռը բացուելով ներս մտաւ մի մարդ սպիտակ չալմայով։ Այցելուն մօտեցաւ Դաւթին և նստելով նրա մօտ ասաց.

—Ողջոյն քաջին. մեծ սպարապետ Իսուֆը լսելով քո քաջութիւնները հիացած է ձեզնից. Թող Ալլահը աւելի ոյժ և կարողութիւն տայ քո բազուկներին, բայց թող քո պիղծ հաւատը և ընդունիր Մուհամմէդի սուրբ և ճշմարիտ կրօնը և այն ժամանակ Իսուֆը իւր աչքի լոյս պէս կը պահի քեզ և մեծամեծ ընծաներ կը տայ...

—Հա... հա... հա... մի քրքիջ արձակեց Դաւիթը, ա՛յ թէ ինչի համար էր Իսուֆն ինձ

պատիւները տալիս, իսկ ես այնքան յիմար էի, որ այդ չէի էլ մտածում։

Բարկութեան ներկը անցաւ մօլլի դէմքով, բայց նա զսպեց իրան։

—Գեաւուրներ, մինչև երբ պէտք է մոլորուած ճնաք և չճանաչէք ճշմարիտ հաւատը, մինչև չէք տեսնում ձեր երկրի աւերմունքը, ժողովրդի տառապանքը, որ կրկին այդպէս յամառում էք։

—Մօլլա, լաւ կը լինի այստեղից պոչդ հաւաքես և գնաս, եթէ չես ուզում որ փորիդ աքացի տամ։ Գնա, յայտնի Իսուֆին ինչ անելու է, թող անի, ես նրանցից չեմ, որ մահից վախենամ և ընդունեմ ձեր պիղծ հաւատը։

Մօլլան նզովելով Դաւթին դուրս գնաց սենեակից. նոյն երեկոյեան Դաւթին ձգեցին մութ և խոնաւ բանտը, երկու օրը միանգամ տալով նրան ցամաք հաց և ջուր. բայց Դաւիթը չէր յուսահատվում. նա պատրաստվում էր ընդունելու ամեն տեսակ չարչարանք. նա յիշում էր Սմբատ արքայի տանջանքները, երկնային պատկը և աւելի ոգևորվում։

Անցաւ մի քանի ամիս և նա դեռ տանջւում էր բանտի մէջ և ամեն անգամ երբ գալիս էին նրա մօտ Իսուֆից ղրկածները, որոնք խոստանում էին մեծամեծ պարգևներ, միայն թէ հաւատը ուրանայ, նա կոպտութեամբ յետ էր մղում նրանց։ Բայց բանտի խոնաւութիւնը և անուշադիր պահպանութիւնը ազդում էին նրա առողջութեան

վրայ, օր աւուր այդ ժիգահասակ մարդը հալվում էր և մաշվում։

Տարան մի անգամ էլ Իսուֆ սպարապետի մօտ, որ գրկեց քաջին, ոսկի և իշխանութիւն խոստացաւ նրան, եթէ իւր հաւատը կուրանայ, բայց Դաւիթը կրկին անդրդուելի մնաց։ Իսուֆը բարկացաւ և հրամայեց միւս գերիների հետ միասին գլխատել նաև Դաւթին։ Դաւիթը վերադարձաւ բանտ լի յոյսով, որ վաղ առաւօտ կարժանանայ նահատակութեան պսակին։

Բայց գիշերը շատ երկար էր քաշում, դանդաղ, ինչպէս յաւիտենականութիւն անցնում էր ժամանակը։ Դաւիթն արթուն էր և սպասում էր արշալոյսին, բայց իւր բանտի միակ լուսանցքը դեռ չէր լուսաւորվում աղօտ լոյսով. խաւար էր շուրջը, խաւար էր նրա սրտի մէջ, կսկիծը, վիշտը, տառապանքը, դառն և անմխիթար յիշողութիւնները մորմոքում էին նրա հոգին...

Եւ յանկարծ խորին լռութեան մէջ նա մի սուր ձայն է լսում, որ փշաքաղում է նրա մարմինը, նա գլուխը վեր է բարձրացնում։ Երկաթապատ բաց պատուհանից լսւում է գորտի սուր կռկռոցը որ մօտենալով պատուհանին, իւր վերջին ողբն էր կարդում։ Դաւիթը սառսռում է և երանի տալիս գորտին, որ այնպէս ուրախ կռկռում է. նա սիրում էր այդ գորտին, որ այնպէս յաճախ իւր նուագներն էր սարքում և իւր վերջին ժամերը մխիթարում։ Բայց շուտով գորտն էլ լռեց ու կրկին տիրեց լռութիւնը։ Ա՜խ, ո՛ւր

է թէ շուտ լուսանար. նա ծունկ չոքեց և աղօթել սկսեց, ահա բանտի դռները բացուելով ե-ւնաց դահիճը: Սառնասրտութեամբ նայեց նա դահճին և նրան հետևեց: Երբոր նա հասաւ այն հրապարակը ուր պիտի կատարուէր իւր գլխատումը, սոսկալի պատկերը ցնցեց նրա ուղեղը: Ջառաւոն թէ յիսուն հոգի՝ մարդ, կին, աղջիկ, ամիկ թէ լշխան, պինդ շղթաներով կապած բոլորաձև մի շղջան էին կազմել, որոնց գլխներին, վայրենի գազանների նման, պատում էին դահիճները մերկ սրերը ձեռքերնին:

Ջարհուրանքը պատեց նրան երբ տեսաւ գերեզմանների գունատ և սոսկումով պատած դէմքերը, իսկ այդ գերեզմանների մէջ իւր կրտսեր եղբօրը. Գուրգէնին: Երկու եղբայրների հայեացքները հանդիպեցան իրար և նրանք վրայ վազելով փորձեցին գրկել միմեանց: Դահիճները, Իւսուֆի հրամանով, սկսեցին իրանց գործը: Շրջանում կանգնողի մէկի արիւնթաթախ գլուխը վայր գլորուեց, վերջին անգամ բաց ու խուփ եղաւ սպանուածի աչքերը և յետոյ յառեց դատապարտեալների վրայ:

Սոսկումը և զարհուրանքը փշաքաղեցին խեղճ գերեզմանների, որոնք մէկ մէկ ընկնում էին ցած և օրհնելով Աստուծուն աւանդում հոգիները... Հերթը հասաւ Դաւթին:

—Ուրացիր քո պիղծ հաւատը և ազատիր քեզ, կրկնեց Իւսուֆը:

—Ո՛չ, չեմ ուրանայ հաւատս. ես քրիստո-

նեայ եմ: Իւսուֆը նշան տուեց և դահիճը մօտեցաւ Դաւթին. սա վերջին անգամ նայեց իւր եղբօրը և նկատելով նրա մահուան դունատութիւնը, երկիւղ կրեց թէ նա կը թուլանալ իւր հաւատից, ուստի դիմելով նրան, ասաց.

—Եղբայր իմ, զոհիր քեզ Քրիստոսի սիրոյն, ինչպէս Նա զոհեց իւր կեանքը մեզ համար:

Գուրգէնը առաջ ընկաւ և ներկայացրեց վիզը դահճին:

Դահիճը կտրեց նրա վիզը և քիչ յետոյ Դաւթին գլխատեց: Ընկաւ քաջի գլուխը առանց մի ձայն, մի արտունչ հանելու...*):

Ի.Զ.

Ինչ էր անում այդ միջոցին հայոց Յովհաննէս կաթողիկոսը, որ կարող էր մեծ դեր խաղալ իւր ահագին ազդեցութեամբ: Նա անդադար վոխոխում էր իւր տեղը և վերջին ժամանակները գտնվում էր վրաց երկրում, Ատրներսեհի հովանաւորութեան ներքոյ և այնտեղից ողբում էր իւր ազգի թշուառութիւնը: Մի երեկոյ նրան յայտնեցին. թէ Բագրեւանդի սուրբ Գրիգոր վանքի վանահայրը ցանկանում է տեսնել իրան:

*) Այս նահատակների յիշատակը եկեղեցին տօնում է յունիսի 3-ին:

Կաթողիկոսը հրամայեց ընդունել նրան։

Ներս մտաւ Մարտիրոս հայրը և ծունկ չոքելով կաթողիկոսի առաջ համբուրեց աջը։

— Վեր կաց, ծերունի և պատմիր թէ ինչ լուր ունես դու կարօտ հայրենիքից և թէ ինչը բերեց քեզ ինձ մօտ։

Մարտիրոս հայրը վեր կացաւ և սկսեց պատմել այն թշուառութիւնները, որոնց ենթակայ էր եղել ազգը ապա նա համարձակ դիմելով կաթողիկոսին ասաց.

— Ազգը ձեզ, վեհափառ տէր և Աշոտ Երկաթին է կարօտ։ Աշոտ Երկաթը միայնակ է և ձեր օգնութեան է կարօտ, դուք միայն պլուխ պիտի կանգնէք, կոնդակներ ուղարկէք ամեն կողմ և ոգևորէք ազգը։ Ձեր պարտքն է ազգի մէջ ցրիւ տուած ոյժերը միացնելու. հոգևոր պլուխը դուք էք, դուք պիտի քարոզէք նրանց միութիւն և համերաշխութիւն, ապա թէ ոչ ազգը կորած է. կը կորչի ազգը, կը կորչի և կաթողիկոսութիւնը։ Մեր թշնամիները հողի համար չեն կռւում, այլ կրօնի, հաւատի համար. այդ է արաբաց ջանքը։ Մեր թշնամիները շատ լաւ գիտեն, որ եթէ մենք կրօնով միանանք արաբների կամ յոյների հետ, մեր երկիրն էլ նրանցը կը դառնայ։

Պէտք է յիշենք հինգերորդ դարը, այդ կրօնական պատերազմը, որ Վարդան Մամիկոնեանը իւր քաջերով մղեց Յազկերտի դէմ. Հինգերորդ դարում պարսիկները էին աշխատում մեր հա-

ւատը խախտել, իսկ այժմ արաբները ու յոյները։ Հինգերորդ դարում էլ ունէինք դաւաճաններ՝ Վասակները և Մեհրուժաններ, այժմ էլ ունինք Գագիկները և Աշոտներ... հինգերորդ դարում էլ ունէինք քաջ զօրապետ ինչպիսին Երևելին Վարդանն էր, այժմ էլ ունինք Աշոտ Երկաթ, օրինական թագաւոր, որ շուարել մնացել է և երկնքից է օգնութիւն սպասում. այժմ մեզ միայն մի բան է պակասում, որ նմանուինք ճիշտ հինգերորդ դարին, այդ Ղևոնդ Երէցի պակասութիւնն է, որ չկայ մեր մէջ։ Ո՞ւր է այժմ Ղևոնդը, որ իւր անուշարոյր քարոզներով ոգեւորի մեզ—չկայ նա։ Դուք, վեհափառ տէր, որ պլուխ էք կանգնած հոգևորականութեան, դուք պիտի ձեր անձնական օրինակով ոգևորէք ազգը, որ նա չկորչի. նա ձեզ է սպասում...

Կաթողիկոսը լուռ լսում էր նրան։ Վերջացրեց Մարտիրոս հայրը, իսկ կաթողիկոսը դեռ լսում էր. նա կարծում էր թէ դեռ հայր Մարտիրոսը խօսում է և իւր հոգւոյ մէջ թողնում մի մի սուր սլաք։ Յիրաւի կաթողիկոսի հոգու մէջ բացուեցան հին հին վէրքեր և յուզեցին թշուառ ծերունուն... Այդ րոպէին նա ազգի ցաւերով էր ցաւում, նրա տառապանքներով տառապում, բայց միևնոյն ժամանակ զգում էր, որ բաւական չէ միմիայն լալ, ողբալ, նաև հարկաւոր է ցաւերին գարման տանել, վէրքերը բուժել։ Մարտիրոս հօր խօսքերը սուր սլաքի նման

ցցուեցին նրա սրտում և նա դիմելով նրան, ասաց դողդոջուն ձայնով:

—Այո, ծերուկ, ես գլուխ եմ կանգնած ազգի, բայց մինչև օրս միայն ցաւելով եմ անցրել օրերս, գնա, որդի, դու էլ մարի ժողովրդի մէջ և քարոզիր նրանց, ոգևորիր նրանց երկնային լոյսով. իսկ ես, ինչքան թոյլ կըտան իմ ուժեր ոյժերս, կ'ընկնեմ նախարարների ոտքերը, կադաչեմ, կը պատաւեմ և կը հաշտեցնեմ նրանց իրար հետ, որ պաշտպանեն օրինական թագաւորին:

Մարտիրոս հայրը դուրս եկաւ կաթողիկոսից գոհ սրտով և համարեա վազելով դէպի իւր օթևանը, գարձաւ իւր ծառային և ասաց ուրախ ուրախ:

—Ծառուկ, շտապով պատրաստիր ձիերը, մենք խոկոյն պէտք է ճանապարհ ընկնենք:

—Ի՞նչ կայ, հայր սուրբ, որ այդպէս շտապում էք, հարկաւոր է մի փոքր հանգստանալ, պատասխանեց ծառան գարմացած նրա այլայլուած և ոգևորուած դէմքը դիտելով:

—Պէտք է շտապել, որդիս, պէտք է շտապել, մենք շատ գործ ունենք կատարելու, ժամանակը շատ սուղ է:

Ծառուկը գլուխը քորեց և լուռ գնաց ձիերը պատրաստելու:

Կարճ ժամանակից յետոյ նրանք իրանց եբեհաները դէպի Արշարունիք գարձած մտախոհ առաջ էին գնում:

Ի՞նչ էր մտածում Տէր-Մարտիրոսը, յայտնի չէ, միայն թէ ամեն մի գիւղում նա երկար կանգ էր առնում, քարոզներ խօսում, ոգևորում և նրանց միջից դէնք բանեցնող երիտասարդներից խմբեր կազմելով, կարգում էր նրանց վրայ մի-մի մեծաւոր և ապա շարունակում ճանապարհը...

ԻԷ.

Յուրտ ամեռը վրայ հասաւ: Փչեցին սառը քամիները, սար ու ձոր ձիւնով ծածկեցին և սառցէ հաստ կեղևով պատեցին Հայաստանը: Բուքը սկսեց ձիան հետ խաղալ, իւր պարը բռնել և իւր անախորժ ոռնոցը սկսել... Վայ էր այդ ժամանակ խեղճ, տառապեալ ժողովրդի դրութիւնը, որ հէնց նոր չունչ էր քաշել սովի ձեռքից և այժմ ցուրտ սառնամանիքի դէմ էր կռւում:

Առաւօտ էր: Արևը նոր դուրս էր եկել և իւր ճառագայթները սփռել էր սպիտակ տարածութեան վրայ:

Այդ միջոցին Արշարունիք գաւառից դէպի Շիրակ գաւառը տանող ճանապարհի վրայ երեւում էին մօտ երկու հարիւր հեծիւտ ուղևորներ, որոնք չնայած ցրտի սաստկութեան, ուրախ զրոյց անելով իրար հետ, առաջ էին գը-

նում։ Կորովի և քաջ տղամարդիկ էին դրանք, բայց ամենքն էլ գիւղական պարզ հագուստներով և մորթէ ահագին գլխարկներով։ Նրանք ամենքը զինուորուած էին զանազան տեսակ զէնքերով, նրանցից որը սուր ունէր կապած մէջքին, իսկ ոմանք երկայն նիզակներ ունէին։ Նրանց առաջ գնում էր ոտքից ցգլուխ զինուորուած մի յաղթանդամ երիտասարդ, որ շարունակ խօսում էր իւր մօտ գնացող ծերունի հոգևորականի հետ։

—Հայր սուրբ, ինչ ես կարծում, կարող է արդեօք կաթողիկոսը հաշտեցնել մեր իշխաններին և նրանցից միացած ոյժ կազմել, հարցրեց խմբի առաջնորդը իւր մօտ գնացող հոգևորականին, որ մեզ ծանօթ վանահայր Մարտիրոսն էր։

—Ես յոյս ունիմ, իշխան, պատասխանեց Մարտիրոս հայրը. մեծ է Աստուծոյ զօրութիւնը, կը գայ ժամանակ, որ նրանք կը հասկանան իրանց բռնած կորստաբեր ճերքը և կը միանան։ Մեզ մի մարդ էր հարկաւոր, որ այդ բանին գլուխ կանգնէր, քարոզէր միութիւն և այդ մարդը կաթողիկոսն է։ Նա մեծ բան կարող է անել, եթէ գործ դնի իւր բոլոր ճարտարութիւնը։

—Դժուար, այն ճերքը որ այժմս բռնել են և այն լարուած յարաբերութիւնը, որ նախարարներն ունին իրար հետ համարեա թէ անկարելի են անում միութիւնը։

—Ինչու չը պիտի միանան, քանի որ այդ իրանց շահն է պահանջում։ Մինթէ նրանք չեն

հասկանայ, որ եթէ չ'միանան, այն ժամանակ արտաքին թշնամին մէկ-մէկ կ'ոչնչացնէ նրանց։

—Եսասիրութիւնը և անձնասիրութիւնը այն աստիճան զարգացած է նրանց մէջ, որ նրանք այդ մասին ամենևին հոգս էլ չեն անում։ Նրանց միակ մտածութիւնը այն է, որ իրանք հանգիստ լինեն, որպէս գնան, քէպ անեն և իրարու ոտքի տակ փորելով իրար ձեռքից հողերը յափշտակեն։

—Ո՛ր մէկ օրինակը ասեմ քեզ. Գագիկ Արծրունին որ բռնութեամբ թագաւորութիւնը յափշտակեց և այժմս ով գիտէ թէ ինչ է մտածում։ Աշոտ սպարապետը՝ Աշոտ Երկաթի հօր եղբօր որդին՝ որ նստած է Դուին Իւսուֆի մօտ և յարմար ժամանակի է սպասում, որ յափշտակի օրինական գահը, և վերջապէս Գուգարաց, Տայոց, Սիւնեաց և հազար ու մի մանր մունը իշխաններ, որոնք չեն ուզում ճանաչել Աշոտ Երկաթին։ Ինչ պիտի լինի Աշոտ Երկաթի դրութիւնը, եթէ դրանք կրկին շարունակեն իրար դէմ և Աշոտ Երկաթի դէմ գինուել։

—Ինչ պիտի լինի — ոչինչ. Թող շարունակեն մինչև որ իրանց պատիժը կը ստանան։ Թող Աշոտ Երկաթի կողմը ժողովուրդը լինի, ահա այս կարիճները, որոնց մէջն է ոյժը, ասաց Մարտիրոսը և մատով իրանց հետևող խմբին ցոյց տուեց։

—Շատ լաւ ես ասում, հայր սուրբ. իսկ եթէ նրանք սկսեն և դրանց արդելք դնել, այն ժամանակ ինչ կը դուրս գայ միայն Այրարատ

տեան երկրի մի բուռն ժողովրդով, որ առանց այն էլ հլու հպատակ է Աշոտ Երկաթին։

— Իսկ ի՞նչ ենք շինում մենք, կաթողիկոսը։ Մենք մեր սերունդական խաչով ոաքի կը կանգնեցնենք ամբողջ ազգը և ճանաչել կը տանք օրինական թագաւորին, այն ժամանակ վայ իշխաններին, վայ մանուիչներին, պատասխանեց Մարտիրոս հայրը և երկուսն էլ լուռ կացան։

Օրն արդէն թեքուել էր, երբ նրանք հասան մի գիւղի որի գեանափոր խրճիթները հազիւ երևում էին ձիւնի տակից։ Նրանք կանգ առան։ Հէնց այդ միջոցին խրճիթներից դուրս թափուեցան մարդիկ, որոնք լուռ կանգնեցին իշխանի և Մարտիրոս հօր շուրջը։

— Հը՛, որդիք, ի՞նչպէս էք, հարցրեց Մարտիրոս հայրը։

— Գոհութիւն Աստուծոյ, լաւ ենք, հայր սուրբ և մեր տղաները էլ պատրաստ են ձեր հրամանը կատարելու, ասաց գիւղացիներից մէկը, որ ըստ երևոյթին գիւղի մեծը պիտի լինէր։

— Շատ բարի, շատ լաւ, հրամայիր թող գան, միանան այս կարիճների հետ։

— Տղայք, գնացէք, մի փոքր հանգստացէք և ապա պէտք է ճանապարհները շարունակենք, ասաց իշխանը դիմելով իւր խմբին, իսկ ինքը հայր սուրբի հետ, ուղղուեց դէպի գիւղի մեծաւորի տունը։ Դեռ մի քանի քայլ չարած նրանց հանդիպեց երեսուն մարդուց բաղկացած մի

խումբ, որոնք տեսնելով հայր սուրբին, ակնածութեամբ գլուխները մերկացրին։

— Ապրի՛ք զաւակներս, այժմ գնացէք մի փոքր հանգստացէք մինչև որ ձեզ հրաման կը տան մեզ հետ ճանապարհ գնալու, ասաց Մարտիրոս հայրը այդ խմբին, որ եկել էր միանալու մեր խմբին և ապա դառնալով դէպի գիւղի մեծաւորը, ասաց.

— Ապրի՛ս, լաւ խումբ ես պատրաստել։

Նրանք մտան խրճիթ և սկսեցին համեստ ճաշը վայելել։ Ծօսակցութեան նիւթը Աշոտ Երկաթն էր, որին օգնութիւն էին գնում նրանք։ Յանկարծ գիւղացիներից մէկը ներս ընկաւ և լեղապատառ կանչեց։

— Հայր սուրբ, մենք կորանք, հեռու, գիւղի սահմանում երևում են ձիաւոր մարդիկ, վախենում եմ, որ Իւսուֆի գունդը լինի։

— Մի վախենաք, որդիք. ասաց հայր սուրբը, այժմ այստեղ երկու հարիւրից աւելի գինուած մարդ ունինք, սրանք չորս հարիւր Իւսուֆի զինուորներ արժեն։

Ապա իշխանն ու Մարտիրոս հայրը դուրս եկան և սկսեցին դիտել։

Հեռու, գիւղի հորիզոնի վրայ, սպիտակ ձիան վրայ մի քանի կէտեր էին երևում, որոնք արագութեամբ դէպի գիւղն էին շարժւում։ Կասկած չկար, որ դրանք ձիաւորներ են, որոնցից մի քանիսը առաջ էին ընկել կարծես շուտ հաս-

նելու գիւղը. իսկ մի մեծ սև կէտ հեռևիցն էր գալիս։

— Է՛, հոգ չէ, ասաց իշխանը, երբ նրանց խմբի քանակութիւնն աչքով որոշեց, հարկաւոր է միայն մեր ողոցը ամեն մի խրճիթում որոշ բաժանել և լուռ կենալ և ապա երբ նրանք միամիտ ներս կը խուժեն իրանց ասպատակութիւնն սկսելու, այն ժամանակ մենք կը կարենք նրանց գլուխները։

Խմբին պատուէրները տուին, իսկ իշխանը քան մարդով մի խրճիթում թաղնուեցաւ, որ յանկարծակի յարձակուելով նրանց վրայ. պակասորդն էլ ինքը լրացնի։

Գիւղը լուռ էր. արաբաց խումբը մօտենում էր. նրանց ձիերը քափ ու քրտինք էին կորել։ Մերկ սրերը հատած նրանք մտան գիւղը։ Գիւղի մեռելութիւնը արաբաց հրոսակների վրայ զարմացք պատճառեց. մի խումբ շներ միայն նրանց հալածում էին, այն ինչ ոչ մի մարդ չէր երևում։

— Անհաւատները բոլորն էլ կոտորուել են, ասաց մի վայրենի դէմքով մարդ, որ ըստ երեւոյթին խմբի մեծաւորն էր։

— Տղերք, իջէք ձիերից և դուրս քշեցէք հաւերին հաւաքներից, դարձաւ նա իւր խմբին և ինքը իջնելով ձիուց իւր հանդիպակաց խրճիթը դիմեց, որի դուռը փակ գտաւ։

Մի ակնթարթում խումբը ցրիւ եկաւ գիւղի մէջ և ամեն մէկն աշխատում էր շուտ խրճիթը մտնել և աւարի լաւ պատառները ինքը վերցնել։

Յանկարծ ամեն կողմից լսուեցան վայնասունի, ճչի և հայհոյանքի ձայները և քիչ յետոյ արաբաց խումբը դէպի իւր ձիերն էր վազում. բայց հէնց այդ միջոցին վրայ հասաւ Գէորգ իշխանը և իւր կտրիճներով սկսեց նրանց ճանապարհը կապել։ Արաբները կուռում էին հերոսաբար, բայց նրանց փրկութիւն չկար։ Մի մի գազանների նման դուրս թափուեցան նա և հայոց մնացած խմբերը։ Զանգաւ կարճ ժամանակ և երեք հարիւրի չափ ընտիր ձիերը և այդչափ էլ գէնք ու զրահ մնաց հայ կտրիճների ձեռքին, որոնք ուրախութիւնից խելքները էին կորցրել։ Աստուած ինքը հասցրեց նրանց ձիեր և գէնք, որին այնքան կարօտ էին։

Արևն արդէն մայր էր մտնում, ուստի ուշ գատելու պատճառով խումբը որոշեց գիշերը այդ գիւղում անցկացնել, լաւ հանգստանալ, կազդուրուել և ապա առաւօտը կրկին ճանապարհը շարունակել։

Բայց առաւօտը երբ լուսացաւ թանձր մշուշը պատել էր ամբողջ գիւղին, մի քանի քայլ առաջ ոչինչ չէր երևում։ Զնայած մառախուղին խումբը հեծած ձիերի վրայ կազմ և պատրաստ էր ճանապարհ ընկնելու. երբոր դուրս եկան իշխանը և հայր սուրբը, խումբը գլխարկները վերցրեց։

Մարտիրոս հայրը նայեց այդ քաջերին և ժպտաց. մառախուղի մէջ ծածանւում էր կարմիր դրօշը Բագրատունեաց խաչանիշ նշանով,

ապա նա պահպանիչ ասաց և խումբը շուտով անյայտացաւ թանձր մշուշի մէջ...

Գիւղի մեծ ու փոքրը, կանայք ու ծերերը երկար ժամանակ դեռ նայում էին նրանց ետեւից և օրհնում նրանց ճանապարհը. նրանք դեռ հեռուից, մառախուղի մէջ, տեսնում էին ծածանուող դրօշակը, որ այնպէս սիրուն սաղ էր գալիս այդ փոքրիկ խմբին։

—Աչն ու խաչը ձեզ պահապան, կրկնեցին գիւղացիները, երբ անյայտացաւ նրանց աչքից խումբը և դրօշակը և ապա ամէն մարդ իւր խըրճիթը մտաւ։

Այդ ժամանակ սկսեց ձիւնը, Հայաստանի մեծ մեծ և փաթիլ փաթիլ եկող ձիւնը։

ԻԲ.

Գապիկ Արծրունին դժգոհ էր իւր վիճակից։ Նախիջևան քաղաքը ամնելով նա դեռ չէր բաւականացել. նրա սիրտը դեռ չէր գոհացել։ Նա ուրիշ մտադրութիւններ ունէր կատարելու իւր երկրի սահմանները ընդարձակելու և իւր երկիրը ապահովելու համար, բայց այդ չէր յաջողվում իրան։ Իւսուֆի հրոսակները ողողում էին նաև վասպուրականը և ոչ մի բոպէ հանգստութիւն չէին տալիս նրան, ու. սախտուած նա էլ Աշոտ Երկաթի նման լեռ-

ներն ու ամրոցներն էր քաշւում և յանկարծակի յարձակւում թշնամիների գնդերի վրայ։

Այդ տեսակ երերուն դրութեան մէջ էր Գագիկ Արծրունին, երբ Յովհաննէս կաթողիկոսից օրհնութեան կոնդակ ստացաւ, ուր կաթողիկոսը հրաւիրում էր նրան գնալ Տարօն, նախարարների ժողովին ներկայ գտնուելու և ազգի դրութեան մասին խորհրդակցելու։

Գագիկը մերժեց այդ հրաւէրը, քանի որ ինքը վասպուրականի թագաւոր լինելով նախ ոչ ոքից կախում չունէր և երկրորդ այդ ժողովում իրան համար ոչ մի շահ չէր տեսնում։ Նա չէր սիրում բագրատունեաց ցեղը և կոյր նախանձը խեղդում էր նրան. նրա ջանքն էր ամէն կերպ նսեմացնելու այդ ցեղը և նա հաւատացած էր որ եթէ ընկնէին Բագրատունիք, Արծրունեաց ցեղը պիտի գլուխ կանգնէր և ձեռք ձգէր Հայաստանի թագաւորական գահը։ Նա հաւատացած էր, որ Բագրատունեաց ցեղն է իւր արգելքը և հետևապէս Աշոտ Երկաթի դէմ պիտի դարձնէ այդ հարուածը, բայց իւր այդ գայթակղութիւնը, իւր նախանձը ոչ մի կերպով չէր արտայայտում, որպէս զի աչքի չընկնէր և այդպիսով իւր գործը չփչացնէր։ Նա գործում էր Աշոտ Երկաթի հետ, թէև ոչ գոյշ և շրջանկատ. նա արտաքուստ շատ լաւ յարաբերութիւններ ունէր Աշոտ Երկաթի հետ, թէև ոչ նրան էր թողնում իւր գործերի մէջ խառնուելու և ոչ ինքն էր նրան մի բանում օգնում,

իսկ թէ ինչ էր գործում վարագոյրի տակ, այդ ոչ ոք չգիտէր։

Մի գիշեր Գագիկ Արծրունին քաշուեց իւր շքեղ սենեակներից մէկում, երկար ժամանակ գրոյց էր անում Ռշտունեաց և Անձևացեաց իշխանների հետ, որոնք ճրագի աղօտ լուսաւորութեան տակ մի խորհրդաւոր տպաւորութիւն էին թողնում։

—Լսե՛մ էք, իշխաններ, ասում էր Գագիկ Արծրունին, համարեա շշնջիւնով, ես վախենում եմ Աշոտ Երկաթից, դրան պէտք է մէջտեղից վերցնել. ամեն հնարք, ամեն միջոց պէտք է գործ դնել որ նա բռնուի և Իւսուֆի ձեռքն ընկնի։

—Ի՞նչպէս անենք, այդ մի փոքր դժուար է, եթէ նրա կեանքի դէմ դաւադրութիւն լարէինք հեշտ էր, բայց Իւսուֆի ձեռքը ձգելը մի փոքր դժուար է, ասաց Ռշտունեաց իշխանը, որ մի քառասուն և հինգ տարեկան խորամանկ մարդ էր։

—Չէ, պէտք չէ նրա կեանքին ձեռք տալ, այդ մեր գործը չէ, հարկաւոր է պահպանել. մեր գլխաւոր ջանքն այս պիտի լինի, որ նա Իւսուֆի ձեռքը ընկնի. իսկ թէ Իւսուֆն ինչ կանի նրան, այդ ամենի համար պարզ է։

—Ես կարծում եմ, որ մեր արքան շատ լաւ է ասում, ասաց Անձևացեաց իշխանը. եթէ մեզանից մէկը ձեռք բարձրացնի, այդ ժամանակ ազգը գլխի կընկնի և կասկածը այսպէս թէ այնպէս Արծրունեաց ցեղի վրայ կընկնի, միակ միջոցը այն է, որ մենք աշխատենք Աշոտ Երկաթին Իւսուֆի ձեռքը ձգենք...

—Բայց ինչպէս, ընդհատեց Ռշտունեաց իշխանը։

—Ինչպէս, շատ պարզ։ Յայտնի է, որ Իւսուֆն ընկած է նաև Վասպուրականի թագաւորութեան հետ, մենք պէտք է ներկայանանք Իւսուֆին իբր հալածուած Գագիկ արքայից և պաշտպանութիւն խնդրենք։ Իւսուֆը կասկած չկայ, որ մեզ սիրով կընդունի և այն ժամանակ հեշտ է նրանց խմբի գլուխ անցնելը և Աշոտ Երկաթին հալածելը, պատասխանեց Անձևացեաց իշխանը։

—Ապրիս, ասաց Գագիկը ձեռքը Անձևացեաց իշխանի ուսին խփելով, լաւ միտք յղացրիր իմ մէջ, դրանից աւելի լաւ ճանապարհ անկարելի է գտնել։

—Ճիշտ որ լաւ է համաձայնեց նաև Ռշտունեաց իշխանը։

—Այո, շատ լաւ է, ուրեմն վճռուած բան է, հէնց վաղը առաւօտ դուք երկուսով ճանապարհ կընկնէք Դուին և կը ներկայանաք Իւսուֆին, այնտեղ ձեր գլխաւոր ջանքը պիտի լինի արագաց գնդի գլուխ անցնել և արշաւել Աշոտ Երկաթի վրայ, իսկ յետոյ, երբ լաւ կապեր կը կապէք սպարապետի հետ, այն ժամանակ ձեր գլխաւոր ջանքը պիտի լինի Վասպուրականի բռնուած յարաբերութիւնը ոչնչացնելու։ Դուք Իւսուֆին կը յայտնէք, որ ես ամենևին միտք չու-

նեմ նրա դէմ ապատամբելու և թէ պատրաստ եմ հարկը կանոնաւորապէս նրան հասցնելու, եթէ նա ինձ հանգիստ թողնի։

Իշխանները ոտքի ելան։

—Հա, իմ քաջ իշխաններ, իմացէք, որ սա երեքիս մէջ միայն խորին գաղտնիք է և այդ գաղտնիքը ոչ ոք չպիտի իմանայ. չվհատիք, ամեն բանի դիմեցէք, ամեն միջոց ձեռքներդ առէք և յաջողեցրէք գործը։

—Միամիտ եղիր, արքայ։

—Ուրեմն բարի ճանապարհ, ասաց Գագիկը և գրկելով համբուրեց նրանց և ճանապարհ դրեց մինչև պալատից դուրս։ Նա ներս եկաւ և սկսեց շրջել իւր սենեակում, Ամբողջ պալատը խոր քուն էր մտել, ոչ մի ձայն չէր լսւում, բացի Աղթամարի լճի ալեաց ծփալու ձայնից, որ մեղմ, բայց հաւասարաչափ ծեծում էր վանի ժայռերը։

Միամիտ շրջում էր Գագիկը իւր սենեակում և զանազան ծրագիրներ կազմում, եղբակացութեանց հասնում, ինքն իրան տխրում, ուրախանում, հրճւում և սարսափում առանց նկատելու թէ ինչպես երկու վառ աչքեր հետևում են իրան և դիտում նրա հոգւոյ այլայլութիւնը։

Գագիկ Արծրունու գաղտնիքը երեք անձնաւորութեան մէջ չէր ամփոփուած այլ չորս։

Իթ.

Մարտիրոս հօր հեռանալուց յետոյ, Յովհաննէս կաթողիկոսը մի փոքր ժամանակ անշարժ մնաց, կարծես դիւթած լինէր, ապա ոտքի կանգնեց և սկսեց շրջել իւր ընդարձակ դահլիճում։ Բուռն մտքերը նրան հանգստութիւն չէին տալիս. նա մտքերի ծովն էր ընկել. որից նա չէր կարողանում դուրս գալ։ Երկար, շատ երկար մտածում էր նա, իւր անելիքը կշռում, ցածր ու բարձր անում մինչև որ հասաւ գիշերը և նա խոնջացած մահիճ մտաւ, որ գոնէ հանգստանայ փոքր ինչ և ազատուի իւր հոգւոյ վրդովմունքից. բայց գիշերն էլ հանգիստ չտուեց նրան, զարհուրելի պատկերները շփոթում էին կաթողիկոսի հոգին։ Մտքերը բուռն ալիքների, վիշապների նման բարձրացնում էին իրանց գլուխները, իրար վրայ յարձակւում, չարչարում, փշրւում և ապա նորից յարձակւում...

Տխուր էր կաթողիկոսի հոգին և դառն էին նրա մտքերը, որոնք հետզհետէ աւելի էին դառնանում։ Նա գիտէր. նա ճանաչում էր հայ նախարարներին, գիտէր նրանց հոգին, նրանց անմիաբանութիւնն ու եսասիրութիւնը և աւելի յուսահատւում էր... Ի՞նչ պիտի անէր. միակ ելքը, միակ փրկութիւնը դա էր իւր բոլոր ճիգը պիտի թափէր նախարարներին միացնելու, հաշտեց-

նելու Աշոտ Երկաթի հետ. ապա թէ ոչ ազգը կո-
րած էր ուսաի նա կանգ առաւ այն մտքի վրայ,
որ նախ հաշտեցնի Վրաց, Աղուանից և Ափխա-
զաց իշխաններին և ապա Տարօնի մէջ, այնտեղ,
ուր գանուում է մուրազատու սուրբ կարապետի
վանքը, նախարարների ժողով հրաւիրի։

Ու հոգևոր տէրը քուն եղաւ այդ մտքով փայ-
փայած, յաջողութիւնը Աստուծոյ վրայ դնելով։

Արևի անդրանիկ ճառագայթները նոր էին
դուրս եկել, երբ զարթեց ազգի հովիւը, աղօթեց
Աստուծուն. և հէնց պատրաստուում էր ներկայա-
նալ վրաց Աարներսէհ թագաւորին, երբ յայտ-
նեցին թէ յունաց կայսրից թուղթ է բերուած
իրան։ Ի՞նչ թուղթ էր այդ, նոր թշուառութիւն
թէ ուրախութիւն էր բերում այդ, թէ յոյ-
ները Հայաստանի թշուառութիւնը տեսնելով
նորից արծարծում էին հին առակները — կրօնա-
կան միութեան խնդիրը — նա չգիտէր։ Դողդոջիւն
ձեռքերով բաց արաւ թուղթը և կարդաց յունաց
Կոստանդին Պերփերուժէն կայսեր կողմից պատ-
րիարքի գրութիւնը որ գրում էր.

«... Սրա հետ միասին թուղթ ուղարկեցինք
Աարներսէհին և Ափխազաց Գուրգենին, խրատե-
լով նրանց, որ լսեն ձեր խրատները, մոռանան
իրար հակառակութիւնը և միմեանց հետ սիրով
ու միաբան լինին։ Ձեր պարտքն է բերանէ բե-
րան, թղթով, պատգամաւորներով, եպիսկոպոս-
ներով և քահանաներով աշխատել, որ չար հա-
կառակութիւնը վերանայ դրանց միջից և այդ-

պիսով միաբան և միախորհուրդ լինելով, չա-
րութիւնը այլ ևս չի կարող ապականել ձեր աշ-
խարհը։ Եթէ դուք այդպիսով կը միանաք, այն
ժամանակ մեր ինքնակալ թագաւորն էլ, հարկա-
ւոր ժամանակ կուղարկէ բազմաթիւ զօրք իբրև
ձեզ օգնական...»։

Ուրախացաւ կաթողիկոսը կարդալով այդ
թուղթը և շտապով ներկայացաւ Աարներսէհին,
որ խօսք առնէ նրան դադարեցնելու իւր թշնա-
մութիւնը հայոց հետ և օգնելու նրանց Իւսուֆի
դէմ։

Գոհ սրտով բաժանուեց կաթողիկոսը Աար-
ներսէհից և ինքը գարձաւ Հայաստան, Տարօն
գաւառը, որտեղից պատգամներ ուղարկեց ամէն
կողմը, որ գան հաւաքուեն հայ իշխաններն ու
նախարարները։

Բայց ի՞նչ շահեցաւ կաթողիկոսը այդ ժողո-
վից։ Ոչինչ։ Նախարարներից ոմանք չներկայա-
ցան այդ ժողովին, իսկ ոմանք իրար դէմ կռիւն
հակաճառելով բաժանուեցան միմեանցից առանց
մի ելքի գալու։

Վհատեց կաթողիկոսը և գառնացած սրտով
նամակ ուղարկեց Յունաց կայսեր նկարագրելով
ազգի տառապեալ դրութիւնը, նախարարների
անմիաբանութիւնը և օգնութիւն խնդրեց նրա-
նից։ Կարճ ժամանակ անցաւ և իւր թղթի պա-
տասխանն առացուեցաւ, որով Յունաց կայսրը
իրան և Աշոտ Երկաթին կոստանդնուպոլիս էր

հրաւիրում, խոստանալով նրան շատ բարիքներ և օգնական զօրք։

Կաթողիկոսը հրաւիրման այդ թուղթը ստանալով իւր գնալը մերժեց զանազան պատրուակի տակ քօղարկած, վախենալով որ եթէ ինքը գնայ Ղ. Պօլիս, կրկին կրօնական միութեան խնդիրը կարծարծուի. ուստի ճանապարհը ընկաւ Տարօնից դէպի Շիրակ Աշոտ Երկաթի մօտ, որ խորհուրդ տայ նրան ընդունելու յունաց հրաւէրը։

Ա.

Հեղինէն հօր սարսափելի գաղտնիքը իմանալուց յետոյ սաստիկ անհանգիստ էր։ Ի՞նչ էր անում իւր հայրը—մի սոսկալի դաւադրութիւն. որով իրանց ամբողջ ցեղը պիտի մահանար դարէ ցդար անէծքի և դաւաճանի կոչմանը և ինչո՞վ կարելի էր այդ ապրատը վերցնել իրանցից, կրկին ոչնչով։ Օ՜... Հեղինէի զգայուն և փափուկ սիրտը կսկծում էր քանի միան էր բերում այն գիշերուան գաղտնի խորհուրդը և մի յոգներ էր որոնում նրա ծրագիրը խորտակելու։ Օր աւուր իւր հայրը աւելի էր գառնում, որդիական պարտաւորութիւնները լռում էին նրա մէջ և նրա հոգու մէջ տիրապետում էր ազնուութեան և ճշմարտութեան զգացմունքը։ Մի կողմը կանգնած էր իւր հայրը, իրան գգուողն ու սիրողը իւր վատ և զազրելի արարքներով, բայց որին ընութեան օրէնքի համաձայն պարտաւոր էր սիրել և յարգել, այն ինչ միւս կողմից տուժում էր Աշոտ Երկաթը, օրինական թագաւորը, իսկ յանձին նորա և ամբողջ ազգը։

Այստեղ տուժում էր մի անձն միայն, որ կուրացած էր փառամոլութեամբ, իսկ այնտեղ ազգը. ինքը կանգնած էր երկուսի մէջ, որոնցից երկուսն էլ ուժեղ էին, երկուսն էլ սիրելի. որին աւելի գերակշռութիւն ցոյց տայ. իւր հօրը, որին պարտական էր սիրել, թէ ազգին...

Աւելի լաւ չէր լինի, եթէ ինքը լռէր, հեռու քաշուէր այդ խարդաւանքներից և իւր կանացի գործերին նայէր, քան թէ իւր տան մէջ իւր հօր դէմ լրտեսութեամբ պարապէր...

Ի՞նչ նրա գործն էր թէ կը սպանուէր Աշոտ Երկաթը, կը խորտակուէր ազգը, կ'ոչնչանար ամբողջ Հայաստանը, ինքը հօ հանգիստ կը լինէր. գոհ իւր վիճակից, շքեղ պալատներում ճեմելիս իւր հօր փաղաքշանքներով շրջապատուած...

Օ՜... նա չէր ուզում իւր անձնական հանգստութիւնը, նրա երակների մէջ կարծես չէր հոսում իւր հօր արիւնը և նրա հոգու մէջ տիրապետում էր վատ կերպիւ ապրի սէրը, ճշմարտութիւնն ու արդարութիւնը... Նա գոհում էր իւր ընտանիքը՝ հօրը, մօրը և ամէն հանգստութիւն իւր ազգին, որի համար պատրաստ էր նա

ամեն զոհողութիւն անել։ Ազգն էր նրա հայրն էլ, մայրն էլ և հանգստութիւնն էլ։ Երբ որ նա առաջապում էր, ինքն էլ պիտի տառապէր, նրա հետ ուրախանար, նրա հետ սխրէր... Ահա թէ ինչ էր մտածում նա, երբ մեծ օրն ևեթ կանչել տուեց իւր մօտ Տէր Սահակին, որի հաւատարմութեան մասին կասկած անգամ չունէր։

Երբ Տէր Սահակը ներս մտաւ նրա առանձնասենեակը, Հեղինէի երեսին գոյն չկար. ամբողջ գիշերները անքուն էր ծնացել։

—Ի՞նչ կայ, աղջիկս, ինչու՞ այդպէս այլայլուած ես, հարցրեց Տէր Սահակը։

—Օ՜... աէր հայր, հոգիս մաշւում է, երբեմն այնպէս վրդովւում եմ որ քիչ է մնում ինձ ծովը ձգեմ և վերջ դնեմ իմ տանջալից կեանքին։

—Ի՞նչ է պատահել, աղջիկս, ասա, յայտնիր, ես պատրաստ եմ քո ամեն վշտերը սփոփել։

—Ոչ, աէր հայր, ո՛չ, իմ վշտերը չեն սփոփուի, մինչև որ հայրս ձեռք չը վերցնի իւր սուրբ արարքներից։

—Ի՞նչ կայ, էլի նոր բան։

—Եւ ինչպիսի՜... երեկ իրիկուն մեր պալատումն էին Ռշտունեաց և Անձևացեաց իշխանները, որոնց հետ հայրս երկար խորհուրդ էր անում, թէ ինչպէս անեն, որ Աշոտ Երկաթին Իւսուֆի ձեռքը ձգեն և ապա սպանել տան...

—Օ՜հ, անգո՛թ, ինչ սոսկալի ոճիր, և դու, աղջիկս, բոլորը ճիշտ լսեցիր։

—Այո, բոլորը լսեցի։ Այսօր առաւօտ իշխանները արդէն ճանապարհ ընկան դէպի Դուին, որ ներկայանան Իւսուֆին և այնտեղից առաջաց գնդով Աշոտ Երկաթին բռնեն։

Տէր Սահակը մի րոպէ լռեց և ապա դառնալով դէպի Հեղինէն ասաց.

—Ապրիս աղջիկս, որ ընդհանրութեան շահերը վեր դասելով ծնողական շահերից այդ մասին յայտնում ես ինձ։ Ուշ չէ, կարելի է դրա առաջն առնել։ Ես ինքս հէնց այսօր և եթ ճանապարհ կ'ընկնեմ դէպի Արշարունիք, կը գտնեմ Մարտիրոս հօրը և ամեն ինչ կը յայտնեմ. իսկ Մարտիրոս հայրը գիտէ թէ ինչ կ'անի։

—Ա՜խ, այ, Հայաստանի այդ Ղևոնդը... Շատապիր ուրեմն...

Փոքր ժամանակից յետոյ Տէր Սահակը ձի հեծած ճանապարհ էր գնում, առանց նայելու ճանապարհի ձիւնին ու ցրտին։ Շատ նեղութիւնները կրեց, շատ հարց ու փորձ արաւ և վերջը գտաւ ծերունի վանահայր Մարտիրոսին ու մանրամասն պատմեց գործի հանգամանքը։ Երբ Տէր Սահակը վերջացրեց իւր պատմութիւնը, Մարտիրոս վանահայրը ոչինչ պատասխանեց։ Լուռ սկսեց անց ու դարձ անել և իւր համրիչը ձգելով ինքն իրեն մտմտալ։

Տխուր էր Մարտիրոս վանահօր դէմքը, շատ տխուր և ինչպէս երևում էր ծանր մտածողութիւնը այդ վայրկեանին խիստ հալածած էին ա-

նում նրան։ Յանկարծ նա կանգ առաւ, շեշտակի նայեց Տէր Սահակին և կանչեց.

—Լսէր, Տէր Սահակ։

—Ի՞նչ է, հայր սուրբ, ես պատրաստ եմ քո ամեն հրամանը կատարելու, պատասխանեց Տէր Սահակը և խոնարհ գլուխ տուեց Մարաիրոս հօրը։

—Այս վայրկենիս ես վճռեցի մի յանդուգն քայլ անել, եթէ իմ գործողութիւնը կարելի է այդպէս անուանել։

—Ի՞նչպէս, հայր սուրբ։

—Ես վճռեցի անձամբ տեսնուել վասպուրականի արքայի հետ և նրա առաջ դնելով նրա գազիր գործերի ընթացքը, խնդրել, աղերսել ետ կենալու իւր այդ ընթացքից։

Տէր Սահակը բերանը բաց, ապուշ ապուշ նայում էր Մարաիրոս հօրը և ոչինչ չէր պատասխանում։

—Ի՞նչ, դու լռում ես, ոչինչ չես պատասխանում։ Գիտեմ ինչն է քեզ վախեցնում։ Մի վախենար, իմ կեանքին նրա կողմից ոչ մի վտանգ չի կարող սպառնալ և ես կ՚կատարեմ իմ մտադրութիւնը։ Օ՜, եթէ նա չի կատարի իմ աղերսը, ետ չի կանգնի իւր գազիր ընթացքից, այն ժամանակ վայ նրան...

—Քո կամքն է, հայր սուրբ, բայց այդ կամակոր մարդուց ոչինչ չի դուրս գալ, պատասխանեց Տէր Սահակը։

—Այդ կ՚տեսնենք, ասաց Մարաիրոս հայրը և հրամայեց պատրաստութիւն տեսնել ճանապարհ ընկնելու դէպի վասպուրական։

ԼԱ.

Գնունեաց ծովն էր, որ արևի վերջալուսին հուրհուրատին էր տալիս ու նրա վերջին ճառագայթները խաղում էին վճիտ ալիքների հետ։

Ծովը հանդարտ ծփում էր ու նրա ալիքները վէտ վէտ վազում էին առաջ ու մարդու սրտի մէջ սերմանում մի տեսակ վշտի ու թախիծի սերմեր։ Այդ ժամանակն էր, երբ Հեղինէն, գազիկ արքայի դուստրը, նուրբ շղարշը ձգած ուսին, դուրս եկաւ դէպի դամիկոնը և նայեց դէպի ծովը, դէպի հեռուում կապոյտին տուող լեռները։

Այդ պահուն նրա սիրուն դէմքը մռայլ էր և ծովի հրաշալի պատկերը և վասպուրականի անհման բնութիւնը չկարողացան նրա սրտի մռայլը ցրել և հոգին խաղաղացնել։

Մի փոքր կանգ առաւ, նայեց ջրերի ալիքներին ու ինքն իրեն մտմտաց.

—Ա՜խ, իմ թոթոռուն հոգին էլ ծովի ալիքների նման վազում է առաջ, միշտ առաջ, դէպի անյայտ մթութիւնը ու սիրտս ցաւեցնելու չափ կսկիծ առաջացնում և արցունքի կաթիլները քա-

մում աչքերիցս... Ո՜հ, ինչքան ճմլւում է սիրտս, հոգիս մռայլւում, երբ միտքս է գալիս այն չար, ոխակալ ոգին, որպիսին սիրապետում է աշխարհիս վրայ: Ա՜խ, եթէ մեր մէջ սիրապետէր այն սէրը, այն խաղաղութիւնը, որ աւանդեց մեզ Յիսուս, այն ժամանակ չէին լինի մեր մէջ այն եղբայրասպան կռիւները, որպիսին կատարում է հայրս...

Հեղինէի մաքի թելը կտրուեց. նա նայեց դէպի դահլիճը տանող ճանապարհը, ուր դանդաղ քայլերով բարձրանում էր մի ծերունի վանական:

— Տէր Աստուած, ո՞վ է այս վանականը, որ գալիս է դէպի իմ կողմը, ասաց Հեղինէն հետաքրքրութեամբ և մի քայլ առաջ գնալով, մեխուածի նման կանգ առաւ:

Վանականը որ փոշու մէջ էր թաղուած և ինչպէս երևում էր ճանապարհորդութիւնից նոր էր գալիս, մօտեցաւ Հեղինէին, բարև տուեց նրան. նստեց քարեայ նստարանի վրայ ու յենուելով իւր երկար ձեռնափայտին, ասաց.

— Օրհնեալ լինես, աղջիկս, ես վաղուց փափագում էի քեզ տեսնել և Աստուած արժանացրեց ինձ:

— Աստուած օրհնական, հայր սուրբ, բայց ասա՛ ո՞վ ես և ինչ գործի համար շնորհք ես բերել ինձ մօտ:

Վանականը ժպտաց մի այնպիսի ժպիտով,

որ Հեղինէի մարմնով մի սեռսակ անուշ բերկրանք անցաւ:

— Ես Մարիամոս վանահայրն եմ, աղջիկս...

— Մարիամոս վանահայրը՜... ա՜խ, հայր սուրբ, օրհնիր ինձ, քաշալերիր ու իմ լքած հոգին արիացրու, ասաց Հեղինէն ու ծունկ չոքելով վանահօր առաջ, համբուրեց նրա աջը:

— Վեր, աղջիկս. Թող Աստուած օրհնի քեզ կարևոր և սոփոդական գործերը ինձ վստահուրական բերին, բայց, չգիտեմ աջողութեամբ կըպսակուի թէ՞ ոչ:

— Անշուշտ գործը վերաբերում է հօրս:

— Այո, բայց նախ քան նրա հետ խօսելս, ես կցանկայի քեզ հետ զրոյց անել Բգնունեաց ծովի այս հրաշագեղ ափում:

— Օ՜, ես պատրաստ եմ քեզ լսելու և քո մի հրամանով ծովը նետուելու:

Ես գիտեմ, հայր սուրբ, որ դու քո կեանքը նուիրել ես հայրենիքի բարօրութեան և բարգաւաճման համար, ուստի և ես իբրև մի անփորձ օրիորդ կ՚ուզեմ քո խրատներին և խրախուսանքին:

— Գիտեմ, իշխանուհիս, որ դու Հայաստանի համար մի լուսատու աստղ ես, սակայն հօրդ բռնած ընթացքը ինձ խոր կսկիծ է պատճառում և աչքերիցս արցունքներ քամում:

— Ա՜խ, հայր սուրբ, այդ ցաւոտ վէրքը կսկծեցնում է և իմ հոգիս, բայց ես ոչ մի հնար չեմ գտնում այդ վէրքը բուժելու: Հայրս ընդ-

դարձակ Վասպուրականով չբաւականանալով աւելի հեռուն է ձգտում: Նա ուզում է տէր դառնալ և բովանդակ Հայաստանին և այդպիսով յաջողդ տալ իւր փառասիրութեանը:

—Բայց որքան զոհեր, սրածութիւն, աւեր կը յառաջանայ դրանից: Մի՞թէ մի ելք, մի դարման չկայ յետ կառնելու հօրդ այդ քայլից:

—Ես ոչ մի միջոց չգիտեմ, հայր սուրբ, և չեմ էլ կարծում, որ նա յետ կանգնի իւր նպատակից:

—Դու յուսահատեցնում ես ինձ, Հեղինէ: Իմացիր, որ գիշեր ցերեկ քայլելով, ես, յոգնած ու տանջուած, հասել եմ այստեղ, որպէս զի խօսեմ հօրդ՝ Վասպուրականի արքայի հետ, որպէս զի բաւական համարի նա Աշոտ Երկաթի դէմ թշնամական ցոյցեր անելուց և ձեռք ձեռքի տալով նրա հետ ժողովրդի բարօրութեան համար մտածի, մինչդեռ դու քո խօսքերով ինձ բոլորովին գինաթափ ես անում:

—Ժբաղտաբար ես ճշմարտութիւնն եմ ասում. բայց խօսիր ինքդ, դուցէ յաջողուի քեզ կոտրել նրա յամառութիւնը:

—Այո, ես կը խօսեմ, կաղաչեմ նրան յանուն մեր տանջուած և հիւծուած ժողովրդի, յանուն մեր տառապած հայրենիքի, օ, եթէ նա մերժեց ես...

—Բայց ահա նա ինքն է գալիս մեր կողմը, ընդհատեց Հեղինէն Մարտիրոս վանահօր խօսքերը և ցոյց տուեց դէպի Վասպուրականի արքան որ Աշոտ սպարապետի հետ խօսակցելով դէպի դահիկոնն էր գալիս:

Մարտիրոս հայրը ոտի կանգնեց ու երբ մօտեցան նրանք խոր գլուխ իջեցրեց և ասաց.

—Ողջոյն Վասպուրականի արքային և հայոց սպարապետ Աշոտ իշխանին: Գագիկ Արծրունին և Աշոտ սպարապետը սուր թափանցող հայեացք գցեցին Մարտիրոս հօր վրայ և մի տեսակ մռայլ ամպ անցաւ նրանց դէմքերի վրայ:

Ինչպէս երևում էր այդ տարօրինակ հանդիպումը խիստ տհաճ տպաւորութիւն գործեց երկուսի վրայ էլ, որոնք ամենևին չէին սպասում նրան տեսնել իրենց մօտ:

—Բարի ես եկել, հայր սուրբ, նստիր, պատմիր թէ ինչ բան քեզ ինձ մօտ է բերել, ասաց Գագիկ արքան և ապա դառնալով դէպի Հեղինէն աչքացրեց.—Աղջիկս, ցաւերը հետզհետէ սաստկանում է և օդը խոնաւանում. դու կարող ես մրսել: Ներս գնա, իսկ մեզ թող այս վանականի հետ մի փոքր խօսելու:

—Ո՛չ, հայրիկ, ինձ համար այստեղ անուշ է, դուրեկան: Ես զուարճանում էի ծովի ալիքներով, երբ Մարտիրոս հայրը ներս եկաւ: Նա քեզ հետ ուզում է խօսել և ես յոյս ունեմ նրան չես վշտացնի և կը կատարես խնդիրը, պատասխանեց Հեղինէն:

Գագիկը յոնքերը կիտեց: Ինչպէս երևում էր աղջկայ խօսքերը նրան դուր չեկան, ուստի և դառնալով աղջկան, ասաց.

—Լաւ։ Թող մեզ միայնակ։ Ես պատրաստ եմ լսելու նրան։

Հեղինէն գլխիկոր հեռացաւ, մինչդեռ Մարիբոս վանահայրը դիմելով Գագիկին, ասաց.

—Այո, սէր արքայ, կարևոր և անհետաձգելի գործերը ինձ սահմեցին քեզ մօտ այցելութեան գալ և ես ուրախ եմ, որ քեզ հետ միանին տեսնում եմ և Աշոտ սպարապետին։ Գործը երկուսիդ էլ է վերաբերում, որովհետև դուք, երկուսդ էլ, ձեռք ձեռքի տուած մի ուղիով էք ընթանում...

—Այո, մի ուղիով, որովհետև այդ է խելացին և օգտակարը, բայց ի՞նչ ես ուզում դրանով ասել, հայր սուրբ, ընդհատեց Աշոտ սպարապետը։

—Նահիր և պատուիր գալուդ պատճառը, Մարաիբոս հայր, աւելացրեց Գագիկ Արծրունին։

—Յոյս ունիմ, որ վեհափառը և քո Աշոտ Երկաթը, որոնց կողմից անշուշտ եկել ես դու, գործը ծայրահեղ տասիճանի չեն հասցնիլ։

—Օ՛, միամիտ ծնայ, վատուրականի քաջ արքայ։ Ինձ ոչ Յովհաննէս կաթողիկոսն է քեզ մօտ ուղարկել և ոչ մեր թագաւոր Աշոտ Երկաթը։

—Ուրեմն Իսուֆ ամիրան, հեգնանքով ասաց Գագիկը։

—Հեգնանք պէտք չէ, սէր արքայ. Իսուֆի հետ յարաբերութիւն կունենան միայն պատերազմական մասնիչները և վատ ու զազիր մարդիկ, որոնք իրենց սին փառքի համար ամենավատ

գործի են ընդունակ։ Բայց լսիր ինձ, կանչեց Մարաիբոս հայրը վրդովուած։ Ինձ այստեղ ուղարկողը ոչ իշխանն է, ոչ թագաւորը և ոչ էլ ամիրան։ Դա արորուած և տանջուած հայ ժողովուրդն է, որի հեծեծանքի և հառաչանքի աղեկտուր ձայնը ինձ քեզ մօտ է ուղարկել քո դուռը բաղխելու համար։

Աշոտ սպարապետը լսելով Մարաիբոս հօր խօսքերը մի հեգնական քրքիջ արձակեց ու ասաց.

—Ժողովուրդը՞... Այդ ինչ նոր բան ասացիր։ Այդպիսի բան ես չէի սպասում քեզանից, Մարաիբոս հայր։

—Այո, ժողովուրդը, հայ ժողովուրդը, որին արորում, տանջում, ջարդում են իշխանները և նրանց ոսկորների վրայ կանգնում իրենց փառքը, բուռն կերպով պատասխանեց Մարաիբոս հայրը։ Այդ ժողովրդի աղեխարշ ձայնը երկինք է հասնում իսկ դուք, հայ իշխանները, ձեր անձնական կրքերը առաջ տանելու համար ներքին երկպառակութիւն էք յարուցանում, եղբայրասպան կռիւներ սարքում և ձեր օրինական թագաւորի դէմ որոգայթներ լարում... Բայց մինչև ե՞րբ, ասացէք, հայ իշխաններ...

—Պարզ խօսիր, հայր սուրբ և ազատ պահիր մեզ քո քարոզներից, ընդհատեց Գագիկը զայրացած։ Մենք ժամանակ չունենք այստեղ քո քարոզները լսելու։ Այդ քարոզները դու կարող ես քո վանքում ասել և այնտեղ միայն ա-

ղօթել քո ժողովրդի համար, աւելացրեց Գագիկը։

—Ես աղօթել եմ և կաղօթեմ իմ ժողովրդի համար, որին դու այդպէս արհամարհում և հեգնում ես, տէր արքայ։ Բայց լաւ իմացիր, որ ձեր այժը, ձեր փառքը այդ ժողովրդի վրայ է հիմնուած։ Զլինի այդ ժողովուրդը ձեր փառքն էլ կանցնի, կանյայտանայ ինչպէս մի երազ։ Այդ ժողովուրդը, որին դուք ոտնատակ էք տալիս նա այսօր քնած է ու թմրած բայց վաղը կ'զարթնի, կզարժուի և այն ժամանակ վայ իշխաններին, վայ հզօրին... Օ՜... վայ է, երբ թմրած գազանն էզարթնում, ուշքի գալիս և իւր ոսոխին առաջը տեսնում։

—Ես չեմ վախենում քո այդ թմրած գազանից։ Ես կ'արորեմ նրան իմ ոտքերիս տակ ինչպէս մի թոյլ, անզօր մրջիւն։ Բայց դու քո ասելիքն ասա, խօսիր, պատմիր թէ ինչ է ուզում ինձնից առելի Աշոտ Երկաթը, այդ քո ատած ժողովրդի սիրելին, դառն կերպով ասաց Գագիկը։

—Այո, Աշոտ Երկաթը մեր օրինաւոր թագաւորն է և ժողովրդի սիրելին։ Ճիշտ նկատեցիր։ Ժողովուրդը, որին դուք արհամարհում էք, սիրում է նրան և յարգում և պատրաստ է իւր կեանքը դնելու թագաւորի համար։ Եւ ահա ես, որպէս ժողովրդի իղձերի թարգման, վասպուրականի տէր և դուն, Աշոտ սպարապետ հայոց, ծունկ չոքած ձեր առաջ խնդրում, աղաչում եմ,

վերջ դնել եղբայրասպան կոտորածներին, ձեռք ձեռքի տալ մեր սիրեցեալ Աշոտ Երկաթին և հալածել արաբներին։ Ահա այդ է իմ ձեզ մօտ այցելութեանս բուն պատճառը, ահա այդ է խընդրում ձեզանից տանջուած և յուսաբեկ հայ ժողովուրդը։

—Դու խենթ ես, հայր սուրբ։ Մի՞թէ դու կարծում ես թէ Գագիկ արքան կըմոռանայ Աշոտ Երկաթի ինձ հասցրած վիրաւորանքը։ Օ՜, ոչ։ Գիշերները ես բաց աչքով եմ լուսացնում, բարկութեանս հուրը քրքրում է սիրտս և ինձ դէպի վրէժ, դէպի հուր ու մոխիր մղում։ Գնա, յայտնիր քո թագաւորին, որ ես երբէք հաշտութեան ձեռք չեմ մեկնի, մինչև որ նա չըտապալուի իմ սրից և նրա արիւնաթաթախ դիակը չըթաւալուի ոտքերիս տակ... Գնա, յայտնիր նոյնպէս քո սիրեցեալ ժողովրդին, որ ես նրան էլ եմ ատում և արհամարհում, որը ինչպէս մի թոյլ մրջիւն կարող է միայն ոտքերիս տակ սողալ և դթութիւն հայցել ինձնից...

—Բայց նա կըզարթնի, տէր արքայ, և այն ժամանակ վայ ձեզ, կանչեց Մարաիրոս հայրը սպառնագին։

—կըզարթնի բայց ոտքերի տակ գլորուելուց դէնը չի անցնի։ Ինչ պիտի անի մրջիւնը առիւծին։ Այդ առակները քեզ համար պահիր, Մարաիրոս հայր և ժողովրդով մեզ մի վախեցնիլ, աւելացրեց Աշոտ սպարապետը։

—Կոյր նախանձը և փառամոլութիւնը կու-

բացնում է ձեզ, իշխաններ, և դուք ձեր հարազատ թագաւորի դէմ զէնք էք բարձրացնում։ Պիղատոսի նման ես ձեռքերս լուանում եմ և ասում... Արիւն ձեր ի գլուխ ձեր եղիցի... ասաց Մարտիրոս հայրը և վեր կացաւ տեղից։

—Բաւական է, հայր սուրբ ասաց Գագիկը կատաղած։ Գնա, դու քո աղօթքները քո վանքում մրմնջայ և մեր գործերին մի խառնուիր։ Շուտով Աշոտ երկաթը բազդ կունենայ մեր ոյժերի հետ չափուելու։

—Այո, կերթամ, կերթամ իմ աղօթքները մրմնջալու եմ սիրելի ժողովրդի համար և նրա հոգու մէջ ցանելու գիտակցութեան և ինքնաճանաչողութեան սերմերը։ Կերթամ կասեմ նրան, որ ժամանակ է զարթնելու, խմբուելու մեր օրինական թագաւորի շուրջը և նրան թև ու թիկունք դառնալով դուրս վանելու ազգուրաց իշխաններին...

—Լաւ է, բաւական է ինչ խօսեցիր թէ չէ երկինքը վկայ եմ կանչում, որ քո դիակը դուրս կը շպրտեմ տաճարից, ասաց Աշոտ սպառազէնը և ձեռքը դէպի սուրը տարաւ։ Այդ նկատեց Մարտիրոս հայրը։

—Պահիր սուրդ, իշխան, ասաց նա, ես մահից չեմ վախենում, բայց մինչև այդ ես կը խօսեմ և իմ յուժիկ ձայնը կը հնչեցնեմ իմ ժողովրդի մէջ և կասեմ նրան... Զարթիր, հայ ժողովուրդը, որովհետև զարթնելու ժամ է արդէն, ասաց Մարտիրոս հայրը, փայտը ամուր զարկեց

գետնին ու շտապ քայլերով դուրս եկաւ անհիւրընկալ պալատից...

ԼԲ.

Մի խումբ արաբաց զնդի գլուխ անցած երկու հայ իշխանները Դուինից արշաւում էին դէպի Այրարատեան երկիրը նրան հուր ու մոխիր դարձնելու։ Ռշտունեաց և Անձևացեաց իշխանները արդէն կատարել էին Գագիկ Արծրունուն տուած խօսքը, թէև շատ ծանր գնով։ Իւսուֆը չհաւատալով դրանց խօսքին պահանջեց նրանցից, որ հաւատներն ուրանան, ապա թէ նա նրանց խնդիրը կը կատարէ տալով նրանց օգնական գունդ թէ Գագիկ Արծրունու դէմ, որից նրանք իբր թէ հալածուած էին և թէ Աշոտ Երկաթի դէմ, որին բռնելու ինքը շատ ուրախ կըլինէր։ Իշխանները ուրացան իրանց եկեղեցին, մոռացան Լուսաւորչայ հաւատը և երդուեցին, որ նրանք հաստատ կը ճնան Մուհամէդի կրօնին և ամեն ճիգ կը թափեն հայրենակիցներին էլ նոյն ճշմարիտ կրօնը ընդունել տալու։

—Լաւ խաղ ենք խաղում, իշխան, ասաց Ռշտունեաց իշխանը դառնալով իւր ընկերոջը, տեսնենք ինչով է վերջանալու։

—Ես կարծում եմ, որ ինչով էլ վերջանայ

մենք յաղթող պիտի դուրս գանք։ Կընկնի Գագիկը, մենք Իսուֆին կը յարենք, կընկնի Իսուֆը Գագիկից պաշտպանութիւն կը գտնենք։ Ինչ մեր հոգն է թէ երկուսը իրար միս կուտեն, մերն այն է, որ մենք հանգիստ լինենք։

—Այդ ճշմարիտ է, իշխան, բայց այն էլ պէտք է ի նկատի ունենալ, որ մեր առաջ Աշոտ Երկաթ կայ, որը կարող է մեզ արժանաւոր պատիժ տալ։

—Է՛հ, ես ամենևին չեմ մտածում Աշոտ Երկաթի վրայ, քանի որ վաղ թէ ուշ նա մեր ձեռքը կընկնի։

Այնուհետև երկուսն էլ լռութեամբ առաջ էին քայլում, երբ նրանց առաջ մի գիւղ երևաց։

Օրը արդէն մթնելու վրայ էր և ցուրտը հետզհետէ սաստկանում էր. ուստի երկու հայ իշխանները վճռեցին այդ գիշեր գիւղում անցկացնել։ Երբ մտան նրանք գիւղը, Մարտիրոս հօր կազմած յիսուն մարդուց բաղկացած մի խումբ կար միայն։

Ռշտունեաց և Անձևացեաց իշխանները ցած թռան ձիերից և դիմեցին նրանց հիւրասիրող գիւղի մեծաւորի տունը, իսկ խումբը ցրուելով գիւղի զանազան խրճիթները ամենապատուաբեր տեղերում հանգիստ նստեցին և ընթրիք պահանջեցին տան տէրերից։

Գիւղացիները լուռ կատարում էին նրանց հրամանները և պօռթում Աստուծուն, որ իրենցից շուտով հեռացնի այդ փոթորիկը։

Արաբները կերան, կշտացան, բայց հայկական լիառատ հիւրասիրութիւնից գոհ չմնացին, նրանք աւելին պահանջեցին։

Բաւական չէր գիշերն այս տաք և կակուղ անկողինները, աներես շների նման գիւղացոց հարսներին ու կոյսերին էլ պահանջեցին։

Գիւղացիք խնդրեցին, որ չանեն այդ անամօթութիւնը, բայց նրանք իրենց սրերը ցոյց տուին, յայտնելով, որ եթէ չեն կատարի իրենց հրամանը, այդ սրերով կը կարատեն նրանց գլուխները։

Ճար չկար. արտասուաթոր ընկան հայ իշխանների ոտքը և խնդրեցին, որ գոհ մնան իրենց հիւրասիրութիւնից և չպղծեն իրենց ընտանիքները։

Երկու հայ իշխանները ուսերը թափահարեցին և կոպտաբար պատասխանեցին.

—Հա, ինչ կը պակսի որ, ինչո՞ւ չէք կատարում նրանց հրամանը։

Գիւղացոց կատաղութեանը չափ չկար։

—Լաւ, ասացին նրանք, մենք կը կատարենք ձեր հրամանը, միայն ոչ ինքնակամ, այլ զէնքը ձեռքերիս։

Ասացին ու առիւծների նման յարձակուեցան արաբների վրայ։ Բայց ինչ կարող էին անել Մարտիրոս վանահօր պատրաստած յիսուն մարդը հինգ հարիւրից աւել մարդու դէմ—ոչինչ։ Նրանք բոլորը կոտորուեցան, սրի անցկացան նաև մանուկներն ու ծերերը, իսկ արաբները առա-

ւօտեան դէմ, իրենց բարբարոս կրքերին յագուրդ տալուց յետ՝ ամբողջ գիւղը կրակ տուին և հեռացան գիւղից։

Փոքր ինչ առաջ անցնելով, հայ իշխանները յետ նայեցին և տեսան թանձր ծուխ, որ բարձրանում էր գիւղից, բայց նրանց դէմքի վրայով խղճի և ոչ մի նշան չանցաւ. նրանք սառն էին ինչպէս շրջապատող ձիւնը։

Մի փոքր էլ առաջ անցան նրանք և ահա իրենց առաջ, ճանապարհից մի քանի քայլ այն կողմը, մի սառուցով պատած այրի մէջ, նրանք մի կին տեսան, որ պինդ գրկել էր իւր մանկանը և ապուշ կրթած նայում էր իրենց։ Անձևացեայ իշխանը ձին առաջ քշեց և մօտենալով կնոջը՝ գոռաց.

—Ո՞վ ես դու։

Կինը ոչինչ չպատասխանեց, այլ ապուշ կըրթած նայում էր նորան. նայում էր նոյնպէս և փոքրիկ մանուկը իւր սիրուն, բայց արհաւիրքով լցուած աչքերով։

—Ձէս լսում, գոռաց իշխանը և մտրակով բոթեց. կինն անխօս ցած գլորուեց գլորելով իւր հետ նաև իւր մանկանը։ Իշխանը հեռացաւ կնոջից, նա հասկացաւ, որ այդ կինն ու մանուկը սառած էին և ոչ մի կենդանութեան նշոյլ չկար նրանց մէջ. այն ինչ ինքը կենդանու տեղ դնելով խօսակցում էր նրանց հետ։

Խեղճ կինը դիշերս փախուստ էր տուել գիւ-

ղից և ապաստանուելով սառոյէ այդ այրում, սառել, փետացել էր իւր մանկան հետ...

Բայց նրանք չհետաքրքրուեցան անգամ դրա վիճակով, այլ կրկին առաջ անցան։ Ինչ փոյթ իրենց թէ ետևից թողնում էին աւերածութիւն և մահ, բաւական էր, որ նրանք գոհ էին իրենց վիճակից։ Մի քանի օր այդպէս շարունակեցին իրենց ճանապարհը և մի տեղ լուր ստացան, որ Աշոտ Երկաթը հեռու չէ իրենցից և թէ նա շրջում է շատ փոքրաթիւ մարդկանցով։

Երկու իշխանների սրտերը թունդ առան. նրանք իրենց գունդը սառւարացրին մօտերքը եղած արաբական գնդերով և մօտ հազար մարդով արշաւեցին Աշոտ Երկաթի վրայ, որը ընդամենը երեք հարիւր մարդ ունէր իւր ձեռքի տակ։ Ռշտունեաց և Անձևացեաց իշխանները վստահ էին, որ մի քանի օրից յետոյ Աշոտ Երկաթը կամ ապանուած կը լինի և կամ շղթայակապ Իւսուֆի մօտ Դուին կը լինի տարուելիս...

Լ Գ.

Երեկոյ էր։ Աշոտ Երկաթը իւր խմբով դանդաղաքայլ առաջ էր գնում Բասեան գաւառի մի նեղ կիրճով։ Երկինքը պատած էր գորշ ամպերով, որից թափվում էր ձիւնը և սպիտակ սաւանով ծածկում երկիրը... Ըս-

խուր էր և Աշոտ Երկաթի սիրտը։ Ոչ մի բերկրանք, ոչ մի յուսոյ նշոյլ չէր ու բախացնում նրա հոգին։ Սև սև մտքերը պաշարել էին նրա միտքը, որոնք կրծում էին նրա սիրտը և ձգում նրան մի տեսակ տենդային դրութեան մէջ որ ոչ յուսահատութիւն էր նշանակում և ոչ հոգւոյ խաղաղ տրամադրութիւն... Ի՞նչ էր իւր կեանքը և ի՞նչ էր իւր ժողովրդի դրութիւնը։

Ժողովուրդը տառապում էր սովի, նեղութեան, սրի և երկպառակութեանց տակ, իսկ ինքը իւր մի բուռն քաջերով ստիպուած էր տատանական կեանք վարել, զգալ ժողովրդի ցաւն ու դարդը, տեսնել նրա վիշտն ու տառապանքը և ոչնչով չկարողանալ օգնել նրան, ահա թէ ինչն էր ցաւեցնում նրա սիրտը, ինչն էր վրդովում քաջի հոգին։ Փրկութեան յոյս ոչ մի կողմից չէր տեսնում նա, քանի որ նախարարների մեծամասնութիւնը կամ կղզիացած էր իրենից և կամ թշնամացած. իսկ ինքը իւր փոքրաթիւ համերաշխ նախարարներով և փոքրիկ բանակով ինչ պիտի անէր Իւսուֆի ահեղ զօրութեան դէմ, որն օր աւուր ոտնատակ էր տալիս Հայաստանը և հայ դաւաճան իշխաններով շրջապատուած աշխատում էր իւր կեանքի դէմ էլ որոգայթներ լարել։ Ծանր էր քաջի դրութիւնը, բայց նա չէր յուսահատւում, նա հաւատում էր նախախնամութեանը, որ չի թողնի իրան և իւր ժողովրդին անօգնական։

Ու գնում էր Աշոտ Երկաթը գլուխը կախ գցած և խորին մտածմունքի մէջ ընկղմուած.

նրան լուռ հետևում էին երեք հարիւր քաջ տղամարդիկ, որոնք Աշոտ Երկաթի մի ակնարկին էին սպասում, որ իրենց դէպի կրակը նետեն։

Ձիւնը տեղում էր շարունակ։ Մութն ընկնում էր հետզհետէ, բայց ձիաւորները դեռ աշխոյժով առաջ էին գնում, երբ նրանց առաջ բացուեց մի խոր կիրճ, որի երեք կողմից էլ բարձրանում էին սեպացած բարձրաբերձ ժայռեր, որոնք զարդարուած էին ձիւնի և սառցի կեղևներով պատած ծառերի ոստերով, որոնց ճիւղերից կախուած էին հաստ սառցէ շիթեր։

Ահարկու կիրճ էր դա, որի մի կողմից հոսում էր լեռնային մի վտակ, որ սառցէ կեղևի տակ տխուր զօղանջում էր ու գլորւում ցած. իսկ միւս կողմից՝ սեպացած ժայռի վրայից թռչում էր մի ուրիշ վտակ և իւր ետևից թողնելով սառցէ ահագին շիթը, ուժգնութեամբ ցած էր գլորւում և գրկախառնուելով ձորում հոսող վտակի հետ՝ գլորւում էր ցած... Աշոտ Երկաթը գլուխը վեր քաշեց և նայեց բնութեան այդ խաղին, որ վատ ապաւորութիւն թողեց նրա հոգու վրայ։ Մի տեսակ անհասկանալի թախիծ պատեց նրա սիրտը, ահաճութեամբ նա կրկին իջեցրեց գլուխը և մարակեց ձիուն։ Ձին մի թռիչք արաւ և մեխուածի նման կանգ առաւ, կարծես անեւոյթ մի ձեռք յանկարծ սանձահարեց ձիուն։ Աշոտ Երկաթը զարմացաւ և շփոթուած աչ ու ձախ նայեց, բայց կասկածաւոր ոչինչ չնկատեց, որ կարողանար վախեցնել իւր ուշիմ ձիուն և

սափրել նրան այսպէս յանկարծակի կանգ առնելու։

Նա նորից մտրակեց։ Ձին մի թռիչք էլ արաւ և այնուհետև որքան որ մտրակեց՝ նա տեղից չշարժուեց։ Ծուռբը շրջապատեց Աշոտ Երկաթին, որոնք զարմանքով նայում էին ձիուն, թէ ինչու նա առաջ չէ գնում։

—Է՜... ինչպէս երևում է ձիս յոգնել է և կամ մի բանից վախեցաւ։ Յոգնելը սրանից չեմ սպասում, որովհետև շատ երկար ժամանակ չէ ինչ որ ճանապարհին ենք, բայց թէ ինչից վախեցաւ, այդ է ինձ զարմացնում։ Տղայք, դուք ոչինչ կասկածաւոր բան չեսաք ճանապարհին, դարձաւ Աշոտը դէպի իւր խումբը։

—Ոչ, պատասխանեցին մի քանիսը։

—Ուրեմն հարկաւոր է մի փոքր հանգիստ տալ, ասաց Աշոտ Երկաթը և մի փոքր ժամանակ հանգիստ տուեց իւր ձիուն։ Ձին ականջները ցցել էր և վայրենի կերպով նայում էր առաջ, ճանապարհի ուղղութեամբ, որով պիտի անցնէր խումբը։

Կասկածը պատեց Աշոտ Երկաթին և նա էլ դէպի ձիու նայած կողմը նայեց։

Նա ոչինչ կասկածաւոր բան չեսաւ։ Ճանապարհը ոլորվում էր մի փոքր տարածութեամբ առաջ և այնտեղ դուրս էին ցցուած ահարկու ժայռերը, որոնք լուռ իրենց էին նայում իսկ կասկածաւոր ոչինչ չկար։ Բարկացաւ նա իւր ձիու վրայ և հէնց որ ուզում էր մտրակել, նրա

ականջին դիպաւ մի տեսակ անորոշ ձայն, որը սափրեց նրան զգաստանալ։ Նա նորից ականջ դրեց, այո, ձայնը գալիս էր իւր առաջից և հետզհետէ մօտենում էր իրեն։ Այդ ձայները խիստ նման էին ձիանց ոտքի դոփիւններին և փռնչոցներին։ Աշոտ Երկաթը զգաց, որ առաջից մի խումբ ձիաւորներ էին գալիս, բայց թէ ովքեր էին և ինչքան էր նրանց թիւը՝ դեռ անյայտ էր իրան համար։ Նա նշան արաւ խմբին, որ պատրաստ լինին. իսկ ինքը սուրը պատեանից հանեց ու սպասեց ձիաւորների երևալուն։

—Մ՛ը թէ ինչից էր վախենում իմ ձին, մրմրաց ինքն իրեն Աշոտ Երկաթը։

Յանկարծ նոյն տեսակ դոփիւնները եաևից լսեց, կարծես երկուսն էլ իմաց էին արել իրար, որ միաժամանակ սկսեն։ Ի՞նչ էր նշանակում այդ, մտածեց նա և ժամանակ անգամ չունեցաւ պարզելու այդ հանելուկը, երբ կիրճի երկու կողմերից էլ ահռելի ձայներ լսուեցան և սրերը հանած, ճանճերի նման, բազմաթիւ ձիաւորներ վրայ տուին Աշոտ Երկաթի խմբին, որը թակարդի մէջ էր ընկել։

Վահանը առաջ քաշեց Աշոտ Երկաթը, սուրը բարձրացրեց, իւր խմբին ձայն տուեց, ահռելի մռնչիւն հանեց և վրայ վազեց թշնամիներին վրայ։

Արիւն է կաթում նրա սրիցը, մէկը միւսի եաևից ընկնում են թշնամիները, խորը հառաչում և շունչները փչում... Աշոտ Երկաթը առիւծ

է դարձել, առիւծ են դարձել նաև իւր քաջերը, որոնցից ամեն մէկը տասը թշնամի է պարկեցնում և ապա ինքն էլ խողխողուած շունչը փըչում։ Տեսնում է Աշոտը թշնամեաց հունձը, տեսնում է նա և իւր քաջերի ընկնելը, սիրտը կսկծում է և կատաղած երեք չորս գլուխ մինային թռցնում... Բայց ինչքան շատ են թշնամիները, նրանք կարծես անվերջ, անհամարեն. կոտորում է կոտորում կրկին սրանք կան, չեն պակասում և պինդ օղակով երկու կողմից սեղմում են իրեն... Ընկնում են իւր քաջերը մէկը մէկ եաևից, բայց ինքը հերոսաբար դեռ կռիւ է անում, գլուխներ թռցնում... Բայց ինչ կայ անպատ այս աշխարհիս վերայ, որ մի քաջի ֆիզիկական զօրութիւնը անպատ լինի։ Աշխարհս էլ է սպառում, նա էլ վերջ ունի, ոնւր ինաց թէ Աշոտ Երկաթի զօրութիւնը... Րոպէ առ րոպէ նրա զօրութիւնը սպառում է, կամաց կամաց թուլանում են նրա բազուկները, արդէն իւր աեղ զօրութեան վերջին թեղն է ծռացել նրա բազուկների մէջ, այն ինչ նրա հոգին, այն վեհ և արի հոգին չէ թմրում, չէ թուլանում, երկիւղի ոչ մի նշան չէ արտայայտում։ Նրա աչքերը փայլատակում են, բոց ու շանթ են արտացոլում և սարսռեցնում թշնամուն. թշնամիները դեռ դիաթաւալ ընկնում էին նրա սրից և մահուան տագնապի մէջ տոչորւում... Բայց թշնամիները չեն պակասում, նրանք բուռն ոյժով կրկին վրայ են վազում։

Նայում է դրանց Աշոտ Երկաթը, նայում և նրա սիրտը լցւում է դառնութեամբ։ Թախիծով լի աչքերը նա աչ ու ձախ է դարձնում, իւր քաջերին պարում. նրանց ձայն տալիս բայց նրանցից շատերը խոր քուն են մտած, նրա ձայնը չեն լսում, նրանցից շատերը կոտորուած են... մի բուռն քաջեր դեռ կռւում են։

Յուզւում է Աշոտ Երկաթը, վերջին ճիգն է թափում, վերջին անգամ բարձրացնում է ահեղ սուրը և ջախջախում իրեն մօտեցող անօրէննների գլուխները...

Բայց բազուկները էլ չեն բարձրանում, թուրը, արիւնով ներկուած թուրը, որից աղբիւրի նման ծլծլում է արիւնը, էլ չի բարձրանում, նրանք ոյժից ընկած են, անզօր, ինչպէս մանկան ձեռքեր, այն ինչ իւր ձին տաս տեղից վիրաւորուած հազիւ ոտքի վրայ է կանգնած։

Տեսնում են այդ անօրէննները և դիւական ժպիտը փայլում է նրանց դէմքերի վրայ. նրանք հրէշաւոր քրքիջ են արձակում և համարձակ վազում դէպի Աշոտ Երկաթը...

Վերջին գերմարդկային ճիգն է թափում քաջը, սուրը բարձրացնում և յուսահատութեամբ լի աչքերով վերջին անգամ շուրջը նայում։ Յանկարծ նրա աչքին, հեռու ձորի մէջ, ժայռի կուրծքի տակից երևում է մի ծերունի Քրիստոսի սուրբ խաչելութիւնը ձեռքին։ Հոգի է ներշնչում այդ խաչը քաջի սրտում և նա կրկին ջախջախում է թշնամեաց գլուխները։ Այդ ժամանակ լսւում են

ազատակները. թշնամին չփոթվում է, թողնում Աշոտ Երկաթին և դեպի փախուստ ճակատում: Նայում է Աշոտ Երկաթը դեպի խաչը և իւր աչքերին չէ հաւատում. այնտեղ նա տեսնում է մի խումբ քաջեր որոնք հալածում են թշնամիներին: Այդ խմբի մէջ բարձր փայլում է խաչանիշ դրօշակը... Դա իւր խաչնէ, իւր փրկիչը, որը ծածանվում է քաջերի մէջ:

Փախչում է թշնամին: Ինքը ազատուած է: Խաչն և դրօշակը մօտենում են: Մօտենում է նա և ծերունին:

Աշոտ Երկաթը ցած է թռչում ձիուց՝ չոքում ձիւնի վրայ և համբուրում խաչը:

—Կեցցէ Աշոտ Երկաթը, ապրի Մարտիրոս հայրը, գոռում է խումբը և կրկին հալածում թշնամուն:

Ճաւարը պատում է ամբողջ կիրճում: Մարտիրոս վանահօր խումբը յետ է դառնում հալածելուց և իւր հետ է բերում երկու հայ իշխաններին, որոնց գերել էին քաջերը:

—Դաւաճաններ, գոռում է Մարտիրոս վանահայրը և բարկութիւնից ատամները կրճատում: Քաջերը ուզում են պատառ պատառ անել նրանց, բայց Աշոտ Երկաթը նշան է անում և նրբանք ակնածութեամբ լռում են և Անձևացեաց ու Ռշտունեաց իշխաններին շղթայակապ իւր առաջ բերում:

Արհամարհանքով նայում է Աշոտ Երկաթը դրանց և ապա դիմելով պահապաններին, ասում.

—Քանդեցէք շղթաները, ես չեմ ցանկանում, որ հայ իշխանները շղթայակապ իմ առաջ դուրս գան:

Պահապանները զարմացած քանդում են շղթաները և լուռ նայում Աշոտ Երկաթին:

—Մարտիրոս հայր, սրանց ամօթալի արարքը յայտնի է քեզ. քո կտրիճները գերեցին, ուսաի և քեզ եմ յանձնում սրանց դատաստանը:

—Ո՛չ, արքայ, այդ մեր իրաւասութիւնից դուրս է և մեր կեանքն էլ քո իշխանութեանն է յանձնուած, մենք չենք կարող սրանց դատաստանը անել, իսկ եթէ իմ կտրիճներին թողնես, այդ պատիժը սոսկալի կը լինի, ասաց Մարտիրոս հայրը և մի մոլի հայեացք ձգեց դէպի դաւաճանները:

—Գթութիւն, մենք սխալուած ենք, կլինի, որ դիք ունենք, ասացին դաւաճանները և ընկան Աշոտ Երկաթի ոտքերը:

—Թշուառներ... կրկնեց Աշոտ Երկաթը և ապա դառնալով պահապաններին, ասաց.

—Զէնքերն առէք, իշխանական զգեստը հանեցէք և արձակեցէք դրանց, թող ուր ուզում են գնան:

Այնուհետև Մարտիրոս վանահայրը կրկին մտաւ ժողովրդի մէջ իւր խումբերը կազմակերպելու. իսկ Աշոտ Երկաթը յոյսը օտար ոյժի վրայ դրած ուղևորուեց Կ. Պոլիս...

Ի՞նչ պիտի լինէր Հայաստանի դրութիւնը...

ԱՌԱՋԻՆ ՄԱՍԻ ՎԵՐՋԸ

ՍՏՈՏ ԵՐԿՍԱԹ

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Ա.

Երբ կողմը ամայութիւն ու մեռելութիւն էր տիրում... Ոչ մի կենդանի արարած չէր երևում, ոչ մի շարժուդուլթիւն չկար այն ճանապարհի վրայ, որով անցնում էր Մարաիրոս վանահայրը և իր ծառան։ Շուրջը փռուած էին ամայի լեռներ ու ձորեր, որոնք ծածկուած լինելով ձիւնի թանձր ծածկոցով, մի տեսակ վհատութիւն էին բերում ճանապարհորդների սրտին։ Այդ ամայի դաշտերում և ձորերում շարժվում էր միայն սառը քամին, իր երգը երգում և ապա թռչում հեռու և հեռու... Երկինքն էլ ծածկուած էր գորշ և մթին ամպերով, որը լացացնելու չափ թախիծ էր ազդում ծերունի վանահօր սրտին։ Ձիւնի բիւրեղները երբեմն երբեմն ընկնում էին նրա ալեզարդ մօրուքի վրայ և խճճուելով այնտեղ՝ թագնւում,

կուչ գալիս և ապա կաթիլներ դառնալով ընկնում ցած...

Տխուր էր Մարտիրոս հայրը. տխուր էր նրա ծառան Ծառուկը, որը մորթէ տաք մուշտակի մէջ կոլոլուած կրկին դողում էր ցրտի սաստկութիւնից: Երկուսի դէմքերն էլ մթագնած էին. նրանցից մէկը Ծառուկը տաք օթեան և հանգիստ էր երազում, այն ինչ ծերունի վանահօր համար ցուրտն ու սառնամանիքը կարծես գոյութիւն չունենային: Նրա միտքը բոլորովին ուրիշ բանով էր զբաղուած, որոնք այլայլում էին նրա հոգին և վրդովում սիրտը: Նա յուզուած էր սաստիկ: Վերջին դէպքերը՝ Աշոտ Երկաթի կ. Պոլիս գնալը, կաթողիկոսի անհոգութիւնը և դաւաճանների արձակուելը նրա հոգու վրայ խոր տպաւորութիւն էին թողել, որոնք ինչպէս մի սուր սլաք ցցուել էին նրա սրտի մէջ, բանալով այնտեղ մի խոր և անբուժելի վէրք...

— Ինչ պիտի լինի Հայաստանի դրութիւնը, մտածում էր նա, ով պիտի հոգայ անպաշտպան ժողովրդի մասին, երբ նրա մարմնաւոր և հոգեւոր գլուխները հեռացած են նրանից: Պարզ է, որ նա կրկին պիտի անքայ, չարչարուի, տանջուի, ոտնատակ լինի և հարստահարուի զանազան բաղդախնդիր իշխաններից և արտաքին թշնամիներից: Հայաստանը մի այգի է անուշահամ պտուղներով և գեղեցիկ ծաղիկներով. նրա դռները թէև բաց էին, բայց ոչ ոք չէր համարձակվում մտնել ու ոտնատակ տալ մարգերը և կոտրատել ծառերը, որովհետև վախենում էին այգեպանից: Այդ այգեպանին մենք գտել էինք. նա քաջ և արի էր և ամենքը երկնչում էին նրանից: Բայց նա այլ ևս չկայ. թողեց իւր այգին անտէր ու անօգնական և գնաց ուրիշ երկրից ջուր բերելու իւր այգին ջրելու, առանց հասկանալու թէ օտար ջուրը իւր այգին չի ջրի, թոյն կայ այդ ջրի մէջ: Նա ականջ չդրեց մինչև անգամ իմ խօսքերին թէ մինչև իւր վերադառնալը եղած ծառերն էլ կը կոտրատուին և իւր սիրուն այգու հետքերը միայն կը մնան և այն ժամանակ օտար ջրով թող ջրի իւր ամայի այգու սեպացած քարերը... Երկաթ, Երկաթ... զուր քո երկաթի բազուկներիդ համար օտարի փայտեայ յենարանն ես խնդրում, նա շուտ կը խորտակուի, կը փշրուի, այն ինչ քո Երկաթի բազուկներդ կը ժանգոտին և պէտք չեն գալ գործածելու... Մի քանի օր է ինչ հեռացել է Աշոտ Երկաթը, այն ինչ Հայաստանի զանազան անկիւններից արդէն լսւում են արտունջներ: Օձերն իրենց գլուխներն են բարձրացնում և լաւ պատառներ որոնում: Գաղիկ Արծրունին դարաններ է պատրաստում. իսկ Չարանենգ Իւսուֆը արքայական գահի համար փոխանորդ պտրում: Աշոտ սպարապետը՝ Աշոտ Երկաթի հօրեղբօր որդին վաղուց է կարօտ այդ գահին և Իւսուֆը վաղուց յարմար առիթի է մանդալիս հայերի դէմ հայ զէնքով կռուելու: Երկու թագաւոր ունինք, երրորդն էլ է պակաս և այդ երրորդը՝ Աշոտ սպարապետն է, Իւսուֆի ձեռքի

կայր գործիքը... Աչոտ, Աչոտ, ահեր և սիրական թշուառացած ժողովրդի, դարձիր, դարձիր այդ ճանապարհից, ժողովուրդը քեզ է կանչում, Մարսիրոս վանահօր սիրտը քեզ է սպասում...

Մուքին արդէն ընկնում էր։ Հեռու լեռներն արդէն թագնւում էին խաւարի մէջ և ցուրտը հետզհետէ զգալի էր դառնում, այն ինչ Մարսիրոս վանահայրը իւր մտքերի մէջ ընկղմուած այդ չէր նկատում և իւր ճիու ընթացքը չէր արագացնում։

Ծառուկը անհամբերութիւնից ճաքում էր։ Նա մի անգամ առաջ եկաւ, որ ասի Մարսիրոս հօրը, որ ձիուն շտապեցնի, բայց նկատելով, որ նա ինչ որ վնթվնթում է քթի տակ, չհամարձակուեց խանգարել նրան։ Վերջապէս ծառայի համբերութիւնը հատաւ։ Վճռաբար նա առաջ քաշեց ձին և նայեց վանահօր դէմքին։ Այդ դէմքը այլայլուած էր, բայց պատկառելի տպաւորութիւն էր թողնում։ Մի քանի վայրկեան լուռ կացաւ ծառան և սկսեց դիտել նրա դէմքի այլայլութիւնը, ապա ցած, հազիւ լսելի ձայնով, ասաց.

— Հայր սուրբ։

Մարսիրոս հայրը չլսեց նրան։ Նա դեռ ինքն իրան էր խօսում։

— Հայր սուրբ, արդէն մթնում է, հարկաւոր է շտապել, ասաց ծառան նորից։

— Դաւաճաններ... ահա թէ ինչ բաներ են

մեր տունը քանդում և նրանք մնում են անպատիժ...

— Հայր սուրբ, մթնում է...

— Իմնչ է, որդեակ, ասաց վանահայրը և իւր սուրբ, թափանցող հայեացքը ուղղեց դէպի ծառան, որը չդիմանալով նրան իջեցրեց աչքերը։

— Ճանապարհն շատ ունինք, հայր սուրբ, և ցուրտն էլ սաստկանում է։ Պէտք է մի փոքր շտապել։

— Հա, Ծառուկ, ճշմարիտ է, պէտք է շտապել, ապա թէ ոչ գայլերի կերակուր կը դառնանք։

Երկուսն էլ ձիերին մտրակելով առաջ անցան։

— Դու վախենում ես գայլերից, դարձաւ Մարսիրոս հայրը իւր ծառային մի փոքր լռութիւնից յետոյ։

— Ե՞ս, հայր սուրբ... Ե՞րբ էք տեսել որ ես մի բանից վախենամ։

— Իսկ եթէ մի խումբ արաբներ վրայ տան, կրկին չե՞ս վախենայ։

— Ոչ։ Ես մահից չեմ վախենում, բայց առաջ նրանցից մի հնգին կը սպանեմ և այնպէս ես էլ կը մեռնեմ։

— Ապրիս, Ծառուկ, ես վախկոտներին չեմ սիրի։ Աստուած էլ չի սիրում վախկոտներին։ Վախկոտութիւնը մահու չափ յանցանք է։ Նա ով վախենում է իւր թշնամիներից, աւելի լաւ է չապրի։ Ներկայ ժամանակում անգօրները ու

վախկոտները ոռնաձակ են լինում զօրաւորներից և յանդուգներից։ Պէտք է քաջ լինել և ապա հանգիստ ապրել։

Նրանք կրկին լուռ առաջ անցան։ Այդ ժամանակ հեռու՝ լեռան քամակին, կիսախաւարի մէջ երևեցաւ մի վանքի պարիսպ։

—Հայր սուրբ, վանքը երևում է,

—Հա, տեսնում եմ, վերջապէս մի փոքր կը հանգստանանք թէ մենք և թէ մեր խեղճ ձիերը։

Փոքր ժամանակից յետոյ ճանապարհորդները վանք մտան, ուր Մարտիրոս վանահայրը առանձնացաւ վանքի վանահօր խուցը, այն ինչ Ծառուկը ձգուեցաւ վառած կրակի մօտ և սկսեց իւր զրոյցը վանքի ծառաների հետ։ Նա շատ սիրում էք տաք օջախը և քաղցր զրոյցը։ Մի փոքր առաջ կերած ցուրտը բոլորովին մոռացել էր Ծառուկը կրակի բարերար ազդեցութեան տակ։

—Ո՞վ է այդ ծերունի մարդը, հարցնում էր Ծառուկին վանքի ծառաներից մէկը, շարունակ քորելով մէջքը և սրելով իւր քոսա բեխերը։

—Օ՜... միթէ չէք ճանաչում, դա ամբողջ Հայաստանի մէջ սուրբ և օրաւոր մարդ է, պատասխանեց Ծառուկը, առանձին նշանակութիւն տալով իւր խօսքերին։

—Ի՞նչպէս, ուրեմն մեր Սահակ սրբազանից էլ մեծ է, հարցրեց քոսա ծառան իւր սուր հայեացքը նետելով Ծառուկի վրայ։

—Ի հարկէ, ձեր Սահակ սրբազանը ինչ է

դրա առաջ։ Իմ հայր սուրբը կաթողիկոսից էլ բարձր է։

—Է՜... ինչ մեծ մարդ է եղել...

—Ի հարկ մեծ է։ Ամբողջ արաբաց գունդը դողում է դրանից. միթէ լսած չէք Մարտիրոս վանահօր անունը։

—Չէ, ես ծրաեղից կը լինիմ լսած։

—Դէ, փայտ բեր, ցուրտ է. ես ճանապարհից նոր եմ եկել, միթէ չես տեսնում, որ օջախը հանգչում է, աւելացրեց Ծառուկը հրամայաբար, երբ նկատեց իւր խօսքերի ազդեցութիւնը։

—Այս րոպէիս դուրբան, ասաց ծառան և դուրս գնալով մի քանի փայտ բերեց և կրակը չաղացրեց։ Ծառուկի քունը տանում էր, այն ինչ վանքի ծառան պատճառ էր փնտրում նորից խօսակցութիւն բանալու։

—Երևի շատ հեռու տեղից էք գալիս, հարցրեց նա։

—Օ՜... էլ մի ասի, ամբողջ երեք օր ճանապարհ ենք գալիս։

—Իսկ ինչն էր ստիպում ձեզ այդպէս վրազ ճանապարհ գնալու, միթէ Սահակ սրբազանի մօտ խիստ կարևոր գործ ունէիք։

Ծառուկը ինչպէս ելեքտրականութիւնից ցնցուած վեր թռաւ տեղից և ուղղակի իրեն խօսակցի աչքերը դիտեց։ Ըստ երևոյթին վատ տպաւորութիւն թողեց նրա վրայ, որ յոնքերը կիտելով կարճ կարեց։

—Է՛, բարեկամ, դրանով մենք շատ հեռու կերթանք, աւելի լաւ է ինձ համար ընթրիք բերես, ես յոգնած եմ և քնել եմ ուզում։

Քոսա ծառան նկատեց, որ նրանից էլ ոչինչ չի իմանալ, ուստի ընթրիքը բերեց Ծառուկի առաջը դրեց և իւր քայլերն ուղղեց դէպի վանահօր խուցը մի գիրկ փայտ ներս տանելով։

Կարճ ժամանակից յետոյ Ծառուկը իւր ընթրիքն անելով մեկնուեցաւ կրակի մօտ և անուշ քնի մէջ ընկղմուեց. աշխարհս եթէ տանէին նա չէր իմանայ։

Բ.

Վանքը, ուր իջաւ Մարտիրոս հայրը, գտնուում էր Բիւրական ամրոցում, որ շինել էր Յովհաննէս կաթողիկոսը կոփածոյ քարերով և ուր փակակալ էր Լուսաւորչի դրան Սահակ անունով մի եպիսկոպոս։ Սահակը թխադէմ, բայց լիքը մի մարդ էր։ Լայն թիկունքները և ուժեղ բազուկները նրան տալիս էին մի առանձին յաղթանդամ տեսք։ Միջին հասակի էր նա, մօտ 40—45 տարեկան, միշտ ուրախ, միշտ զուարթ, իսկ բնաւորութեամբ խիստ հանդուգն։ Գէթ արտաքուստ իրեն ցոյց էր տալիս շատ զուարճասէր և ոչ մի բանի վրայ չմտածող, այնպէս որ շրջակայ գիւղացիները նրան «հանաքչի

սրբազան» անունն էին տուել և սաստիկ համակրում ու սիրում էին նրան։

Արդարև Սահակ սրբազանը իւր պարզ բնաւորութեամբ գրաւել էր շրջակայ գիւղացւոց համակրութիւնը, բայց իսկապէս եթէ մանէինք նրա հոգւոյ դրութեան մէջ, կը տեսնէինք, որ նրա հոգին հանգիստ չէր անում, չէր ծիծաղում, չէր ժպտում, ինչպէս արտաքուստ, այլ ընդհակառակն նրա հոգին ծածկուած էր այն տեսակ տխուր և սրտամաշ մտքերով, որ լացացնելու չափ կըսկըծացնում էր նրա հոգին։ Խաբուսիկ և կեղծ էին Սահակ սրբազանի հանդիսքներն ու ժպիտները։ Նա արտաքուստ այդ միջոցն էր ընդունել միմիայն գիւղացւոց համակրութիւնն ու սէրը վայելելու, որի մէջ և ունէր յաջողութիւն։ Իրեն այդ էր պէտք։ Նա ուրիշ բանի կարօտ չէր։

Երբ ներս մտաւ Մարտիրոս վանահայրը նրա խուցը, նա մտազբաղ նստած էր և նրա առաջը թափած էին զանազան թղթի կտորներ, որոնց նա մէկ մէկ վերցնում էր, ջոկում, աչքի անցնում և ինքն իրեն մտածում։ Ճրագի աղօտ լուսաւորութիւնը ընկել էր նրա կլոր և լիքը երեսին, որ այդ ժամանակ խիստ գժգոյն էր։ Այդ միջոցին նրա լուրջ դէմքից անյայտացած էր ժպիտը և նրա հայեացքը ներկայացնում էր խոր և ծանրակշիռ գործերով զբաղուող մարդու հայեացք։

—Վերջապէ՛ս... ասաց նա, տեսնելով Մար-

տիրոս հօրը. վերջապէս եկար, իսկ ես անհանգիստ էի լինում քո մասին։

—Ինձ համար ինչու պէտք է անհանգիստ լինել, սրբազան, ես ծեր եմ և ուժասպառ, իմ օրերը համարուած են և ես շատ շուտ դերեզմանը կը մանեմ։

—Վա՜հ, Մարտիրոս հայր, ինչ ես ասում, մինթէ դերեզմանը իրաւունք ունի քեզ նման սուրբը մարդուն կլանելու։

—Կատարեալ իրաւունք ունի, ինչպէս և ամեն մարդու։

—Չէ, ես իրաւունք չեմ տալիս, դեռ հարկաւոր ես, շատ հարկաւոր. երբ որ ժամանակը կը գայ, ես քեզ կը յայտնեմ։

—Վա՜հ, լաւ է, մահուան իրաւունքն էլ ես ուզում ձեռքդ դցել, պատասխանեց Մարտիրոս հայրը և մի դառն ժպիտ անցաւ նրա դէմքի վրայով։

—Ի հարկէ, ի հարկէ. Աստուած քեզ վրայ իրաւունք չունի, դու մերն ես և մեզ հարկաւոր։ Ես հոգեհան հրեշտակի թևերը կը կարատեմ, եթէ քեզ մօտենայ։

—Սրբազան, երեւում է, որ դու հանաք անելով էլ պէտք է մեռնես։

—Ի հարկէ, դրանից աւել ինչ պիտի տանենք այս փուչ աշխարհից։ Բայց կատակները մի կողմը թողնենք, արի, բարձրացիր, նամիը ահա այս բարձի վրայ, դու յոգնած կը լինիս։

Մարտիրոս վանահայրը իւր ձմեռուայ քուրքը մի կողմը ձգեց, ծալապատիկ նստեց թաղտէ վրայ և լուռ դէպի ճրագի աղօտ լուսաւորութիւնը նայեց։ Երկուսն էլ կարճ ժամանակ լուռ էին։

—Ինչ տեղեկութիւններ ես ժողովել, սրբազան, լռութիւնը ընդհատելով հարցրեց Մարտիրոս հայրը։

—Տեղեկութիւնները շատ ունիմ. բայց, դըժբաղտաբար, ուրախ ոչինչ չկայ, ամեն բան դէպի վատն է գնում։

—Ինչպէս, մինթէ մեր ծրագիրներն էլ քանդուում են, հարցրեց Մարտիրոս հայրը և կիսատ բարձրացաւ տեղից։

—Չէ, խօսքս մեր ծրագրների մասին չէ, ընդհակառակն մեր ծրագիրներն առաջ են գնում խիստ լաւ։ Ամեն մի վանքում պատրաստութիւններ են տեսնուում, խմբեր են պատրաստուում։ Մեր գործակալները շատ լաւ են գործում, բայց Աշոտ Երկաթի կ. Պոլիս գնալով գործը կանգ է առել. զանազան բաղդախնդիր իշխաններ արգելք են լինում դրան և ժողովրդին գրգռում Աշոտ Երկաթի դէմ։

—Որքան էլ որ դա ցաւալի է, այդ այդպէս է, բայց այդ իշխաններին պէտք է վերջ դնել. դրանք հայի տունը քանդեցին, բայց ինչ անես, որ Աշոտ Երկաթը արհամարում է դրանց և գաւառաց իշխաններին իւր ձեռքից բաց թողնում։

—Մինթէ այդ քո ներկայութեամբ էր։

—Ես ներկայ էի, բայց խեղդեցի իմ մէջ բարկութեանս բոցը։ Ոչ ունեաց և Անձևացեաց

իշխաններին իմ ձեռով յանձնեցի նրան, որոնք նրա կեանքի դէմ դաւադրութիւններ էին լսել, բայց նա արձակեց նրանց։ Ժողովուրդը ուզում էր պատառ-պատառ անել, բայց ես ազատեցի նրանց, բարձր պահելով թագաւորի խօսքը և նեղողամտութիւնը։

— Սպասիր, հայր Մարտիրոս, ահա կարդամ այս նամակը և տես թէ ինչ են գրում այդ ձեր ազատած իշխանների մասին, ասաց Սահակ սըրբազանը և վերցնելով սեղանի վրայ փռուած նամակներից մէկը, յանձնեց Մարտիրոս հօրը։ Մարտիրոս վանահայրը ուշադրութեամբ կարդաց նամակը և մտնուան գունատութիւնը պատեց նրա ճերմակ դէմքին։ Բարկութեամբ նա ղէն շպրտեց թուղթը. վեր կացաւ տեղից և սկսեց արագ արագ շրջել սենեակի մէջ։

— Դաւաճաննե՛ր... անպիտաննե՛ր, լրբե՛ր... Ես գիտէի, ես ճանաչում էի դրանց... Ա՛խ, սխալուեցաւ Աշոտ Երկաթը, պէտք էր դրանց տեղն ու տեղը կախել և ոչ թէ ազատել։

— Տեսնո՞ւմ ես, ինչ սոսկալի դաւադրութիւններ են կազմում Աշոտ Երկաթի դէմ և ո՞ւմ են իրենց ձեռքի գործիք շինում-նրանց՝ ովքեր երախտիք ունին Աշոտ Երկաթից, որոնք նրա աղուհացն են ուտում։ Այժմ Գուգարաց իշխաններին՝ վասակ և Աշոտ Գնթունիներին են ուզում ձեռք ձգել և ապստամբեցնել օրինական թագաւորի դէմ։ Տեսնո՞ւմ էք այդ ձեր ազատած իշխանները ինչ են անում։

— Արծրունեաց Գագիկի բաներն են դրանք. այնտեղ է ահա բոլոր դաւադրութեանց կենդրոնը և մեր բոլոր ջանքը այդ դաւադրութեանց խորտակման մէջ պիտի լինի։ Ի՞նչ եղաւ, ընդ պիտի գայ Սահակ քահանան։

— Վաղը, երեկոյեան դէմ կը ժողովուին Սահակ Արծրունեաց քահանան, Գէորգ Մարզպետունին և Բասեան գաւառի իշխանը։

— Թող գան, պէտք է սպասել դրանց, պէտք է տեղեկութիւն ժողովել տէր Սահակից թէ արդեօք էլ ինչեր է ծրագրում տեսիլ Գագիկ Արծրունին։

— Անպատճառ։ Մեր գլխաւոր երկիւղը վասպուրականից է։ Դա զօրաւոր ախոյեան է, որից զգոյշ պիտի լինել։

— Բայց Տարօնից խիստ լաւ տեղեկութիւններ են ստացուած, այնտեղ պատրաստի արդէն մի գունդ ունինք, մօտ 400 մարդուց բաղկացած։

— Ասլրի Գէորգ իշխանը, այդ նրա շնորհն է։

Այդ ժամանակ վանքի դուռը ծեծեցին։ Ընդանք երկուսն էլ լուռ կացան և հետաքրքրութեամբ սպասում էին թէ ո՞վ պիտի լինի, որ այդպէս կէս գիշերին դուռը ծեծում է։ Սահակ սըրբազանը շտապով դուրս գնաց և հրամայեց դուռը բանալ, երբ նկատեց մի ձիաւոր կանգնած վանքի դռանը։

Ձիւնը քուլա քուլա էրթում էր և ձիաւորը ողջ կղորուած էր ձեան մէջ։ Նա շտապով ներս մտաւ վանքի գաւիթը և արագութեամբ ցած

թռչելով ձիուց, ուղակի դեպի սրբազանը դիմեց, որ դեռ ապուշ ապուշ նայում էր նրան, առանց ճանաչելու ուշացած ճանապարհորդին։

—Ողջոյն, սրբազան հայր, ասաց ճանապարհորդը և սովոր մարդու նման, ուղղակի դեպի սրբազանի խուցը դիմեց։

Սրբազանը մեքենաբար ներս մտաւ խուցը և երբ ճրագի ապօտ լոյսի տակ դիտեց նրա դէմքի գծագրութիւնը քահ... քահ... քահ... մի քրքիջ արձակեց։

—Վահ, տէր Սահակ, ես քեզ բոլորովին չճանաչեցի. այնքան ձիւնից ճերմակել ես որ հարիւր տարեկան պառաւեալ ծեր կարծեցի։ Բարով, հազար բարի ես եկել, բայց մենք քեզ այսօր չէինք սպասում, ասաց սրբազանը։

Եկողը, որ Արծրունեաց տան քահանայ տէր Սահակն էր, մօտեցաւ նախ Մարաիրոս վանահօր ալը համբուրեց, ապա սկսեց թափ տալ իւր վրայի ձիւնը և շորերից սառոյցները պոկել։

—Մեռայ, ամբողջ գիշեր ճանապարհ էի գալիս, ասաց նա։

—Չ՛ը, երևի կարևոր լուր ունիս, որ այդպէս շտապով ճանապարհորդել ես։

—Առ այժմ միայն մի ուրախալի լուր կասեմ, իսկ մնացածը կը թողնեմ վաղուան։ Ես յոգնած եմ, ննջել եմ ուզում։ Իսուֆը վերջապէս հանգիստ թողեց Գագիկին և իւր զօրքերով Աարպատական քաշուեց։ Այժմ Հայաստանը

մի փոքր շունչ կառնի, եթէ դաւաճան և քաոս իշխանները գլուխ չբարձրացնեն։

—Իսուֆը այնքան վտանգաւոր չէ, որքան դաւաճանները, նկատեց Մարաիրոս հայրը լուրջ կերպով, բայց այժմ գնա, հանգստացիր, վաղը կը մտածենք այդ մասին։

Սահակ սրբազանը և տէր Սահակը դուրս գնացին թողնելով Մարաիրոս հօրը միայնակ, որը դեռ երկար ժամանակ արթուն էր, մինչև որ յոգնածութիւնը յաղթեց նրան և նա քուն մտաւ։ Ծողովրդի հայրը ննջում էր... բայց խիստ վրդովալից և անհանգիստ էր այդ քունը, որը կարճ ժամանակ տևեց և նա խոհոյն վեր թռաւ։ Այդ ժամանակ օրը բացուել էր և արևի անդրանիկ ճառագայթները սկսել էին պար բռնել ձեան հետ։

Նոյն օրը հասաւ և Գէորգ Մարզպետունի իշխանը իւր փոքրաթիւ ձիաւորներով, որոնց աովորութիւն ունէր միշտ իւր հետ շրջեցնելու և հարկաւոր դէպքերում նետելու արաբներին։ Շուտով այդ չորս անձինք՝ երեք հոգևորական և մի աշխարհական խորհրդի նստեցին, որ շատ երկար տևեց։ Զորան էլ տխուր էին, ուրախութեան ոչ մի նշոյլ չէր երևում նրանց դէմքերի վրայ։ Ապագան շատ մութ և անորոշ էր։ Հանաքչի սրբազանն էլ մոռացել էր իւր հանաքները և ընկել մտածութեանց ծովը։

—Չէ, շատ անմխիթար է հայի ապագան, լռութիւնը ընդհատեց Մարաիրոս վանահայրը դառնալով խորհրդակիցներին, բայց մենք ամե-

նևին չպիտի ընկճուենք, չպիտի յուսահատուենք։ Ի՞նչ անենք թէ օր օրի վրայ խռովութիւնները աւելանում են և դաւաճանների թիւը շատանում է։ Մենք մեր պարտքը պիտի կատարենք, որպէս զի ամօթով չմնանք մեր խղճի առաջ։ Էլ ինչի՞ հայ ենք, որ հայի նեղ ժամանակը պէտք չգանք, մեր կեանքը չզոհենք նրան։ Ի՞նչ անենք թէ Արծրունեաց Գագիկը իւր փառասիրական ձգտումների համար ամեն միջոցի է դիմում, ձգտում է իմ և Գէորգի կեանքն էլ վերացնելու։ Թող մեռնենք, թող սպանել տայ մեզ, եթէ պէտք է մեր կեանքը նրան, ինչ վնաս, մեր տեղը ուրիշները կը դուրս գան, իսկ դրանց տեղը դարձեալ ուրիշներ... Կրկնում եմ, մենք պիտի ճգնենք արդելքները վերացնելու և ժողովրդի ու օրինական թագաւորի համար ծառայելու։ Այդ պարտքը սուրբ է և սրբութեամբ էլ պիտի կատարենք։ Թող Գէորգ իշխանը զէնքով հալածէ Թշնամիներին իսկ մենք խօսքով։ Մեր պարտքը պիտի լինի խրատել ժողովրդին, դրանցից փոքրիկ գնդեր կազմել և այդ գնդերը յանձնել իշխանի հրամանատարութեանը, որի պարտքն էլ պիտի լինի Աշոտ Երկաթին օգնելու։

— Բայց, հայր սուրբ, մեր յաջողութիւնը շատ դանդաղ է առաջ գնում, աւելացրեց տէր Սահակը, Վասպուրականում ոչ մի գործ առաջ չէ գնում, այնտեղ լուրջ կերպով հսկում է Գագիկը և հոտն էլ առել է, ես վախենում եմ Հեղինէի վիճակից։

— Ճիշտ, ինչ է անում Հեղինէն, երկար ժամանակ է նրանից լուր չէ առացուել, հարցրեց սրբազանը։

— Լսելով իւր հօր ամարդի գործերը ապրում է ախ ու վշտով։ Ազնիւ, հայրենասէր աղջիկ է, բայց ցաւում եմ, որ վերջը վատ է լինելու։

— Ի՞նչու։

— Շատ պարզ։ Վաղ թէ ուշ հայրը լսելու է նրա արարքները և այն ժամանակ մուրթ բառերը և տանջանքները նրա համար անխուսափելի են։

— Պէտք է ազատել նրան հօր ճիրաններից, աւելացրեց Գէորգ իշխանը, որ մինչև այժմ լուռ էր։

— Հը, ինչ է, դուր հո չէ՞ գալիս քեզ Արծրունեաց օրիորդը, հարցրեց սրբազանը, որի վրայ ամենքը ծիծաղեցին։

— Էհ, սրբազան հայր, այս ժամանակում մեզ շատ բան է դուր գալիս բայց ուշադրութիւն չենք դարձնում։

— Ձէ, ինչ կայ որ, մի այնպիսի հարսանիք կանեմ, որ քէֆդ գայ, դեռ հարսանիքումդ էլ պար կը գամ։

— Բայց հանաքը մի կողմը, սրբազան, նա ամեն կերպ ուզում է փախուստ տալ Վասպուրականից, աւելացրեց տէր Սահակը։

— Թող գայ, այդ մի սոսկալի հարուած կը լինի դաւաճանին։ Բացի դրանից թող այս գործում խառնուին նաև օրիորդները։ Դէ, Սահակ

հայր, պատրաստիր դրան, իսկ ես և Գէորգ իշխանը շուտով կազատենք։ Մենք չենք թողնի, որ անմեղ զոհը տանջուի Գագիկի ճիրաններուն, ասաց Մարտիրոս հայրը և ապա զանազան ծրագիրներ և կարգադրութիւններ անելուց յետոյ, մէս օրն և եթ ցրուեցին զանազան կողմը, թողնելով Սահակ սրբազանին Բիւրական ամրոցում կրկին միայնակ։

Գ.

Շաւունեաց և Անձևացեաց իշխանները ազատուելով կապանքից շտապով ներկայացան Գագիկ արքային և ամեն մանրամասնութիւն պատմեցին։ Գագիկը կատաղեց, բարկութեան ներկը անցաւ նրա դէմքի վրայով և նա կատաղած կանչեց.

—Լաւ, Աշոտ Երկաթը կրկին չի պրծնի իմ ձեռքից եթէ որ ամբողջ Բիւզանդիոնի բանակն էլ հետը բերի։ Այժմ ես կը դիմեմ այնպիսի միջոցի, որի դէմ չի կարող կանգնել ոչ մի զօրութիւն։

—Ի՞նչ միջոցի, հարցրեց Անձևացեաց իշխանը, իւր խորամանկ աչքերը յառելով Գագիկ Արծրունու վրայ։

—Այն տեսակ միջոցի, որով խռովութիւն

կը ձգեմ հայոց բոլոր իշխանների մէջ։ Ես կը յարուցանեմ նրա դէմ իւր սիրելի իշխաններին, իւր եղբօրն անգամ կը գրգռեմ նրա դէմ և նրա գահը յանձնել կտամ Աշոտ սպարապետին, որ վաղուց կարօտում է այդ գահին. իսկ այն անդգամներին, զառամեալ ծերունուն և Գէորգ իշխանին կը հրամայեմ մաս մաս կտրատել, որոնք համարձակւում են իմ դէմ գործել։

—Այո, լաւ միտք է, դրանից լաւ միջոց չի կարելի ձեռնարկել... Օ՜... եթէ յաջողի այդ, այն ժամանակ հանգստացած կը լինի սիրտս, ապա թէ ոչ այն անպատուութիւնը, որ Աշոտ Երկաթը հասցրեց մեզ մոռանալ չի կարելի։

—Բայց զարմանալի բան է, կարծես Մարտիրոս վանահայրը տեղեկութիւն ունէր մեր որոգայթի մասին, որ այնպէս յանկարծակի օգնութեան հասաւ։ Ուրիշ կերպ չէր կարելի բացատրել, թէ չէ նա երբէք այդպիսի ոյժով չէ մանգալիս և բացի դրանից չէր էլ համարձակուի մեզ վրայ յարձակում գործել, նկատեց Անձևացեաց իշխանը փոքր լռութիւնից յետոյ։

—Ես էլ նոյն կարծիքի եմ, արքայ, պատասխանեց Շաւունեաց իշխանը՝ դիմելով Գագիկին, որ մեր ամեն մի քայլափոխը լրտեսւում է և հաղորդւում Մարտիրոս հօրը և թէ մեր հակառակորդները շատ լաւ գիտեն թէ մենք ինչ ենք անում և ինչ մտածում։ Եւ եթէ Աշոտ Երկաթը արտաքուստ լաւ յարաբերութեան մէջ է Պասպուրականի հետ, այդ պիտի վերագրել միայն

նրան, որ նա յայտնի կերպով չէ ուզում թշնամանալ քեզ հետ։

—Ոչ, իշխաններ, դրա մէջ դուք սխալուած էք, ոչ մի մարդկային արարած չի կարող լրտեսել մեր խօսակցութիւնը, իսկ եթէ Գէորգ իշխանը և Մարտիրոս հայրը նրան օգնութեան հասան, դա մի դիպուածի պէտք է համարել և ուրիշ ոչինչ։

—Ո՛չ, տէր իմ, մեզ լրտեսում են, գուցէ և հէնց այս րոպէիս։ Պէտք է գտնել այդ լրտեսին և պատժել։ Շուտափոյթ պէտք է ոչնչացնել նրան, Գէորգ իշխանին և Մարտիրոս հօրը, որոնք մի ինչ որ պատրաստում են, որը պիտի տակն ու վրայ անի մեր բոլոր ծրագիրները։

Գագիկը ուսերը թոթափեց և ընկաւ մտածութեան մէջ։ Մի տեսակ կասկած անցաւ նրա մտքով, որ ստիպեց նրա հոգին այլայլելու, բայց թէ նա շուտով զսպեց իրան և ապա դառնալով իշխաններին ասաց.

—Թողնենք այդ։ Լրտեսները իրանց արժանաւոր պատիժը կը ստանան, բայց թէ հարկաւոր է մեր գործը առաջ տանել։ Լաւ է պատուում, որ Աշոտ Երկաթը Բիւզանդիոնում մեծ ընդունելութիւն է ստացել ու թագով և ոսկեհուռ զգեստներով վարձատրուել։ Վաղ թէ ուշ նա յունական զօրքերով դառնալու է Հայաստան և այն ժամանակ ամեն ինչ կերպարանափոխուելու է։ Պէտք չէ այս ժամանակը կորցնել, քանի հայրենիքում չի, ապա թէ ոչ յետոյ շատ դժուարին

կը լինի առաջն առնել։ Ես շատ անհանգիստ եմ։ Պէտք է շտապել որոշն ցանելու, որ այդ որոմը հասունանան այն ժամանակ՝ երբ Աշոտ Երկաթը Հայաստան կը գայ։ Դու, Ատոմ իշխան, վաղօրօք պէտք է գլուխ բերես մի դժուարին գործ։ Ես քեզ վրայ մեծ յոյս ունիմ, դու լեզուով ճարպար ես և հոգով արի։ Դու պիտի մտնես Հայաստան և առաւելութեամբ որոշն ցանես։ Պիտի չկանաս ապստամբեցնել Աշոտ Երկաթի դէմ Գուգարաց վերակացուներին՝ Վասակ և Աշոտ Գնթունիներին, Աբխազաց Գուրգէնին և եթէ կարող ես նաև Աշոտ Երկաթի եղբօրը՝ Աբասին։ Ճարպար լեզուն օձին իւր բնից կը հանի և ես վստահ եմ քեզ վրայ։ Իսկ գալով Ռշտունեաց իշխանին, սրա պարտքը պիտի լինի ներկայանալ Իւսուֆին և ամեն կերպ թափել, որ Աշոտ ապստամբութիւնը գան նստի Աշոտ Երկաթի տեղ և այն ժամանակ խռովութեան քարը գլորուած կը լինի, իսկ այդ պղտոր ջրի մէջ մենք մեր որսը կանենք, մեր գործերը առաջ կը տանենք, ասաց Գագիկը և ապա սկսեց շրջել սենեակում։

Այնուհետև երկար խորհրդակցում էին Հայաստանի այս երեք որոշն ցանողները և ապա Գագիկը նամակները պատրաստելով զանազան իշխանների անունով, յանձնեց Ռշտունեաց և Անձևացեաց իշխաններին և ճանապարհ ձգեց իւր պալատից։

Երբ որ հեռացան իշխանները, Գագիկը մի տեսակ ծանր մտատանջութեան մէջ ընկաւ։ Նրա

հոգին սաստիկ խռովուած և այլայլուած էր և խորին թախիծը կրծում էր նրա սիրտը: Կարծես մի ինչ որ դառն, սոսկալի իր, կրծում էր նրա հոգին: Այդ միջոցին բացուեցաւ իւր առանձնարանի դուռը և շէմքում երևեցաւ իւր դուստրը՝ Հեղինէն:

Գագիկը վեր թռաւ տեղից և վազելվազ դէպի աղջիկը գնաց: Նա ուզեց գրկել նրան, փայփայել, որպէս զի մոռանայ իւր վիշտը, սրտի և հոգու այլայլութիւնը, բայց սառածի նման նա կանգ առաւ և նրա հոգին աւելի այլայլուեց, աւելի վրդովուեց, երբ նկատեց իւր աղջկայ տխուր, թալկացած դէմքը: Հեղինէի աչքերում երևում էին դեռ չցամաքած արցունքներ և միևնոյն ժամանակ մի տեսակ ոգևորութեան փայլ, որոնք վճռականութիւն էին արտայայտում:

— Ի՞նչ կայ, աղջիկս, դու տխուր ես և աչքերդ արտասուքներով լի են, ինչ է պատահել քեզ, ասաց Գագիկը և ուզեց գրկել Հեղինէին, փայփայել նրան, համբուրել նրա սիրուն աչքերը: Գագիկի հոգին լի էր խարդաւանանքով, դաւադրութիւններով և շփոթութիւններով և իւր այդ ալեծուփ հոգին ուզում էր խաղաղացնել կուսական անմեղութեան առաջ: Հայրական սիրտը կարօտ էր դրան, կարօտ էր որդիական այն անարատ սիրոյն, որի առաջ մոռացւում են աշխարհային զազրելի և գձուձ գործերը:

— Հեռու լինձանից, կանչեց Հեղինէն հրելով հօրը, երբ նա ուզում էր գրկել նրան և մի այնպիսի մոլեգին հայեացք ուղղեց Գագիկի վրայ, որ նա՝ վաստակաւորական արքան, սարսռեցաւ և մի տեսակ սառը դող անցաւ նրա մարմնով:

Մի քանի քայլ ետ ետ գնաց Գագիկը և մեխուածի նման կանգ առաւ, առանց հասկանալու թէ ինչ է կատարւում իւր շուրջը և թէ ուր է գանւում:

— Ահա այն լրտեսը, որին դուք որոնում էիք, որին ուզում էիք պատժել, կախաղան բարձրացնել, այն ես եմ, Արծրունեաց Գագիկ Թագաւորի աղջիկը՝ Հեղինէն, բռնեցէք նրան և գործ դրէք ձեր տանջանքները:

Գագիկը մի քանի րոպէ ցնորուածի նման նայեց աղջկան, մի խորին ախ քաշեց, իւր սիրտը բռնեց, որը կարծես խոցուեցաւ մահաբեր սրով և դառն կերպով ասաց.

— Աղջիկս, Հեղինէ... վայ ինձ, նա ցնորուել է... Էյ, ով կայ այդտեղ, ասաց Գագիկը և ծափ տուեց:

Ծափի վրայ երկու սպասաւորներ ներս վազեցին սենեակ:

— Չէ, հայր, ես ցնորուած չեմ, զուր դու իմ հոգու այլայլմունքը նկատելով ինձ ցնորուածի տեղ ես ընդունում: Ես կրկին յայտնում եմ, որ ես եմ այն լրտեսը, որ տեղեկութիւն էր տալիս Բագրեւանդի վանահօրը և Աշոտ Երկաթին: Բռնեցէք ինձ, հրամայեցէք սպանել, որ վերջ դնուի իմ տանջանքներին. ապա թէ ոչ ես այլ ևս չեմ

կարող տանել իմ հօր սուրբ դաւաճանութիւնները...

Կատաղութեան փրփուրը անցաւ Գագիկի դէմքի վրայ, աչքերը արիւնով լցուեցան և զարհուրելի կերպով դուրս թռան ակնակապիճներից, մազերը փշաքաղուեցան և նա բարկութիւնից դողացող ձեռքերը դէպի իւր սրի երախակալը տարաւ։

— Լռիր, լռիր, Հեղինէ, ապա թէ ոչ չգիտեմ ինչ կանեմ քեզ, էյ, դուրս տարէք սրան, դիմեց Գագիկը սպասաւորներին, որոնք շփոթուած կանգնել էին դռների մօտ։

— Չեմ լռի և քանի շունչս բերանումս է ես կը բողոքեմ քո սուրբ արարմունքի դէմ... Ամօթ մեր ցեղին, ամօթ վասպուրականին, որ Մեհրուժանով չբաւականանալով, այժմ Արծրունի էլ է ծնել...

— Ձէ՛ք լսում, գարձաւ կրկին Գագիկը դէպի սպասաւորները խեղդուած ձայնով և հազիւ շունչ քաշելով, հեռացրէք սրան այստեղից այս րոպէիս։

Սպասաւորները դուրս տարան Հեղինէին։ Գագիկը սենեակում մնաց միայնակ։ Վայրենի հայեացքով նա չորս կողմն էր նայում. նրա կուրծքը արագ բարձրանում էր. իսկ դէմքը գարձել էր ահարկու։ Մի տեսակ անորոշ և անհասկանալի բառեր երբեմն երբեմն դուրս էին թռչում նրա բերանից։ Կարճ ժամանակ անցաւ, ապա նա գլուխը բռնեց. կարծես նա փախչում լինէր

իւր մարմնից, անջատուում, չլսուում և սպանում հեռու և հեռու կամ կարծես թէ հրդեհ լինէր իւր գլխի մէջ, որ լափուում էր բոցերով։ Ցիրաւի որ նրա գլուխը այրուում էր։ Ծանր բոցերը լափում էին նրա ուղեղը։ Այնտեղ գադարել էր դաւադրութիւնը, հատել մաքերի պարարը և տիրել ամայութիւնը և չորութիւնը։ Ոչինչ, ոչինչ կարծես չկար նրա գանգի մէջ, որը մի պահ առաջ որոգայթներ էր լարում, դաւաճանութեան ծրագիրներ էր կազմում... Ո՛ւր գնացին դրանք, ինչ եղան... օ... մի հարուած և ամեն ինչ ոչնչացրեց. ամեն բան կերպարանափոխուեց. բայց մինչև ե՛րբ... կանցնի փոթորիկը, գարշ մաքերը նորից տեղ կը բռնեն նրա մաքի մէջ և ամեն բան առաջուայ շաւղով կընթանայ... Այժմ նա շփոթուած է, այլայլուած, ինքն էլ չէ իմանում թէ ո՛ւր է և ի՛նչ է անում։ Գիտակցութիւնը հեռացած է նրանից, տեղի տալով հոգեկան բուռն վրդովմունքին... Յանկարծ Գագիկը գլուխը վեր բարձրացրեց, կրկին չորս կողմը նայեց և դառն արցունքները երևեցան նրա աչքերում... Այդ արցունքները սոսկալի կերպով կրծում էին նրա սիրտը և նա ամենաթշուառ մարդն էր աշխարհիս երեսին... Մի փոքր ժամանակ էլ անցաւ։ Նրա ջղերը հանդարտուեցան, գիտակցութիւնը վրան եկաւ և նա հրամայեց Հեղինէին նորից բերել։ Սրոխա և վայրենի կերպարանք ունէր նա այժմ։ Առաջուայ վրդովմունքը անցել էր, տեղի տալով անտարբերը սառնութեանը։

Հեղինէն կանգնած էր այդ անտարբեր սառնութեան առաջ այնքան հանգիստ, այնքան խաղաղ, որ հօր սառնասրտութիւնը յաղթուելու վրայ էր։

Երկուսն էլ դեռ լուռ էին։ Երկուսն էլ մտայոյզ։

Զօրաւորի դէմ կանգնած էր անզօրը։ Արդարութեան և վեհութեան դէմ—անարդարութիւնը և կեղտոտութիւնը... Ո՛վ արդեօք պիտի յաղթէր...

Մի վոքը ժամանակ նայեց Գագիկը իւր աղջկան և ապա իջեցրեց իւր հայեացքը գետին. նա չդիմացաւ նրա քնքոյշ, անմեղութեան տիպար հայեացքին։ Իջաւ Գագիկի խրոխտ տեսքը, բարկութեան բոցը հանգաւ նրա սրտի մէջ և նրա աչքերի մէջ երևացին արտասուքի կաթիլներ... Ի՛նչեր անցան այդ վայրկեանին Վասպուրականի արքայի սրտի մէջով—յայտնի չէր, միայն թէ նա չդիմացաւ մի թոյլ արարածի հայեացքին և մօտենալով աղջկան՝ բռնեց նրա ձեռքերից։ Հեղինէի ձեռքերը սառել էին ինչպէս ցուրտ սառոյց, որոնք դողդողում էին աշնան տերևների նման։ Հեղինէն էլ յուզուած էր և մտաղրաղ։

Մի տեսակ ծանր, խեղդող միտք ճնշում էր նրա հոգին և նրան թւում էր թէ իւր ոտքերի տակից փախչում է գետինը և թէ ամբողջ աշխարհը արագ արագ շրջան է կատարում և իւր հետ շրջեցնում թէ իրեն, թէ հօրը և թէ այն սենեակը ուր կանգնած էր ինքը... Ա՛խ, ինչքան

արագ է պտտւում, բոպէ առ բոպէ արագացնում է իւր ընթացքը, ախ, գոնէ մի բոպէ, մի վայրկեան դադարէր, մի ակնթարթ զսպէր իւր ընթացքը... Եւ Հեղինէն զգում է, որ ինքը չի կարողանում ոտքի վրայ կանգնել. գլուխը շշմում է, աչքերը արդէն մթնել են, էլ ոչինչ չէ տեսնում, ամեն բան անյայտանում են իւր աչքերից. իսկ ինքը թռչում է անսահման տարածութեան վրայ, հեռու, հեռու, դէպի անյայտութիւն, ո՞ գիտէ դէպի ուր... իւր առաջ արդէն բացուած են անյատակ անդունդներ և նա զգում է թէ ինչպէս անհուն բարձրութիւնից ընկնում է ցած, դիպչում մի ինչոր աներևոյթ ժայռի, օրհասական մի ճիչ արձակում և ուշաթափւում...

Երբ որ նա բաց է անում իւր աչքերը, նա տեսնում է, որ ինքը գտնւում է իւր ննջարանում, ուր մի կողմից նստած է իւր հայրը և իւր տխուր, վհատ աչքերը դարձրել է դէպի իրեն։

—Աղջիկս... Հեղինէ, ասում է Գագիկը, երբ տեսնում է աղջկայ ուշքի գալը։

—Ա՛խ, շշնջում է Հեղինէն և կրկին փակում աչքերը։ Նա զգում է բոլոր իրողութիւնը, որ ինքը չկարողանալով տանել իւր հոգեկան բուռն վրդովմունքը, ուշաթափուել էր իւր հօր առանձնասենեակում, չդիմանալով իւր հօր այն ահարկու հայեացքին, որը սուր սլաքի նման ցցում էր իւր սրտում, այն սրտում, որը նոր բացուող կոկոնի նման դեռ չգիտէր աշխարհային ոչ մի տառապանք և լի յոյսով հէնց ուզում էր իւր

քնքոյշ թերթիկները բանալ, յագենալ թարմ օդով, երբ յանկարծ նրան դիմաւորում էր ահռելի, սարսեցուցիչ փոթորիկը և թառամեցնում նրա քնքոյշ թերթիկները: Ի՞նչ պիտի անէր թույլ հզօրի առաջ...

Գ.

Աշոտ երկաթը Յունաստանում փառաւոր ընդունելութիւն գտնելուց յետոյ, յունական զօրքերով վերադառնում էր Հայաստան... Ալեկոծեալ ծով էր ներկայացնում այդ ժամանակ Հայաստանը և նա՝ յոյսը օտար զօրքերի վրայ դնելով, գալիս էր խաղաղացնելու այն ալիքները, որոնք ամեն բան աւերելով ոչ մի բան իրա տեղը չէին թողել: Նա գալիս էր թագաւորելու այնտեղ՝ ուր բացի իրենից թագաւորում էին երկու հոգի՝ մինը վաղուբականում Գագիկ Արծրունին, իսկ միւսը՝ Աշոտ սպարապետը, իւր հօրեղբօր որդին, Դուինում. չը հաշուած այն մանր իշխաններին, որոնք յայտնի կամ անյայտ կերպիւ թագաւորում էին իրենց երկիրներում:

Յունական զօրքի գլուխ անցած Աշոտ երկաթը շտապում էր դէպի Հայաստան: Քանի որ չէր մոռել իւր երկրի սահմանները նա տխուր էր և խորին թախիծը պատել էր նրան: Երբեմն երբեմն նայելով իւր ետևից սլացող յունական գունդին, նրա սիրտը աւելի կսկիծում, աւելի ցաւում էր: Նա զգում էր, որ ինքը միայնակ է օտար երկրում, անտէր, անօգնական և թէ իւր ետևից սլացող գունդը օտար է իւր համար և թէ նա վաղը կարող է այդ սուրը իւր դէմ դարձնել... Բայց հէնց որ մտաւ իւր երկրի սահմանները, հէնց որ ոտքը դրեց իւր հողում, նրա սիրտը թռնդ առաւ, երակների մէջ կարծես նոր արիւն վազեց: Մի տեսակ ելեքտրական սարսուռ անցաւ նրա մարմնով, որը ցնցեց նրա մկանունքները և նա զգաց, որ նա ինքն է այդ հողի տէրը և տիրականը, թագաւորն ու իշխանը ու նա սուրը պատեանից հանելով, մտրակեց իւր նժոյգին և փոթորկի նման սլացաւ առաջ, դէպի վեհ Մասիս, դէպի իւր երկրի սիրան ու հոգին...

Գունդը սլանում էր նրա ետևից: Ամեն տեղ ուր կային շէն գիւղօրայք և քաղաքներ ընդառաջ էին գալիս և ողջունում իրենց թագաւորին. գիւղացի աղջիկներն ու տղաներն անդամ ծաղիկներ էին փռում երկաթի ոտքերի տակ և ուրախաձայն աղաղակում.

Ապրի Աշոտը շատ ու շատ օրեր,
Ապրի երկաթը բիւրաւոր դարեր...

Աշոտ երկաթը լսում էր անմեղ մանուկների բերանից այդ խօսքերը, լսում և նրա սիրտը յուզւում և տակն ու վրայ էր լինում: Իսկ երբ նա մօտեցաւ Մասիս սարին, երբ տեսաւ նրա ալեզարդ գագաթը, նրա սիրտը փղձկուեցաւ և

արտասուքները թորացին նրա աչքերից։ Նա լուռ լալիս էր։ Ով գիտէ ինչի համար և կամ ով գիտէ ինչ մաքեր ալեկոծեցին նրա սիրտը, ինչ զգացմունքներ պատեցին նրա հոգին... Նա տեսաւ ալևոր Մասիսը և յուզուեց։ Սիրուն էր Մասիսը։ Վիթխարի հսկայի նման դաշը դէմ էր տուել և հպարտութեամբ նայում էր չորս կողմը։ Ամեն բան փոքր էր երևում նրա համար, ամեն բան մանր և ստոր էին իր աչքերում, այն ինչ ինքը վեհ և բարձր և՛ հաստատութիւն իր կարծիքի, չորս կողմը արդէն տիրում էր խաւարը, այն ինչ իր գագաթը, սպիտակ ձիւնային բարձրութիւնը, այնտեղ ուր տիրապետում է յաւիտենական սառնամանիքը, բուքն ու մրրիկը դեռ ոսկէզօծուած էր արևի թոյլ, բայց հրաշալի ճառագայթներով... Ծիրանի քող էր ձգուած այդ գագաթին։ Ծիրանեգոյն քողով էր զարդարուել հսկայ Մասիսը և այդպէս էր ընդունում իր տիրոջը, իր թագաւորին, որ այսօր կրկին գառնում էր իր գիրկը...

Բայց հետզհետէ դա էլ նսեմացաւ, նոսրացաւ և յանկարծ չքացաւ։ Աներևոյթ ձեռքը յանկարծ վեր վերցրեց այդ ծիրանի քողը հսկայ Մասիսի գագաթից և նա էլ ընկղմուեց խորին խաւարի մէջ։ Այժմ միայն նրա հսկայ ատուերն էր երևում։

Աշոտ Երկաթը սրանեղեց։ Նա ուզում էր երկար, շատ երկար նայել այդ գագաթին, յագենալ նրանով, այն ինչ խաւարը շուտ կլանեց

նրան և չթողեց իր կարօտը յագեցնելու։ Տրխրեց Աշոտ Երկաթը և իր ձիու ընթացքը աւելի արագացրեց։ Գիշերը հետզհետէ պատում էր. հարկաւոր էր շուտ տեղ հասնել, հանգստանալ և հանգիստ տալ զօրքերին։ Յանկարծ խորին խաւարի միջից լսուեցան ձիանց դոփիւններ։ Ո՞վքեր էին դրանք թշնամի թէ բարեկամ, նա չգիտէր, բայց թէ որ դիմացի կողմից գունդ էր գալիս — այդ անկասկած էր։ Աշոտ Երկաթը նշան արաւ և զօրքը կանգնեց։

Բայց հանդիպակած գունդը աներկիւղ առաջ էր գալիս. երևում էր որ կամ նա ոչ մի բանից երկիւղ չունի և կամ չի տեսնում իրենց։ Երբոր նրանք բաւականին առաջ եկան. այն ժամանակ Աշոտ Երկաթը իր սուրը օրօրելով կանչեց խրոխտ ձայնով.

— Ո՞վ է գալիս, բարեկամ թէ թշնամի։

— Կեցցէ Աշոտ Երկաթը, ապրի Մարտիրոս հայրը, գոռաց գունդը և մի փոքր առաջ գալով կանգ առաւ Աշոտ Երկաթի գնդի առաջ։

Աշոտ Երկաթը և Մարտիրոս վանահայրը գրկուեցան։

Ծերունի վանահայրը իր գրկին պինդ, շատ պինդ սեղմեց և մրմնջաց։

— Կորածիս գտայ, այժմ կապրի Հայաստանը։

Երկու խումբն էլ, որոնցից մէկին առաջնորդում էր մեզ ծանօթ Գէորգ Մարզպետունի իշխանը, միանալով իրար հետ սրարշաւ առաջ

էին գնում։ Հեռու չէր Կողբ գիւղաքաղաքը, ուր պիտի իջևանէին Աշոտ Երկաթը և զօրքը։

Գիւղաքաղաքը արդէն հեռուում երևում էր, երբ յանկարծ մի քանի նետեր թռան և ապա յանկարծակի խառնիճաղանճ ձայներ լսուելով մի խումբ, սրերը հանած, յարձակուեցաւ Աշոտ Երկաթի զօրքի վրայ։

—Դաւաճանութիւն, կանչեց Աշոտ Երկաթը և մղուեցաւ թշնամիների մէջ.

—Վա՜տ և անարգ... մրմրաց Մարտիրոս վանահայրը։

Աշոտ սպարապետն է, նա դրժեց իւր խօսքը և կրկին դաւաճանեց, պատասխանեց Գէորգ իշխանը և իւր խմբով յարձակուեց թշնամիների վրայ։

Մթութեան մէջ լսւում էր միայն սրերի շրխկոցը և ընկնողների վայնասունը։ Կարճ ժամանակ անցաւ և թշնամին, որին ղեկավարում էր Աշոտ սպարապետը, չդիմանալով Աշոտ Երկաթի զօրութեանը փախուստ տուեց դէպի Կողբ գիւղաքաղաքը, բայց մեր խումբը ետ չկանգնեց։ Նա հետևեց նրան և քիչ ժամանակից յետոյ խաւար երկիրը լուսաւորուեց հրեղէն լեզուներով, որ հետզհետէ աւելի և աւելի բոցավառւում էր և մոխրի կոյտեր դարձնում Կողբ գիւղաքաղաքը...

Բոցերի մէջ դեռ կուում էին Աշոտ սպարապետի և Աշոտ Երկաթի զօրքերը, այն ինչ ժողովուրդը փլատակների տակ թաղուելով օգնութիւն էր գոռում։

Յանկարծ Աշոտ սպարապետը անյայտացաւ. ինչպէս երևում է նա փախուստ էր տուել գիւղից, այն ինչ կռտորածը դեռ շարունակւում էր և բոցերը ագահաբար լափում էին շինութիւնները։

—Դադարեցրէք կռիւը, հրամայեց Աշոտ Երկաթը։

Բայց յունական զօրքերը դադարացնելով կռտորածը թալանել սկսան հայերին, այն հայերին, որոնք իրենց թագաւորին կռուով էին դիմաւորում։

Ե.

Մինչդեռ Աշոտ Երկաթը յունական զօրքով վերադառնում էր Հայաստան, մինչդեռ ժողովուրդը ցնծութեան և ուրախութեան աղաղակներով էր ողջունում իւր թագաւորին, այդ միջոցին Վասպուրականի Գագիկ թագաւորը միջոցներ էր որոնում ամեն կերպ նսեմացնելու Աշոտ Երկաթի փառքը և իւր իշխանութիւնը տարածելու ամեն կողմը։ Բայց նա այսօր շատ խռովուած էր. նրա հոգին պատած էր մի ինչ որ խորին թախիծով, որ տակն ու վրայ էր անում նրա սիրտը։ Այն արի սիրտը, որ վախ

անգամ չուներ կրակի մէջ նետուելու, այժմ դողդոջում էր և ամեն մի շշուկից վախենում։ Յուսահատ մարդու նման նա կանգ առաւ իւր շքեղ սենեակի պատուհանի մօտ և ապա բարձրացնելով թանձր վարագոյրներից մէկը՝ նայեց դուրս։ Դուրսը փայլում էր գեղածիծաղ արևը և թըռչուները ուրախ ուրախ սաւառնում էին օդի մէջ... Ցնծում էր բնութիւնը, ժպտում էր սիրուն արևը, բայց այդ տեսարանը ոչ մի տպաւորութիւն չթողեց նրա հոգու վրայ, այլ նա աւելի տխրեց, աւելի մռայլուեցաւ։

—Օ՜... ինչ ծանր վէրք հասցրեց աղջիկս ինձ, ինչ որ չէի նախատեսած կատարուում է և դա իւր արտասուքներով ուզում է իմ իղձերը ոչնչացնել, փափագներս խորտակել... Չէ... ես սիրում եմ աղջկաս, ես պաշտում եմ նրան, ես չեմ ուզում տեսնել նրա արցունքները, բայց միևնոյն ժամանակ Գագիկ Արծրունու երկաթի կամքը կը մնայ անյողդող, կարծր և ամուր, այնպէս, ինչպէս այն ժայռերը, որոնց դարերից է վեր ծեծում են վանայ ջրերը, բայց նրանք կան և պիտի լինին... Ինձ համար չկայ ընտանիք, կին, դուստր, ժողովուրդ, քաղաք ու շէն, ամեն բան ոչինչ են Վասպուրականի Թագաւորի առաջ և նա պիտի կոխկորտի ամեն բան իւր ոտքերի տակ, հուր ու մոխիր պիտի դարձնի ամբողջ Հայաստանը միայն թէ ոչնչացնի Բագրատունեաց տոհմը... Արծրունեաց արծուանիշ դրօշը պիտի տարածուի Հայաստանի մի ծայրից մինչև միւսը,

ահա այդ է ցանկանում Վասպուրականի Գագիկ Թագաւորը...

Գագիկը լուռ կացաւ. նա չնկատեց մինչև անգամ թէ ինչպէս կից սենեակում մի խշխշոց լսուեցաւ և թէ ինչպէս մէկը զգոյշ քայլերով մօտեցաւ դրանը և ծածկուեցաւ թանձր վարագոյրների ետևը։

—Պիտի մեռնի Աշոտ Երկաթը, ահա իմ դատաւճիռը կանչեց Գագիկը մի տեսակ խուլ ձայնով, որ կարծես դուրս եկաւ նրա թոքերի ամենամթին խորշներից։

Այդ խօսքերը լսելով վարագոյրի մէջ պահուածի մարմնով մի ցնցում անցաւ. նա ուզեց դուրս թռչել, փախչել այդ տեղից, բայց այդ ժամանակ Գագիկը կրկին շարունակեց.

—Իսկ Հեղինէն... էհ, մի ցնորք էր այդ բոլորը։ Ես չեմ հաւատում, որ նա լինի իմ ատելութեան. մատաղահաս սրտի արտադրութիւն էին նրա խօսքերը, քնքոյշ, մեղմ սրտի արգասիք... Բայց նա չգիտի, որ քաղաքականութիւնը քընքշութիւն չի սիրէ, այլ նրա ասպարէզը հուր ու մոխիր է... Արիւն է նրա ծնունդը և արիւնով պիտի մաքրեմ իմ ճանապարհը, վայ է նրան, ով իմ առաջ կը կանգնի...։

Գագիկը կրկին լռեց. այդ միջոցին լսուեցողը, որ Հեղինէն էր, դուրս թռաւ իւր թաղստի տեղից և անզգուշաբար աղմուկ հանեց։ Գագիկը սաստուեցաւ։ Նա ետ նայեց և սկսեց դէպի կից սենեակի դուռը գնալ, որտեղ պահուած էր օ-

բիորդը, բայց հաւաստիանալով որ ոչ ոք չկայ, նա նորից դէպի պատուհանը գնաց և սկսեց դիտել հեռուն ոլորուող ճանապարհը։ Նա կարծես ում որ սպասում էր։ Այդ ժամանակ ճանապարհի վրայ երևեցաւ մի մարդ, որ երկայն նիզակը ձեռքին շտապ դէպի Գագիկ Արծրունու ամրոցն էր գալիս։

—Վերջապէս, ասաց Գագիկը ուրախացած։ Ահա քանի ժամանակ է որ ես լուր չունիմ թէ ինչ են շինում իմ մարդիկը։

Նա սկսեց անհանգստութեամբ անց ու դարձ անել սենեակում, մինչև որ ճանապարհորդ մարդը կը հասնէր ամրոց։

Անցաւ վոքը ժամանակ և ահա Գագիկի սենեակի դուռը կամաց յետ բացուեցաւ և մի մարդ աննկատելի կերպով ներս մանելով, իւր նիզակը դռան մօտ դրեց և ինքը լուռ կանգնեց դռների մօտ։ Գագիկ Արծրունին մի քանի անգամ անցաւ սենեակում բայց նրան չնկատեց։ Նորեկ մարդը, որ կարճ հասակով, բայց լիքը մարդ էր, անհամբերութեամբ աչքերը Գագիկի վրայ էր դարձրել և անթարթ աչքերով նրան էր դիտում։ Գագիկը կրկին դէպի պատուհանը գնաց և դուրս նայեց։ Իրեն հետաքրքրող ճանապարհորդը այլ ևս չէր երևում։

—Ի՞նչու ուշացաւ... նա ամրոցի դաղանի ճանապարհը դիտէ, ինչը զբաղեցրեց Գոսակին։

—Ես այստեղ եմ, տէր, կանչեց ուղևորը, խոր գլուխ տալով Գագիկին։

—Ա՛... դու արդէն այստեղ ե՞ս։ Ես կարծեցի թէ դևերը քեզ կուլ տուին։

—Դևերը ինձ ձեռք չեն տալ, տէր, ես նրանց գլխաւորն եմ, պատասխանեց Գոսակը։

Գագիկի դէմքին մի դառն ժպիտ երևեցաւ, որ ամենևին չազդեց նրա ախուր տրամադրութեանը։ Նա նստեց բազմոցի վրայ և դիմելով Գոսակին, ասաց.

—Արի, Գոսակ, նստիր, պատմիր տեսնենք ինչ տեղեկութիւններ ունիս։

—Ո՛չ, տէր, ես հրաժարւում եմ մի բան ասելուց մինչև չեմ հանգստանայ թէ մեզ լսող չկայ։

Գագիկը կարմրեց։ Նրա մաքով կայծակի նման Հեղինէն անցաւ, որ ցնցեց իւր ամբողջ մարմինը, բայց թէ նա իւր հոգւոյ ալեկոծութիւնը ծածկելով, վեր կացաւ տեղից, դռները պինդ փակեց, վարագոյրները ցած թողեց և կըրկին նստելով տեղը, հրաւիրեց Գոսակին։

—Արի, Գոսակ, այժմ կարող ես հանգիստ ճառալ, որ մեզ ոչ ոք չի կարող լսել։

—Տէր, այս անգամ մենք տարուեցանք։

—Ի՞նչպէս. հարցրեց Գագիկը զարհուրելով։

—Զպէտք է յուսահատուել թէև այժմ այժը նրանց կողմն է, բայց խորամանկութեան և հեռատեսութեան առաջ ամեն բան կոչնչանայ։ Աշոտ երկաթը յունական զօրքով արդէն Հայաստան մտաւ։ Ծողովուրդը ցնծութեան աղաղակներ է արձակում և նորատի կոյսերը ծաղիկներ

են փոռում նրա ոտքերի տակ։ Կողը գիւղաքաղաքի տակ, երբ նրա յոգնած զօրքը հանգստութեան էր կարօտ և սպասում էր ճոխ ընդունելութեան, մենք մօնթրակոյտ քաղաքը միայն յանձնեցինք։

—Ի՞նչպէս, մի՞թէ Կողբը, Աշոտ սպարապետի կալուածքը աւերուեցաւ։

—Քար քարի վրայ չմնաց։ Դեռ Կողբին չմօտեցած, Աշոտ սպարապետը Անձևացեաց և Որշտունեաց իշխանների հետ միասին անակնկալ կերպիւ յարձակուեցան Աշոտ Երկաթի վրայ և սկսեցին կոտորել յունաց զօրքը, բայց այդտեղ մենք տարուեցանք։ Սպիտակ դևը կրկին օգնութեան հասաւ և քշեց մեզ...

—Ո՛վ...

—Սպիտակ դևը։ Մի՞թէ չէք ճանաչում նրան, քաօքա Մարտիրոս վանահօր մասին է, որ անակնկալ կերպիւ յայտնւում է այնտեղ, ուր մենք չենք սպասում։

—Անիծուի՛ դա, մրմրաց Գագիկը առանձինը կրճատացնելով։

—Մենք յաղթում էինք, երբ թշնամին մի կողմից յունաց զօրքով, իսկ միւս կողմից Մարտիրոս հօր և Գէորգ իշխանի կազմած հրոսակներով գրոհ տուին մեզ վրայ և քշեցին մեզ։ Մենք մտանք Կողբ։ Այնտեղ էլ կռիւը շարունակուեց և քիչ յետոյ կրակէ լեզուները սկսեցին լափել քաղաքը։

—Իսկ ինչ եղան իմ իշխանները։

—Փառք Տէրոջը, ամենքը ազատուեցան։ Ռշտունեաց և Անձևացեաց իշխանները ծպտեալ Ափխազաց Գուրգէնի մօտ գնացին նրան մեր կողմը յակեցնելու, իսկ Աշոտ սպարապետը իւր կալուածքների ներսը քաշուեց նոր յարձակում պործելու։ Նա մտադիր է Աշոտ Երկաթի կալուածքները աւերել։

Երկուսն էլ առ ժամանակ լուռ կացան։

—Տէր, այդ մի յաղթութիւնը տանուլ տուինք, ոչ թէ մեր զօրքի թուլութեան պատճառաւ, այլ այն պատճառաւ, որովհետև նրանք սպասում էին, նրանք գիտեն թէ մենք ի՞նչ ենք անում և ի՞նչ մտածում։

—Ի՞նչպէս։

—Շատ պարզ։ Մեր ամեն քայլափոխը լրտեսում են և այդ լրտեսը գնում է քո պալատում, նա...

—Ի՞նչ նա... գոռաց Գագիկը, հասկանալով թէ ո՞ւմ է ակնարկում Քոսակը։

—Նա իշխանուհի է և քեզանից սիրուած, հարուածեց Քոսակը առանց խնայելու հօր սիրտը։

—Ո՞վ է նա։

—Աղջիկդ։

—Հեղինէն... Ո՛չ, անկարելի է։

—Այո, Հեղինէն, նա լրտեսում է մեզ և ես այդ մասին ամենևին կասկած չունեմ։

—Դու սխալւում ես, Քոսակ, իմ աղջիկը չի կարող մեզ լրտեսել։

—Քոսակը երբէք չի կարող սխալուել. նա

ինչ որ ասում է հասասա գիտէ։ Հեղինէն լրտես է։

— Լաւիր անզգամ, գոռաց Գագիկը և կատաղութեամբ բռնեց նրա օձիքից։ Բոսակը անտարբեր էր ինչպէս անշունչ առարկայ։ Մի դառն ժպիտ միայն անցաւ նրա շրթունքների վրայ, որ սառուռ ազդեց Գագիկին։

— Բոսակ, մի ասի այդպէս, ասա ես սխալուեցայ։

— կրկնում եմ, տէր, Հեղինէն լրտես է։

Բարկութեան ներկը անցաւ Գագիկի դէմքի վրայ և նա իւր սուրը պատենից հանելով խրոխտ ձայնով կանչեց։

— Ապացոյց, ապա թէ ոչ կտոր կտոր կանեմ քեզ։

Բոսակը իւր քոսոտ բեխերը սրեց և անտարբեր կերպով ձեռքը դէպի ծոցը տանելով մի նամակ հանեց և մեկնելով Գագիկին ասաց։

— Ահա ապացոյց։

— Ի՞նչ է դա, հարցրեց սարսափած Գագիկը։

— Քո աղջկայ գրած նամակը Մարտիրոս հօրը։

Գագիկը դողդոջուն ձեռքով վերցրեց նամակը, կարդաց և գունատուեց։ Սառը մահուան դող պատեց նրան. նա իւր աչքերին չէր հաւատում։ Այդ նամակը Հեղինէի ձեռքով գրուած նամակն էր, որով զգուշացնում էր Մարտիրոս հօրը իւր հօր լարուած որոգայթներից։

— Ո՞վ տուեց այս նամակը, հարցրեց Գագիկը գերեզմանական ձայնով։

— Գողացայ, սառն կերպով պատասխանեց Բոսակը։

— Ո՞րտեղից գողացար, պատմիր։

— Բիւրականի վանքում, երբ Սահակ եպիսկոպոսը և Մարտիրոս հայրը իշխանների հետ խորհրդի էին մտել ես դէպ նման ներս սողացի և այս նամակը գողացայ։ Նրանք շատ խօսեցին քո աղջկայ մասին, շատ գովեցին դրան և ամեն միջոց պիտի գործ դնեն Հեղինէին քեզնից հեռացնելու։

— Այդ չեն կարող անել, ասաց Գագիկը և բանալով կից սենեակի դուռը երեք անդամ ծափ տուեց։

Երկու սպասաւորներ ներս վազեցին և լուռ կանգնեցին դրան շէմքում։

— Կանչեցէք այստեղ Խորէն իշխանին, ասաց նա դառնալով դէպի սպասաւորները։

Սպասաւորները դուրս գնացին և քիչ յետոյ ներս մտաւ Խորէն իշխանը, որ ամբողջ զրահաւոր էր կարդուած։

— Խորէն իշխան, իսկոյն բանտարկիր Հեղինէին և մի ազատիր թող նրա մօտ և բացի հաց ու ջրից ոչինչ չտաս։

Խորէն իշխանը որ 40—45 տարեկան մի մարդ էր և իւր աղջկայ նման սիրում էր Հեղինէին, շանթահարի նման կանգ առաւ երբ լսեց Գագիկի հրամանը։

— Դու չլսեցիր...

—Բայց, տէր, նա առանց այն էլ հիւանդ է, ինչպէս կը դիմանայ...

—Լռէ՛, կատարել այն ինչ հրամայում եմ։ Վայ քեզ Նորէն իշխան, եթէ լաւ չես հսկի։ Մի թռչուն անգամ չես թողնի նրա մօտով անցնի։

—Անգութ հայր, մրմրաց ինքն իրեն Նորէն իշխանը և դուրս գնաց հրամանը կատարելու։

Ծռսակը լուռ լսում էր ղրանց և երբ Նորէնը դուրս գնաց, նա մի դիւական ժպիտ արձակեց և ասաց.

—Արժանի էր...

Հեղինէն բանտարկուած էր...

2.

Այդ որ հեռու, անծայրման տարածութիւնից դէպի այն կողմը, անյայտութեան մէջ լսելի էր լինում որոտման խուլ հառաչանքները... Այնտեղ՝ հեռուում կատարուում էր մի ինչ որ խառնակութիւն, մի ինչ որ շփոթ, ուր լացեցնելու չափ հառաչում էին ամպերը և լսողի սրտում սերմանում վշտի ու տխրութեան սերմեր ..

Եւ Հեղինէն կանգնած իւր բանտի պատուհանի առաջ լուռ լսում էր այդ հառաչանքը, որը հեռագնաց աւելի և աւելի լսել էր լինում և նրա

սիրտը լցնում էր մի տեսակ անհասկանալի և անբացատրելի դառնութեամբ։ Ի՞նչ էր կատարուում իւր հետ— ինքն էլ չգիտէր, բայց թէ նա զգում էր, որ իւր սիրտը այդ րոպէին պատրաստ էր դուրս թռչելու, ժայթքելու այնտեղից ուր նա կաշկանդուած էր և իւր մէջ ամբարուած դառնութիւնները չորս կողմը տարածելու... Ու նա տխուր, յուսահատ և անթարթ աչքերով դիտում էր հեռու հորիզոնը. որտեղից դանդաղութեամբ բարձրանում էին ամպերը և կամաց կամաց ծածկում հորիզոնը։ Զով քամին ծածանում էր նրա ալիքանման մազերը, իսկ խաւարը անհասկանալի կերպով սիրասիրում երկրին... Խաւարում էր աշխարհը, խաւարում էր Հեղինէի սիրտը, բայց թէ նա դեռ արձանի նման կանգնած նայում էր ամպերի պարին և փայլակների թռիչքներին, կարծես նա մի ինչ որ սպասում էր այդ ամպերից։ Կարծես խաւարի մէջ լոյս էր փնտրում, այն լոյսը, որին ինքը այնպէս կարօտ էր և որին փափագում էր գրկել իւր նազելի բազուկների մէջ... Յեղձ, նա մոռանում էր, որ իւր հօր պահապանները լուրջ հսկում են իւր վրայ և նրա ամեն մի շարժմունքը դիտում...

Արդէն խորին խաւարը պատեց ամեն կողմը և Հեղինէն հեռանալով պատուհանից ուժասպառ ընկաւ իրեն համար պատրաստուած չոր թախտի վրայ։ Նա ձեռքերով բռնեց իւր գլուխը և լիառատ արտասուքները հեղհեղացին նրա աչքերից։ Նա չնկատեց մինչև անգամ թէ ինչպէս ներս

մոաւ աղախինը և վառած ճրագը դնելով նրա մօտ, լուռ նայում էր իւր իշխանուհուն։

Սառը քամին փչում էր բաց պատուհանից և օրօրում ճրագի բոցը, աղախինը ուզեցաւ փակել պատուհանը, բայց անվճռականութեամբ կանգ առաւ կիսաճանապարհին, ապա դառնալով դէպի Հեղինէն ասաց.

—Իշխանուհի։

Պատասխան չկար։ Հեղինէն այնքան խորասուզուած էր մտքի մէջ, որ նա չլսեց աղախնի խօսքերն անգամ։

—Իշխանուհի, կը ցանկանա՞ս պատուհանը փակել. այնտեղից փչում է սառը քամի և կարող է ճրագը հանգցնել։

Հեղինէն բարձրացրեց գլուխը և ապուշ կլորած աչքերով նայում էր աղախնուն։ Երկուսն էլ լուռ իրար երեսին էին նայում, առանց համարձակուելու այդ խորհրդաւոր լռութիւնը ընդհատելու։

Այդ միջոցին դուրսը լսելի եղան անձրև խշխշալու ձայնը և քամին ուժգնութեամբ ներս հոսելով սենեակ, մօտ էր ճրագը հանգցնելու։

—Իշխանուհի, փակե՞մ պատուհանը, ճրագը կը հանգցնի և դուք կը մնաք խաւարի մէջ։

—Ո՛չ, թող բաց մնայ այդ միակ պատուհանը, որտեղից ես շնչում եմ ազատ ու թարմ օդ, որտեղից գալիս է իմ լոյսը և կեանքի յոյսը։ Ի՞նչու փակել այդ պատուհանը և յուսալ այս թշուառ ճրագի վրայ, որի իւղը պակասելով

մինչև էլ պիտի հանգչի, այն ինչ այդ պատուհանից գալիս է արևի անսպառ լոյսը և յոյս ու կեանք ներշնչում ինձ նման կալանաւորներին։ Ա՛խ, Արուսեակ, ինչքան ես կարօտ եմ լոյսին, այն լոյսին, որ յաւիտենական է և անսպառ։ Ի՞նչու իմ սրտիս մէջ տիրում է յաւիտենական խաւարը։ Մի՛թէ դու՛, Արուսեակ, չես կարող լուսաւորել իմ սրտի խաւարը, ճրագ բեր, որ սիրտս լուսաւորի, ճրա՛գ, որի ճառագայթները կեանք ափուեն թէ չէ ինչի՞ է պէտք այս ճրագը, որ բերել ես։

—Ա՛խ, իշխանուհիս, աչքերս պիտի կուրանային և ես քեզ այդպէս չտեսնէի... բայց թէ ահա քայլերի ձայներ եմ լսում, իմ ուշանալս կարող են նկատել, գիշերը բարի, ասաց աղախինը և դուրս գնաց։ Հեղինէն նայեց նրա ետևից, մի փոքր ժամանակ անշարժ մնաց և ապա գլուխը օրօրեց.

—Ա՜խ Արուսեակ... ինչքան նա սիրում էր ինձ, իսկ այժմ մի բոպէ անգամ չի կարողանում մօտս մնալ, ինձ յուսադրել։ Ո՜հ, ինչքան թանկ է կեանքը և ինչպէս ամեն մարդ դողում է իւր կաշուից։ Այդպէս են մարդիկ, կեանքի վտանգի առաջ ամեն բան մոռացւում է, ամեն բան, և՛ աստիճան, և՛ սէր, և՛ երախտագիտութիւն։ Չլինէր այդ անիծուած կեանքի վտանգը, մարդիկ այդպէս չէին լինի և աշխարհս բոլորովին այլ կը լինէր։

Հեղինէն վեր կացաւ և մի քանի անգամ ան-

ցաւ իւր բանտի մի ծայրից միւսը։ Յանկարծ ինչ որ թրխկաց իւր առաջ։ Նա սոսկալով նայեց և տեսաւ մի քարի կտորի վրայ մի ինչ որ կապած։ Երկար ժամանակ նա չէր համարձակւում ձեռք տալ, ապա կռացաւ և բարձրացրեց։ Դողդողջիւն ձեռքերով քանդեց քարի վրայ կապած կապոցը, ուր մի փոքրիկ ծրար տեսաւ, որի վրայ մանր, բայց գեղեցիկ տառերով մի ինչ որ գրած էր։ Ի՞նչ էր նշանակում այդ տոմսակը և ո՞վ էր դրա գրողը։ Նա սոսկումով աչ ու ձախ նայեց, կարծես վախենալով, որ չվերեն իւր ձեռքից այդ թանկագին տոմսակը, ապա մօտենալով ճրագին կարդաց. «Հեղինէ, ազատուածեանդ ժամը մօտ է. պատրաստ եղիր այս գիշեր։ Բոլոր պահապանները կաշառուած են, հայր Մարտիրոսը քեզ է սպասում իւր կարիչ խմբով»։ Յոտտովանահայրդ Սահակ քահանայ։

Սարսռեցաւ խեղճ աղջիկը, երբ որ վերջացրեց տոմսակի ընթերցումը և մի տեսակ անվճռականութիւն պատեց նրա սիրտը։ Ի՞նչ անի, փախուստ տայ իւր հօրից թէ՞ կրկին տանջուի այդ մթին բանտում...

Նա ծնացել էր երկու կրակի մէջ...

Երկար, շատ երկար նա մտածում էր, բայց ոչ մի ելքի չէր գալիս։ Մտքերը մինը միւսից սև, մինը միւսից սարսափեցնող պաշարում էին և սարսափեցնում նրան։ Երբեմն մտածում էր ուղղակի իրեն պատուհանից ցած ձգի, չարչարի իրեն, որպէս զի ամեն բանին վերջ դնուի,

բայց զգում էր իրեն, չէր ուզում մեռնել, մատաղ կեանքը չէր ուզում խաւարացնել։

—Օ՜... ծանր է իմ դրութիւնը, կանչեց նա և ուժասպառ ընկաւ փայտեայ յենոցի վրայ։ Ծանր է, բայց այնտեղ է իմ յոյսը, որտեղ կանչում է այս տոմսակը։ Նա ապրում է այն մթնոլորտում, ուր գործում է Աշոտ Երկաթը։ Նա նրա հետ կռիւ է մղում դաւաճանների դէմ և ես էլ պիտի առեմ այդ դաւաճաններին, լինի դա ծնող թէ մի ուրիշը։ Ես սիրում եմ նրան, նրա պատկերը միայն յիշում և նրա համար ապրում... բայց նա, ո՜հ տէր իմ Աստուած, արդեօք սիրո՞ւմ է ինձ, չի մոռացել արդեօք երբ ես դեռ փոքր էի և կատակներ անելով փաթաթւում էի նրա վզով. անմեղ մանկական համբոյրները էի տալիս. և չարաճճիի նման մի րոպէ անգամ հանգստութիւն չէի տալիս. իսկ նա... նա նայում էր ուղղակի աչքերիս մէջ և լուռ մտածում... Ի՞նչ էր մտածում նա, չգիտեմ, բայց թէ այն օրից ես սիրեցի նրան, սիրեցի իմ ամբողջ էութեամբ, բայց հէնց որ սկսս հասաս իւր կատարելութեան, նա թողեց ինձ, թողեց մեր տունը և հեռացաւ մեզանից։ Նա սուրը հօրս դէմ դարձրեց միանալով Աշոտ Երկաթի հետ և այնուհետև ոտք չդրեց այս տեղ։ Բայց ինչքան ծանր և վշտալից են այդ տարիները, ամեն մի րոպէ սերս աճում է, ես նրան չեմ մոռանում, իսկ նա արդեօք սիրո՞ւմ է ինձ, կը սիրի՞ իւր Հեղինէին, որի սրտի մէջ ցանեց սիրոյ սերմեր

և հեռացաւ... Գէորգ, Գէորգ, Մարզպետունեաց քաջ և ազնիւ իշխան, քեզ համար բաբախում է Հեղինէի սիրտը և քեզ համար է նա ապրում։ Սուրբ էր այդ անունը ինձ համար և սրբութեամբ էլ, ինչպէս մի աւանդ, պահում էի այդ անունը սրտիս սրբազան խորքերում, բայց այլ ևս անհնար է պահել, սիրտս լիքն է, նա արդէն ժայթքում է...

Ասաց Հեղինէն և թեքուեցաւ մահճակալի վրայ. նրա գոհար աչքերը մի մի ովկեան էին դարձել, որոնցից անընդհատ գնդում էր արցունքը։ Անցաւ մի փոքր ժամանակ. նրա աչքերը կամաց կամաց ծածկուեցան և կուսական կուրծքը հանգիստ ցածր ու բարձր էր անում, նա արդէն նիրհում էր... Վրդովմունքից էր նրա նիրհը, իսկ բաժակը շատ ծանր։ Փշալից կեանքի օրհասը մօտ էր իւր վախճանին և կարծես նա նիրհում էր վերջին, օրհասական նիրհով։ Մնում էր, խաբուսիկ երազները էին նրան գուրգուրում այդ վայրկեանին, իսկ աշխարհս կարծես գոյութիւն չունենար նրա համար։ Նա մոռացել էր ամեն ինչ և՛ սէր, և՛ դաւադրութիւն, և՛ ծնող... Նա չէր լսում մինչև անգամ որոտի գոռումն գոչիւնը, փայլակների փայլփլուքը և քամու շունչիւնը, որ վայրենի գազանի նման օռնալով յարձակւում էր Հեղինէի բանտի պատերի վրայ, ներս սողում, քնքոյշ համբոյրները գրոշմում նրա բորբոքած այտերին, շոյում նրա դանդուրները և

ապա դուրս թռչելով սենեակից, խելագարի նման վազում առաջ...

Ո՞ւր էր տանում այդ համբոյրները յայտնի չէր...

Ը

Արան անցնում էր... Բայց վանայ ծովը կատազի փրփրում էր, յորձանքներ տալիս և դիպչելով ծովափնեայ ժայռերին փշրւում, կտոր կտոր էլ լինում և յետ նահանջում։ Վանայ բերդի մօտ, ծովի մի փոքրիկ խորշի մէջ կապուած էին մի քանի մակոյկներ իսկ նրանց մօտ, ծովափին, մի մեծ ժայռի տակ, երևում էին մօտ քսան և հինգ զրահաւորուած մարդիկ։ Մէկը միայն զէնք ու զրահ չունէր, բայց նրանից ամենքը ակնածում էին և պատրաստ էին նրա ձեռքով նշան տալուն պէս ծովը նետուելու և կուլ գնալու կատարի ալիքներին։

Մուքը հետզհետէ խռովում էր, իսկ կայծակի վայրկենական փայլփլուքը հետզհետէ նուազում, որոտն արդէն անցել էր նրանց գլխով և այժմ հեռու՝ լեռների քամակից էր լսելի անում իւր խուլ, անորոշ գորդոռոցը։

—Ծովը փոթորկւում է, հայր սուրբ, ինչպէս կը հրամայէք, այժմ ժամանակ է արդէն

գործ սկսելու, ասաց զէնքերի մէջ կորածներից մէկը դիմելով վանականին։

—Ալիքները մեզ վախեցնել չեն կարող, ուր որ է կը հանդարտուին և մենք կը փախցնենք Գագիկ Արծրունու գոհը... Բայց չգարձաւ ամէր Սահակը, ինչու նա ուշացաւ։

—Զգիտեմ, Մարտիրոս հայր, գուցէ նա մի փորձանքի հանդիպեց կամ գուցէ չկարողացաւ նշան տալ Հեղինէին։

—Չեմ կարծում Գէորգ իշխան, Սահակ հայրը ամեն ծակ ու ծուկ ճանաչում է. նա դժուար գործը արդէն վերջացրել է կաշառելով պահապաններին, իսկ Հեղինէն չեմ կարծում հակառակի։

—Այո, եթէ պահապաններին փոխած չլինին։ Ո՞վ գիտէ, Գագիկը գիշերներն էլ է հսկում իւր աղջկան, նա կարծես հոտ է քաշել մեր անելիքի մասին։

—Բայց բաւական ուշացաւ Սահակ հայրը, չլինի թէ...

—Ս՛ս... քայլերի ձայներ եմ լսում, կարծես նա լինի գալիս։

Յիրաւի, հեռուից, գոյշ քայլերի ձայներ լսուեցան։ Մարտիրոս վանահայրը և Գէորգ Մարզպետունի իշխանը լռեցին և լայն բացած աչքերով առաջ էին նայում, բայց մուրթը այնքան սաստիկ էր, որ ոչինչ չէր երևում։ Քայլերի ձայներն էլ երբեմն լսում էին, երբեմն ոչ։ Ծովի յորձանքի ձայնը չէր թողնում պարզ լսել։

—Տղերք, զէնքերդ պատրաստ պահեցէք, ով գիտէ ով է, ամեն բանից պէտք է զգոյշ կենալ, մենք կարող ենք թակարդի մէջ ընկնել, դարձաւ Գէորգը իւր խմբին։

Այդ ժամանակ լսուեցաւ գորտի կռկռոցի ձայնից իսկոյն միամտուեցին և այդ կռկռոցին իրենք էլ գորտի կռկռոցով պատասխանեցին։

—Սահակն է և Ծառուկը։ Փուչը լաւ է նմանեցնում գորտին, կարծես իսկը գորտ լինի, ասաց Մարտիրոս վանահայրը և անհամբերութեամբ դէպի ձայնի կողմը նայեց։

Անցաւ փոքր ժամանակ և Սահակն ու Ծառուկը կանգնած էին այդ փոքրիկ խմբի առաջ։

—Չ՛ը, Սահակ հայր, ինչ եղար, ինչ պատահեց քեզ, մենք կարծեցինք թէ Գագիկը քեզ էլ ու Ծառուկին էլ բանտ դրեց, հարցրեց Մարտիրոս հայրը։

—Չէ, դեռ վաղ է ինձ բանտ դնելը, գործեր շատ ունիմ, մեղքերս շատ են. պէտք է քաւել և ապա բանտ նստել ու մեռնել։

—Ինչ արիր, յայտնեցիր Հեղինէին, նա համաձայն է փախչելու, ասաց վրդովուած Գէորգը և շունչը պահելով պատասխանի էր սպասում, կարծես այդ խօսքից լինէր կախուած նրա մահն ու կեանքը։ Բայց Սահակն ուշացնում էր պատասխանելը, նա չգիտէր թէ ինչ կայ Գէորգի սրտում. նա չէր էլ տեսնում թէ ինչպէս նրա դէմքը ծածկւում էր ալիքներով։

—Յայտնեցի, բայց թէ...

—Ի՞նչ բայց թէ...

—Բայց թէ պատասխան չստացայ։ Մեր լրտեսը համբաւ բերեց թէ նա կարգաց նամակը և ուժասպառ ընկնելով մահճակալի վրայ քունն եղաւ։

—Քունն եղաւ... Քունն եղաւ այն ժամանակ երբ մենք ուզում ենք փրկել... Այդ ինչ է նշանակում, տէր հայր, ուրեմն նա չի ուզում իւր փրկութիւնը, արհամարհում է մեզ, ատում Գէորգը և մի խոր ախ քաշեց։

Այդ «ախը» գաղտնի չմնաց Մարաիրոս վանահօրից, որ ամեն բան տեսնում էր և նախագուշակում։

—Մի յուսահատուիր, Գէորգ, ես գիտեմ թէ ինչ կայ սրտումդ և ինչը քեզ վրդովում է։ Եբիտասարդական արիւնդ բորբոքւում է բայց համբերութիւն ունեցիր։ Հեղինէն քեզ կը պատկանի։ Գէորգը ծունկ չոգեց և համբուրեց Մարաիրոս հօր աջը։

—Դու ճանաչում ես ամենի սիրտը, հայր սուրբ, ես քեզ եմ ապաւինում։

—Իսկ դու չկարողացար անձամբ ներկայանալ Հեղինէին, հարցրեց Մարաիրոս հայրը Սահակին։

—Ոչ, այդ անկարելի էր։ Դուրսը շրջում են նրա պահապանները, ես վախեցայ անտեղի կասկածի տակ ձգել նրանց։

—Լաւ, ինչ ես կարծում, եթէ մենք նրան

փախցնելիս լինինք, նրանից ոչինչ ընդիմութիւն չենք գտնի։

—Վտահ եղէք ինձ վրայ։

—Լաւ։ Այժմ Գէորգ իշխանի և մի խումբ զինուորների հետ գնացէք Հեղինէին բերելու, բայց զգոյշ, ամեն մի քայլը նախատեսեցէք և այնպէս առաջ գնացէք։ Ոչ մի ազմուկ չլինի, իսկ մենք կը սպասենք այստեղ։ Ծովը հետզհետէ խաղաղում է և յարմար քամի է փչում։ Դէն, ժամանակ հարկաւոր չէ կորցնել, ամեն մի րոպէն մեզ համար թանկ արժէ։

Գէորգ իշխանը և Սահակ քահանան լրենց համբոյ հէնց ուզում էին առաջ քայլել, երբ ոտքի ձայն լսեցին և նրանից յետոյ քարի գլորուելու ձայն, որը գլորուելով ծովն ընկաւ։

—Մեզ լրտեսում են, շշնջաց Սահակը։

Նրանք սկսեցին ականջ դնել, բայց կասկածաւոր ոչինչ չիմացան։

—Չէ, ոչոք չկայ, քամին էր, որ քարը ծովը ձգեց թէ չէ ոմն կը համաձակուի մեզ գիշերին այս ամայի տեղում թափառելու։

—Ո՛չ, ինձ այնպէս երևաց, որ մարդու քայլերը են, քամին չէր կարող քարը ծովը ձգել, մենք պիտի շտապենք և լրտեսին բռնենք, թէ չէ ամեն բան կորած է։

—Գնանք ուրեմն առաջ, ասացին նրանք և մի ակնթարթում առաջ անցան և զգուշութեամբ ամեն մի քար, ամեն մի մացառ սկսեցին խուզարկել, բայց ոչինչ չգտան։ Նրանց աչքից փախաւ

մի մեծ քար, որի տակ մեկնուած էր մի մարդ և շունչը իրեն պահած, սպասում էր, որ այդ խումբը առաջ անցնի: Նա խմբից ուզում էր առաջ անցնել, բայց տեսնելով որ իւր հոտն առան, թաղնուեցաւ քարի տակ:

Փոքրիկ խումբը զգոյշ առաջ անցաւ, երբ որ ներանք բաւականին հեռացան, քարի տակի մարդը ազատ շունչ քաշեց և վեր կենալով տեղից դէպի խումբը նայեց, որոնք հազիւ երևում էին մթութեան մէջ:

Նա թափ տուեց իւր շորերը, որոնք շաղախուել էին ցեխի և հողի մէջ և ինքն իրան մըրմրաց.

—Հը՛մ... անպիտանները ինձանից առաջ անցան, պէտք է շտապել, ապա թէ ոչ ամեն ինչ կորած է, ասաց նա և ինքն էլ մթութեան մէջ շուտով անյայտացաւ:

Այդ մարդը Քոսակն էր:

Ը.

Հեղինէն խորհրդաւոր տոմսակի ընթերցումից յետոյ մեկնուել էր մահճակալի վերայ և ամուր, շատ ամուր սեղմում էր ձեռքի մէջ այդ տոմսակը: Նա ոչ արթուն էր, ոչ քնած, այլ լայն բացած աչքերով նայում էր առաստաղին և դիտում էր նրան: Անթարթ էին

նրա աչքերը և ապուշի նման միշտ վեր էին նայում առանց հասկանալու թէ ո՞ւր էր և ի՞նչ էր պատահում իւր հետ: Նա մոռացել էր իւր գոյութիւնը, մոռացել աշխարհը: Քրտնքի խոշոր կաթիլները միայն զարդարել էին նրա մարմարէ ճակատը, որոնք թոյլ լուսաւորութեան տակ ադամանդի նման էր պսպղում: Սիրուն էր նա, հրաշալի իւր այդ դիրքով և նախանձի չափուածները կարծես նրան դիւթել էին, որ նա անշարժ մնայ, իսկ ջրային ադամանդները նրա ճակատը զարդարեն: Ու նա անշարժ նայում էր վեր, միշտ վեր, ճիգ էր անում հասկանալու թէ ի՞նչ կայ այնտեղ, ի՞նչպէս են կապուած քարերը, ի՞նչ մի անհասկանալի զօրութիւն պահում էր նրանց վերևում, օդի մէջ, բայց ոչինչ չէր հասկանում, չէր կարողանում լուծել այդ հանելուկը:

Յանկարծ, այդ խորին լռութեան մէջ, լսուեցաւ իւր բանաի դրան թեթև շոշինդը և մի քանի մարդ կանգնեցան նրա գլխի վերև: Նա երեսը դէպի նրանց դարձրեց և դեռ ապուշի նման նայում էր նրանց: Նա չէր հասկանում թէ ովքեր են եկողները և ի՞նչ են ուզում իրենից:

—Հեղինէ՛, ասաց ցած ձայնով ներս եկողներից մէկը:

Հեղինէն ուշադրութեամբ նայում էր նրանց և այժ էր գործ դնում ճանաչելու, բայց նրա միտքը պղտորւում էր և դեռ ուշքի չէր կարողանում գալ:

—Հեղինէ, մի՞թէ ինձ չես ճանաչում, կըրկ-

նեց նոյն մարդը և կարեկցաբար ղուխը շարժեց։

— Ինչպէս չէ, ախ, հայր, դու դարձեալ եկար, դարձեալ ուզում ես վրդովել ինձ... Թոյլ տուր ինձ հանգիստ այս բանտի մէջ մեռնելու։ Ես լրտես եմ, ինձ կաոր կաոր արա, սպանիր, վերջ դիր կեանքիս, ասաց Հեղինէն և երեսը շուռ տուեց ներս եկողներից։

— Ի՞նչ ես ասում, աղջիկս, ճանաչիր ինձ, ես հայրդ չեմ, այլ խոստովանահայրդ Սահակ քահանան, մի՞թէ ինձ չես ճանաչում... ախ, դու հիւանդ ես...

— Սահակ հայրը՞... ասաց Հեղինէն և վեր թռաւ տեղից, մի տեսակ սարսուռ անցաւ նրա մարմնով և նա ուշքի գալով ընկաւ տէր Սահակի ոտքերը։

— Ազօթիր ինձ համար, տէր հայր, ասաց նա և հեկեկանքը խեղդեց նրան։

— Ամեն ժամ, ամեն րոպէ, ազօթում եմ քեզ համար, աղջիկս, ասաց Սահակ քահանան, ոտքի կանգնեցնելով նրան։

— Բաժակս դառն է, տէր հայր, փրկիր ինձ այս տանջանքներից։

— Դու փրկուած ես, աղջիկս, ազատութեանդ ժամը հասել է և դու պիտի հետևես մեզ։

— Ո՞ւր, մի՞թէ ես պիտի հեռանամ, փախչեմ, իսկ հայրս...

— Պիտի փախչես, որովհետև այդ է քո փըրկութեան ճանապարհը։

— Իսկ հայրս, տէր հայր, մի՞թէ թոյլ կը տայ։ Նա մաս մաս կը կարատի թէ քեզ և թէ ինձ։

— Այդ չի կարող անել, տեսնում ես ով է այս տեղ կանգնած։

— Ո՞վ է։

— Գէորգ իշխանը։

— Ա՜հ, մի ճիչ արձակեց և ուրախութիւնից թէ ինչից նա ուշաթափուեց և տարածուեց տէր Սահակի ձեռքերի վրայ։

Գէորգ իշխանը, որ մինչև այդ ժամանակ լուռ արձանի նման նայում էր օրիորդին, մօտ վազեց և գրկեց Հեղինէին։

— Հեղինէ, լսիր ինձ, ես քո Գէորգն եմ, որի սիրտը վաղուց քեզ համար է բաբախում։

Հեղինէն ամուր սեղմում էր Գէորգի ձեռքը և մրմնջում.

— Տարէք ինձ, ես ձեզ հետ եմ...

Նրանք առաջ անցան։ Գէորգ իշխանը գրկած Հեղինէի նազուկ իրանը տանում էր նրան.

— Մի վոքը էլ, իմ թանկագին Հեղինէ և մենք կը հասնենք ծովափին։ Գիտեմ, հասկանում եմ. փոթորիկն է սիրապետում հոգուդ մէջ, ահարկու մաքերը զբաղեցնում է քեզ. բայց հաւատացնում եմ քեզ, որ քո այդ վճռական քայլը սրբում է այն սև բիծը, որ հայրդ դնում է Արծրունիների անուան վրայ։

— Գէորգ իշխան, ինչպէս երևում է դու դեռ ինձ չես ճանաչում, պատասխանեց Հեղինէն։ Իմացիր, որ իմ սրտի մէջ վախկոտի տեղ չէ հո-

սում և ես իմ ամէն քայլս կշռել ու չափել եմ։ Բոպէի ազդեցութեան տակ չէ իմ փախուստը, այլ երկար գիշերների մտածողութեան արգասիք։ Ես գիտեմ, ծանր, մահացու հարուած եմ հասցնում հօրս, բայց թէ ուրիշ ելք չեմ գտնում։ Սիրում եմ ապրել ու մեռնել այնտեղ, ուր ազնուութիւնն ու հայրենասիրութիւնն է թագաւորում։ Եւ ես կերթամ մեռնելու իմ քոյրերի և եղբայրների հետ, որոնք իրենց կեանքը հայրենիքի սիրոյ համար են զոհում։

—Իմ թանկագին Հեղինէս, չէ, դու չես մեռնի, պատասխանեց Գէորգը և ծունկ չոքած նրա առաջ, համբոյրներով ծածկեց օրիորդի ձեռքերը։ Դու կապրես երջանիկ, անդորը կեանքով։ Իմ կուրծքը պատնէշ կը շինեմ, կեանքս ոտքերիդ տակ կը զոհեմ և չեմ թոյլ տալ, որ դու վշտանաս։ Այդ սիրուն աչքերիդ թախիծը կենսունակ ժպտի կը փոխարկեմ և թորշոմած այտերդ կասկարմիր վարդի։ Հեղինէ, դու չգիտես թէ ինչ հուր է այրում ինձ։ Սրտիս այդ հուրը ուզում էի հանգցնել, դուրս պոկել սրտիս խորքերից, բայց նա աւելի ու աւելի էր բորբոքւում ու ինձ զգում տանջանքի և արհաւիրքի ծովը։ Ես սիրում եմ քեզ, Հեղինէ, սիրում անհուն, անսահման սիրով, ասա, խօսք տուր, որ դու իմը կլինես, որ մենք կապրենք երջանիկ, որ մենք կը մեռնենք միասին։

—Իմ սիրելի իշխանս, վե՞ր կաց։ Հայրենիքին նուիրուած իշխանը չպիտի ծունկ չոքի մի

աղջկայ առաջ, որը արժանի չէ նրան։ Երկու սէր չի կարող լինել։ Դու պիտի սիրես հայրենիքդ ինչպէս սիրել ես մինչև հիմա և կեանքդ նուիրես նրան։

Այդ միջոցին առաջ եկաւ Գէորգ իշխանի զինուորներից մէկը և ասաց։

—Գէորգ իշխան, մենք կորանք, Գագիկ Արծրունու պալատում ճրագ վառուեցաւ, մի ինչ որ սև ուրուական դէպի նա վազեց և այնտեղ խլրտմունքի մէջ ձգեց, շտապեցէք, ապա թէ ոչ մենք ամենքս կորած ենք։

—Է՛յ, Ծառուկ, արի այստեղ, ասաց խրոխտ ձայնով տէր Սահակը իւր մէջ ժողովելով իւր բոլոր արիութիւնը։ Պէտք չէ կորցնել իրեն երբ վտանգի մէջ ենք։ Իշխան, պատսպարեցէք իշխանուհուն և շուտ դէպի մակոյկները շտապեցէք թէ չէ կորած ենք։

Գէորգը մի ակնթարթում ոտքի կանգնեց և նրանք Հեղինէի հետ առաջ անցան։

Երբ որ նրանք անցան այնտեղից որտեղից երևում էր Գագիկի պալատը, նայեցին դէպի այն կողմը և սարսռեցան։ Այնտեղից լսւում էին խառն խօսակցութեան ձայներ և ապա՝ քիչ յետոյ, լսուեց թմբուկի ձայնը, որ դղրդոց դցեց ամբողջ ամրոցում։ Թմբկահարը ուժգին զարկում էր թմբուկին և զարթեցնում պահապաններին։

Փախստականները շտապեցնում էին իրենց քայլերը, չնայած որ նրանց սրունգները դողում էին։ Նրանք արդէն լսում էին թէ ինչպէս իրա-

բանցում ընկաւ բերդի մէջ, թէ ինչպէս այնտեղ ճրագներով վազվզում էին մարդիկ, հայհոյում և ապա դէպի Հեղինէի բանտը շարժւում։ Պարզ էր, որ նրանց յայտնուել էր Հեղինէի փախուստը և ուր որ է նրանք փախստականների հետից պիտի ընկնէին։

Մի փոքր էլ առաջ անցան և ահա նրանց առաջ դուրս եկաւ մեծացած խումբը, որոնք առնելով Հեղինէին շտապեցին առաջ։ Այդ միջոցին բերդի կողմից ղէնքերի ձայները լսուեցան, որոնք դէպի իրենց էին գալիս։ Փախստականների դէմ մի ամբողջ գունդ էր գալիս։

—Ո՛ր կողմն են նրանք, գոռում էր նրանց առաջնորդը, որ նոյն ինքն Գագիկ Արծրունին էր։

—Այս կողմը, տէր, պատասխանեց մի ուրիշ ձայն և դէպի փախստականների կողմը ցոյց տուեց։

—Դէ, շուտ, Բոսակ, թէ չէ մաս մաս կը կտրատեմ քեզ, ասաց Գագիկը և մթութեան մէջ նրանք առաջ անցան։ Գագիկ Արծրունին արդէն մօտենում էր փախստականներին, բայց վերջիններն դեռ չէին հասել ծովափին։

—Տէր Սահակ, իշխանուհուն տարէք դուք, նստեցէք մակոյկները և ազատեցէք դրան, իսկ իմ մասին մի մտածէք։ Սրանց ճանապարհը հարկաւոր է բռնել, ապա թէ ոչ բոլորս կը կոտորուինք։

—Լաւ, բայց զգոյշ պահիր քեզ, ասաց տէր Սահակը և մի քանի մարդով առաջ անցաւ։

Գէորգ իշխանը և մօտ քսան հոգի կանգ առան տեղն ու տեղը։ Գագիկ Արծրունու գունդը առանց նկատելու դէպի իրանց էր գալիս, մի քանի րոպէ և նրանք կ'ընդհարուէին։

—Տղերք, երկու մաս եղէք և ազեղներդ լարեցէք, նշան տալուն պէս արձակեցէք և ապա սրերը պատրաստ պահեցէք։ Նրանց պիտի շփոթել մինչև Մարաիրոս հայրը ծովափից հեռացած կը լինի, իսկ յետոյ մեզ համար հեշտ է մակոյկները թռչելը։

Գագիկ Արծրունու խումբը արագ մօտենում էր։ Յանկարծ սարսափահար նա կանգ առաւ։ Մօտ քսան նետ դէպի այդ խումբը սլացաւ և պարկեցրեց մի քանիսին։

—Վայ մեռայ, կանչեցին մի քանի կողմից։

—Բոսակ, դու դաւաճանեցիր, մենք որոգայթի մէջ ենք, կանչեց Գագիկը առաջները կրճտացնելով։

—Ո՛չ, Տէր, այդ ես չդաւաճանեցի, այլ սպիտակ գլուխը, որ հետու չէ այստեղից, պատասխանեց Բոսակը։

—Առաջ ուրեմն...

Նետերի նոր տարափը թափուեցաւ դրանց վրայ և դարձեալ մի քանի կեանք խլեց։

Բայց Գագիկի խումբը առաջ էր վազում առանց ուշը դարձնելու նետերի տարափին և վերաւորների հառաչանքին։ Գագիկը դէպի ծովը էր շտապում, արգելելու իւր աղջկայ փախուստը։ Նա արդէն մօտ էր ծովափին. նա այնտեղից

լսում էր շատ խօսակցութիւն և խելացնորի նման դէպի այնտեղ էր վազում։

Նրա հոգին զուշակում էր, որ այնտեղ է իւր Հեղինէն, մի փոքրիկ չանք էլ և փախստականները իւր ձեռքումը կը լինին։

Յանկարծ Գէորգ իշխանի խումբը դրոհ տուեց և երկուսի բաժանուած, խառնուեց Գագիկի խմբի մէջ։ Մթութեան մէջ սկսուեց կռիւը, արիւնահեղ կռիւը։ Գագիկը մի վայրկեան կանգ առաւ, առիւծի նման մռնչաց և յարձակուեց իւր հակառակորդների վրայ։ Մթութեան մէջ նրանք չարդում, կոտորում էին իրար առանց հասկանալու, թէ ո՛վ ում է սպանում, թէ ո՞րն է թշնամին կամ ո՞րը բարեկամ. երբ մակոյկների թիակների ձայները լսուեցան և քիչ յետոյ ծովի միջից մի ձայն լսուեց որ կանչում էր.

—Գագիկ Արծրունի, դադարեցրո՛ւ կռիւը, դուր իրար մի՛ կոտորէք, մենք արդէն սանում ենք քո գոհը՝ աղջկադ...

Ինչպէս սառը ջուր թափես մարդու գլխին, այնպէս այդ ձայնը սարսռեցրեց Գագիկին։ Նա գգաց, որ իւր մարդիկը իրար էին կոտորում, այն ինչ Գէորգ իշխանը մի անգամ յարձակում գործելուց յետոյ ետ էր նահանջել և շատով մակոյկները նստել։

—Է՛յ, դադարեցրէ՛ք կռիւը, գոռաց նա, դէպի մակոյկները վազեցէք, հասէ՛ք, բռնեցէ՛ք նրանց, աղջկան տանում են...

—Տէր, ոչ մի հատ մակոյկ չկայ ծովի ափին, յայտնեց մէկը։

—Լուղնորդնե՛ր, դէպի ծովը նետուեցէք, աղջկանս ազատեցէք, ես լիառատ կը վարձատրեմ, ով Հեղինէին կը դարձնի, ասում էր Գագիկը և յուսահատութեամբ ձեռքերը կոտրատում։ Բայց ։չ մի կողմից յոյս չկար, ծովը ծփում էր և յորձանքները ժայռերին խփում, այն ինչ մակոյկները յաղող քամուց շարժուած սլանում էին առաջ, միշտ առաջ...

Թ.

Յնծում էր Հայաստանը, ցնծում էր ընդգաւոր քաղաքը... Ուրախութեան աղաղակները էին լսում հայ սրտերից, ցնծութեան երգեր հնչում հայ զինուորներից։ Թէ մեծ թէ փոքր, թէ տղան թէ աղջիկը, թէ գեղջուկը և թէ քաղաքացին օրհնում էին Թագաւորին, երկար կեանք մաղթում Աշոտ Երկաթին և հազար բարիքներ ցանկանում նրան։ Այսօր Աշոտ Երկաթը նոր կեանք էր մտնում, այսօր Հայաստանը նոր թագուհի էր գտնում։ Անմայր էր Հայաստանը, թափուր էր թագուհու թախտը և Գարգմանաց հզօր իշխանի՝ Սևադայի աղջիկը, այսօր պիտի բարձրանար այդ թափուր

թախտի վրայ և մայրութիւն անէր հայոց աշխարհին։

Ու հրճւում էր ժողովուրդը։ Երազդաւորը քաղաքը մի տեսակ կենդանութիւն էր տացել, փողոցները մաքրւում էին և ճանապարհները ծաղիկներով փռւում։ Իշխաններն ու իշխանազնուհիները երկրի ամեն կողմերից դէպի պալատն էին շտապում, իսկ զօրքերը գունդագունդ փողոցներում շարւում։

Մորթւում էին բազմաթիւ երինջներ, ոչխարներ, մի կողմից ներս էին տանում վայրի կենդանիներ, թռչուններ, իսկ միւս կողմից հողումը թաղած կարասների բերանները բանում։

Գինին և պաշարեղէնը առատութեամբ բաժանւում էին ժողովրդին, որոնք ուրախաձայն երգելով օրհնում էին թագաւորի կեանքը։ Փողոցներում շրջում էին ժողովրդական երգիչներ՝ աշուղներ, ամեն տեղ կանգ առնում և Աշոտ Երկաթի քաջագործութիւնները պատմում։ Մինչդեռ ժողովուրդը քէֆ էր անում, պալատից լսւում էր թմբուկների և տաւիղների ձայները, իսկ երբեմն գուսանների ձայնը։ Այնտեղ՝ պալատում, խրախճութիւն էին անում իշխանները, իսկ փողոցում ժողովուրդը։ Այրւում էր Երազդաւորը խարոյկների մէջ, այրւում էին շրջակայ բլուրները խարոյկներով, որոնք հանդիսին աւելի շքեղութիւն, աւելի պերճութիւն էին տալիս։

Ուրախ էր Աշոտ Երկաթը։ Նա նստած էր ոսկէ գահոյքի վրայ, իսկ նրա շուրջը թագուհին

իւր նաժիշտներով և գանազան մեծ ու փոքր իշխաններով։ Այդտեղ էին Գարդմանաց Սևադայ իշխանը, Ափխազաց Գուրգէնը, իւր եղբայր Աբասը, Գէորգ Մարզպետունի իշխանը, Յովհաննէս կաթողիկոսը եպիսկոպոսներով և Մարտիրոս վանահայրը։ Աշոտ Երկաթը գլխին դրած ուներ ոսկէ թագ, զարդարուած թանկագին քարերով, իսկ մէջքին կապած ուներ ոսկի, մարգարտայեռ և ականակուռ գօտի։ Վզին ձգած ուներ մանեակ, որ վերջանում էր լայն ձուաձև ոսկով, որի վրայ նկարած էր գառն, Քրիստոսի խաչափայտը ձեռքին և շրջապատուած էր ադամանդներով, իսկ ուսին ձգած ուներ սամոյր քուրք։ Ձեռքին, ճկոյթի վրայ անց էր կացրած մի թանկագին մատանի, իսկ գոտիից կախուած էր սուրը ոսկէ պատեանով և զարդարուած թանկագին քարերով։

Աշոտ Երկաթի մօտ, նոյնպէս ոսկէ գահոյքի վրայ, նստած էր թագուհին, ոսկէ թագը գլխին, իսկ ծիրանի, քնքոյշ ծածկոցը ուսերին։ Թագուհին շրջապատուած էր շատ իշխանազնուհիներով, որոնց մէջ գտնւում էին նաև երկու օրիորդներ՝ մէկը Աստղիկը՝ Դաւթի նշանածը, իսկ միւսը՝ Գագիկ Արծրունու դուստրը՝ Հեղինէն։ Դրանք էլ քէֆ էին անում և ուրախանում։ Մի խումբ օրիորդներ երգում էին երգեր, հնչում տաւիղներ և պարեր պարում։

Մինչդեռ ներսը՝ պալատում ուրախութիւններ էին անում. դուրսը՝ ուր շարուած էին հայոց

զօրքերը և մի գունդ արաբական զօրք, որոնց ուղարկել էր Իւսուֆը Թանկագին ընծաների հետ միասին, անհամբեր սպասում էին հրամանի, որ իրենք էլ սկսեն ուրախութիւնը, զուարճութիւնը, այդ իսկ միջոցին երեք մարդ զգուշութեամբ մօտեցան պալատին: Նրանցից երկուսը կոյր էին, կամ թէ կոյր էին ձևանում և ձեռքերին մի մի սազ ունէին, իսկ երրորդը դրանց առաջնորդն էր ծաղկատար երեսով, որի երեսին տեղ տեղ հազիւ բուսել էին մազեր: Կոյր մարդիկ բռնել էին նրա փեշերից և հետևում էին նրան:

Քանի որ չէին մօտեցել այնտեղ ուր կանգնած էին զօրքը և պահապանները երկու կոյրերը շատ գեղեցիկ քայլում էին և ամենևին չէին ցոյց տալիս թէ դրանք կոյր են, բայց հէնց որ մօտեցան դրանց, նրանք այնպէս էին ցոյց տալիս թէ դժուարանում են քայլեր դնելու:

Շարուած զօրքերին շուտով պինդ և խորհրդներ ուղարկուեցան և նրանք խառնուելով, խումբ խումբ սկսեցին իրենց քէֆը շարունակել: Այդ միջոցին ժողովրդի երեք երգիչները վստահ մօտեցան պալատին և ուզեցան նրես մտնել դահլիճ, բայց պահապանը արգելեց դրանց:

— Ի՛նչ, ո՞ւր էք գնում, չի կարելի նրես մըտնել, ասաց նա:

— Մենք երգիչներ ենք, ուզում ենք թագուհու կեանքը բարեմաղթել, նրան փառաբանել:

— Չէ, չի կարելի, մեր թագուհին կոյր երգիչների կարօտ չէ, հեռացէք այստեղից:

— Թող մեզ, մենք մեր թագուհու լուսաթաթախ երեսը գովենք, մեր սրտի ուրախութիւնը յայտնենք, ասաց երգիչների առաջնորդը և ուժով ուզում էր նրես մտնել:

— Ձեզ չեն ասում, որ չի կարելի, գոռաց պահապանը և նիզակը ճօճեց նրանց վրայ:

— Վայ, ինչ ես անում, ուզում ես սպանել, գոռաց աղիողորմ կերպով չեչոտ մարդը և մի քանի քայլ առաջ անցաւ: Նրա ձայնը լսուեցաւ դահլիճում, ուր իմանալով բանի էութիւնը, թագուհին հրամայեց նրես թողնել երգիչներին:

Երգիչները նրես մտան և սազերը լարեցին:

— Տեսնո՞ւմ ես, իշխան, ձընջաց չեչոտ մարդը կոյր երգչի ականջին, տեսնո՞ւմ ես Արծրուեաց օրիորդին:

— Տեսնում եմ, Քոսակ, այ թէ ուր է հասել նա, ձընջաց կոյր երգիչը, որ Անձևացեաց իշխան Ատովմն էր:

Նրանք սկսեցին երգել:

Հեղինէն չէր լսում նրանց երգը: Նա մտքով ամփոփուել էր քոսա մարդու վրայ և խորին ուշադրութեամբ նայում էր նրան:

Որքան նա նայում էր, այնքան զուսպութիւնը պատում էր նրան և երբեմն սարսռում նրա մարմինը: Նա կարծես ճանաչում էր այդ մարդուն. նա տեսել էր դրանց երեքին էլ, բայց թէ որտեղ չէր կարողանում մտաբերել:

Բայց երգիչները երկար չմնացին. նրանք դուրս գնացին պալատից և երբ մտան երազգա-

ւորի նեղ փողոցները, նրանք շատ ակնոցին քայլերը։ Կոյրերի աչքերը բացուեցան։

—Ախրիս, Բոսակ, ասաց երգիչներից մէկը՝ Ռշտունեաց իշխանը, լաւ բան հնարեցիր, թէ չէ մեզ պատառ ոչ կը թողնէր։

—Ի հարկէ։ Մեզ պէտք էր իմանալ ովքեր կան այնտեղ և իմացանք։ Հեղինէին էլ գտանք։

—Հա, գտանք, բայց այդտեղից դուրս կորզելն է դժուար։ Այժմ Աշոտ երկաթը մեծ յոյժ ձեռք բերեց վեհայանալով Գարդմանաց հզօր իշխանին և մի գունդ էլ Իւսուֆից օգնական զօրք առանալով, պատասխանեց Անձևացեաց իշխանը։

—Հըմ... Իւսուֆից օգնական զօրք... քթի տակ մրմռաց Բոսակը։

—Ի՞նչ հ՛ըմ... մի՞թէ սուտ է։

—Չէ, սուտ չէ, նրանց արդէն մենք տեսանք պատառի առաջ շարուած, բայց...

—Ի՞նչ բայց։

—Այն, որ դրանք «մերն են», պատասխանեց Բոսակը առանձին հպարտութեամբ։

—Ի՞նչպէս թէ մերն են։

—Այնպէս են մերը, որ դրանց այստեղ ուղարկողը Աշոտ սպարապետի դրդմամբ է ուղարկել, որ ժամանակին մեզ պէտք գան։ Իսկ Աշոտ սպարապետը հօ գիտէք, որ Աշոտ երկաթի վրայ աչքով աչք չունի։

—Լաւ է մտածել, ապրի նա, ասաց Անձևացեաց իշխանը և նրանք շուտով դուրս գալով քաղաքից մտան ձորը, ուր նրանց սպասում էին

երեք ձի։ Կեղծ երգիչները դէն շպրտեցին սազը, փոխեցին իրանց շորերը և նստելով ձիերի վրայ մթութեան մէջ շտապեցին առաջ, այն ինչ բլուրների վրայ դեռ վառվռում էին խարոյկները, իսկ Երազգաւոր քաղաքը աւելի և աւելի ընկղմւում էր ուրախութեան մէջ...

Ժ.

Ինչդեռ Երազգաւորում կատարւում էր հարսանեաց ուրախութիւնները, Դուին քաղաքում մի ուրիշ բան էր կատարւում։ Այնտեղ էլ երկրի զանազան կողմերից հաւաքւում էին իշխանները, բայց սրանք շուքով և փայլով չէին մտնում, այլ ամեն իշխան աշխատում էր չեզոք ճիպ, որ ժողովուրդը չճանաչէ իրեն, այլ ինքը աննկատելի կերպով ներս մտնի Դուին և աննկատելի դուրս գայ այնտեղից։ Գիշերից բաւական անցել էր։ Լուսաստղը արդէն երևում էր հորիզոնի վրայ և շտապ բարձրանում էր վեր իւր հետ բերելով բարերար լոյսը, երբ մի խումբ ձիաւորներ շտապում էին դէպի Դուին։ Խմբի առաջ գնում էր մի մարդ գեղեցիկ արաբական նժոյգի վրայ նստած, իսկ իւր եակից գնացողները նրա թիկնապահներն էին։ Այդ մարդը ինչպէս երևում էր ամբողջ գիշեր ճանապարհ էր եկել. ձիերն արդէն յոգնել էին,

բայց նա կրկին անխնայ մտրակում էր ձիուն և շտապում, որ դեռ լոյսը չծագած Դուինն մըտնի։ Հեռուից արդէն երևացին Դուինի պարիսպները։ Ամբի գլխաւորը նայեց և գոհունակութեան ժպիտը անցաւ նրա շրթունքների վրայ։

— Վերջապէս, ասաց նա և իր ձիու ընթացքը դանդաղացրեց։ Փոքր ժամանակ անցաւ և նա ներս մտնելով Դուինի լուռ փողոցները և ձիից իջնելով, ձին յանձնեց իր թիկնապահներից մէկին, իսկ ինքը ոտքով դէպի Աշոտ սպարապետի պալատը դիմեց։

Ներս մտաւ թէ չէ, Աշոտ սպարապետը, որ ըստ երևոյթին սպասում էր այդ հիւրին, գրկեց նրան և նրանք համբուրուեցան։

— Վերջապէս եկար, ծրքայ, ասաց Աշոտ սպարապետը, ես վաղուց սպասում էի քեզ։

— Ճշմարիտ է, ես մի փոքր ուշացայ թէև դիշերից վաղ պիտի լինէի այստեղ, բայց ասա, ո՞վ կայ այստեղ, Քոսակը եկաւ թէ՞ ոչ, ինչ լուր ունի Երազգաւորից։

— Քոսակին սպասում եմ րոպէ առ րոպէ։

— Ես այստեղ եմ, տէր, լսուեց յանկարծ Քոսակի ձայնը։

Աշոտ սպարապետը և նոր հիւրը, որ Գագիկ Արծրունին էր, ետ նայեցին և տեսան, որ Քոսակը դռներում կանգնած իր քոսոտ բեխերը էր սրում։

— Այդ ե՞րբ եկար, Քոսակ, սատանայ չէ՞իր, ասաց Աշոտ սպարապետը։

— Չէ, սատանայ չեմ բայց սատանից շատ բան դիտեմ, հենց այս րոպէիս Երազգաւոր քաղաքից եմ գալիս։

— Իսկ Անձևացեաց և Ռշտունեաց իշխանները ո՞ւր մնացին։

— Նրանք այս րոպէիս կը լինեն այստեղ։

— Հ՛ը, ի՞նչ տեսար, աղջիկս այնտե՞ղ է, ի՞նչ է անում։

— Այնտեղ է, տէր, այնտեղ, Աշոտ Երկաթի հարսանիքում քէֆ է անում և պարում։

— Անիծո՛ւմ դա, մրմրաց Գագիկը և աչքերը կատաղութեամբ լցուեցին։ Շուտով ժողովուեցան այդտեղ և միւս իշխանները՝ Անձևացեաց Ատոմ իշխանը, Ռշտունեաց իշխանը, Ուտիացւոց վրայ Աշոտ Երկաթից վերակացու կարգուած Մովսէսը և ուրիշները։ Եւ երբ լրացաւ ամբողջ դաւադիր իշխանների թիւը, այդ ժամանակ նրանք փակուելով մի սենեակում խորհրդի նստան։ Ի՞նչ էին ուզում դրանք, ինչի՞ դէմ էին սարքում դաւադրութիւն, իրենց օրինական թագաւորի, Աշոտ Երկաթի դէմ։ Նրանք չէին ուզում նրան թագաւոր տեսնել, սև նախանձը նրանց կուրացրել էր և դրանք Աշոտ Երկաթի ոտի տակը փորելով իրենք էլ պիտի ընկնէին նոյն վհի մէջ և օտարին ուրախացնէին։ Եւ օտարը հեռու չէր։ Իւսուֆը աչքը չէր հեռացնում Հայաստանից, այդ պատառը շատ քաղցր էր բայց դեռ ժամանակ չունէր դորանով զբաղուելու, նա ուրիշ գործով էր զբաղուած։

—Տեւորք, մի մոռանաք, որ Աշոտ Երկաթը իւր անզօր օրքերի վրայ վատահացած շուտով արշաւելու է Դուինի վրայ, որ սրան էլ կողբի օրը գցի, ասաց Ռշտունեաց իշխանը։

—Թող գայ, մենք պատրաստ ենք նրան ընդունելու, պատասխանեց Աշոտ սպարապետը, բայց դու ճիշտը լսեցիր։

—Ինձ հաղորդեց Քոսակը, նա ինքը իւր ականջով էր լսել, ինչպէս Աշոտ Երկաթը սպառնացել էր Դուինը հող ու մոխիր դարձնելու։

—Ճանկալի է, ասաց Աշոտ սպարապետը, մեր նախապատրաստած Իւսուֆից ուղարկուած գունդը նրա հետ կը լինի, իսկ կռուի ամենաթունդ տեղը իւր սուրը նրա դէմ կը դարձնի, այնուհետեւ մեզ ճնում է մեր գնդերով չարդել։ Գագիկ Արծրունին Ռշտունեաց և Անձևացեաց իշխաններով թող դարանի մանեն Դուինից դուրս իսկ մենք կը մնանք Դուինում և որոշեալ ժամին, երկու կողմից էլ յարձակում գործելով, թշնամուն մեր մէջ կը չարդենք։ Նա էլ չի կարող ազատուել, իւր բանակում իրեն հակառակորդ կունենայ արաբական գունդը, իսկ չորս կողմից մենք կը լինենք շրջապատուած։

—Ես պատրաստ եմ իմ գնդով ներկայ գրաւնուել նշանակուած տեղը, պատասխանեց Գագիկը։

—Եւ մենք, կրկնեցին միւսները։

—Ազատեցէք աղջկանս և ես պատրաստ եմ

ամեն օգնութիւն անելու, ասաց Գագիկը դարձեալ։

—Հա, ազատել ասելը հեշտ է, բայց կատարել դժուար։ Նա այժմ առիւծի ճանկն է ընկել, իսկ առիւծի ճանկից ազատելը հեշտ չէ, ասաց Սաւոմը։

—Բայց մի՛թէ պիտի թողնենք, որ Աշոտ Երկաթը ամբողջ Հայաստանը տակն ու վրայ անի, մեր իրաւունքները խլի, մեր գրկից մեր որդոցը դուրս կորզի։

—Համբերութիւն և հեռատեսութիւն է պէտք, ախքայ, ասաց լուրջ դէմքով Աշոտ սպարապետը, ներկայ հանգամանքում շատ դժուար է երես առ երես նրա դէմ դուրս գալ քանի որ նրա ոյժը կրկնապատկուեց։ Դուք ճանաչում էք Գարդմանաց Սահակ իշխանի զօրութիւնը. դրա ամբողջ զօրութիւնը շուտով մեր դէմ է գալու։ Այդ զօրութիւնը դրուած է Աշոտ Երկաթի ոտքերի տակ և մենք պիտի աշխատենք կամ չլսաել այդ զօրութիւնը և կամ չախչախել։ Երես առ երես չախ-չախել չենք կարող, իսկ չլսաել կարելի է։

—Ի՞նչպէս։

—Ահա թէ ինչպէս։ Նախ և առաջ մենք պիտի մեր կողմը ձգենք Աշոտ Երկաթի եղբօրը՝ Աբասին և Ափխազաց Գուրգէնին. դրանց զօրութիւնները մեզ անհրաժեշտ են, իսկ յետոյ փեսայի և աներոջ մէջ բաժանութիւն ձգել. վերջինս գործը դեռ վաղ է, ժամանակ է պէտք,

իսկ առաջինների մասին չգիտեմ ինչ կասեն Անձևացեաց և Ռշտունեաց իշխանները։

— կարող էք վատահ լինել մեզ վրայ, մենք արդէն տեսնուեցանք նրանց հետ։ Որոմն արդէն ցանուած է և նրանք շուտով մերը կը լինին, պատասխանեց Աւռովմը։

— Լաւ բան է, եղբայրն եղբօր դէմ։

— Այդպէս էլ պէտք է, բոլորովին հին ծառակ պիտի անել որ կործանուի, փչանայ աշխարհիս երեսից Բագրատունեաց ցեղը, մրմրաց Գագիկը։

— Եւ կ'ոչնչանայ, արքայ, մի քանի ժամանակից յետոյ Աբասն ու Գուրգէնը ինձ հետ կը լինեն և այն ժամանակ վայ Աշոտ Երկաթին. նրանց ձեռքով ես սպանել կը տամ նրան և երբ թափուի Աշոտ Երկաթի արիւնը, այն ժամանակ միայն ես կը մոռանամ կողը գիւղաքաղաքիս սէրմունքը։

— Իսկ աղջիկս, կրկնեց Գագիկը։

— Սկզբիկդ քո ձեռքում կը լինի, երբ Աշոտ Երկաթը այլ ևս չի լինի և նրա աթոռանիստ քաղաքը՝ Երազգաւորը մոխրի և ծխի մէջ կը կործանուի, ասաց Աշոտ սպարապետը և նրանք շուտով ցրուեցան, որպէս զի ամենքը իրենց գնդերով շտապեն դէպի Դուին։

ԺԲ.

Աշոտ սպարապետը ժողովի ցրուելուց յետոյ սկսեց Դուինը ամրացնել, զօրքերը կարգի ձգել։ Նա ճանաչում էր Աշոտ Երկաթին, գիտէր, որ առաջին հարուածը իրեն պիտի դիպչէր ու նա իւր ոյժի վրայ չվստահացած, ամբարները պաշարով էր լցնում, որպէս զի երկար ժամանակ կարողանայ պաշարմանը դիմանալ, եթէ իրեն դաշնակից իշխանները իրենց օգնութիւնը չհասցնեն։

Երեկոյեան դէմ էր, արևը արդէն թեքուել էր դէպի մուտքը, երբ Աշոտ սպարապետին յայտնեցին, որ հորիզոնում գունդեր են երևում։

Աշոտ սպարապետի սիրտը տրոփաց։ Նա դուրս եկաւ և նայեց հեռուն՝ հորիզոնի վրայ, դէպի Երազգաւոր տանող ճանապարհը։ Այնտեղ ահագին փոշու ամպ էր բարձրանում, որ շտապով դէպի Դուին էր արշաւում։

Երկար, շատ երկար նայեց Աշոտ սպարապետը փոշու այդ ամպին և նրա սիրտը մթագնեց։ Փոշու ամպը մօտենում էր և նրա մէջ երևում սև, շարժուն կէտեր, իսկ նրանց գլխին փայլուն սաղաւարտներ։ Բայց ինչքան շատ էին նրանք, ահաւոր, որոնք մի ակնթարթում կարող էին կուլ տալ Դուինը և մոխրի կոյտեր միայն

դարձնել: Նա նայում էր նրանց և մի տեսակ անհասկանալի վրդովմունք պատում էր նրա սիրտը, նա չափում էր իւր դէմ եկող զօրութիւնը և սարսռում էր: Ահաւոր և զարհուրելի էր այդ զօրութիւնը:

—Մի անգամ էլ զարկուենք, մի անգամ էլ չափենք մեր զօրութիւնները տեսնի՛ Երկաթ և կամ դու՛ կամ ես... Մի խնձորին երկու տէր չի կարող լինել, այդ գահը ես էլ եմ ուզում, ասաց նա և լուրջ ուշադրութեամբ սկսեց դիտել մօտեցող գնդերին, որոնք այժմ պարզ կերպով նշմարւում էին:

Նրա դէմքի մութ մռայլը մի փոքր պարզուեցաւ, երբ նկատեց առաջին գնդի դրօշակը: Այդ դրօշակը քրիստոնէական դրօշմ չէր կրում, այլ մահմեդական: Այդ գունդը Իւսուֆից ուղարկուած գունդն էր, որ կանգ առաւ արևմտեան դռների մօտ գտնուող բլրակի վրայ և այնտեղ սկսեց իւր վրանները խփել: Աշոտ սպարապետը իւր հայեացքը դարձրեց երկրորդ գնդի վրայ և նայեց դրօշակին: Այդ դրօշակը կրում էր Բագրատունեաց դրօշմը, որին առաջնորդում էր ինքը թագաւորը՝ Աշոտ Երկաթը, որոնք մօտենալով արաբական գնդին առանց կանգ առնելու անցան առաջ և բռնեցին Դուինի արևմտեան կողմը: Աշոտ սպարապետը վրէժխնդրութեան մի այնպիսի մոլի հայեացք ձգեց դէպի այդ կողմը, որ կարծես այդ հայեացքով ուզում էր ոչնչացնել, ջնջել աշխարհի երեսից առելի այդ գունդը

և նա բռունցքը բարձրացնելով դէպի դա՝ սպառնաց:

—Դու՛, Երկաթ, կը խորտակուես իմ ձեռքից, գունդերդ կ'ոչնչանան և երբ կընկնես ձեռքըս, այն ժամանակ վա՛յ քեզ...

Բայց նրա խօսքը կիսատ մնաց բերանում, նրա ուշադրութիւնը գրաւեց մի ուրիշ գունդ, որ աւելի զօրաւոր էր, աւելի ահաւոր. այդ գունդը Գարդմանաց Սահակի գունդն էր, իսկ նրանից յետոյ գարձեալ գնդեր, իսկ ամենից վերջը մի ուրիշ փոքրիկ գունդ, որը աւելի սարսռեցրեց ու շփոթեց քան առաջին գնդերը: Այդ գունդը տեղաւորուեց Աշոտ Երկաթի և Սահակի գնդերի մէջ տեղը. աւելի ապահով տեղ և այնտեղ շուտով ծածանուեցաւ Արծրունեաց արծուազլուխ դրօշը. որը ցնցեց Աշոտ սպարապետի ուղեղը:

Նա աչքերը ճմլրեց, իւր աչքերին չէր հաւատում, մի՞թէ ինքը խաբւում է և ուրիշի դրօշակը Արծրունեաց դրօշակի տեղ ընդունում: Բայց չէ, այնտեղ՝ հեռուում, երեկոյեան մեղմ քամուց ծածանւում է Արծրունեաց դրօշը. նա լաւ է ճանաչում այդ տոհմի նշանը, միմիայն այս դրօշակը սև գոյն ունի, կարծես սուգ է պահում այդ ցեղը, ո՞ւմ համար, ինչի՞, ինչ պատճառաւ այդ դրօշակը ծածանւում է այդտեղ քանի որ Գագիկ Արծրունին իրեն խօսք տուեց օգնելու...

Նա ընկաւ մտածութեան մէջ և երկար ժամանակ աչքը չէր հեռացնում նրանից, մինչև որ

կամաց կամաց մուխը իւր սև քողը տարածում էր շուրջը և ամեն բան ծածկում նրա աչքերից։ Տեղ տեղ սկսում էին վառուել խարոյկները, որոնք քանի գնում շատանում էին և Դուբին քաղաքի շուրջը խարոյկների փունջ կազմում։ Այդ ժամանակ Աշոտ սպարապետը շարժուեց տեղից և սկսեց սուուգել պատնէշների վրայ հսկող պահապաններին, ուր արթուն հսկում էին նրանք և իրենց գանդաղ քայլերով շրջում պատնէշների վրայ։

—Տեսնում ես ինչ շատ են, ասում էր մի պինուոր միւսին, ցոյց տալով դէպի Աշոտ Երկաթի բանակը։

—Հա, շատ են, պատասխանեց միւսը։

—Վաղը կռիւը տաք կը լինի, շարունակեց առաջինը։

—Այո, տաք կը լինի, մեկի դէմ տասը եթէ...

—Ի՞նչ եթէ...

—Եթէ մեզ օգնութեան չգան։

—Ո՞վքեր պիտի օգնութեան գան։

—Ասում են շատ իշխաններ, որոնք եռևից պիտի ծեծեն, իսկ մենք առջևից։

—Իսկ մեզ ինչ օգուտ...

—Ոչինչ։ Մենք կը սպանուենք իսկ մեր ընտանիքը որբ կը մնայ, որանից էլ լաւ օգուտ...

—Սս... սպարապետը գալիս է։

Նրանք լուռ կացան։ Աշոտ սպարապետը անցաւ դրանց մօտով և ուղում էր բարձրանալ պատ, երբ մեկը առաջը կտրեց։

—Տէր, ասաց նա։

Աշոտ սպարապետը նայեց նրան և ուրախ ժպիտը անցաւ նրա դէմքի վրայ։ Նա բռնեց նրա ձեռքը և նրանք ներս մտան։

—Ասա, Գոռակ, ինչ լուր ունես։ Ես քեզ անհամբեր սպասում էի։

—Լաւ լուրեր, տէր, պատասխանեց Գոռակը։

—Ի՞նչպէս, իսկ այն Արծրունեաց սև դրօշակը ինչ է նշանակում։

—Դատարկ բան։ Որսն իւր ոտովն է եկել մեզ մօտ։ Այդտեղ Հեղինէն է գնում և սպատակ դևից կազմած մի փոքրիկ գունդ։

—Մի՞թէ ինքդ տեսար այդ բոլորը։

—Ես բոլորը լրտեսեցի։ Աշոտ Երկաթը այնպէս վստահ է իւր յաղթութեան վրայ, որ ամենևին նշանակութիւն չէ տալիս ձեզ։ Նա արդէն Դուինը իւր ձեռքումն է համարում և մի տեսակ արհամարանքով է վերաբերում և այդ պատճառաւ էլ ամեն բան անփոյթ է թողել։

—Այդ մեզ համար լաւ է։

—Վաղը նա յարձակում չի գործի, ինչպէս երեւում է նա մի քանի օր ուզում է հանգստանալ։

—Շատ լաւ է անում. եթէ վաղը նա յարձակում չի գործի, գիշերս մենք դուրս կը գանք Դուինից և կը հալածենք նրանց։ Յայտնիր Գագիկ Արծրունուն, որ նա էլ պատրաստ լինի, հէնց որ բազուկը մեր գլխի վրայ կը լինի կանգնած, այն ժամանակ մենք կըսկսենք կռիւը։

—Շատ լաւ, ես այս բոպէիս կը չքանամ այստեղից և Գագիկի մօտ կ'երևամ։

—Իսկ արաբական գունդը, հարցրեց Աշոտ սպարապետը։

—Արաբական գունդը հաստատ է իւր խօսքին, կռուի տաք ժամանակ նրանք մեր կողմը կանցնեն։

—Լաւ ուրեմն, դու գնա, ժամանակ մի կորցնիլ։

Քոսակը գլուխ տուեց և շուտով անյայտացաւ։

ԺԲ.

Ամպամած և տխուր օրին յեսևեց անձրևային գիշերը...

Վհատ էր երկինքը, տխուր էին երկու բանակների սրտերը, որոնք աչալուրջ հրամայում էին իրար։ Լաց էր լինում երկինքը, լաց էին լինում զինուորներից շատերը և վերջին ճնճղուկը բարևն ասում երկրին։ Նրանք գիտէին, որ իրենցից շատերը այդ գիշեր պիտի պարկէին այդտեղ, անշարժ, յաւիտենական քնով, առանց կարենալու տեսնել վաղուան արևը, առանց արժանանալու իրենց սիրելիների տեսութեանը։ Ինչու համար, ինչ պատճառաւ, այդ նրանք չէին հարցնում, այլ կուրօրէն գնում էին իրենց կեանքը վայր դնելու այնտեղ՝ ուր իրենց համարիւնների արիւնը պիտի թափուէր... Բայց մի՞թէ մեր Տէրը՝ Յիսուս այդ քարոզեց, մի՞թէ Նա մեզ սովորեցրեց իւրայինների արիւնը թափել, իրար ոտնատակ տալ, ոչնչացնել ամբողջ Հայաստանը և նրան ձգել սարկութեան անարգ լծի տակ... այդ չէին հարցնում նրանք։ Զինուորների սրտերը տրոփտրոփում էին, նրանք սրում էին նիզակները, որպէս զի աւելի հեշտ ծակեն մարդկանց մարմինները, սրում էին թրերը աւելի շատ մարդոց կոտորելու համար և լուռ հրամանի էին սպասում, որ սկսեն արեան հեղեղներ թափելը և այդ հրամանը հեռու չէր։ Աշոտ սպարապետը զէնք ու զրահի մէջ կորած, նստած իւր արաբական նժոյգի վրայ, զգուշութեամբ մօտենում էր իւր գնդերին և հրաման տալիս պատրաստուելու քաղաքից դուրս գալու և յարձակում գործելու թշնամու բանակի վրայ։ Զօրքերը խումբ խումբ կանգնում էին, գնդեր կազմում և լուռ սպասում։ Մի վերջին նշան էր պէաք, որ նրանք զգուշութեամբ քաղաքի դռներից դուրս գնային և անակնկալ կերպով թշնամու վրայ յարձակուէին։

Բայց Աշոտ սպարապետը դեռ ուշացնում էր վերջին հրամանը տալու։ Նա պղտոր հայեացքով նայում էր դէպի Աշոտ Երկաթի բանակը, ուր խարոյկները մեծ քանակութեամբ դեռ վառվում էին և իրենց թոյլ ցոլմունքները տարածում գիշերային խաւարի մէջ։ Աշոտ Երկաթի

քանակում դեռ լուսաւորութիւն էր տիրում, այնտեղ դեռ արթուն էին, հարկաւոր էր սպասել փոքր ինչ, մինչև կը հանէր խոր գիշերը և թշնամու բանակում կը տիրէր խորին գերեզմանական լռութիւնը...

Բայց երկինքը դեռ լալիս էր և անօսր անձրևի կաթիլները քնքոյշ շշնջիւնով ընկնում էին գետին և հողի մէջ ծծւում...

— Իշխան, տեսնում ես Աշոտ Երկաթի բանակում ինչպիսի լուսաւորութիւն է տիրում. նա խրախճանում է և հանգիստ քէֆ է անում, ասաց Աշոտ սպարապետը դիմելով իրեն մօտ կանգնած իշխանին:

— Այդ քէֆը երկար չի քաշիլ, տէր, մեր կարիճները հարամ կանեն դրան:

— Հա, մեր բաղաից անձրևը մեզ օգնում է: Հողը կը փափկանայ և ձիերի ու մարդոց ոտքերի ձայնը հեռու տեղ չի տարածուի: Նրանք կիմանան այն ժամանակ, երբ արդէն ցրիւ կը տանք նրանց բանակը:

— Այո, յաղթութիւնը մերն է, եթէ նրանք մեր հոտը չառնեն:

— Նրանք դեռ գուարճանում են և մեզ վրայ մտածելու ժամանակ չունին:

— Բայց տես, խարոյկների թիւը հետզհետէ պակասում է, բանակները կարծես քնած լինին, միմիայն Աշոտ Երկաթի և Հեղինէի գնդերի մէջ է երևում լուսաւորութիւնը: Պէտք է շտապել, կէս գիշեր է, մինչև տեղ կը հասնենք, այնտեղ

ամեն ինչ քուն կը լինին մտած: Կը հրամայէ դուրս գնալու նշանը տալ, հարցրեց իշխանը:

— Տուր, բայց զգոյշ:

Իշխանը հեռացաւ. իսկ Աշոտ սպարապետը դեռ անշարժ կանգնած էր իւր տեղում և դիտում էր հեռուն:

Տիրում էր ահարկու, խորհրդաւոր լռութիւն: Աշոտ սպարապետը իւր փառքի վերայ էր մտածում, նա արդէն երևակայում էր իրեն բազրատունեաց գահի վրայ բազմած, երբ յանկարծ Արծրունեաց Գագիկը միտն ընկաւ և ինքն իրան հարցրեց. «իսկ նա... նա էլ կը խորտակուի Երկաթի նման և ես միայն տիրապետողը կը լինեմ, մինչև այժմ երեք թագաւոր էինք, այսուհետև ես միայն կը լինիմ»...

Այդ ժամանակ լսուեց թմբուկի խուլ, բայց սարսռեցնող ձայնը, որ սարսափի չափ ցնցեց Աշոտ սպարապետի մարմինը և ընդհատեց նրա մտածութեան թելը:

— Պէտք է շտապել, ասաց նա և ցած իջաւ բարձրութիւնից:

Անցաւ մի փոքր ժամանակ և զօրքերը գունդ գունդ առաջ անցան և կորան մթութեան մէջ...

ԺԳ.

Էյա գիշերից անց էր...

Անձրևը դեռ չէր դադարել, նա շարունակում էր իւր տաղտկալից ողբը, այն ինչ Աշոտ Երկաթի բանակը հեռուհեռե խոր քնի մէջ էր ընկղմուում: Տեղ տեղ միայն դեռ վառվում էին խարոյկները, որոնց առկայծող լոյսերը չդիմանալով անձրևի տարափին, մօտ էին հանգչելու: Նրանց շուրջը միայն երևում էին պահապանների թթուած դէմքերը, որոնք այլ ևս ուշք չդարձնելով խարոյկների հանգչելուն, ամեն կերպ աշխատում էին քունը վախցնելու, որ ամեն ոյժով ընկճում էր նրանց և ստիպում քաղցր նիրհի մէջ ընկղմուելու: Նրանցից մի քանիսը շրջում էին դանդաղ և հաւասար քայլերով և ծանրացած աչքերով դէպի Դուին քաղաքը նայում: Բայց մթութեան մէջ ոչինչ չէր երևում, ամեն ինչ խաղաղ էր և լուռ, անձրևի շրփշրփալու ձայնն էր միայն, որ խանգարում էր ընդհանուր մեռելային լռութիւնը...

Քնած էր քաղաքը, քնած էր թշնամին, էլ ինչու զուր տեղը լարել ջղերը և զուր թշնամու բանակը դիտել ու Աշոտ Երկաթի պահապանները մինը միւսի ետևից դադար էին առնում շրջելուց և մի մի անկիւն գոնելով ընկղմուում

էին քնի քաղցր գրկի մէջ և ապա, քիչ ժամանակից յետոյ, տարուում հեռու և հեռու դէպի սիրելիների գիրկը: Դրանց երեսին շաղում էր անձրևը և իւր մեղեդին նուագում, բայց նրանք ոչինչ չէին զգում և ոչինչ չէին իմանում: Քնած էր երկիրը, քնած էր Աշոտ Երկաթի բանակը, բայց քնած չէր Հեղինէն, որի վրանի գլխին ծածանում էր Արծրունեաց սգաւոր դրօշակը: Սուգ էր պահում նա իւր դաւաճան հօր համար. սուգ էր պահում նա Արծրունեաց ցեղի համար, որ այնպիսի ամօթապարտ դեր էր կատարում պատմութեան մէջ:

Եւ թուլակազմ, քնքոյշ օրիորդը այդ գիշեր կոտրած էր զէնք ու զրահի մէջ և մի խումբ կարիճ գնդի գլուխ անցած շտապել էր կուռի դաշտը մտնելու, կռուելու իւր հարազատ հօր դէմ և իւր արեան գնով սրբելու այն ամօթալից արատը, որ դնում էր Գագիկ Արծրունին իրենց ցեղի վրայ:

Նա գիտէր, նրան տեղեկացրել էին, որ իւր հայրն էլ միացած է Աշոտ սպարապետի հետ, նոյն տեսակ դաւաճանի, նոյն տեսակ փառասէրի հետ, ինչպէս իւր հայրն էր, բայց թէ նա տեղեկութիւն չունէր, որ իւր հայրը դարան է մտած իւր գնդի եռանը, այն ինչ նա կարծում էր թէ նա փակուած է Դուին քաղաքում:

—Վաղը, հէնց որ արտուտները կերգեն իրենց մեղեդին, հէնց որ կակուղ առաւօտուայ շողքը ընկնել, մենք պիտի սկսենք յարձակումը, եթէ անձնատուր չի լինի Աշոտ սպարապետը,

մտածում էր Հեղինէն, ո՜հ, ինչպէս ես ապաստում եմ այդ առաւօտուն, ցանկալի այդ ժամին, այն ինչ գիշերը երկար է տեւում, շա՜տ երկար... Մերկացրած սրով ես կը մտնեմ թշնամու ամենախիտ շարքերի մէջ և կը չախչախեմ նրանց։ Դաւաճանին փրկութիւն չկայ և վա՜յ նրան, ով իմ սրի բերանը ընկնի... իսկ եթէ հայրս հանդիպի՞... Հա՞յրս... դէմ առ դէմ... երես առ երե՜ս...—փրկութիւն չկայ և դորան։ Կամ ես կամ հայրս։ Կռուի ժամանակ չկայ հայր և դուստր, այնտեղ միայն մի սուրբ գործ կայ, որ վեր է քան ծնողը և այս սուրբ գործը հայրենիքին ծառայելն է։ Օ՜ն, քաջացիր իմ սիրտ, Թող կանացի երկչոտութիւնդ և առիւծի սիրտ ստացիր...

Հեղինէի խօսքերն ընդհատուեցան։ Նրա վրանը ներս մտաւ մի ուրիշ օրիորդ, որ նոյնպէս զէնք ու զրահի մէջ էր։

—Իշխանուհի՛, դու դեռ աղջիկն ես, չե՞ս քնել, արդէն կէս գիշեր է, պէտք է քնել, որ վաղը այժ ունենանք, ասաց ներս եկողը։

—Հա՛, Աատիկ, ճիշտ է քո ասածը, բայց ինչպէս երեւում է դու էլ չես քնել, պատասխանեց Հեղինէն և մի տեսակ կարեկցական հայեացք ձգեց Աատիկի վրայ, որ սևերի մէջ էր կորած։ Նա դեռ պահում էր իր նշանածի՝ Դաւթի սուգը։

—Բայց իշխանուհի՛, ինչքան աշխատեցի քընել, չկարողացայ։ Մի տեսակ անհասկանալի յոյզ պատում է սիրտս և ես սաստիկ շփոթուած եմ։

—Ձգէտք է շփոթուել, քոյրիկս, երբ վտանգի առաջ ենք։ Մի՞թէ մահը մեզ համար մեկ չէ։ Վաղ թէ ուշ մենք պիտի մեռնենք, աւելի լաւ է պատուով մեռնել քան անարգանքով։

—Ճիշտ է, իշխանուհի, բայց ինչքան մենք քաջասիրտ լինենք, երկիւղը դարձեալ տիրում է մեր արտերին։ Այս գիշեր մանաւանդ անհասկանալի դող է անցնում մարմնովս և կարծում եմ թէ ահա ուր որ է թշնամին վրայ կը տայ և ամբողջ բանակը կը ցրուի։

—Մեղմ Աատիկ, դուր դու ինձ սիրելով կռուի դաշտն իջար։ Երկիւղը, ինչպէս երևում է, պաշարել է քեզ։ Ինձ մի նայիր, հոգիս, դու կռուի մէջ մի մտնի։ Ես գնում եմ դէպի վտանգը։

—Ո՛չ, սխալւում ես, ուր դու, այնտեղ և ես։ Ի՞նչու դու կարծում ես, թէ ես վախենում եմ վտանգից։ Վաղը կը տեսնես, որ ես քեզանից ետ չեմ մնայ և քեզ հետ միասին կռուի խիտ տեղը կը մտնեմ։ Ինչպէս քեզ համար ատելի են դաւաճանները, այնպէս և ինձ համար։ Ինչպէս դու ես սիրում հայրենիքդ՝ այնպէս և ես։ Կը մեռնես դո՛ւ, կը մեռնեմ և ես։ Բաւական էր ինչքան սուգ պահեցի, այժմս հարկաւոր է արիւնով քաւել։ Աատիկը խօսում էր ոգևորութեամբ, նրա աչքերը վառւում էին և երեսը բորբոքւում։

—Ապրի՛ս, իմ քոյրիկ, քո սրտի մէջ նստած է վեհ և ազնիւ հոգի, ես, գրկուենք, համբուրուենք, գուցե թէ վերջին անգամ։

Նրանք գրկուեցան և ջերմ, շատ ջերմ համ-

բուրուեցան, կարծես այդ իսկ րոպէին նրանք յաւիտեան բաժանուելիս լինէին իրարից։

Երկուսն էլ յուզուած էին և արտասուքի կաթիլները լուռ գլորւում էին երկուսի աչքերից։ Ի՞նչէ էին լալիս նրանք, ինչ վիշտ կեղեքում էր նրանց սիրտը, քանի որ նրանք հասատատապէս վճռել էին մեռնելու — յայտնի չէ։ Բայց թէ նրանք անհուն սիրով սիրելով միմեանց, ամեն մէկը նրանցից վախենում էր միւսին կորցնելու, ահա այդ էր նրանց սրտի վիշտը, այդ էին ասում նրանց արտասուալից աչքերը և տխուր, սիրտ պատառող հայեացքները։ Հեղինէն սիրում էր Աստղիկին։ Նա վանայ բերդից փախուստ տալուց յետոյ, մի քանի ժամանակ ապաստանել էր Հռիփսիմէի վանքում, ուր անց էր կացնում Աստղիկը իւր օրերը։ Այդտեղ նրանք ծանօթացան և սիրեցին իրար։ Այդտեղ նրանք դաշն կապեցին չբաժանուել իրարից և միասին ապրել, միասին մեռնել։ Հեղինէն յայտնեց Աստղիկին իւր սրտի գաղտնի խորհուրդը, այն է՝ վրէժ առնել դաւաճաններից և իւր հօրից, իսկ Աստղիկը առանց մի բառ անգամ արտասանելու հեռևեց նրան։

Աշոտ Երկաթը թէև հակառակ էր նրանց կռուի դաշն իջնելուն, բայց զիջանելով Հեղինէի թախանձանքներին թոյլ տուեց հեռևելու իրեն։

— Բաւական է ինչքան լաց եղանք, սիրելի Աստղիկ, այժմ հարկաւոր է մի փոքր հանգստանալ, ընդհատեց Հեղինէն։

— Ես չեմ կարողանում քնել, իշխանուհի, ուզում եմ աչքս խուփ անել, բայց քունը մօտ չի գալիս։ Դու քնիր, իսկ ես պահպանութիւն կանեմ քեզ, կը նայեմ ո՞ր սիրուն դէմքին և կը հիանամ, այդ ինձ արդէն բաւական է։

— Եթէ այդպէս է, ես էլ չեմ քնի։ Վաղուց է, որ իմ քունն էլ կորուել է։ Նստիր ուրեմն և միասին լուսացնենք, թող պահապանները պահպանութիւն անեն մինչև առաւօտ։

— Բայց նրանք կարծես բոլորը քնած լինեն, իշխանուհի, ոչ մի տեղ խաղրոյկ չի վառւում, ոչ մի տեղից պահապանի քայլերի ձայներ չի լսւում։

— Անձրևն է խանգարում, նրանք երևի մի տեղ կուչ են եկել և լուրջ հսկում են։ Թշնամին չի համարձակուի այս մէջ գիշերին անհանգստացնել մեզ։

— Իսկ եթէ նա այս րոպէիս յարձակուի, հարցրեց Աստղիկը և բռնեց իւր սիրտը, կարծես թէ նրան ասում լինէին թէ ահա ուր որ է կը լսուի նրանց դուռ ձայնը և կը սկսուի կոտորածը։

— Կը յարձակուին՝ մենք էլ կը չարդենք նրանց։ Ի՞նչ օգուտ կը տանեն այս ահեղ բանակից։ Մինչև մեզ հասնելը երեք զօրաւոր դուռնդ կայ առաջները։

— Հա, բայց արաբական դունդը կարող է դաւաճանել մեզ։

— Հոգ չէ։ Ապրի Աշոտ Երկաթը, նա միայն իւր գնդով բաւական է իւր թշնամիներին, բացի դրանից վաղը, առաւօտ, այստեղ կը լինին

հայը Մարաիրոսը և Գէորգ իշխանը իւրեանց գնդերով։

—Ո՞ւր է Գէորգ իշխանը...

Խօսքը կիսատ մնաց Աստղիկի բերանում, երբ նրա ականջին հասան ձիերի և մարդոց ոտքերի ձայները։

—Իշխանուհի, ձիերի ոտքերի ձայներ եմ լսում, չլինի թշնամին է գալիս։

Երկուսն էլ սկսեցին ականջ դնել։ Ցիրաւի լսւում էր ձիերի ոտքերի զգոյշ դոփիւններ և այդ ձայները քանի գնում աւելի և աւելի պարզ էին լսւում։

—Թշնամին է, կանչեց Հեղինէն և վեր թռչելով տեղից վահանն ու սուրը ձեռքն առաւ։ Նոյնը արաւ և Աստղիկը։

—Իսկ ո՞ւր են մեր պահապանները, մի՞թէ ամենքը քնած են, պէտք է աղմուկ ձգել բանակում, ասաց Հեղինէն և նրանք դուրս գնացին վրանից։

—Ի զէն, ի զէն, կանչեց Հեղինէն և զարթեցրեց պահապաններին, որոն մի ակնթարթում վեր թռան տեղերից։

—Թմբուկը զարկէր, հրամայեց Հեղինէն, թշնամին մօտ է, հարկաւոր է զարթեցնել բանակը։

Հեղինէն և Աստղիկը նորից ականջ դրին և սարսափով նկատեցին, որ դոփիւնները երկու կողմից էին լսւում. նրանք հասկացան, որ արդէն պաշարուած են թշնամիներով։

—Համբուրուենք շընջայց Հեղինէն և նրանք դեռ չէին վերջացրել համբոյրը, երբ իրենց բանակի զանազան կողմերից լսուեցան թմբուկների ահեղ ձայներ։ Նրանք զէնքի էին հրաւիրում քնած զինուորներին։

Հեղինէն և Աստղիկը թռան իրանց նժոյգների վրայ և նրանց գունդը արդէն պատրաստ էր կռիւ սկսելու, երբ բանակի ամեն կողմից լսուեցան թշնամու սոսկալի գոռիւն գոչիւնը և ապտ արերի ու վահանների չրխկչրխկոցը, իսկ քիչ յետոյ վայնասունի ու հառաչանքի ձայները։

ԺԴ.

Չիշերային մթութեան մէջ սկսուել էր կոտորածը...

Աշոտ Երկաթի գնդերը, քնից նոր զարթնած, շփոթուած դէպի փախուստ էին գնում, բայց ամեն կողմից մահն անխուսափելի էր։ Թշնամին կոտորում էր առաջից, կոտորում էր հետից և այդ բաւական չէր, արաբական գունդն էլ միւս կողմից էր կոտորում նրանց։ Նրանք նմանւում էին ծուղակի մէջ բռնուած գազանին, որը անօգուտ ձեռնում է վանդակի ամեն կողմը, բայց ամեն տեղ երկաթէ ձողերին հանդիպելով, բարկութիւնից ուզում է խորտակել, կրծել իւր առաջը եկող արգելքները, բայց

ինքը ուժասպառ լինելով արիւնաթաթաւ ընկնում է ցած։

Աշոտ Երկաթը մի ակնթարթում ամեն բան հասկացաւ։ Նա զգաց իւր անփութութեան սխալը, բայց ուշ էր, ժամանակ չէր երկար մտածելու, հարկաւոր էր իւր և իւր գնդի կեանքը արժան չծախել ու նա իւր նժոյգն հեծնելով յարձակուեցաւ թշնամիների վրայ։ Սոսկալի էր կոտորածը։ Գազան էին կարել Աշոտ սպարապետի գնդերը, գազան էին կարել նաև Աշոտ Երկաթի զինուորները։ Ձիերն ու մարդիկ, կենդանին ու մեռածը իրար էին խառնուել և կազմել մի տեսակ անբացատրելի քաոս, որի միջից լսւում էին միայն դժոխային ձայներ և սիրտը կտրատող հառաչանքներ։ Նրանք նիզակներով ծակում էին իրար, երկու կողմից էլ վայր ընկնում ձիերից և ապա մի ակնթարթում ոտքի կանգնելով, սրերը մերկացնում և յարձակուում իրար վրայ։ Նրանց սրերը փշրուում էին և նրանք կատաղաբար իրար էին գրկում, մէկը միւսին գլորում և ատամներով խածելով, իրար արիւնը ծծում, մինչև որ երկուսն էլ ուժասպառ լինելով, բայց դեռ իրար ամուր գրկած, շունչները փչում...

Կռւում էր Աշոտ Երկաթը, գլուխներ ջարդում, բայց նրա հոգին հետզհետէ վհատում էր։ Նա տեսնում էր ինչպէս անխնայ կոտորուում են իւր զինուորները, իսկ մի մեծ մասը ճղելով թշնամու գնդերը փախուստ է տալիս յետ։

Անգիտակցօրէն ինքն էլ դէպի այն կողմն է

գնում և յանկարծ նկատում է Հեղինէին, որ մի խումբ թշնամիներով շրջապատուած հերոսաբար պաշտպանուում է։ Օրիորդի ձեռքերը հազիւ են շարժուում, մի քանի րոպէ էլ և նա կընկնի նրբանց ձեռքը և ահա Աշոտ Երկաթը գրոհ է տալիս և մտնում թշնամիների մէջ։ Հեղինէն նկատում է այդ։

—Հեռու, թագաւոր, հեռու կաց դաւաճաններից, որոնք քո արեանն են կարօտ։

—Որսը իւր ոտքով է գալիս, այդ լաւ է, կանչում է մի ձայն և նիզակը շեշտակի դէպի Աշոտ Երկաթի կուրծքն ուղղում։ Հեղինէն սարսափով նկատում է այդ և սրի հարուածով այդ նիզակը երկու կէս անում։

—Փախիր, Հեղինէ, փախիր. իսկ ինձ թող սրա հետ հաշիւս վերջացնելու, ասում է Աշոտ Երկաթը և վրայ վազում իւր ախոյեանին։ Նրանց սրերը մխւում են իրար, նրանք ետ ետ են գնում և դարձեալ յարձակուում։

—Պահ մեռնես իմ ձեռքից, Շահնշահ, ասում է դառն ժպիտով Երկաթի ախոյեանը և մերկացրած սրով կրկին յարձակուում, բայց նրա հարուածը դիպչում է Աշոտ Երկաթի վահանին և կայծակներ միայն արձակում։

—Շատ մի շտապիլ, Աշոտ սպարապետ, շատ մի պարծենալ քո յաղթութեամբ, ասում է Աշոտ Երկաթը և իւր ահագին սուրը վրայ բերելով ուզում է ջախջախել իւր հակառակորդի գլուխը։ Բայց հարուածը դիպչում է նրա ձիուն, որը վայր

գլորուելով, վայր է ձգում նաև Աշոտ սպարապետին:

— Անպիտան երկաթ, մրմնջում է Աշոտ սպարապետը և ուզում է նոր ձի հնծնել:

Այդ ժամանակ Աշոտ Երկաթը տեսնում է իւր խմբի նուագելը և քայլ առ քայլ դէպի նա է նահանջում:

Նա էլին նահանջում և Հեղինէն ու Աստղիկը, երբ նիզակի սուր ծայրը ցցուեցաւ ուղղակի Աստղիկի սրտի մէջ: Նրա աչքերում կարծես կայծակները փայլեցին ու նա թեքուելով, անխօս, ձիուցը ցած գլորուեց: Մահը վայրկենական էր:

Հեղինէն մի ճիչ արձակեց, ուզեցաւ բռնել նրան, բայց արաբական զնդից մի քանի զինուորներ շրջապատեցին իրան: Ինչպէս երևում էր, նրանց հրամայուած չէր սպանել Արծրունեաց օրիորդին, որովհետև նրանք ուզում էին իրան կենդանի բռնել:

Վրէժխնդրութեան սոսկալի բոցով լցուեցան Հեղինէի աչքերը և նա զգաց, որ այլ ևս իրեն փրկութիւն չկայ, որ ինքը պիտի բնկնի թշնամու ձեռքը, ուստի լաւ համարեց կենդանի նրանց ձեռքը չընկնել և նա իւր արիւնաթաթաւ սուրը վրայ բերելով չախչախեց իրեն մօտեցող զինուորի գլուխը: Նա ընկաւ, բայց նրա տեղը ուրիշները բուսան, այդ ժամանակ նա զգաց, որ ով որ իւր ուսին մարակով խփեց, մի վայրկեան սոսկալի ցաւ զգաց և ապա ամեն բան մոռացաւ: Նա մարակեց ձիուն: Ձին ահագին թռիչք արաւ,

իւր ոտքերի տակ կոխկորտեց մի քանի մարդկանց և ապա սլացաւ մթութեան մէջ, տանելով իւր հետ Հեղինէին, որը ամուր կպել էր ձիու թամբին և ինքն էլ չէր հասկանում թէ ուր է գնում... Ձին թռչում էր առաջ ոչ մի արգելքի վրայ ուշք չդարձնելով, երբ նրա ոտքը քարին կպաւ և նա իւր երկու ոտքի վրայ չոքելով վայր գլորեց Հեղինէին: Հեղինէն ցաւից սոսկալի հառաչանք արձակեց և ձեռքը դէպի ուսը տարաւ. ուսը կարուած էր սրով և այնտեղից հոսում էր տաք արիւնը:

— Ի՞նչպէս վերջացաւ կռիւը, մտածեց նա և առանց ուշք դարձնելու իւր վէրքից հոսող արեանը պարկեց թաց խոտի վրայ և աչքերը դարձրեց դէպի անողորմ, մոխրագոյն երկինքը: Ա՜խ, մերոնք ամենքը կոտորուեցան, ամենքը մեռան, շարունակեց նա, իսկ ինչ եղաւ Աշոտ Երկաթը... Ա՜խ, հայր, դաւաճան և սուր արարած... Բայց ինչքան անուշ է այստեղ, կարծես շուրջս մանուշակները լինին դուրս եկած, ես չեմ ուզում ուրիշ տեղ ընտրել, այստեղ շատ լաւ է, հանդիստ, խաղաղ... Թողէք ինձ, ասաց նա և այժ արաւ աչքերը փակելու, այն ինչ նրա աչքերը բաց էին և անշարժ հայեացքով դիտում էին երկինքը, կարծես ուզում էին թափանցել երկնքի գաղտնիքի մէջ:

Հեռուից լսւում էին ձիերի դոփիւնները, մարդկանց ոտքերի ձայները, որոնք շատ շատ հեռանում էին: Նրանք կարծես հալածուած մի

ինչ որ աներևոյթ զօրութիւնից, փախուստ էին տալիս, առանց նկատելու Հեղինէին, որ ընկած էր մի փոսի մէջ, իսկ մի քանի քայլ նրանից հեռու նրա ձին, որը նոյնպէս կուռւում էր կեանքի և մահուան հետ:

Հեղինէն հետզհետէ նուաղում էր. արիւնը դեռ բղխում էր նրա վիրաւոր ուսից:

—Է՛յ, նաժիշտներ, հապցրէք ինձ ամենաքնքոյշ կերպասներ, հիւսեցէք մաղերս և օծեցէք անուշահոտ ջրերով, ես պիտի կաքաւեմ իմ սիրելի պարը, այդ շատ է դիւր գալիս հօրս և ես ուզում եմ նրա սիրտը շահել, նա առանց այն էլ վրդովուած է... Բայց չէ, ես չեմ կարող, սիրտս հանգիստ չէ, յայտնեցէք հօրս, որ ես այսօր հիւանդ եմ, չեմ կարող պարել: Դուք երգեցէք, նուագեցէք բարձր և բարձր... Բայց չէ, սպասեցէք, շատ բարձր պէտք չէ, մի՛թէ չէք խղճում ինձ, ականջներս ծակւում են... Այս ո՞ւր են գնում, ինձ տանում են, ես բարձրանում եմ վեր, շուտով կը գլորուեմ ցած... Հեռո՛ւ ինձանից, հեռո՛ւ... Հա, դաւաճան է հայրս, ես չեմ ուզում նրա դուստրը լինել, նա իւր փառքի համար ոռնաստակ է տալիս ամեն սրբութիւն, բայց ես չեմ անիլ... Զարմանալի բան, ես կարծես կրկին բարձրանում եմ, ինձ կարծես տանում են վեր, ա՛խ, դէպի ո՞ւր... Ես վախենում եմ, վայր կընկնեմ...

Եւ Հեղինէն երևակայում էր իրան անհուն բարձրութիւնից ցած գլորուելիս: Նա կծկուեց և

ապա սկսեց թաց խոտերը պոկել և հողը չանկռտել: Ձախ ձեռքը չէր շարժւում, նա արդէն ուժից ընկած էր, ձախ ուսը վիրաւորուած լինելու պատճառով:

Անցաւ մի փոքր ժամանակ: Զորս կողմը տիրում էր արդէն խոր լռութիւն, ոչ մի ձայն, ոչ մի շշուկ այլ ևս չէր խանգարում լռութիւնը, երբ հեռուից լսուեցին ձիերի դոփիւնների ձայներ:

Հեղինէն ուզեց գլուխը բարձրացնել և նայել այն կողմը, բայց ոյժերը չներեցին և նա կէս թմրած, կէս զգաստացած իւր լսելիքը սրեց: Ձայները մօտեցան և իսկոյն հեռացան նրանից: Հեղինէն զգաց, որ հեծեալ մարդիկ են անցնում իւր մօտով, բայց թէ ի՞նչ մարդիկ են և ի՞նչու այդպէս շուտ անցնում են, նա չկարողացաւ հասկանալ: Նա կրկին սկսեց զառանցել:

—Զարմանալի բան, երկինքը հետզհետէ սկսում է ցածրանալ, ես նրան ձեռքով կը հասնեմ, ահա լուսինը, ինչքան նա մեծ և ահաւոր է երևում, իսկ աստղերը... տեսէք, ինչպէս վազում են, փախչում երկնքից, կարծես մէկը հալածելիս լինի նրանց... Վա՛յ, ես այս տեսակ բան չեմ տեսել, մեր վաստուրականում այդ տեսակ բաներ չեն պատահում: Այստեղ գետինն էլ է շարժւում, տե՛ս, ինչպէս օրօրում է նա ինձ... Է՛հ, աւելի լաւ է ուշադրութիւն չդարձնեմ, ես վախենում եմ այդ տեսակ բաներից: Ես կը փակեմ աչքերս, աւելի լաւ է քնեմ, քունը ինձ կը

խաղաղեցնի .. Եւ նա երևակայելով թէ քնում է, ճիգ էր անում աչքերը փակելու, բայց նրանք կրկին բաց էին լայն, ապուշ կրթած, որոնց առաջ, երկնքի վրայ, սողում էին ամպերը...

—Ինչքան հանգիստ է այսպէս, ինչպէս հանգիստ են նեարդերս, ես խաղաղ եմ, անվրդով, հանգիստ...

Ու քայլը նիրհը պատում էր նրան և իւր քնքոյշ թևերով տանում հեռու և հեռու, ով գիտէ ո՞ր աշխարհը, դիւթական ո՞ր երկիրը...

ԺԵ.

Կամաց կամաց արշալոյսը բացւում էր... Երկնքից արագապէս խոյս էին տալիս մոխրագոյն ամպերը և կորչում անհուն եթերի մէջ... Բացւում էր արշալոյսը, սկսւում պայծառ առաւօտը:

Բայց տխուր, սոսկալի էր այդ առաւօտը Աշոտ Երկաթի համար: Նրա գնդերը սարսափահար փախչում էին որպէս աներևոյթ թշնամուց հալածուած, խումբ խումբ, հատ հատ, ոմանք ձիով, իսկ ոմանք ոտքով: Իշխանաւորը զինուորին չէր ճանաչում, իսկ զինուորը իշխանաւորին, ամեն մէկը իւր գլխի հոգսի մէջ էր, ամեն մէկը աշխատում էր շուտով խոյս տալ Դւնայ շրջակայքից և կորչել հեռու և հեռու...

Եւ սարսափահար մարդկանց այդ խումբը ուղղւում էր դէպի Երազգաւոր, ոչ թէ ուղիղ ճանապարհով, այլ լեռների, ձորերի և մացառների միջով: Ինչպարների նման նրանք վազում էին առաջ, առանց նկատելու, որ թշնամին այլ ևս իրենց չէ հալածում և թէ նրանք բաւականացել էին իրանց գնդերը խորտակելով: Եւ այնտեղ, ուր առաջ ծածանում էին Աշոտ Երկաթի և Արծրունեաց սևանիշ դրօշները, այժմ անկուած էին Աշոտ բռնաւորի և Գագիկ Արծրունու դրօշակները: Էլ չկային Աշոտ Երկաթի յաղթական գնդերը, նրանք ցաք ու ցրիւ էին եղել, իսկ ոմանք անշունչ փռուած էին պատերազմի դաշտում:

Փախստական մի խմբին ճանապարհին պատահեց մի ուրիշ փոքրիկ խումբ: Փախստականները ուզում էին իրանց կիսաշունչ ձիերի գլուխները ետ դարձնել և փախչել այդ խմբից, որոնց թշնամու տեղ ընդունեցին, երբ մի խրոխտ ձայն կանգնեցրեց նրանց:

—Սպասեցէք, դէպի ո՞ւր էք այդպէս խելագարների նման վազում, կանչեց ձայնը:

Փախստական խումբը մեխուածի նման կանգ առաւ և գլխարկները վերցրեց:

—Ի՞նչ է պատահել, կանչեց խեղդուած ձայնով նոր խմբի մէջ գտնուող հոգևորականը, որ Մարտիրոս վանահայրն էր: Նրա աչքերում երեւում էին յուսահատութեան արցունքներ: Նա ամեն բան հասկացել էր:

—Հայր սուրբ, մենք կորանք։

—Բոլոր...

—Ամենքս ոչնչացանք։ Դաւաճանութիւնը մեզ բոլորիս ոչնչացրեց։

—Իսկ Աշոտ Երկաթը...

—Նա էլ վախուստ տուեց։ Ա՛խ եթէ Իւսուֆի գունդը չդաւաճանէր, նրանք կրկին ոչինչ չէին կարող անել թէև քնած ժամանակներս յարձակուեցան։

—Իսկ կոտորածը շա՛տ է։

—Խիստ շատ, հայր սուրբ, թիւ ու համար չկայ։

—Իսկ Արծրունեաց օրիորդը ի՞նչ եղաւ։

—Ես տեսայ նրան կռուի խիստ ժամանակ, երբ նա կռւում էր թշնամիների հետ. իսկ այնուհետև թէ ի՞նչ եղաւ չգիտեմ։ Կռիւը այնքան սոսկալի էր, որ մերոնց նրանցից չոկել անհնար էր։ Դա մի կատաբեալ դժոխք էր, ուր մորթւում էին հարիւրաւոր մարդիկ։ Մարտիրոս վանահայրը լուռ կացաւ, նրա դէմքին մի այնպիսի մռայլ պատեց, որ նայողը կը սարսափէր։ Փախստական խումբը նկատելով, որ հայր սուրբը այլ ևս ոչինչ չի խօսում, գլուխ տուեց Մարտիրոս հօրը և կրկին սլացաւ առաջ։

Մարտիրոս հայրը մի փոքր ժամանակ կանգ առաւ, մի խոր հոգոց քաշեց և ապա դառնալով իւր խմբին, ասաց.

—Տղե՛րք, մենք պիտի գտնենք Արծրունեաց օրիորդին, կենդանի թէ մեռած նա մեր ձեռքը պիտի հասնի, պէտք չէ օրիորդին թողնել թշնա-

միների ձեռքում կամ նրա դիակը գիշակեր թռչուններին։ Շտապենք առաջ, պատերազմի դաշտը հեռու չէ մեզանից։

Եւ կարիճների այդ խումբը սլացաւ առաջ դէպի կռուի դաշտը։ Շատ ժամանակ չանցաւ և Մարտիրոս հօր առաջ բացուեցաւ այդ դաշտը, ուր դեռ փռուած էին դիակների կոյտերը։

Նրանք լճյան ձիերից և նրանցից մի քանիսը գոյշ առաջ անցան։

Սոսկալի և սրտաճմլիկ տեսարան էր ներկայացնում այդ դաշտը, ուր հայը հայի կեանք էր խաւարեցրել։

Դիակներից մի քանիսը փռուած էին երեսներով դէպի գետին, դէպի մայր հողը, իսկ մի քանիսը մէջքի վրայ պառկած լինելով իրենց անշարժ, բայց սարսափով լցուած հայեացքը դարձրել էին դէպի վեր, դէպի կապոյտ երկրը, ուր ջինջ երկնակամարի վրայ լողում էին թափանցիկ, սպիտակ ամպե՛ր... Ամպերը թռչում հեռանում էին, նրաց տեղ բացւում կապոյտ երկնքները, բայց սառած, ապուշ կրթած հայեացքները կրկին նայում էին վե՛ր... Ի՞նչ էին ուզում նրանք վերևից, ի՞նչու նրանք միշտ վեր էին նայում, առանց իրենց դէմքի մկանունքները շարժելու, մինչև անգամ այն ժամանակ, երբ իրենց հենց գլխի վրայ պտտւում էին ագռաւները և ապա դրանց սառած հայեացքի վրայ սուր, թափանցող հայեացք ձգելով՝ արձակում էին իրենց ուրախաձայն կռնչիւնները և սլանում

ցած։ Մի րոպէ էլ և այդ դիակների լայն բացուած աչքերի տեղ երևում էին խոր, փոս ընկած ակնակապիճները...

Տեղ տեղ, մացառների և թփերի տակ ընկածների մէջ միայն շարժողութիւն կար. բայց շատ թոյլ և յուսահատական շարժողութիւն։ Ներանցից մի քանիսը չանկրտում էին հողը, պոկոտում կանաչ խոտերը, մի վերջին ցնցում անում և հանում անշարժ։

Մարտիրոս հօր խմբից մի քանի մարդ, փորող տալով անցնում էին մի դիակից միւսը, քննում նրանց դէմքերը և ապա գլուխները շարժելով առաջ գնում։

Նրանց աշխատանքը ապարդիւն էր անցնում գտնելու Հեղինէի և Աստղիկի դիակները այն ինչ շատ առաջ գնալ չէին կարողանում, քանի որ այնտեղ, ուր առաջ կանգ էր առած Աշոտ Ներկաթի գունդը, այժմ ծածանում էր Արծրունեաց Գագիկի դրօշակը։ Մի անզդոյշ քայլ և նրանք կը նկատուէին նրանցից և այն ժամանակ նրանց փրկութիւն չկար։

— Նրանց դիակները ոչ մի տեղ չկայ, իսկ մենք համարեա մօտեցել ենք Գագիկ Արծրունու բանակին, հընչաց մի զինուոր միւսին։

— Ձկայ, պէտք է ետ դառնալ և մտնել ձորը թէ չէ...

— Սա... չես լսում, ով որ դէպի մեզ է գալիս պէտք է մեռած ձևանալ թէ չէ էլ չենք վեր կենալ։

Նրանք լռեցին և երկուսն էլ դիակների նըմանն տարածուեցին։

Այդ ժամանակ, յիրաւի, նրանք նկատեցին մի մարդ, որ դանդաղ քայլերով անցնում էր վիրաւորների մէջ և տխուր հայեացքով չորս կողմը դիտում։ Կարծես նա էլ ում որ պատրում էր։ Մարտիրոս հօր զինուորները նայեցին նրա դէմքին և սարսռեցան։ Այդ մարդը, որ կանգ առաւ հէնց իրենց գլխի վրայ, ինքը Գագիկ Արծրունին էր։

— Ինչքան կոտորած, հընչաց նա, ամեն կողմը դիաթաւալ ընկած են զոհերը, իսկ նա չկայ ու չկայ։ Հայը հայուն կոտորեց, հայը հայ ընտանիքի կորստեան պատճառ եղաւ, ինչո՞ւ համար, — փառքի, այն փառքի, որի ետևից ամենքս ենք վազում։ Բայց ես արդէն, այս իսկ վայրկեանից, զզուեցի այդ փառքից, էլ չեմ ուզում ես դահ, տուէք միայն իմ դուստրը, Հեղինէն... Աստլի Աշոտ, գարձրու աղջկանս, գարձրու, թէ չէ երկնքին վկայ եմ կանչում որ աշխարհիս թոյնը քեզ վրայ կը թափեմ։ Այս կուռւմ յաղթուեցիր դու, բայց կրկին տարար իմ սիրտը, իմ հոգին...

Գագիկ Արծրունին լռեց, իւր պղտոր հայեացքը շուրջը դարձրեց և ապա դանդաղ կրկին ետ դարձաւ։

Գագիկ Արծրունու հեռանալուց յետոյ զինուորները ազատ շունչ քաշեցին։

— Պէտք է ետ դառնալ, լաւ էր որ մեզ չնկա-

տեց. Թշուառականը չի խմանում, որ մենք էլ նրա աղջկանն ենք փնտռում։

—Լաւ բան իմացանք, դրա խօսքերից ե-ըևում է, որ նա դերի չէ բռնուած, ուրեմն Հեղինէն և Աստղիկը կամ սպանուած պիտի լինին կամ փախուստ տուած, եթէ սպանուած են՝ դիակները պիտի գտնենք, իսկ եթէ չէ հօ աւելի լաւ, վաղ թէ ուշ նրանք կերևան։

—Գնանք դէպի ցած, այնտեղ էլ տեսնենք և ապա վերադառնանք մեր խմբի մօտ։

—Ճիշտ է, ցած պիտի գնալ, ես նկատում եմ, որ բանակի մօտերքը արդէն դիակները հաւաքում են, չըն տեսնում ինչ ահագին կոյտեր են կազմել, ասաց մէկը բարձրացնելով գլուխը։

—Ճիշտ որ նրանք շուտով մեզ էլ կը հասնեն։

Նրանք շտապ թեքուեցան մի կողմը և յանկարծ կանգ առան։

—Գտանք, կանչեցին երկուսը միասին և վրայ վազեցին դէպի մի դիակ, որի կրծքից դուրս բղխած այրիւնը լճացել էր շուրջը և թանձրացել։

Նրանք բարձրացրին դիակի գլուխը և խոբին կսկիծը անցաւ երկու զինուորների սրտով։

—Սա Աստղիկի դիակն է, ասաց մէկը։

—Խեղճ, ինչքան սիրուն է, դէմքի քնքոյշ գծագրութիւնը մեռած ժամանակն էլ է պահել։

—Բարձրացրու դիակը, պէտք է տանել սրբան, Մարտիրոս հօր հրամանը այդպէս է։ Այստեղ կարելի է ծունկ չոքած գնալ, մեզ չեն նը-

կատի, ջնաս չկայ, թող մի փոքը մեր ծնկները քարերին քսուի։ Նրանք առաջ անցան տանելով իրենց բեռը, երբ նրանց առաջը մի փոս բացուեցաւ, իսկ փոսի մօտ ձիու անշունչ դիակ։

—Սպասիր, ցած դիր, այս ձին ես ճանաչում եմ, Հեղինէի ձին է, ասաց մէկը և իսկոյն ցած թռաւ վհի մէջ բայց այնտեղ բացի ձիու դիակը ոչինչ չնկատեց։

—Է՜հ... կամ Հեղինէի դիակը տարել են կամ նա այստեղ մօտերքումն է, նա, ինչպէս երևում է, հէնց այստեղ էլ ընկել է։

—Անա արեան հետքեր խոտերի վրայ, պէտք է հետևել արեանը գուցէ գտնուի։

Նրանք թողին Աստղիկի դիակը և մի քանի քայլ առաջ գնացին, երբ մի ահագին քարի տակ երևեցաւ Հեղինէի դժգոյն, մեռելային դէմքը։ Նրա սպաւաարտը ընկած էր մի կողմը, իսկ աւիքանման մազերը թաթախուել էին արեան մէջ և թանձրացել։

—Աստուած իմ, նա կենդանի է, ասաց զինուորներից մէկը և ձեռքը դրեց նրա սրտին։ Սիրտը բաբախում էր թոյլ, աննշան։ Կեանքի վերջին թելն էր մնացել նրա մէջ։

Հեռու չէր Մարտիրոս հայրը և մնացած խումբը։ Շուտով Հեղինէի կիսաշունչ մարմինը և Աստղիկի դիակը տեղափոխեցին այնտեղ, ուր Մարտիրոս հայրը կարճ աղօթք մրմնջաց։ Հեղինէի վերքը իւր ձեռքերով կապեց և ապա պատգարակ շինելով, Հեղինէին վրան դրին և Աստղիկի

դիակն էլ հեռները վերցնելով եւ քաշուելեցան դիակների դաշտից։

Երբ որ հասան մօտակայ վանքին, Աստղիկի մարմինը հողին յանձնեցին, ուր ագալից թաղման կարգը Մարտիրոս հայրը կատարեց, իսկ դինեալ խումբը իրենց նիզակները ցած իջեցրին ի պատիւ Աստղիկի։ Երբոր նրա մարմինը կլանեց սև հողը, մի քար դրին նրա գերեզմանի վրայ, իսկ իրենք շուտով հեռացան տանելով իրենց հետ կիսամեռ Հեղինէին...

Ժ.Գ.

Աշոտ Երկաթը մի փոքրիկ խմբով եւ քաշուելով պատերազմի դաշտից, կանգ էր առել մի լեռան լանջին, որպէս զի մի փոքր դադար տայ յոգնած ձիերին և ապա կրկին ճանապարհը շարունակի։ Ձիերը արածում էին կանաչ, սիզաւէտ խոտում, իսկ ինքը թիկն տուած մի յաղթանդամ կաղնի ծառի բնին, լուռ նայում էր իւր առաջ վառուող խարոյկին, որի թոյլ ճառագայթները լուսաւորում էին նրա դժգոյն, մեռելային դէմքը։

Մօտ քան թիկնապահ զինուորները էլ մի փոքր հեռու նոյնպէս կրակ էին վառել և շատպով մի գառն էին խորովում և իրենց թագաւորի համար ընթրիք պատրաստում։ Բայց Աշոտ Երկաթը չէր էլ տեսնում թէ ինչ է կատարւում շուրջը և թէ ուր է գնում ինքը. նա իւր պըղտոր հայեացքը դարձրել էր դէպի այն կողմը ուր տարածւում էր Դուինն քաղաքը և ուր ընկան իւր գունդերը։ Այնտեղ՝ հեռու, խորին մթութեան մէջ, երևում էին կրակէ թոյլ ցոլմունքներ, որոնք հայոց թագաւորի սրտում թողնում էին խորին, անբուժելի կսկիծներ։ Դեռ մի քանի ժամ առաջ ինքն էր այդ խարոյկների մօտ յաղթական կերպով նստած և իւր անպարտելի դրօշակն էր ծածանում իսկ այժմ ուրիշներ էին այնտեղ կրակ վառել և ուրիշ դրօշակն էր ծածանւում — իւր թշնամիներինը, դաւաճան հայ գնդերինը, որոնց վրայ մտածելիս սարսռում էր Աշոտ Երկաթը և բարկութեան ալիքները անցնում էին նրա դէմքի վրայ։ Օ՜... ինչ ամօթալի դրութիւն, խայտառակ վիճակ։ Եւ քանի յիշում էր իւր այդ դրութիւնը, քանի նա միտն էր բերում իւրայնոց կոտորածը, այնքան նրա սիրտը ճնշւում էր և խորին կսկծից արտասուքները պատրաստ էին դուրս ժայթքելու նրա աչքերից։

Ու նա երկար ժամանակ, անթարթ, ապուշ կրթած աչքերով նայում էր դէպի Դուինն և աւելի ու աւելի յուզւում։ Կամաց կամաց մոռանում էր իւր ներկայ դրութիւնը և մի տեսակ անհասկանալի դրութեան մէջ ընկնում։ Հին հին, անցած գնացած մարդերը նորից պաշարում էին նրան և յոգնեցնում նրա, առանց այն էլ յոգնած, ու-

ղեղը և նա ընկնում էր մոքերի այն տեսակ քաօսի մէջ, որոնք ոչ մի բանի վրայ կանգ չէին առնում, բայց մի տեսակ շուարման մէջ էին ձգում նրան։

Նրա մոքի մէջ անցաւ նաև իւր հայրը, յիշեց իւր մանկութիւնը, յիշեց իւր հօր՝ Սմբատ արքայի խանդաղատանքը և ուզեցաւ փղձկալ, լալ երեխայի նման, որպէս զի ամոքի իւր վշտերը, թեթևանայ իւր կսկիծը, բայց այդ իսկ րոպէին մտաբերեց հօր նահատակութիւնը, երկնքից իջնող լոյսը և նրա աղերսող ու թախծացած աչքերը։

—Հայր, օգնիր որդուդ, դուրս բեր ինձ այս անելանելի դրութիւնից և խորհուրդ տուր ինձ, մրմնջաց Աշոտ Երկաթը և թախիծով լի աչքերը դարձրեց դէպի երկինք, որտեղից իջել էր լոյսը և իւր հօր տեսլերը։

Զարմանալի բան... գորշ, մթին ամպերի մէջ, այդ իսկ րոպէին, երևաց մի թոյլ լուսաւորութիւն, որը ցնցեց Աշոտ Երկաթի ուղեղը և նրա սիրտը սկսեց արագ արագ տրոփալ, կարծես թէ նա ուզում էր դուրս թռչել այն նեղ կապանքներից, ուր նա չէր կարողանում ազատ ու հանգիստ տրոփալ...

Խելագարի նման Աշոտ Երկաթը ամպի այդ թոյլ լուսին էր նայում և սպասում նրան, իւր հօրը։ Նա կարօտ էր Սմբատ արքայի խրախուսանքին և նա սպասեցնել չէր տալիս։ Աշոտ Երկաթը տեսնում էր թէ ինչպէս այդ թոյլ լոյսը

կամաց կամաց իջնում էր ցած, թէ ինչպէս ամպերը քաշում էին մօտակայ բլրի գագաթին և այնտեղ յառաջացնում մի անորոշ բոց։ Անթարթ, անշարժ աչքերով Աշոտ Երկաթը նայում էր այդ բոցին, որ հետզհետէ մօտենում էր իրեն և մարդկային կերպարանքի ձև ստանում...

Անցան մի քանի տանջալից րոպէներ և Աշոտ Երկաթը տեսաւ հօրը իւր առաջ կանգնած, որը իւր թախիծով լի աչքերը դարձրել էր դէպի իրեն։ Նա գէնք ու զրահի մէջ էր կորած, ճիշտ այնպէս, ինչպէս երևեցաւ Դուինում. նոյն անշարժ, ազերսող հայեացքը, ինչպէս առաջ...

—Հայր, դթա ինձ... կանչեց Աշոտ Երկաթը և ձեռքերը տարածելով դէպի արքան, հեկեկաց երեխայի նման։

—Քաջացիր, որդեակ, թող հեռու փախչի քեզանից յուսահատութիւնը։ Կեանքը փորձանքներից ու տանջանքների մի բով է, որի միջով անցնում է մարդկութիւնը։ Առանց փորձանքի, առանց անյաջողութիւնների չկայ կեանք և այդ փորձանքների ու տանջանքների վրայ պիտի մարդս կանգնի իւր անդորրութիւնը։ Մի երկնչիր, այն, ինչ որ ասելու եմ քեզ, թող չկոտրէ քո երկաթի կամքը։ Դու հալածեցիր արաբներին, դու առար նրանցից իմ վրէժը և ես հանգիստ եմ. բայց ցաւում է սիրտս, որ Հայաստանը քրոնք նախանձից և փառասիրութիւնից կուրացած չեն տեսնում իրենց լաւը և աշխատելով քեզ

ոչնչացնել, իրենց կորստեան ճանապարհն են հարթում. . Ա՛խ, Աշոտ, զգուշացիր, աւելի վատթար փորձանքը մօտենում է քեզ։ Ո՛ւ կեանքի դէմ որոգայթներ են լարուում և հարազատներդ պատրաստում են շաղախել իւրեանց ձեռքերը քո արեան մէջ...

— Ո՛հ, սոսկալի ոճրագործութիւն, մռնչաց Աշոտ Երկաթը, ասա, հայր իմ, մի՞թէ ես արժանի եմ դրան, մի՞թէ ես վատ եմ և անարդ, որ հարազատներս էլ իմ դէմ են գինուում։

— Ո՛չ, լսիր ինձ։ Ո՛ւ ցանկութիւնը բարի է, հայր ես դու ժողովրդեան, բայց նենգաւոր լեռնականները թոյն են պատրաստում քեզ համար։ Զգուշացիր ամեն բանից, փոթորիկը մօտենում է քեզ... ասաց Սմբատ արքան և երեսը շուռ տուեց, որ որդին չտեսնի իւր արտասուքները. ապա նա դանդաղ քայլերով սկսեց հեռանալ նրանից։

— Բայց, հայր, սպասիր մի փոքր էլ, կանչեց Աշոտը և յուսահատութիւնից սկսեց մատները կոտրատել։

— Ես ասացի ամեն բան, կրկնեց սուրերը և յանկարծ հանգաւ, չքացաւ նա, թողնելով Աշոտ Երկաթին յուսահատ և բեկուած սրտով։

Այդ միջոցին արևելեան հորիզոնը շառագունել էր և լոյսը կամաց կամաց բացուում էր։ Աշոտ Երկաթը վեր կացաւ տեղից. նրա մարմինը կարծես չարդուած լինէր, իսկ գլխի վրայ կարծես մի ծանրութիւն լինէր դրած։ Նա թոթափեց

իրենից թմրութիւնը և նշան տուեց իւր թիկնապահներին, որոնք մի ակնթարթում ձի նստան և ալացան առաջ։ Այդ դէպքից մի ամիս յետոյ Աշոտ Երկաթը նոյն տեղով վերադառնում էր դէպի Դուին մի ահաւոր գնդի գլուխ անցած, որպէս զի տակն ու վրայ անի Դուինը, բայց Դուին քաղաքի առաջ դիմանալով Յովհաննէս կաթողիկոսի թախանձանքներին, թողեց Աշոտ սպարապետին և իւր զօրքերով քաշուեց դէպի Ուտիք, ուր ապստամբել էր ուտէացւոց վրայ կարգուած Մովսէսը։

Ուտիքում Աշոտ Երկաթը մեծ չարդ տուեց ապստամբ Մովսէսին, ուր սպանուեց նաև Մովսէսը և ապա նրա տեղ կարգելով Ամրամ անունով մի ուժեղ մարդու, որ իւր ուժեղութեան համար Ցլիկ էր կոչւում, Աշոտ Երկաթը շտապեց վերադառնալ դէպի Շիրակ։

ԺԲ.

Զարաբաստիկ կոտորածից անցել էր մի քանի ամիս։

Գէորգ Մարզպետունի իշխանը իւր փոքրաթիւ թիկնապահներով դէպի Երազգաւոր էր շտապում։

Գիշեր էր։ Լիալուսինը իւր խորհրդաւոր ազօտ լուսաւորութիւնը տարածել էր շուրջը և մի

տեսակ ինքնամոռացութեան մէջ ձգել իշխանին։ Նա գնում էր անհոգ, առանց երկիւղ կրելու թշնամիներից։ Այս դիշեր Գէորգ իշխանը շատ տխուր էր և դանդաղ մտքեր ալեկոծում էին նրա հոգին և վրդովում սիրտը։

— Է՜հ, ինչ որ լինի, ես պիտի բանամ սիրտս նրա առաջ և ամէն բան խոստովանեմ։ Համբերել այլևս անկարելի է, սրտիս բոցը քանի դնում սաստկանում է և դիշեր ցերեկ այլ ևս հանգստութիւն չունեմ։ Հեղինէ, գոռոզ Գագիկի դուստր, քո մի խօսքից է կախուած իմ կեանքը, նա այլ ևս պէտք չէ ինձ, հրամայիր կրակը նետուել և Գէորգ Մարզպետունեաց իշխանը առանց վարանման կը կատարէ այդ, միայն թէ իմանայ որ դու քաղցր աչքով ես նայում նրան, ասաց Գէորգ իշխանը ինքն իրեն և յանկարծ մտրակեց ձիուն և սլացաւ առաջ։

Կարծես մի ինչ որ աներևոյթ ոյժ մղեց նրան առաջ, բայց իսկոյն դանդաղացրեց ձիու ընթացքը։

— Իսկ Արծրունի Գագիկը մի՞թէ կը համաձայնի ինձ նման թափառականի իւր աղջկայ ձեռքը տալու։

Նա թագաւոր է Վասպուրականի, իսկ ես ինչ եմ... մի աննշան իշխան, որը աստանդական կեանք վարելով, իւր կեանքը ուզում է պահել օրինական թագաւորի համար։ Գագիկ Արծրունին փառքի, շքեղութեան մէջ է և կրկին վազում է դրա ետևից, իսկ ինձ համար չկայ փառք,

չկայ անդորրութիւն և իմ թշուառ կեանքը պիտի վերջանայ կռուի դաշտում. իսկ իմ մարմինը պիտի լափեն գիշակեր թռչունները... Խելացնոր եմ ես, որ ձգտում եմ այդ բանին։ Իսկ եթէ Հեղինէն սիրում է ինձ... Մի՞թէ սրտերը հարցնում են բարձր և ցած աստիճան։ Մի՞թէ սիրոյ համար էլ կայ խտրութիւն... Եւ վերջապէս մի՞թէ Գագիկ Արծրունին կարող է արգելք լինել, քանի որ Հեղինէն ատում է իւր հօրը նրա վատ և անարդ արարքների համար... Օ՜... եթէ Հեղինէն սիրում է ինձ, այն ժամանակ ոչ մի արգելք չի կարող մեզ միմեանցից բաժանել, եթէ անգամ անտակ վիհեր բացուին մեր առաջ։ Նրա սէրն է ինձ պէտք, նրա մի բառն է ինձ համար թանկագին քան աշխարհիս փառքն ու դանձերը...

Ներանք արդէն մանում էին Երազգաւոր քաղաք, բայց Գէորգ իշխանը դեռ այդ չէր զգում։

— Տէր, ո՞ւր կը հրամայես իջնել, մենք արդէն մտանք Երազգաւոր, ասաց Թիկնապահներից մէկը, մօտենալով Գէորգին։

— Ճիշտ որ, բայց շուտ հասանք, ուղղակի իջևանատանը պիտի իջնենք։ Ես այս գիշեր ձեզ հետ պիտի անցկացնեմ և ապա վաղը գործերս վերջացնելուն պէս կամ դէպի Կորուստ կերթանք կամ դէպի փրկութիւն, պատասխանեց Գէորգ իշխանը։

Թիկնապահը նրա վերջին միտքը չհասկացաւ, բայց չհամարձակուեց հարցնել, միայն շատ զարմացաւ, որ Գէորգ իշխանը, ըստ սովորակա-

նին դէպի պալատ չէր շտապում, քանի որ պալատի դռները դիշեր ցերեկ բաց էր իւր տիրոջ համար։

Ներանք մտան իշխանատուն և շտապով խոր քունը պատեց Թիկնապահներին, այն ինչ Գէորգ իշխանը քնել չկարողացաւ։

Երբ որ բացուեց առաւօտուայ կենարար լոյսը, նա արտատրուի դէպի պալատ դիմեց, ուր ապրում էր Հեղինէն։

Հեղինէն, որին Մարտիրոս հայրը ազատել էր կռուի դաշտից, այժմ բոլորովին առոյղ էր։

Վաղօրդեան արևի ճառագայթների տակ, նստած պալատի պարտէզի կանաչ խոտի վրայ, նա ձեռքին մի գիրք ունէր, որ ագահութեամբ կարդում էր երբ ներս մտաւ Գէորգ իշխանը և առանց նրա ընթերցմունքը խանգարելու կանգ առաւ նրանից մի փոքր հեռու։ Ի՜նչ հիանալի գիրք էր տուել օրիորդը իրան։ Նրա սևորակ, հրաշալի աչքերը յառած էին գրքի տողերի վրայ և այնտեղից ագահաբար քաղում էին մաքերը և իւր հոգւոյ մէջ սերմանում վեհ և Աստուածային խօսքեր։ Այդ երևում էր նրա դէմքի իւրաքանչիւր արտայայտութիւնից, ուր այնպէս պարզ արտացոլում էր հոգւոյ իւրաքանչիւր ելևէջը։ Նրա մազերն խառն ի խուռն թափթփուել էին ուսերի վրայ և նա նմանում էր դիւթական մի հաւերժահարսի, որը կարող էր շարժել ամենաքարասիրտ մարդուն անգամ։ Նա սուրբ գիրք էր կարդում և կուսական սիրտը զարդարում էր

սրբազան իմաստներով։ Այդ բոպէին դոյն թիւն չունէր նրա համար եղկելի մարդկութիւնը իւր ստոր արարքներով այլ նա ամբողջովին ամփոփուած էր Աստուածային բարձր և վսեմ գաղափարներով... Նայում էր Գէորգ իշխանը նրան, նայում և չէր կշտանում նրա աննման դէմքը դիտելով։ Նա կարդում էր Հեղինէի հոգին նրա դէմքի նուրբ գծագրութեան վրայ և ինքն էլ ընկնում էր մի տեսակ յափշտակութեան մէջ, որ տանում էր իրեն դէպի ինքնամոռացութիւնը։

— Ո՜հ, աննման հրեշտակ, անարատ հոգի, անբիծ էակ, մրմնջում էր Գէորգ իշխանը և լուռ դիտում նրան։

Յանկարծ օրիորդը դադարեցրեց ընթերցումը և խոր, մտածող աչքերով նայեց Գէորգ իշխանին։

Գէորգ իշխանը սարսռեց։

Մի քանի վայրկեան լուռ կացաւ Հեղինէն, կարծես դեռ նա մտածում էր սրբազան խօսքերի վրայ, ապա դիմելով Գէորգ իշխանին, ձեռքը մեկնեց նրան և ասաց.

— Ա՜... Գէորգ իշխան, բարի ես եկել։

Գէորգ իշխանը ծունկ չոքեց և համբուրեց նրա ձեռքը։

— Ի՞նչ լուր ունիս հայր Մարտիրոսից, հարցրեց Հեղինէն և մի այնպիսի հայեացք ձգեց Գէորգ իշխանի վրայ, որ քիչ մնաց, որ նա վայր ընկնէր։

— Հայր Մարտիրոսը ողջ է և աղօթում է քեզ համար, ասաց Գէորգ իշխանը։

—Ապրի՛ նա, ասաց Հեղինէն և դիրքը ծա-
լելով ոտքի կանգնեց։

—Դու շատախո՛ւմ ես, օրիորդ, բայց ես քեզ
մի քանի բան ունէի յայտնելու, ասաց Գէորգ
իշխանը և մի տեսակ շառագունո՛ւմն անցաւ նրա
դէմքի վրայ։

—Ի՞նչ բան, յայտնի՛ր, ես պատրաստ եմ
ամեն բան լսելու թէ լա՛ւ թէ վա՛տ։ Այժմ իմ սիր-
տը ամեն բանի կը դիմանայ։ Նա արդէն սովո-
րեց ամեն վիշտ տանել։

—Եթէ թոյլ կը տա՛ս միայն, որովհետև...

—Յայտնի՛ր, բայց ի՞նչու դու դողում ես,
ի՞նչ սոսկալի լուր ունիս հաղորդելու ինձ, որ
շրթունքներդ չեն զօրում ասելու։

—Ջէ՛, օրիորդ, սոսկալի ոչինչ չկայ, այն,
ինչոր ուզում եմ յայտնել քեզ, իմ թշուառ կեան-
քին է վերաբերում։

—Թշուա՛ռ, չեմ կարծում։ Ի՛ս կեանքն ա-
մենաերջանիկ կեանքն է, քանի որ դա ծառա-
յում է ազգին։

Վերջին խօսքերը սիրտ տուին Գէորգ իշ-
խանին և առանց տատանուելու չոգեց օրիորդի
առաջ և ասաց.

—Օրիո՛րդ, թշուառ է այդ կեանքը, քանի որ
լափւում է բոցերով։ Այդ կեանքը առանց քեզ
ոչինչ չարժէ։ Ես սիրում եմ քեզ...

Հեղինէն լուռ կացաւ, բայց նրա կրծքի ա-
րագ բաբախելը ցոյց էր տալիս թէ ինչ փոթո-

րիկ բարձրացրին այնտեղ Գէորգ իշխանի խօս-
քերը։

—Դու լո՛ւռ ես, արհամարում ե՞ս ինձ, այն-
պէս չէ՞...

Կարմիր շառագունո՛ւմն անցնում էր Հեղի-
նէի դէմքով և նրա աչքերը մի այնպիսի փայլ
էին ստացել, որ նայողին հալեցնում էին։ Բայց
նա շուտով զսպեց իւր վրդովմունքը, խեղդեց
իւր հոգու մէջ արտավիժող զգացմունքը և բռնե-
լով իշխանի ձեռքը բարձրացրեց նրան։

—Վե՛ր կաց, իշխան, դու չպէտք է չոգես
այն օրիորդի առաջ, որին կորատեան ճանապար-
հից ես վերկել։

—Բայց ասա՛, օրիորդ, մի խօսք միայն, սի-
րո՛ւմ ես ինձ թէ արհամարում և յանդուգն քայլ
համարում իմ այս առաջարկութիւնը։

—Մի վրդովուի՛ր, իշխան, և լա՛ւ լսի՛ր ի՞նչ
եմ ասում քեզ։ Դու արդեօք լա՛ւ հասկանում ես
թէ ի՞նչ ես առաջարկում ինձ։ Կշռե՛լ ես քո ա-
ռաջներդ թէ՞ սիրոյ բորբոքման տակ յայտնում
ես քո սէրը։

—Օրիո՛րդ, անքուն գիշերներ եմ անցրել և
տեսել, որ առանց քո սիրոյ իմ կեանքը մի րո-
պէ անգամ չպիտի ապրի աշխարհում։

—Իսկ ես այդպէս չեմ մտածում։ Ի՛ս կեան-
քը շատ է պէտք մեզ։ Այս ժամանակներում,
երբ մենք ապրում ենք, քեզ նմանների կեանքը
շատ թանկագին է։ Սէրը պիտի լռէ այնտեղ, ուր
սիրուց վեհ գործեր կան կատարելու։ Ի՞նչ նշա-

կութիւն ունի անհատական սէրը հայրենիքի սիրոյ առաջ։ Ինչո՞ւ չզոհել այդ անհատական սէրը վսեմ գործերին, որին դու նուիրուած ես։

—Բայց անհնարին է կուռել սիրոյ հետ։

—Եւ հենց դա է վսեմը, երբ յաղթում ես ամեն արգելքներին և հայրենիքի սիրոյն զոհում։ Մի՛թէ ես էլ չէի կարող սիրել և սիրուել, բայց զոհեցի և զոհում եմ այդ, լսո՞ւմ ես, զոհում եմ, որովհետև սրտերի սիրուց աւելի բարձր սէր կայ և այդ սէրը հայրենիքին ծառայելն է։ Գնա, իշխան, կրակը մարի, կրկին ծառայիր հայրենիքիդ և այն ժամանակ...

—Ի՞նչ և այն ժամանակ...

—Եւ այն ժամանակ, երբ հայրենիքդ խաղաղ կը լինի, հանգստացիր քո սիրոյ անուշ գըրկում։

—Բայց մի՛թէ ես չեմ ծառայում հայրենիքիս։

—Այդ ես չեմ ասում։ Դու արժանի ես ամեն գովասանքի, բայց թէ ի՞նչ դրութեան մէջ է այժմ Հայաստանը։ Դու ինքդ լաւ գիտես որ ներքին և արտաքին թշնամիներից երկիրը ալեկոծ ծովի է նման։ Ապաստեցրու նրանց և այն ժամանակ ես ինքս պատրաստ եմ քո յաղթական ճակատը համբուրելու։

—Լա՛ւ, ես պատրաստ եմ կրկին հուր ու մոխիր գնալու, միայն թէ դո՛ւ, Հեղինէ, ինձ սիրես։

—Ես սիրում եմ քեզ հէնց այս րոպէիս, իշխան, քեզ համար միայն բաբախում է սիրտս,

բայց երդւում եմ ամենասուրբը կոյսով, որ ես քո կինը չեմ դառնայ, մինչև Հայաստանի մէջ խաղաղութիւն չիրի։ Կրկին կրկնում եմ, գնա դէպի կրակը և քո օրինակով ամաչացրու Գագիկ Արծրունուն, այնուհետև իմ բազուկները պատրաստ են քեզ, իմ սիրելւոյս գրկելու։

Գէորգ իշխանը յափշտակուած էր Հեղինէի խօսքերից, նրա սրտի միջով մի այնպիսի կայծեր թռան, որ էլ չհամբերեց, գրկեց Հեղինէին իւր բազուկների մէջ և նրանց շրթունքները հըպւեցաւ իրար։

—Ես մեղաւոր եմ քո առաջ, օրիորդ, բայց յոյս ունիմ արդարացնելու քո խօսքերը։ Եթէ Աստուած իմ կեանքը բաշխեց, դու ինձանից աւելի ոչոքի չես պատկանի, այժմ միայն բարև, էլ երկար ժամանակ չենք տեսնուի իրար հետ, ասաց Գէորգ իշխանը և մի վերջին համբոյր տալով, շտապ քայլերով հեռացաւ նրանից։

Հեղինէն երկար ժամանակ նայեց նրա եւ տևից, մի խոր հոգոց քաշեց և ինքն իրեն մըրմնջաց։

—Աստուած տայ, որ այդպէս լինի։

Այդ ժամանակ արտասուքի առատ կոհակները դուրս վիժեցին նրա աչքերից և նա բըռնեց իւր սիրտը, կարծես այնտեղ բռնկաց մի այնպիսի բոց, որը կրակ տուեց նրա ամբողջ սիրտը...

ԺԲ.

Գէորգ իշխանը բաժանուելով Հեղինէից թեթեւացած սրտով դառնում էր դէպի իւր թիկնապահները։ Նրա սրտից կարծես ընկել էր մի ծանր բեռ և նա Հեղինէին աւելի արժանի լինելու համար պատրաստւում էր իւր կեանքն անգամ զոհելու հայրենիքի և թագաւորի սիրոյն։ Բաղդը կարծես մղում էր դրան շուտով այդ բանը ցոյց տալու։ Զանազան գործերի պատճառաւ Գէորգ իշխանը այդ օրը չկարողացաւ դուրս գալ Երազգաւորից, ուստի յետաձգեց մինչև վաղ առաւօտը։

Տաղտկալից օրը շուտով փոխուեցաւ մութ գիշերի։ Անամպ երկնակամարի վրայ դեռ չէր երևացել լուսինը, մի քանի ժամից յետոյ նա պիտի սփռէր իւր ազօտ լուսաւորութիւնը։

Գէորգ իշխանի թիկնապահները կանխապէս գիտենալով, որ այդ գիշեր ոչ մի տեղ չեն գնալու արդէն հանգիստ քուն էին մտել։ Բայց Գէորգ իշխանը չէր կարողանում քնել, նա դուրս եկաւ իւր սենեակից և սկսեց աննպատակ շրջել Երազգաւորի փողոցներում։ Իւր մտքի հետ ընկած, նա աննկատելի կերպով մօտեցաւ Աշոտ Երկաթի պալատին, որ նոր վերադարձել էր Ուտիքից։ Երկու պահապան միայն հսկում էին պալատի դուռը, որոնք իրար հետ ցած ձայնով խօսում էին։

Գէորգ իշխանը ուշադրութիւն չէր դարձնի պահապանների խօսակցութեանը, եթէ նրանք յանկարծ չլսէին և սանդուխքների վրայ չերևայէին երկու անձնաւորութիւն, որոնք լուռ իջնում էին։ Նրանց ճանապարհը լուսաւորում էր մի ծառայ ահագին վառած ջահը ձեռքին։ Գէորգ իշխանը ճանաչեց նրանց. ուստի նա մտաւ պատի տակ, որպէս զի աննկատելի լինի նրանցից։ Նրանցից մէկը՝ Աշոտ Երկաթի եղբայրն էր՝ Աբասը իսկ միւսը նրա անեծը՝ Ափխազաց Գուրգէնը, որոնք Աշոտ Երկաթի հետ միասին երազգաւոր գալով, այս երեկոյ վերջին հրաժեշտն էին տուել թագաւորին և վաղը իրր թէ, պիտի դառնային իրենց երկիրը։

Նրանք շուտով անցան և Գէորգ իշխանը հենց ուզում էր իւր թագստի տեղից դուրս գալ, երբ լսեց թէ հինգ կասկածաւոր մարդիկ նկատեց, որոնք կանգ առնելով իրենից մի փոքր հեռու, սկսեցին իրար հետ խօսել խիստ զգուշաւոր շշնջիւնով։ Մթութեան մէջ Գէորգ իշխանը նրանց դէմքերը լաւ չկարողացաւ դիտել, բայց նայելով շորերին խիստ կասկածաւոր թուաց։ Դրանք ոչ խաղաղ շինականներ էին երևում և ոչ պիշերապահ զինուորներ։ Կասկածը մտաւ իշխանի սիրտը և նա առանց դուրս գալու իւր թագստի տեղից, ուզեց իմանալ բանի էութիւնը։

— Այստեղ մի բան կայ, մտածեց նա, և ձեռքը դէպի իւր սրի երեխակալը տարաւ։

Զգուշութեամբ նա մի քանի քայլ առաջ

գնաց, որպեսզի պարզ լսի այդ կասկածաւոր խմբի խօսակցութիւնը, երբ մի ուրիշ խումբ էլ նկատեց, որը նոյնպէս կանգ առաւ պալատի միւս պատի տակ և թաղնուեցաւ մութ տեղում։

—Է՜... ինչպէս երևում է պալատը պաշարուում է սրիկաներով. մի սոսկալի եղեռնագործութիւն է պատրաստում այստեղ, բայց թէ ում դէմ, այդ պիտի իմանալ և ազատել դրանից, մտածեց իշխանը, բայց սարսուռը մտաւ նրա մարմինը, երբ լսեց այդ սրիկաների խօսակցութիւնը։

—Խօսակը չի երևում, ասում էր մէկը միւսներին։

—Մենք շատ վաղ եկանք, տեսնում ես պահապանները դեռ արթուն են, մենք այնպէս պիտի Աշոտ Երկաթին սպանենք, որ ոչ մի աղմուկ չլինի և չիմանան էլ թէ ով և ինչպէս սպանուեցաւ։

—Դաւաճանութիւն... ուղում էր մռնչալ Գէորգ իշխանը. բայց զսպեց իրան, երբ լսեց որ շարունակում են խօսակցութիւնը։

—Քանի՞ հոգի ենք սկսելու, շարունակեց նոյն ձայնը։

—Իոլորս քսան հոգի ենք վարձուած, բայց դժուար գործը մենք պիտի կատարենք։ Մի մասը դուրսը պիտի հսկի, մի երկուսը պահապաններին պիտի քնացնեն, իսկ մենք Խոսակի հետ միասին պիտի ներս մանենք և Աշոտ Երկաթին դէպի միւս աշխարհ բարի ճանապարհ մաղթենք։

—Լաւ, բայց ինչ օգուտ ունին Աբաս և

Գուրգէն իշխանները, որ Աշոտ Երկաթին սպանել են տալիս։

—Եղբայր եղբօր դէմ... Ո՜հ, Աստուած իմ, Դու փրկես թագաւորին այդ տարապարտ մահուանից, մբմնջաց Գէորգը և նրա աչքերում մի այնպիսի կատաղութեան բոց անցաւ, ոչ քիչ ճնշեց իւր ուղեղը։

—Ի՞նչ մեր գիտնալու բանն է, մերն այն է, որ մեզ լաւ վարձատրեն։ Ահա մի ամբողջ շաբաթ է քաշ ենք գալիս այդ բանի եռևից, բայց չենք կարողանում գլուխ բերել, մեզ այդ չյաջողուեց կատարել Որմանի գլուղում, ուր, Աշոտ Երկաթը միամտաբար այնպիսի պատիւներ տուեց Աբասին ու Գուրգէնին, բայց յոյս ունիմ այստեղ կը յաջողի։

—Ասում են Գագիկ Արծրունու սարքած բաներն են։

—Ես էլ եմ լսել։ Մեր իշխանները իրար միս են ուտում և իրար դէմ որոգայթներ լարում, տեսնենք վերջը ուր է հասնելու։

—Իսկ Հեղինէին ինչ պիտի անենք, մի՞թէ նրան էլ պիտի սպանենք։

—Չէ, յիմար, այդ հրամայուած չէ, որքան հնարաւոր է քիչ արիւն պիտի թափենք։ Մեր գործը պիտի լինի Աշոտ Երկաթին սպանել, իսկ Հեղինէին ողջ նրանց ձեռքը հասցնել, այնուհետև մեր գործը աւարտուած է և մենք մեզ խոստացած ոսկիների տէրն ենք։

—Իսկ եթէ չյաջողուի...

—Ցիմար... Ինչո՞ւ չի յաջողուի։ Քաղաքումս թագաւորը բացի իւր փոքրաթիւ թիկնապահներից ուրիշ զօրք չունի, այն ինչ Աբասն ու Գուրգէնը ահագին թիկնապահներ ունին, որոնք մեզ օգնութեան կը գան, հենց որ մեր գործը անյաջող կը լինի գնալիս։

Նրանք լռեցին։ Գէորգ իշխանը մի քանի վայրկեան միայ սառած։ Նա ամեն բան լսեց։ Աշոտ Երկաթի կորուստը անխուսափելի էր, եթէ նրան շուտով իմաց չտրուէր և նա ւխախուտ չտար քաղաքից։ Աբասն ու Գուրգէնը իրանց թիկնապահներով կարող էին հուր ու մոխիր դարձնել ամբողջ քաղաքը։ Պէտք էր շտապել պէտք էր առանց մի վայրկեան անգամ կորցնելու թագաւորին իմաց տալ թէ չէ Աշոտ Երկաթը կը կորչէր։ Բայց ինչպէս գնալ, ինչպէս դուրս գալ իւր թագատի տեղից, որ աննկատելի լինէր, ահա այդ էր մտածում Գէորգ իշխանը, երբ սրիկաների մէկը ասաց.

—Գնանք, դեռ վաղ է մինչև նշան տալը։

—Գնանք, մի փոքր էլ կոկորդներս գինով թրջենք, պատասխանեց միւսը և նրանք շուտով հեռացան։

Գէորգ իշխանը ազատ շունչ քաշեց և աննկատելի կերպով իրեն դէպի պալատի պարտէզը ձգեց և այնտեղից շուտով մտաւ պալատ և ներկայացաւ Աշոտ Երկաթին։

Աշոտ Երկաթը զարմանքով նայեց Գէորգ իշխանի գունատ դէմքին։

Թագաւոր, վախիր շուտով, քո կեանքի դէմ սոսկալի դաւադրութիւն է կազմուած։

Աշոտ Երկաթը վեր թռաւ տեղից և շփոթած նրա դէմքը դիտեց, որ տեսնի թէ նա իսկն է ասում թէ խելագարուել է։

Բայց քո դէմքի վրայ գոյն չկայ, իշխան, հանգստացիր և այնպէս պատմիր գործի դրութիւնը։

— Թագաւոր, հանգստանալու ժամանակ չէ, շուտով հեռացէք և թողէք ինձ այստեղ իմ փոքրաթիւ մարդկանցով պահպանել պալատը, մինչև որ դուք կը հեռանաք։ Շտապեցէք, ապա թէ ոչ, մի քանի րոպէից յետոյ ուշ կը լինի, ասաց Գէորգ իշխանը և մանրամասն պատմեց իւր անակնկալ հանդիպումը սրիկաներին և նրանց խօսակցութիւնը։ Աշոտ Երկաթը զլուխը շարժեց և խոր ցաւակցութեամբ յիշեց իւր հօր սուրերի երևալը և նրա նախազգուշացնելը։

—Արդարև, դժբաղդ եմ ես, քանի որ իմ հարազատ եղբայրս էլ ինձ դէմ սուր է բարձրացնում։ Թող գան, սպանեն ինձ, եթէ իմ կեանքը հարկաւոր է դրանց, ես պատրաստ եմ զոհուելու, միայն թէ գիտենամ, որ այնուհետև Հայաստանը ազատ կը լինի և նախարարներն ու իշխանները կը դադարեն իրար միս ուտելուց։

—Բայց տէր, շտապեցէք, ձեր կեանքը հարկաւոր է Թշուառ ժողովրդին։ Դրանք դրանով էլ չէն բաւականանայ, ձեր արեան մէջ ընկնելուց յետոյ, ոանատակ կը տան ամբողջ Հայաստանը։

Աշոտ Երկաթը մի փոքր լուռ մնաց և ապա ասաց.

—Լաւ, թող քո խօսքը լինի, ապա շտապով հաւաքելով իւր անհրաժեշտ պիտոյքները, վերցրեց իւր հետ իւր ընտանիքը, Հեղինէին, Աբասի որդուն և գաղտնի ճանապարհով դուրս եկաւ քաղաքից։

Երբ Գէորգ իշխանը տեսաւ նրա հեռանալը, նա ազատ շունչ քաշեց և ապա իւր թիկնապահներով պալատում դարանի մտաւ սպասելու դաւադիրներին։ Շատ ժամանակ չանցաւ և նա տեսաւ թէ ինչպէս մօտ քսան հոգի զգուշութեամբ մօտենում էին դէպի պալատի այն կողմը, ուր մենք մի քանի ժամանակ առաջ երկու պահապան տեսանք կանգնած։ Այժմ այդ պահապանները չկային և մուտքը, ըստ երևոյթին, ազատ էր սրիկաների համար։ Սանդուխքների տակ շփոթուած նրանք կանգ առան, երբ պահապաններից ոչ ոքի չտեսան։ Մի տեսակ անորոշ կասկած մտաւ նրանց սիրտը։

—Այս ո՞ւր են պահապանները, ինչու նրանք չկան, շշնջաց մէկը ցած ձայնով։

—Ուր պիտի լինեն, մի անկիւնում կուչ եկած, քնած կը լինին, Այդ մեզ համար աւելի լաւ է, մեր ճանապարհը ազատ կը լինի, պատասխանեց մի ձայն, որ մեզ ծանօթ Քոսակն էր։

Նրանք զգուշութեամբ սկսեցին վեր բարձրանալ երբ քսան նետ միասին դէպի նրանց սլացան և շատերին պարկեցրին տեղն ու տեղը։

—Վայ, մեռանք, կանչեցին մի քանիսը. իսկ մնացեալ սարսափահար ետ դարձան։

—Դաւաճանութիւն, կանչեց Քոսակը և մի ակնթարթում կորաւ մթութեան մէջ։ Նետերի հէնց առաջին տարափից ամեն ինչ խաղաղեց։ Լսւում էր միայն վիրաւորների թոյլ հառաչանքը։

—Տղերք, սրանով դեռ սկսւում է մեր այս դիշերուայ խաղը, տեսնենք ինչով կը վերջանայ, ասաց Գէորգ իշխանը դառնալով իւր թիկնապահներին։

—Ինչով էլ վերջանայ մենք քեզ հետ պիտի մեռնենք, իշխան, պատասխանեցին թիկնապահները։

—Ապրի՛ք, տղերք, բայց տեսէք, ահա սկրտւում է իսկական կռիւը։ Աբասն ու Գուրգէնը իրենց զօրքերով են շտապում։

Ճիշտ որ Աբասն ու Գուրգէնը իրենց զօրքերով շտապով կանգ առան պալատի առաջ և մտածում էին թէ ինչպէս ներս մտնեն։ Քիչ յետոյ զօրքը երկու մասի բաժանուեցաւ, մի մասը սկսեց բարձրանալ գլխաւոր մուտքից, ուր պահուած էին Գէորգ իշխանը և իւր թիկնապահները, իսկ միւս մասը շրջան տուեց և պատերից սկսեց վեր բարձրանալ։

Գէորգ իշխանի և իւր թիկնապահների նետերի տարափը նորից թափուեցաւ դրանց վրայ, բայց մեծ վնաս չկարողացաւ տալ, որովհետև նրանց նետերից շատերը դիպան թշնամիների վահաններին։

Գէորգ իշխանը նկատեց, որ երկար պաշտպանուել անհնար է դրանց զօրութեանը և թէ ինքը և իւր մարդիկ ամենքն էլ կը կոտորուին, եթէ մնան իւրեանց տեղում, ուստի նա բարւօք համարեց ետ քաշուել։ Գաղտնի դրան կողմը սպասում էին իրենց ձիերը, բայց դեռ ուզում էր պաշտպանուել, ոչ թէ պալատը փրկելու, այլ ժամանակ վաստակելու, որպէս զի Աշոտ Երկաթը իւր ընտանիքով աւելի հեռացած լինի։

Յանկարծ նա կրակի բոց նկատեց, որ ագահութեամբ լափում էր Աշոտ Երկաթի սենեակներից մէկը, ինչպէս երևում է թշնամին նպատակ ունէր Աշոտ Երկաթի հետ միասին ոչնչացնել նա և նրա պալատը։ Բայց գլխաւոր մուտքի առաջ կուխը հետզհետէ տաք կերպարանք էր ստանում։ Երկու կողմից էլ արդէն սպանուածներ կային։

— Աշոտ Երկաթ, անձնատուր եղիր, քեզ այլ ևս փրկութիւն չկայ, կանչեց Գուրգէնը կարծելով թէ Աշոտ Երկաթի հետ է կռւում։

— Թշուառական, ճանաչիր ում հետ ես կըռւում, Նախախնամութիւնը փրկեց նրան, ասաց Գէորգ իշխանը և կամաց կամաց յետ գնաց, իսկ քիչ յետոյ քսան հոգուց տասն և հինգ հոգի միայն նատեցին իրենց ձիերը և աննկատելի կերպով դուրս եկան քաղաքից։

Աբասն ու Գուրգէնը մտան դատարկ պալատը և չգտնելով այնտեղ Աշոտ Երկաթին, բարկութիւնից սկսեցին քարուքանդ անել պալատը

և կողոպտել ապարանքը։ Որսը թռել էր նրանց ձեռքից և նրանք սկսեցին կրակ տալ այդ ապարանքը։ Գէորգ իշխանը բաւականին տեղ հեռացել էր քաղաքից երբ նա ետ նայեց և դառն ժպիտը անցաւ նրա դէմքի վրայ։ Այնտեղ՝ երազաւոր քաղաքում, ուր կառուցուած էր Աշոտ Երկաթի պալատը, բարձրանում էր կարմրա-ծխրանեգոյն բոց։ Այդ բոցը հետզհետէ աճում էր և կրակէ լեզուները աւելի և աւելի բարձր էին գնում և իրենց շուրջը տարածում աղօտ լուսաւորութիւն։

— Գոհութիւն Աստուծոյ, կանչեց Գէորգ իշխանը, թագաւորը փրկուած է, իսկ պալատը որքան ուզում է թող այրուի, ասաց նա և ապամարակելով իրենց ձիերին շուտով անյայտացան նոր ծագող լուսնի աղօտ լուսաւորութեան մէջ...

ԺԹ.

Յայծակի արագութեամբ տարածուեց Աշոտ Երկաթի կեանքի դէմ լարած դաւադրութեան լուրը և շարժուեց նաւով աւելի հալածուած և տանջուած էր։ Ժողովրդի ստորին խաւերն սկսած ալեկոծուել և արդար բարկութիւնը նրանց ոտքի կանգնեցրեց։ Յուզուեց նրանց սիրտը և նրանք, որոնք իրրև մի մեռած, անշարժ ու թմրած տարը էին կազ-

մում, այժմ մի այնպիսի զարկ տացան, որ արդէն դժուար էր նրան եւ կանգնեցնել։ Նրանց առաջնորդ էր պէտք և այդ առաջնորդը կար, դա հայր Մարտիրոսն էր, որի քարոզները, կենդանի խօսքը չէին մեռել նրանց մէջ, այլ դեռ պահւում էր նրանց սրտում։

Ժողովուրդը, հասարակ ամբոխը, որ չունէր իշխանների ու նախարարների եսասիրութիւնն ու վատամոլութիւնը—սիրում էր իր թագաւորին, սիրում էր Աշոտ Երկաթին անկեղծ, անձնատուր սիրով, բայց այդ սէրը խեղաւում էր իշխանների ու նախարարների ճնշման տակ և ոչ մի բանով չէր արտայայտւում։ Բայց բաժակը արդէն լցուած էր։ Այժմ մի ձայն էր պէտք նրանց ի մի գումարելու և այդ ձայնը լսուեց։

Մարտիրոս հօր ձայնը լսուեց Հայաստանի մի անկիւնից միւսը և նրա կազմած փոքրիկ խմբերը ստուարանալով գունդագունդ դէպի իրենց «սուրբը» դիմեցին։

Ծերունին յուզուեց. մի կողմից նրա սիրտը լցուեց, կսկիծը տոչորեց նրան՝ լսելով Աբասի արարմունքը իր եղբօր՝ Թագաւորի դէմ, իսկ միւս կողմից նկատելով իշխաններից արհամարհուած այդ շինականներին, որոնք զէնքը ձեռքերն առած եկել էին պահպանելու իրենց սիրելի Թագաւորին—նրա սիրտը լցուեց գոհունակութեամբ և աչքերը վեր ուղղելով աղօթում էր Աստուածն, որ հաստատ և անխախտ պահի այդ

ժողովուրդը, որի վրայ միայն յենուած է եկեղեցին ու պետութիւնը։

—Իշխան, դարձաւ Մարտիրոս հայրը դէպի իր մօտը կանչող Գէորգ Մարզպետունին, հրամայիր թմբուկը տալ, որ ժողովուեն բոլոր գնդերը և պատրաստուեն Թագաւորի թիկ տակ մտնելու։

Գէորգը խոր գլուխ տուեց և հեռացաւ նրա մօտից։ Քիչ ժամանակից յետոյ Բիւրականի ամբողջ պարիսպները դղրդացին փողի և թմբկի ձայներից և գնդերը պատրաստուեցան լսելու Մարտիրոս հօր հրամանը։

Երկու բաժին էին եղած գնդերը, որոնցից մի մասը հեծելազունդ էր, իսկ միւսը հետիոտ։ Մօտ տասն հազար կտրիճ տղամարդիկ ինքնակամ ժողովուել էին իրենց Թագաւորին պաշտպանելու։

Երբոր Մարտիրոս հայրը դուրս եկաւ և կանգնեց բարձր պատուանդանի վրայ, որտեղի երեւում էր ամբողջ բանակը, այն ժամանակ բոլոր զինուորները իջեցրին նիզակները և հանելով գլխարկները, նայեցին դէպի Մարտիրոս հայրը։

Պատկառելի և հրաշալի դէմք էր ներկայացնում այդ դէմքը։

Աստուածային սուրբ լոյսով էր պատած նրա առանց այն էր սպիտակ, ալեզարդ դէմքը։ Հեզ, բայց ոգևորութեամբ լի աչքերը յոյս և հաւատ էին ներշնչում նայողներին և անսովոր ոգևորութեամբ լցնում նրանց սիրտը։

—Որդեակը իմ, կանչեց Մարտիրոս հայրը և նրա ձայնը, այն անյողդողդ և ուժեղ ձայնը, դողդողաց։ Փղձկանքը կարեց նրան և արտասուքները երևեցան նրա աչքերի մէջ, որոնք մարգարիտների նման գլորուեցան նրա ալեզարդ մօրուքի վրայ։

Ջօրքը տեսաւ Մարտիրոս հօր արտասուքները և մի տեսակ անորոշ, խուլ շշունջ անցաւ նրանց մէջ, որը ցնցեց նրանց մարմինը։

—Սուրբը լաց է լինում, նա արտասուում է, տեսնո՞ւմ էք, աղամանդներ են գլորւում նրա աչքերից, ասում էին նրանք միմեանց և նրանց սիրտն էլ էր սկսում յուզուել, նրանք էլ պատրաստւում էին լալու։

—Որդեակք իմ, շարունակեց Մարտիրոս հայրը, ինձ և ձեզ սէր է պէտք և խաղաղութիւն, որ թողեց մեզ մեր Տէրը՝ Նա, ով խաչուեցաւ մեզ համար, բայց այդ սէրն ու խաղաղութիւնը խլում են մեզանից նոյն իսկ նրանք, որոնք պիտի պահպանէին դրան։ Դառն և սոսկալի է ներկայ ժամանակս, երբ եղբայրը եղբօր դէմ դրանամուտ է լինում։ Սոսկալի չէ երբ մի ազգ գործ է ունենում արտաքին թշնամիների հետ, լինին դրանք թէև տանապատիկ շատ, բայց սոսկալի է ունենալ ներքին թշնամիներ։ Հայոց ազգի և եկեղեցու համար էլ այնքան վտանգաւոր չեն արաբներն ու պարսիկները, որքան սոսկալի են այն դաւաճան, ստոր իշխանները, որոնք իրենց հարազատ թագաւորին դէմ են գնում։ Ար-

տաքին թշնամիները նման են այն տեսակ հիւանդութեանց, որոնք գոյանում են մեր մարմնի կաշուի զանազան մասերում և որոնց մենք աչքով տեսնում ենք, ուստի և հոգ ենք տանում սպեղանի դնելու հենց այնտեղ, ուր գոյացած է խոցը։ Բայց ներքին թշնամին, ներքին, անտեսանելի հիւանդութեանն է նման, որ չենք իմանում թէ ո՞ւր է նա կենդրոնացած և ո՞րտեղ թագնուած. այն ինչ նա կամաց կամաց, աննկատելի կերպով քայքայում է մեր մարմինը և ապա հասնելով մեր սրտին, ոչնչացնում է մեր գոյութիւնը և գերեզման իջեցնում մեզ...

Մենք ունինք երկու տեսակ թշնամի էլ։ Արտաքին թշնամին մեր արիւնից չէ, օտար է, բայց ներքին թշնամին մեր արիւնից է և մարմնից։ Ես ուղարկում եմ ձեզ կռուելու երկուսի դէմ էլ։ Ես ուղարկում եմ ձեզ կռուորելու ձեր հարազատներին անգամ, եթէ նրանք գնում են թագաւորի դէմ և վրդովում ընդհանուր խաղաղութիւնը։

Աղօթենք առ Ամենաբարձրեալը, որ Նա ոյժ և կարողութիւն տայ հնազանդ լինելու Աշոտ երկաթին և մինչև վերջին շունչը կռուելու նրա համար։ Թող հուր և մոխիր դառնան մեր ներքին ու արտաքին թշնամիները որպէս զի վերականգնի խաղաղութիւնը։ Կորչեն դաւաճանները և անիծեալ լինին նրանք։

—Մա՛հ դաւաճաններին, կանչեցին տան

հազար բերաններ և սրերը մերկացնելով երդուեցին հնազանդ լինել Աշոտ Երկաթին։

Ապա բոլորը չոքեցին և Մարտիրոս հայրը սկսեց իւր պահպանիչը։ Երբ վերջացրեց, Գէորգ իշխանը համբուրեց խաչը և նշան տուեց զօրքին։

Զօրքը շարժուեց դէպի Կաքաւաբերդ, ուր կանգ էր առել Աշոտ Երկաթը։ Մարտիրոս հայրը և Գէորգ իշխանը առաջնորդում էին դրանց։

Ի.

Ամեն կողմից Հայաստանը քարուքանդ էր լինում։

Աբասն ու Գուրգէնը տակն ու վրայ էին անում Այրարատեան երկիրը, Գագիկ Արծրունին իւր վասալ՝ Անձևացեաց և Ռշտունեաց իշխաններով ծածուկ և յայտնի կերպով ոտնատակ էին տալիս Հայաստանը և այդ բաւական չլինելով Գագիկ Արծրունին դաշն էր կռում արաբների հետ, ամիրապետից ստանալով թագ։ Որոշ էր ցանում նաև Աշոտ սպարապետը և իւր ժանիքները Աշոտ Երկաթի վրայ սրում, այն ինչ աները՝ Սևադան ևս հետզհետէ սառչում էր իւր վեհայից։ Աշոտ Երկաթը այդպիսով շրջապատուում էր հզօր դաւաճաններով և թշնամիներով, որոնք ամեն կերպ ուզում էին ոչնչացնել նրան։

Աշոտ Երկաթը գլուխ անցնելով Մարտիրոս հօր կազմած գնդերին, իսկոյն յարձակուում է Գուրգէնի երկիրների վրայ և հրոյ ճարակ տալիս նրան։ Այդ ժամանակ նա վասակ Սիւնեաց իշխանին բանտարկում է կայեան բերդում գրաւելով նրա մօտ դաւաճանութեան թղթեր գրուած Աշոտ սպարապետից, Գուրգէնից և Աբասից։

Վասակ Սիւնի իշխանը լաւ յարաբերութեան մէջ լինելով Գարգմանաց Սևադայի հետ, վերջինս այդ պատրուակ առնելով իւր զօրքերը առաջ է քաշում դէպի Աշոտ Երկաթի երկիրները և բանակ է ձգում Ախայեան գետի մօտ, բայց այդտեղ կռիւ տեղի չէ ունենում և Աշոտ Երկաթը շտապում է դէպի Դուին, ուր այդ ժամանակ գլուխ էր բարձրացել Աշոտ բռնաւորը։

Յորին թախիծը սրտին Աշոտ Երկաթը իւր գնդի առաջն ընկած շտապում էր դէպի Դուին։ Վիշտն ու բարկութիւնը ճնշում էին նրա սիրտը։ Նա զգում էր, որ ճակատագիրը անողոք կերպով հալածում է իրան, բայց մինչև ե՞րբ։

— Անողոք ճակատագիր, ապերախտ բաղդ, մինչև ե՞րբ պիտի խաղալիք դարձնես ինձ, մինչև ե՞րբ պիտի հալածես... Մի ապստամբութիւն ճնշում եմ և դեռ արեան հեռքերը սրիս վրայ չչորացած, դու ստեղծում ես ուրիշ ապստամբութիւն. այդ էլ ճնշում եմ մի նոր ապստամբութիւն է լսւում և կարծես ինձ դատապարտել ես յաւիտեան կռուել, յաւիտեան պատերազմների մէջ անց կացնել, այն ինչ ես հանգստութիւն

Ա. Խաչատրյան

դեկուքիւն սառնալը, ասաց Աշոտ Երկաթը և հրամայեց զօրքին կանգ առնել և հանգստանալ։ Զօրքը լուռ, առանց աղմուկի, կանգ առաւ և տարածուեցաւ կանաչ խոտի վրայ։ Բաւական ժամանակ նրանք հանգստացան։ Ապա զօրքը երկու բաժին եղաւ. մի բաժնի գլուխ անցաւ ինքը Աշոտ Երկաթը, իսկ միւս բաժնի գլուխ անցաւ Գէորգ իշխանը։

—Իշխան, քո գունդը լռութեամբ առաջ տար մինչև լեռան ալակողմեան լանջը և երբ կը հասնես այնտեղ՝ հնչեցնել տուր փողերը և սկսի յարձակումը, իսկ մենք էլ պատասխանելով ձեզ, կը նեղենք թշնամու ձախ կողմը։

Գէորգ իշխանը խոր գլուխ տուեց և իւր գունդը լռութեամբ առաջ տարաւ և երբ հասան նշանակուած տեղը, այն ժամանակ խորին լռութիւնը դղրդացրեց փողերի սարսափեցուցիչ ձայնը, որին արձագանք տուեց Աշոտ Երկաթի գնդի փողերը։ Աշոտ սպարապետը սարսափեց. նա այդպէս շուտով չէր սպասում Աշոտ Երկաթին, թէև գիտէր, որ նա կայծակի արագութեամբ անցնում է մի տեղից միւսը և իւր ծանր սրի զօրութիւնը ցոյց տալիս ամեն տեղ։

Մի քանի վայրկեան անցաւ և տիրեց լռութիւն, ահաւոր լռութիւն և ապա լսուեցան Աշոտ սպարապետի բանակից փողի ձայներ և քիչ յետոյ սրերի, նիզակների, վահանների և զոռիւն զօչիւնների ձայներ։ Կռիւը արդէն սկսուել էր անտառի մէջ։ Թէև Աշոտ սպարապետի բանակի

զէրքը շատ լաւ էր. բայց Աշոտ Երկաթը ամենևին չէր վհատում նրանց յամառ դիմադրութիւնից, այլ մանելով նրանց ամենախիտ շարքերի մէջ ջարդ ու փշուր էր անում նրանց և յետ մղում, այն ինչ միւս կողմից Գէորգ իշխանը մտնում էր ուղղակի թշնամու սիրտը և այնտեղ իւր աւերմունքը անելով քշում յետ։

Աշոտ սպարապետը զառնութեամբ նկատում էր, որ իւր զօրքերը փախուստ են տալիս, որ ինքը յաղթուում է և նա զառն կսկիծով կանչեց.

—Այս էլ չյաջողուեց, չար բաղդը հալածում է ինձ և Աստուած Երկաթին պահպանում։ Ո՜հ, Երկաթի արեանը վաղուց եմ կարօտ, բայց նա ձեռքս չի ընկնում, մինչև ե՞րբ...

—Իշխան, թշնամին մօտենում է, այլ ևս անհնար է դիմադրել, ասաց Անձևացեաց իշխանը մօտենալով Աշոտ սպարապետին։

—Ո՞ւր է թշնամին, ասաց Աշոտ սպարապետը վրդովուած ձայնով, առանց հասկանալու թէ ինչ է հարցնում։

—Մի՞թէ չես տեսնում, ահա երկու կողմից մեզ վրայ են գալիս, մի կողմից ինքը Աշոտ Երկաթը, իսկ միւս կողմից Գէորգ իշխանը։ Եթէ մենք նրանց ձեռքն ընկնենք, վաղը արևի ծագելը չենք տեսնի։

—Ճիշտ է, պէտք է ետ նահանջած, իսկ ո՞ւր են իմ զօրքերը, անիծուածները ամենքը ցրուեցան, ամենքը փախան։

—Փախչենք, տէր, ահա Աշոտ Երկաթը մեզ

վրայ է գալիս, ասաց Անձևացեաց իշխանը և երկուսն էլ իրենց ձիերի գլուխները ետ դարձնելով, կորան անտառի ծառերի ետևը։

Աշոտ Երկաթը որ հեռու չէր նրանցից, նկատեց նրանց փախուստը և կանչեց ետևից.

—Վախկոտ, անարգ սպարապետ, ուր ես փախչում...

Հետզհետե Աշոտ սպարապետի գնդերը ցրիւ էին գալիս և փախուստ տալիս, մի քանի տեղ միայն դեռ կատաղի կերպով շարունակւում էր կռիւը, բայց նրանք էլ շուտով վհատեցին տեսնելով մեծի փախուստը և ցրիւ գալով անտառի մէջ, սկսեցին փախչել կռուի տեղից։ Նրանց հալածում էր Գէորգ իշխանը իւր մի խումբ կըռիւճներով երբ նկատեց, որ երկու մարդ ամենայն արագութեամբ վազում են մացառների միջով և ամեն կերպ աշխատում են թագնուել։ Նրանցից մէկի դէմքը ծանօթ երևաց իրեն, բայց դրանից նա իշխանական զգեստներ ունէր հագին, որով աւելի հետաքրքրեց իշխանին, ուստի երկու զինակից ուղարկեց դրանց բռնելու, իսկ ինքը սկսեց հալածել միւս փախստականներին։

Կատուի դիւրաշարժութեամբ այդ երկու փախստականները մտան փշի մացառների մէջ և անյայտացան այնտեղ։ Դրանց հալածողները նկատեցին այդ և բարկութիւնից առաւելները կըճատացրին։ Փշի մացառները բռնում էին բաւականին տարածութիւն, իսկ ձիերով ներս մտնել այդ փշի մէջ անհնար էր, այն ինչ որսը փո-

փուստ տուեց նրանց ձեռքից և նրանք ձեռնունայն ետ դարձան։ Երկու փախստականները ներս մտնելով մացառների մէջ, փորող տալով սկսեցին առաջ քայլել։ Փշերը պատառոտում էին նրանց շորերը և արիւնլուայ անում ձեռքերն ու երեսը, իսկ յոդնածութիւնից և երկիւղից յառաջացած քրտինքը ծորում էր նրանց երեսից։ Նրանց երեսները արդէն այլանդակուել էին, աչքերը լցուել էին արիւնով, որ սարսափելի արտայայտութիւն էր տուել նրանց դէմքերին։ Ծոգնածութիւնից և ցաւի կսկծից նրանք հազիւ կարողանում էին շարժել իրենց ոտքերը, այն ինչ սարսափը այն աստիճան ազդել էր նրանց վրայ, որ նրանք գերբնական ոյժ էին գործ դնում և թէև դանդաղ, բայց կրկին շարժւում էին առաջ։

—Քոսակ, կանգնիր, շունչս կտրում է, մի վայրկեան հանգստանանք։

—Առաջ, իշխան, առաջ, ժամանակ չէ հանգստանալու, պատասխանեց մեզ ծանօթ Քոսակը և սոսկալի ճիգ թափելով ձեռքերով ճղեց փշերի արմատները և տեղ բանալով՝ մի քանի քայլ առաջ գնաց։

—Աղճա ինձ, Քոսակ, մի թողնիր ինձ միայնակ, թող գոնէ մի վայրկեան շունչ առնեմ, կըրկին աղաղակեց Քոսակի ետևից սողացող մարդը, որ Ռշտունեաց իշխանն էր։

Քոսակը մի վայրկեան կանգ առաւ, Ռշտունեաց իշխանի աղիողորմ ձայնը թափանցեց նրա սիրտը և նա խղճաց նրան և ուզեց հանգստու-

պարանք տուել, որ Քոսակի նման քար սրտերն անգամ վախեցան և տհաճութեամբ երեսը շուռ տալով ուզում էր եա գնալ, բայց մի վոքր ժամանակ կանգ առնելով, բռնեց իշխանի մազերից և սկսեց քարշ տալ դէպի անդունդի եզերը։ Ապա նա եա արաւ նրա սուրը, քրքրեց զրպանները և շպռտելով նրան անդունդը, կանչեց.

—Գնա, դժոխքի բաժին եղիր, այդ է դաւաճանների վախճանը, ո՞ գիտէ ես աւելի վատթար մահով մեռնեմ, բայց ես սոված եմ, հոգ եմ ուզում և հոգի համար միայն յանձն եմ առել այդ սուր պաշտօնը, իսկ դուք հանգիստ կեանք ունիք, բայց կրկին փառքի եանից էք վազում, ահա ձեզ փառք, գնացէք, վայելեցէք։ Քոսակը ցած նայեց և սառնասրտութեամբ գլուխը շարժեց։ Ոշտունեաց իշխանի գլուխը դիպել էր ժայռի սուր ծայրին և ուղեղը ցաք ու ցրիւ եղել, այն ինչ ցածում, նրա մարմինը ինչպէս մի մսի գունդ դեռ շարունակւում էր գլորուել...

ԻԱ.

Մի քանի գորշ ամպերի կոյտեր սլանում էին երկնակամարի վրայ և իւրեանց հետ միասին ցանում երկրիս վրայ ախորժութեան սերմեր... Հեղինէն կանգնած կայեան բերդի սենեակներից մէկում, ուր առ ժամանակ տեղափոխուած էր Աշոտ Երկաթի ընտանիքը, ինչպէս մի արձան, լուռ դիտում էր ամպերի կուտակուելուն և նրա սիրտը քաղցում էր։ Անթարթ աչքերը ամպերից չհեռացնելով կարծես նա տեղումբիւն էր ուզում նրանցից, մի լուր, մի համբաւ, յուսոյ մի նշոյլ էր խնդրում, բայց պատասխան չէր ստանում։ Տխուր և յուսահատ էին այդ ամպերը, որոնք աւելի ախորժեցնում, աւելի յուսահատեցնում էին նրան։

Նա իջեցրեց իւր հայեացքը դէպի իւր ոտքերի տակ, ուր անհեի անդունդի մէջ, օձի նման գալարուելով, վազում էր Զորագետը և քերում բերդի ստորոտները։ Խորին ուշադրութեամբ հետևինէն լսում է գետի հառաչանքին և կիսատ թեքուելով դէպի ձորը՝ պատասխան ապատում։ Սոսկալով նա լսում է, որ Զորագետն էլ է լալիս, երկնքի պէս նա էլ հառաչում է և որ իւր սրտի նման ամենքն են տանջւում... Ինչ կայ արդեօք, մի՞թէ իրեն նման ուրիշ են դրանք, անտէր, թշուառ, ծնողներից հեռացած, ինչ վիշտ տիպում է դրանց հառաչելու... և Հեղինէն դիւթական զօրութեամբ ուզում էր ցած թռչել, ընկղմուել այդ խոր, անհասկանալի զօրութիւնն իմանալու և հարցնելու նրանց վիշտը, բայց ուժասպառ ընկնելով պատնեշի վրայ, կրծքից միայն դուրս է թռչում խեղդող հեկեկանքը և նա սկսում է երեխայի նման արտասուել...

—Գէորգ, ես քեզ սիրում եմ, հասիր ինձ, սիրտս մաշւում է, հոգիս քաղցում։ Ես միայնակ

եմ այս հառաչող ու լացող տարերքի մէջ, միայնակ, հասիր, Գէորգ իշխան, հասիր, քո Հեղինէն քեզ է կանչում, ասում էր նա և բազուկները տալածում դէպի ձորը իբր սիրելուն գրկելու։

Բայց ձայն չկայ։ Գէորգը նրան չէ պատասխանում և Հեղինէի տարածուած ձեռքերը թրջուում են անձրևի կաթիլներով և նա սոսկալով եռ քաշելով ձեռքերը խեղդում է իբր մէջ հեկեկանքի ձայնը։ Նա սոսկալով յիշում է իբր տեսակցութիւնը Գէորգ իշխանի հետ, երբ իշխանը տարածուելով իբր ոտքերի տակ սէր էր պագատում։ Յիշում է նա այդ պատկերը և սառը դողը ցնցում է Հեղինէի մարմինը։

—Օ՜... ինչ իրաւունքով ես կանչում եմ, քանի որ ես նրան դէպի հուր ու մոխիր ուղարկեցի։ Նա ինձանից հաց ուզեց, ես նրան քար տուի, ջուր ուզեց իբր մորմոքուած սիրտը հովացնելու, իսկ ես նրան լեղի տուի... Ինչ արի ես, ինչ քարէ սիրտ կար իմ մէջ, որ ես այդպէս վարուեցի, իսկ հիմա կանչում եմ նրան...։ Բայց սրտիս մէջ անյայտ զօրութիւնը էլ չի թագնուում, այն ժամանակ ես խեղդեցի իմ մէջ, իսկ այժմ նա ժայթքում է, էլ չի դիմանում։ Րոպէ առ րոպէ հոգիս մաշուում է և չծաղկած կեանքս թառամում։ Իշխան, հասիր, հասիր քո Հեղինէին, ես սիրում եմ քեզ։ Կրկին ձայն չկար։ Մէկը միւսից դառն և սոսկալի մաքերը կրկին տանջում էին նրան և աւելի ու աւելի մաշում։

Բայց կիրքը, վրդովմունքը և հոգեկան այ-

լայլմունքը հետզհետէ դադարում էին և տեղի տալիս սառն գաղտնութեանը։

—Իսկ եթէ նա արհամարհի ինձ, մոռանայ... կամ սիրուհու ցնորուած իւր կեանքը վտանգներ մէջ ձգի, այն ժամանակ ես ինչ անեմ։ Օ՜... սարսափելի է իմ դրութիւնը։ Ես ճանաչում եմ Գէորգ իշխանի հոգին, չէ, նա ինձ չի մոռանայ, նա ինձ չի արհամարհի, բայց վախենում են նրա յանդուգն բնաւորութիւնից։ Նա կը մտնի կրակի մէջ, թշնամու խիտ շարքերում և թշնամու նիզակն ու սուրը չի խնայի ինձ համար թանկագին կեանքը։ Գէորգ իշխան, ետ դառ, ես յետ եմ վերցնում իմ խօսքերը, կրկնեց Հեղինէն և հեկեկանքը կրկին սկսեցին խեղդել նրան։ Ապա նա վճռեց նամակով յետ կանչել իշխանին պատերազմի դաշտից, բայց կրկին կանգ առնելով իբր վճռի վրայ երկար, շատ երկար մտածեց և ժողովելով իբր բոլոր արիութիւնը՝ կանչեց.

—Չ՜ո, ինչ լինում է թող լինի, թող խորտակուեմ ես, ոչնչանամ, նա պէտք է հայրենիքին և ես արգելք չպիտի լինեմ նրան...

Եւ Հեղինէն այնքան յափշտակուել էր իւր մտքերով, որ չնկատեց անգամ թէ ինչ խլրտում ընկաւ այդ ժամանակ բերդի մէջ և թէ ինչպէս նրա երկաթէ դռները անագին շռնչիւնով փակուեցան։ Այն ժամանակ միայն նա գլուխը բարձրեց, երբ հեռու անտառի միջից լսուեցան պատերազմական փողերի ձայներ և ապա կայեան բերդը, ուր գանուում էին Աշոտ երկաթի ընտա-

նիքը և ուր բանտարկուած էր սիւնեաց վասակ իշխանը, շրջապատուեց թշնամիներով։

Հեղինէն վեր թռաւ և դէպի Թագուհին վազեց։ Թագուհին գունատ և տխուր էր։ Նրա աչքերում եւս էին արտասուքի կաթիլները, որ Հեղինէի ներս գալով ուզեց ծածկել, բայց չյաջողուեցաւ։

— Թագուհի, ձվքեր են շրջապատել բերդը, հարցրեց Հեղինէն համբուրելով Թագուհու ձեռքը։

Թագուհին արտասուալից աչքերը դէպի Հեղինէն դարձրեց և դողդողուն ձայնով ասաց.

— Հայրս։

— Ինչպէս հայրդ, մի՞թէ ճշտուեցան լուրերը։

— Այո, Հեղինէ, ժամանակս այդպէս է, առները փեսայի դէմ է կռւում, բարեկամը բարեկամի, իսկ արտաքին թշնամին հանգամանքից օգտուելով կամաց կամաց ներս են խուժում։ Արաբներն արդէն ներս են մտել Այրարատեան երկիրը և սկսել են աւերել։

— Թող Աստուած լինի Թագաւորի պահապանը, ասաց Հեղինէն։

— Ամէն, պատասխանեց Թագուհին և այդ ժամանակ կրկին լսուեցան փողերի ձայները, որ երկուսի մարմինն էլ ցնցեց։

Փոթորիկը մօտենում էր և նրանք չոքեցին աղօթելու...

ԻԲ.

Ալեկոծուում էր Հայաստանը...

Շանթալից փոթորիկները բարձրանում էին ամեն անկիւններից։ Մինչդեռ Աշոտ Երկաթը զբաղուած էր Աշոտ սպարապետին ընկճելով, իւր աներոջ՝ Սեւադայի գլուխները արդէն աւերում էին իւր երկիրները։ Ամեն կողմից կարծես փոթորիկները պատրաստուում էին թափուելու Աշոտ Երկաթի գլխին և նրան բոլորովին խորտակելու։ Նախարարների և իշխանների մէջ զազրելի կուսակցութիւնները ուռասիրութիւնը այն աստիճանի սաստկացել էին, որ ամեն մարդ ուզում էր օգուտ քաղել հանգամանքից և ինքնիշխան տէր դառնալ։ Իւր հարազատ եղբայրը, աները, Աշոտ սպարապետը, Գագիկ Արծրունին և Գուրգէն Ափխազաց իշխանը ամեն ուրվայ էին անում իւր երկիրները։ Սեւադան՝ Սահակ իշխանը, ինչպէս մենք տեսանք, պաշարելով կայեան բերդը, կարճ ժամանակից յետոյ առաւ նրան։ Երբ նա ներս մտաւ այն գահլիճը, ուր գտնուում էին Թագուհին՝ իւր աղջիկը և Հեղինէն, նա՝ Գարգամանաց հզօր իշխանը շփոթուած կանգ առաւ և իւր արիւնաներկ սուրը իջեցրեց ցած։

Այնտեղ՝ գահլիճի խորքում, չոքած էին Թագուհին և Հեղինէն և աղօթում էին. նրանք չէս-

ցին մինչև անգամ թէ ինչպէս ներս մտաւ Սեւադան և շանթահարի նման կանգ առաւ դռնեբում։ Ծորին կսկիծը մի վայրկեան կրծեց Սեւադայի սիրտը, բայց շուտով զսպեց իրան և հաստատ քայլերով մօտեցաւ նրանց։

—Աղջիկս, ասաց նա և ուզեց գրկել թագուհուն, բայց թագուհին նայեց նրան, մի ճիչ արձակեց և անշնչացած ցած ընկաւ։ Հեղինէն վաթաթուեց նրան և սկսեց ուշքի բերել։

—Դուք թող սրան հրամայեց Սևադան և համբուրելով թագուհու մարմարեայ ճակատը նրա աչքերում երևեցան արտասուքի կաթիլներ։ Բայց նա շուտով զսպեց իւր հոգւոյ վրդովմունքը և դառնալով դէպի իւր նիզակակիցները՝ հրամայեց.

—Սիւնեաց Վասակ իշխանին ազատել բանտից, իսկ այս թռչնակին լաւ պահպանել մինչև որ կը հասցնենք Գագիկ Արծրունու ձեռքը, ասաց նա ցոյց տալով Հեղինէի վրայ։

Հեղինէի մարմնով մի ցնցիւն անցաւ և չոքելով արդէն ուշքի եկած թագուհու առաջ կանչեց.

—Ո՛չ, ինձ մի բաժանէք թագուհուց կամ սպանեցէք այստեղ։

—Թողէք դրան ինձ հետ, ինչպէս նա նոյնպէս և ես եմ քո գերին, հայր, արա, ինչ անելու ես, ասաց դողդոջիւն ձայնով թագուհին և բռնեց Հեղինէի ձեռքը։

—Լաւ, այդ յետոյ կը տեսնենք, ասաց խրոխտ ձայնով Սևադան և դուրս գնաց։

Կայեան բերդը բոլորովին յափշտակելով և միջի կանանց ու տղամարդկանց գերի քշելով Սեւադան մի ուրիշ բերդ է առնում և իւր անցած ճանապարհի վրայ գտնուած գիւղերն ու շէնները քարուքանդ է անում և հրոյ ճարակ դարձնում։ Անդթաբար նա կրակին է մատնում չհասուննացած արտերը և ապա գնալով կանգ է առնում Տաւրիշոյ լեռան ձորի վրայ։ Լուրը հասնում է Աշոտ Երկաթին և նրա սիրտը լցւում է թախիծով։ Կայծակի արագութեամբ նա 300 մարդով թռչում է դէպի Տաւրիշոյ լեռները և առանց ուշք դարձնելու Սևադայի ուժեղ գնդին պատրաստւում է յարձակուելու նրա վրայ։

Աշոտ Երկաթը բարկութիւնից մրմրում էր, կատաղութեան ամենասոսկալի բոցը կրծում էր նրա սիրտը, բայց նա դեռ զսպում էր իրան։ Մարտիրոս հայրը կանդնած էր մօտը և համոզում էր թագաւորին արիւն չթափել, եթէ հնարաւոր է։

Սևադան բանակ էր խփել մի քարաժայռի վրայ և իւր զօրքերի վրայ վստահացած արհամարհում էր Աշոտ Երկաթին, երբ Մարտիրոս հայրը խաչը ձեռքին երևեցաւ նրա բանակում։ Սևադան զարմացաւ և միևնոյն ժամանակ մի տեսակ սառը դող անցաւ նրա մարմնով, երբ տեսաւ իւր առաջ կանգնած Մարտիրոս հօրը, որի մասին շատ բան էր լսել։ Նա հաւատում էր թէ այդ ալևոր ծերունին կարող է դիւթել իւր ամբողջ գունդը և այն ժամանակ կռուի բաղդը ու-

բիշ ելք կը սատնայ։ Բայց Սևադան զսպեց իրան և ուզեց իմանալ նրա գալու պատճառը։

— Ծերունի՛, ինչու դու գանուում ես կռուի դաշտում, քանի որ քո տեղը վանքի խուցն է, ուր պիտի աղօթես քո հոգու փրկութեան համար, ասա՛, ինչ ասելու ես, շատախո՛ր, իմ սուրը ծարաւ է Աշոտ Երկաթի արեանը։

— Սահակ իշխա՛ն, իմացրու քո բարկութիւնը, և յիշի՛ր, որ վերը կայ Աստուած, որ ամենքին ըստ արժանւոյն է վարձատրում։ Յիշի՛ր, որ Աշոտ Երկաթը քո փեսան է։ Զուր արիւն մի թափէք, ես իմացրի Աշոտ Երկաթի բարկութիւնը և նա խնդրեց յայտնել թէ «ինչ չար բան կամ ինչ վնաս հասցրել եմ քեզ, որ քեզանից այսպիսի ծանր աղէտներ եմ սատնում։ Ի՞նչու դու մոռանում ես քո երդումը Ախայեան գիւղի մօտ և պատրաստուել ես թափելու իմ արիւնը։ Արդ, դարձի՛ր քո բարկութիւնից և դարձրու ինձ երկու բերդը, որ յափշտակել ես և իմ ընտանիքը և հեռացիր իմ երկրից։ Եւ այն ժամանակ մեր մէջ խաղաղութիւն կը տիրի և մենք կը լինենք հարազատ հայր և որդի»*)։

Սևադան մինչև վերջը լսեց նրան և ապա դառնալով դէպի վանահայրը, ասաց.

— Դու կաց այստեղ և ես անձամբ նրան պատասխան կը տամ։ Ապա նա հրամայեց իւր զօրքին կարգի կանգնել և պատրաստուել կռուի։

*) Յովհաննէս Դրասխանակերտցի, երես 188—189.

Ութ հազարի չափ զօրքը շարժւում էր առաջ, դէպի այն բլրակը, ուր կանգ էր առել Աշոտ Երկաթը իւր 300 յօգնած կարիճներով։ Աշոտ Երկաթի վրայ սարսափ ձգելու համար Սևադայի հեռւակ գնդերը մի կողմը շարուեցան և վահանները առաջ քաշելով ինչպէս մի պարիսպ էին ձեւացնում։ Հեռւակների թիկունքին կանգ էր առած զէնք ու զրահի մէջ կորած հեծելազունդը, իսկ առաջապահ ձիաւոր գունդը վահանները առաջները քաշած և մերկացրած սրերը ձեռքին զինուորական վարժութիւններ էին անում Սևադայի առաջ և սարսափ ազդելու նպատակաւ յետ ու առաջ էին շրջում։ Արեգակի ճառագայթները պսպղում էին նրանց սաղաւարտների, պղնձի ու պողպատի վրայ և սարսափելի տեսարան ներկայացնում։

Նայում էր Աշոտ Երկաթը այդ ահարկու գնդին և խորին թախիծը պատում էր նրա սիրտը։ Նայեց նա և իւր յօգնած կարիճներին և ապա նրանց միջից 200-ը միայն ընտրելով բլրից ցած իջաւ և ապա իւր հայեացքը վեր ուղղելով կանչեց.

— Տէր, եթէ ես եմ սխալը և այս երդմանը սատղը կարիր իմ գլուխը այդ յանցանքի համար, իսկ եթէ իշխանն է սուտ, պատժիր նրան և փրկիր ինձ սարսափա՛ր մահուանից, որ նա թափում է ինձ վրայ։

Եւ ապա այդ երդման թուղթը, որ կապել էին փեսան ու անները Ախայեան գիւղի մօտ,

ամրացնելով խաչանիշ դրօշակի վրայ, հրամայեց իւր կարիճներին առաջ խաղալ։ Մրրիկը այնպիսի ուժգնութեամբ չէր յարձակուի ինչպէս Աշոտ Երկաթը յարձակուեց Սևադայի գնդերի վրայ և այնտեղ մի ակնթարթում տարածեց զարհուրելի սարսափը։ Սևադայի գնդերը ցաք ու ցրիւ եղան, շարքերը խանգարուեցան և մոլորուած ոչխարների նման սկսեցին ցրուել հովտի, մացառների և լեռների մէջ, բայց Աշոտ Երկաթի կարիճները հասնում էին նրանց ամեն տեղ և սրաթողութիւն անում։

Ութ հազարից բաղկացած գունդը ցաք ու ցրիւ եղաւ և կոտորուեցաւ, միայն միայն ինքը Սևադան և իւր որդի Գրիգորը, որոնք բռնուելով բերուեցան Աշոտ Երկաթի մօտ, որը սոսկալի կատաղութեան մատնուած հրամայեց կուրացնել նրանց։

Ապա կրկին յետ խելքով Կայեան և միւս բերդը, ազատեց Թադուհուն և Հեղինէին, իսկ Գարգմանաց երկիրը նուաճելով իւր իշխանութեան տակ, գարձաւ իւր երկիրը, իսկ Մարտիրոս հայրը քաշուեց դէպի Բիւրականի վանքը։

ԺԹ.

Արևը արդէն թեքուել էր դէպի մուտքը. նրա թեք ճառագայթները շեշտակի ընկել էին Քոսակի աչքերին, որը դեռ

անուշ խոմփացնում էր ծառի տակ։ Երբեմն երբեմն միայն նա անգիտակցօրէն ձեռքը դէպի դէմքն էր տանում և դէմքից քշում էր ճանճերին և մոծակներին, որոնք անխնայ կերպով ծծում էին նրա երեսի կոշտացած արիւնը և նրան անհանգստութիւն պատճառում։ Յանկարծ նա շանթահարի նման վեր թռաւ և ձեռքը դէպի սևացած վիզը տարաւ։ Այնտեղից բզզալով թռաւ մի լինչ որ ճանճ և երբ ձեռքին նայեց՝ այնտեղ տեսաւ սրեան նշան, որ տհաճութիւն պատճառեց Քոսակին։

—Անպիտան իշամեղուները ինձ հանգստութիւն չեն տալիս, կարծես քիչ էր երեսս չանկոտուել և արանք էլ պակասն են լրացնում, մրմրաց նա և սկսեց ճմլկոտուել և բերանը լայն բանալով օրօշտալ։

—Է՜... այս ինչքան եմ քնել, շարունակեց նա, արևն արդէն շուտով մայր կը մտնի, այն ինչ այս անտէր փորիս մէջ ոչինչ չկայ, սովածութիւնը ինձ արդէն սկսում է տանջել։ Այստեղ ճնալը անհնար է, կարելի է քաղցածութիւնից մեռնել և իմ դիակը վայրենի գազանները քարշ կը տան, ինչպէս գուցէ քարշ են տուել իշխանի դիակը։

Եւ Քոսակը հետաքրքրուելով Ռշտունեաց իշխանի վիճակով, վեր կացաւ և դէպի ձորը նայեց։ Ձորի մէջ, դիակի վրայ, բազմաթիւ ագռաւներ նկատեց, որոնք ագահաբար գիշատում էին նրա դիակը։ Մի ղիւական ժամ անցաւ Քոսակի վայ-

բենի դէմքի վրայ և նա քար վերցնելով գլորեց դէպի ձորը։ Այդ ժամանակ ագռաւները իրենց կռնչիւնով թողին դիակը և սկսեցին պտտուել օդում։ Նրանք, ինչպէս երևում է, շատ դժգոհ մնացին, որ խանգարեցին իրենց անուշ ընթրիքը։

Քոսակը մի ում ժամանակ նայեց ագռաւներին, դիակին և յետոյ տհաճութեամբ շուռ տուեց երեսը։ Ապա կատուի դիւրաշարժութեամբ նա բարձրացաւ ծառի վրայ և սկսեց շրջակայքը դիտել։ Շուրջը կատարեալ անշարժութիւն էր տիրում։ Թռչունները միայն վերջին երգն էին երգում և սլանում դէպի իրենց բները, այն ինչ արևը սկսում էր թագնուել հեռու լեռների քամակին։ Իրան բոլորովին ապահով կարծելով, Քոսակը ցած իջաւ ծառից և այժմ սկսեց ճանապարհ որոնել, որ դուրս գայ փշի այդ անտառից. մեծ դժուարութեամբ, մացառներից բռնելով և անդնդի վրայ կախ ընկնելով նա քայլ առ քայլ առաջ էր գնում։ Մի փոքր անզգուշութիւն մի աննշան անյաջողութիւն և նա անդունդը կը գլորուէր, բայց նա ոչ մի բանի ուշք չէր դարձնում և երբ դուրս եկաւ այդ դժուար ճանապարհից և հասաւ ապահով տեղ, նա ազատ շունչ քաշեց։

— Վերջապէս, ասաց նա, այժմ ես ազատ եմ և իմ ճանապարհին արգելք չկայ, բայց թէ ուր պիտի գնամ... բայց նախ քան ուր գնալս վճռելը ես քաղցած ու ծարաւ եմ... Մի փոքր էլ առաջ գնամ, տեսնեմ Աստուած ինչ է յաջողում։

Նա կրկին սկսեց առաջ գնալ թէև նրա ոտքերը հազիւ էին շարժւում, երբ անձրևից գոյացած լճացած ջուր տեսաւ իր առաջը և առանց ուշք դարձնելու ջրի պղտորութեանը, նա ագահութեամբ խմեց ջուրը և ապա սկսեց երեսը լուանալ։ Այդ բանը նրան մի փոքր զովացրեց և այժմ սկսեց իր անելիքի վրայ մտածել։

— Է՜հ, հայերից օգուտ չկայ, ասում էր նա, Աստուծոյ ձեռքը պահպանում է Աշոտ Երկաթին և զուր դաւաճանները նրա դէմ որոգայթներ են լարում։ Ամեն տեղ իմ տէրերը չարդւում են և ես մինչև օրս մի կտոր հացի տէր չդարձայ չնայած իմ այնքան աշխատանքին, բայց մինչև ե՞րբ... Ջէ, պէտք է ձեռք վերցնել դրանցից, ինձ ոչ Գագիկ Արծրունին մի բանի տէր դարձրեց և ոչ Աշոտ ապարապետը, իսկ Ռշտունեաց իշխանը հօ ատամանների բաժին եղաւ։ Աստուած դրանցից ձեռքը վերցրել է, ես ուրիշ բան պիտի գտնեմ, թէ չէ սոված կը մեռնեմ... Ա՛յ, արաբներին ծառայութիւն անելը վատ չէ, նրանց մօտ մարդ կարելի է դառնալ, ի՞նչ անենք թէ նրանք ինձ կը սպիտին հաւատս ուրանալ։ Ի՞նչիս է պէտք ինձ հաւատը, նրանք որ քրիստոնեայ չեն ինչով են մեզանից պակաս, մի՞թէ նրանց Թուրը մեզնից աւելի կարուկ չէ։ Ջէ, վճռած բան է, ես պիտի ներկայանամ արաբաց զէխաւորին և իմ համարիւնները արիւնով ապահովեմ ինձ և յետոյ մի անկիւն քաշուեմ։ Աշխարհս այդպէս է, որ կողմը կշռի թաթը ծանր է այն կողմը պիտի

յակոբել։ Այս բոպէիս մեր բոլորը իշխանները, թագաւորից սկսած, վախենում են արաբներից և իրենց ունեցած չունեցած ոսկիները նրանց են ուղարկում։ Ես ուրեմն ինչ յիմարութիւն եմ անում, որ նրանց մօտ ծառայութեան չեմ մըտնում, քանի որ գիտեմ, որ նրանք լաւ վարձատրում են այն հայերին, որոնք մոռանում են Քրիստոսին և Մահմէդին պաշտում...

Այդպէս մտածելով Քոսակը առաջ էր գնում, առանց նկատելու որ օրը մթնում էր և երկիրս ընկղմւում խաւարի մէջ։ Բայց նա լաւ ծանօթ էր ճանապարհներին, նա գիտէր երկրի իւրաքանչիւր ծակ ու ծուկը. ուստի գիշերից ամենևին չէր վախենում։ Անցաւ մի փոքր էլ առաջ և նա դուրս գալով սիզաւէտ կանաչներից, նրա առաջը բացուեց մի խաչաձև ճանապարհ։ Ճանապարհներից մէկը տանում էր դէպի Դուին քաղաքը, միւսը դէպի Նախճուան, ուր այդ ժամանակ նստած էր Իւսուֆի փոխանորդը՝ արաբաց նըսր ոստիկանը։ Միւս ճանապարհները տանում էին դէպի Երազգաւոր, Վասպուրական և այլն։ Քոսակը կանգ առաւ ճանապարհի մէջ և խոր մտածող մարդու նման, ձեռքը դէպի ճակատ տարաւ։ Նա տատանւում էր թէ ո՛ր ճանապարհով գնայ։

—Դէպի Վասպուրական, վա՛ն, Գագիկ Արծրունու մօտ... չարժէ, նա էլ պոչը կամաց կամաց հաւաքել է, իւր աղջկայ փախուստից յետոյ խելքը վրան չէ և բացի դրանից ինչ պիտի ասեմ որ գնամ։ Նա ինձ արհամարհելուց յետոյ,

ոչ մի պարգևի չի արժանացնի։ Դէպի Դուին գնամ, ո՛ւմ մօտ։ Աշոտ ապարապետը հազիւ իւր գլուխն առաւ փախաւ և ո՛վ պիտէ թէ հենց հիմա նա Աշոտ Երկաթի ձեռքին չէ և մոխիր չէ դարձել Դուինը... Չէ, պէտք է այս ճանապարհը ընտրել, դէպի Նախճուան, ուրնստած է նըսրը, այնտեղ պէտք է Մահմէդին երկրպագութիւն տալ և... մի քանի ժամանակից յետոյ, հանգիստ ապրել... ասաց Քոսակը և հաստատ քայլերով դէպի Նախճուան տանող ճանապարհը գնաց։

Ինչ յետոյ նա կորաւ խորին մթութեան մէջ...

ԻԹ.

Դուինի ճակատամարտից յետոյ Գագիկ Արծրունու սրտի մէջ մի ինչ որ որդ էր սկսուել շարժուել, որ գիշեր ցերեկ նրան հանգստութիւն չէր տալիս։ Գագիկը զգում էր, որ իւր հոգւոյ մէջ գտնուող որդը այժմ մեծացել ահռելի կերպարանք էր ստացել, իսկ այդ որդի շարժմունքին՝ իւր միջի գոյութիւն ունեցող խղճին այժմ դժուար էր լռեցնելը... Գիշեր էր։ Լիալուսինը սփռել էր իւր գիւթող լոյսը և նրա ճառագայթները պար էին բռնել վանայլճի կոհակների հետ, որոնք ծփծփում էին մանրիկ

ալիքներով և կորչում հեռու ջրերի մեջ։ Բնութեան մէջ տարածուած էր մի այնպիսի խաղաղութիւն, որ մարդկային հոգին լցնում էր ցնորքներով և նրան տանում դիւթական այն աշխարհը, ուր գոյութիւն չունին աշխարհային մահը և ցած գործերը։ Այդ ժամանակ Գագիկ Արծրունին, հրապուրուած բնութեան այդպիսի հրաշալիքներից, իւր շքեղ պալատից գուրս եկաւ և իւր մտայոյզ հայեացքը անդիտակցօրէն նախ ձգեց լճի լայնատարած կապտութեան վրայ, ուր լուսնի ճառագայթներն էին խաղում և ապա հեռու դէպի ազօտ մթութեան մէջ կորչող լեռները։ Նրա հոգին լցուած էր վշտերով և անհանգստալի յոյզը շփոթում էր նրա արագ բարձրացող կուրծքը։ Նրա կրծքի տակ, ուղիղ սրտի մէջ, շանթեր էին ցցուած, այնտեղ վէրքերը թարախ ու ժահր էին արտադրում, դեղ ու դարման էին պէտք, վշտին սփոփանք էր պէտք բայց ոչ այս կար և ոչ այն և Գագիկ Արծրունին տանջւում էր և կսկծում...

—Հեղինէ, հասիր ինձ, սփոփիր և բժշկիր վէրքս, կանչեց յանկարծ Գագիկը մի այնպիսի խղճալի, յուսահատ ձայնով, որ կարծես նրա թոքերը կտոր կտոր եղան և պատառուեցաւ սիրտը։ Նրա ձայնի մանրիկները կորան անհուն լռութեան մէջ և կարծես սուզուելով լճի անդնդի մէջ—պատասխան չդարձրին։

—Աղջիկս... Ես զղջում եմ իմ արարքները, հասիր ինձ, կրկնեց Գագիկը և ՝ւատպուրականի

հպարտ արքայի աչքերում երևեցան արտասուքները, որոնք մի վայրկեան միայն ցօղացին լուսնի ճառագայթների տակ և ապա ընկան գետին։ Լալիս էր Գագիկ Արծրունին, լալիս և այդ արտասուքները հանդարտեցնում էին նրա հոգու վրդովմունքը և խաղաղացնում այն սոսկալի ցաւերը, որ յառաջացնում էր նրա սրտի որդը, այդ արդար բողոքը, խղճի այդ խայթը։

—Արի՛, աղջիկս, արի՛, ինչը փախցրեց քեզ քո հօրական տանից, սէրը թէ հօրդ ամօթալի արարքը։ Եթէ սէրը ես կը շաղկապեմ քեզ քո սիրած մարդու հետ, իսկ եթէ հօրդ ամօթալի արարքը—նա արդէն զղջում է իւր արարքի վրայ և զգում է իւր անցեալից... Արի՛, Հեղինէ, արի՛, հօրդ բազուկները քեզ են կարօտում, նրա զղջացող սիրտը քեզ է կանչում, ասում էր նա և կրկին հառաչում։

—Ես հաշտւում եմ խղճիս հետ, դարձիր, Հեղինէ, դարձիր և ուրախացրու ինձ քո խելօք խօսքերով։ Առանց քեզ դառն կը լինի փակել աչքերս, առանց քո ժպիտի սև կը լինի կեանքս։ Փառասիրութիւնից հեռանում եմ լոկ քո սիրուս պատճառաւ։ Քեզ միայն, Հեղինէ, ուզում եմ տեսնել, գէթ միանգամ էլ գգուել, համբուրել և ապա թէ մեռնել։

Խելագարի նման իւր պղտոր հայեացքը դարձրած դէպի ազօտ հեռաւորութիւնը, Գագիկը մրմռքով թռել էր դէպի Հեղինէն և կարծես խօսում էր հետը։ Ծնողական սիրտը քաշում էր իւր դստեր

կարօտը և այդ կարօտը շատ խոր և զգացուած էր, այնքան խոր, որ Գագիկ Արծրունուն թուում էր իւր նազելի աղջկայ սիրուն դէմքը, որը իւր թախիծով լի աչքերը դարձրել էր դէպի իւր հայրը: Ա՜խ, ինչքան համեատ, սուրբ և անարատ էր իւր աղջկայ հայեացքը: Բայց ինչքան վշտահար արտայայտութիւն ունէր նա: Տանջուած, մաշուած և դժգոյն էր Հեղինէի դէմքը, այն չէ ինչ որ առաջ, երբ կուսական անհոգ և անմեղ ժպիտը փայլում էր նրա կայտառ երեսին:

— Ի՞նչը վրդովեց քո անմեղ սիրտը, ո՛վ կորցրեց քո ծաղկափթիթ ժպիտը, խաւարացրեց ալ վարդ կարած այտերդ: Ո՞ր անգութ ձեռքը նկարել է վշտի նշանները քո անմեղ ճակատիդ, Հեղինէ, ամբողջ վասպուրականը կը ծախեմ և քո ոտքերի տակ կը դնեմ, որ դու դարձեալ ժպտաս այնպէս՝ ինչպէս առաջ, ոտոռոտաս անուշիկ տատրակի նման և երջանիկ լինէիս... Իսկ դու ո՛ւր ես, ո՛ւր հեռու ինձանից, չարանենգ բաղդին խաղալիք, քեզ անհուն սիրով սիրող ծնողից հեռու:

Գագիկը այնքան խորասուզուած էր իւր մըտքերի մէջ, որ ոչ մի բան ոչ տեսնում, ոչ զգում էր. նա ամբողջովին ամփոփուած էր իւր աղջկայ յիշողութիւններով, որոնք սուր սլաքի նման ծակում էին նրա սիրտը: Նա չէր զգում մինչև անգամ թէ ինչպէս կամաց կամաց ցուրտը սաստկանում էր և սառը քամին շոյում նրա բորբոքուած սիրտը: Վերջապէս ցուրտը թափանցեց

մինչև նրա ոսկրները և նա ցնցուեց, զգաց իրողութիւնը և խոր մտքերի մէջ ընկղմուած՝ դարձաւ պալատ: Մի քանի օրն և եթ նա նամակ ուղարկեց Հեղինէին և յայտնեց իւր սիրտը, իւր հոգին, այնուհետև Աղթամար կղզում սկսեց կառուցանել մի շքեղ և հոյակապ եկեղեցի, յանուն Սրբոյ Խաչին. (822 թ.), ուր ինքը մուտացու թեան տալով իւր վիշտը, անձամբ հսկում էր եկեղեցու շինութեանը:

Իե.

Ամ ձիւնոտ մարդ, պարզ գիւղական հագուստով թռչում էր լայն ճանապարհի վրայ վասպուրականից դէպի Այրարատեան երկիրը: Քափ ու քրտինքի մէջ կորել էր նրա ձին, բայց նա անխնայ կրկին մտրակում էր ձիուն և շտապում առաջ: Արդէն երեկոյացել էր և մութը սկսել էր պատել. ուստի նա աշխատում էր շուտ մի իջևանատեղ հասնել, հանգըստանալ և վաղ առաւօտ կրկին շարունակել ճանապարհը:

— Մի քիչ էլ առաջ, իմ ձիս, մի փոքր էլ եռանդ և մենք կը հանգստանանք, ապա վաղը երեկոյեան տեղ կը հասնենք, նամակը Հեղինէին կը յանձնենք և կրկին դէպի վասպուրական: Այդ ծառայութեան համար Գագիկ Արծրունին ինձ

ղաւ կը վարձատրի և այն ժամանակ ես քեզ նուէ
ու քիշմիշ կուտեցնեմ և դու կը մոռանաս քո յոգ-
նածութիւնը, ասում էր ճանապարհորդը, չոյում
իւր ձիուն և ապա ձեռքը տանելով դէպի ծոցը,
չօշափում էր այնտեղ դնուած նամակը, որ հա-
ւատիանայ նրա այնտեղ լինելը:

—Գիտեմ, իմ ձիս, ինչ ահագին վարձա-
տրութիւն խոստացաւ Գագիկ Արծրունին եթէ
Հեղինէից ուրախ պատասխան բերեմ նրան, ո-
ղրանով ամբողջապէս կապահովուեմ և իմ ընտա-
նիքս կազատուի սովածութիւնից: Է՛հ, վերջա-
պէս ես էլ մի բանի տէր դառնում, մարդամէջ
ընկնեմ թէ չէ օր չէ, որ ես քաշում եմ: Այս
մեր իշխաններն էլ հօ ոտնատակ տուին խեղճ
ժողովրդին, քամեցին նրա արիւնը... Բայց մեր
իշխանը, Գագիկ Արծրունին, շատ լաւ մարդ է,
հաւատայ որ լաւ մարդ է, խելօք, հեռատես,
ինչ անենք որ առաջ մի փոքր զժութիւններ ա-
րաւ և դրա համար էլ Աստուած պատժեց, աղ-
ջիկը նրանից փախաւ, որի կարօտից հալումաշ
է լինում, իսկ հիմա փոշմանել է և վանքեր է
շինում իւր մեղքը քաւելու: Է՛հ, Աստուած բարի
տայ նրան, ասում էր ճանապարհորդը իւր ձիու
հետ խօսելով և շտապեցնելով նրան:

Այդ ժամանակ արևը արդէն թագնուել էր,
ճանապարհի վրայ ոչ մի մարդ չէր երևում, այն
ինչ բնութեան մէջ թռչուններն ու բզեզները
սկսել էին իրենց երեկոյեան ճուռոցն ու ա-
մուկը: Արտուտն իր երգն էր երգում նստած

նորաբոյս արտերի մէջ, դեղձանիկները սկսել էին
իրանց գայլայլիկը, իսկ ճպուռն ու բզեզները ի-
րենց չափաւոր ծղրտոցը:

Ճանապարհորդը բաւականի տեղ առաջ գը-
նաց, արդէն մթնել էր երբ ճանապարհի ծայրին
մի հետիոտ մարդ նկատեց, որը գլուխը կախ ձգած
գնում էր առաջ: Ճանապարհորդը ձին արագաց-
րեց նրան հասնելու երբ հետիոտ մարդը ձիու
դափիւնները լսելով կանգ առաւ: Երբ ձիաւորը
մօտեցաւ նրան, նա խորին ուշադրութեամբ սկը-
սեց զննել ճանապարհորդին:

—Բարև բարեկամ, ասաց ձիաւորը և կանգ-
նեցրեց ձիուն:

—Բարև, պատասխանեց հետիոտը:

—Ո՞րտեղից ես գալիս:

—Վասպուրականից, շտապում եմ գործով,
ուզում եմ այս գիշեր հանգստանամ, որ վաղը
կարողանամ տեղ հասնել և իմ տերոջ յանձնա-
րարութիւնը կատարել:

—Բայց ո՞վ է քո տէրը:

—Ո՞վ է... մի՞թէ չգիտես ո՞վ է Վասպու-
րականի տէրն ու թագաւորը—Գագիկ Արծրու-
նին:

—Ես ծրտեղից կիմանամ, ինքս մի ռամիկ
մարդ, մեր իշխաններից ինչ տեղեկութիւն կու-
նենամ:

—Բայց դու մի՞թէ հայ չես, ծրտեղացի ես,
որ ոչինչ չգիտես թէ ինչեր է պատահում մեր
Հայաստանում:

—Աստուած վկայ, ոչինչ չգիտեմ, ես էլ հեռու երկրից եմ գալիս և գնում եմ մշակութեան։ Այսօր այնքան մարդ եմ եկել, որ հազիւ ոտքերս շարժում եմ։ Լաւ է որ այստեղ մօտիկ գիւղ կայ և այնտեղ կը հանգստանամ։

—Այդ շատ լաւ եղաւ, ուրեմն միասին կը հանգստանանք, ասաց ձիաւորը մարդը և իջնելով ձիուց, սանձը կուռը ձգեց և նրանք առաջ գնացին։ Հեռու լանջի ստորոտին երևում էր գիւղի ծուխը, կարճ ժամանակից յետոյ նրանք գիւղ կը հասնէին։

—Ի՞նչ է անունդ, բարեկամ, հարցրեց ձիաւորը։

—Քոսակ, պատասխանեց մեզ ծանօթ Քոսակը և իսկոյն և եթ փոշմանեց, որ իւր իսկական անունը յայտնեց, բայց նկատելով որ իւր ուղեկցից չճանաչուեց, սիրտ առաւ և սկսեց մանրամասն հարց ու փորձ անել թէ նա ո՞ւր է գնում և ինչու։ Ձիաւորը չէր ուզում յայտնել իսկութիւնը և խօսքերը ծռմռում էր, բայց Քոսակը թափեց իւր բոլոր ճարտարութիւնը և յաջողեցաւ իմանալ։

—Նամակ ունիմ Գագիկ Արծրունուց, վերջապէս ասաց նա։

—Ո՞ւմ վրայ, հարցրեց հետաքրքրութեամբ Քոսակը և նրա աչքերը փայլեցին մի տեսակ հրեշային փայլով։

—Իւր աղջկայ, Հեղինէի վրայ։ Մեր իշխանը կանչում է Հեղինէին, ճ, եթէ գայ Հեղինէն,

այն ժամանակ ես բաղդաւոր կը լինեմ, նա ինձ առատ կը վարձատրէ. ասաց ձիաւորը և մի տեսակ գոհունակութեամբ սկսեց բեխերը սրել։ Բայց Քոսակը այլ ևս ուշք չէր դարձնում նրա խօսքերի վրայ։ Նա արդէն հասկացաւ բանի էութիւնը և հրէշաւոր միտքը սկսեց ծնունդ առնել նրա գլխում։

—Գիտեմ, բարեկամ ինչքան բաղդաւոր կը լինիմ եթէ Հեղինէն համաձայնի վերադառնալ, ճ, ինձ նման բախտաւոր ոչ ոք չի լինիլ, վերջապէս կազատուիմ անպիտան չքաւորութիւնից։

—Ի հարկէ, ի հարկէ, գիտեմ... կցկտուր բառերով պատասխանեց Քոսակը։

—Դու ի՞նչ գիտես, ո՞ը... յանկարծ հարց առաջարկեց ձիաւորը և շեշտակի նայեց Քոսակի աչքերին։

Քոսակը դողաց. նոր հասկացաւ, որ իւր մտքի հետ ընկնելով կարող էր մահանել իրեն, ուստի ժողովելով իւր սառնասրտութիւնը ասաց.

Այն գիտեմ, որ դու բաղդաւոր կը լինես, որ Գագիկ Արծրունին լաւ կը վարձատրի քեզ եթէ աղջիկը համաձայնի գալ։

—Իսկ եթէ չհամաձայնի գալ...

—Ինչպէս չի համաձայնի, Հեղինէն անպատճառ կը գայ։

Նրանք մտան գիւղ և փոքրիկ ընթրիք ուտելուց յետոյ Գագիկ Արծրունու մարդը ուզում էր քնել, բայց Քոսակը գինուն զօռ էր տալիս և չէր թոյլ տալիս քնելու։ Նա խօսքը միշտ

նամակի մասին էր գրում և աշխատում էր իմանալ թէ ո՞ւր է պահուած այդ նամակը։

— Ո՞ւր է այդ նամակը, հարցրեց Քոսակը, երբ տեսաւ որ պինին իւր բարեկամի գլուխն ընկաւ։

— Ահա այստեղ, ծոցումս, չե՞ս հաւատում։

— Ինչպէս չեմ հաւատում, բայց ես շատ հետաքրքրւում եմ իմանալ թէ ինչպէս են գրում իշխանները։

— Դու կարդալ գիտե՞ս։

— Ո՛չ, ես կարդալ ոչ-տեղից կիմանամ։

— Էհ՛մ, եթէ գիտենայիր, կը զարմանայիր թէ ինչ մարգարիտի նման գիր է մեր իշխանի գիրը։

Քոսակը նորից լցրեց կաւէ ամանները գինով և երբ դատարկեցին, դարձաւ դէպի իւր ընկերը։

— Ծոյց տուր տեսնենք, որ ես էլ իմանամ թէ աշխարհիս երեսին ես էլ եմ ապրում ու տեսել եմ իշխանների գիրը։

— Ահա տես, ասաց Քոսակի ընկերը և ծոցը երկար քրքրելով հանեց շորի մէջ փաթաթած մագաղաթի կտորը և մեկնեց դէպի Քոսակը։

Քոսակի աչքերում կայծակներ թռան. նա ճանաչեց Գագիկ Արծրունու գիրը և ետ դարձնելով ասաց.

— Ճիշտ որ մարգարտաշար է։

Քիչ յետոյ իւր ընկերը խոր քնի մէջ ընկղմուեց, այն ինչ Քոսակը արթուն էր և երբ լսեց նրա խրխրոցը, նա զգուշութեամբ նրա

ծոցից հանեց Գագիկ Արծրունու նամակը և հեծնելով իւր ընկերոջ ձին, կէս գիշերին պատաւաղ...

ԻԶ։

Պարզ, անամպ երկնակամարի վրայ գունարթութեամբ բարձրանում էր արևը և իւր կենարար ճառագայթները սփռում չորս կողմը։ Ցուսահատ, աղքատացած և ոռնատակ տուած գիւղացին դէպի դաշտն էր շտապում, խանութպանը դէպի խանութ, վաճառականը իւր առևտուրն էր սկսում, երբ յանկարծ մի չարագուշակ դէպք սառցրեց ամենքին և մի տեսակ ահաւոր դրութեան մէջ ձգեց նրանց։ Օրուայ կիսում, երբ ամեն մարդ տաքացած իւր գործն էր շտապում վերջացնելու, լոյսը սկսեց հետզհետէ անյայտանալ և նրա տեղ տիրեց խորին, անթափանցելի խաւարը։ Աներևոյթ գօրութիւնը ծածկել էր արևի երեսը և նրա փոխարէն, երկնքի անհուն տարածութեան վրայ, փայլփլում էին աստղերը և յուսոյ թոյլ նշան միայն թողնում տարտափառ ամբոխի սրտում։ Մութ խաւարի մէջ յանկարծակի լսուեցան սիրտ պատառող հառաչանքներ և զարհուրելի հեծկլտանք։ Ամբոխը չոքել էր, ձեռքերը տարածել դէպի վեր՝ դէպի Անմահը և աղօթք էր անում։

Ամբոխը ամօթում էր անկեղծ, անարատ սրտով և խնդրում, որ Տէրը հեռացնէ հայոց ազգից այն պատուհասը, ինչոր գուշակում էր արևի խաւարումը։ Նա հաւատում էր, որ երկինքը արևի խաւարումով զուժում է ազգի վրայ հասանելիք վիշտը և նա առանց այդել վշտի և տանջանքի մէջ լինելով, սարսափում էր նոր գալիք չարիքից։

Բայց աներևոյթ զօրութիւնը երկար չպահեց արևի երեսը և խաւարը հետզհետէ յետնահանջեց և նրա տեղ կրկին բացուեցաւ պայծառ լոյսը, այն ինչ ամբոխի սրտի մէջ ծնաց մի անորոշ, մթին կասկած իւր վրայ գալիք չարիքի մասին։

Եւ ամբոխի կասկածը զուր չանցաւ։ Նախճռւանում նստող արաբաց Նըսր ոստիկանը հեղեղի նման իւր գնդերը առաջ էր քշում դէպի Հայաստան և միանգամայն ուզում էր կուլ տալ նրան և իսպառ ոչնչացնել այդ, առանց այն էլ քայքայուած, ազգը։ Նա ուզում էր բռնել ազգի երկու պետերին հոգևոր և մարմնաւոր, ոչնչացնել դրանց և ապա ամբողջ Հայաստանը իւր ձեռքը ձգել։ Լքուած և յուսահատուած էին երկու պետերն էլ։ Աշոտ Երկաթը արդէն յուսահատուել էր դաւադրութիւններից և ապստամբութիւններից, իսկ Յովհաննէս կաթուղիկոսը շուարել էր թէ որտեղ անցկացնի իւր կեանքի վերջին ծնօրդը որ արաբների ձեռքը չընկնի։

Աշոտ Երկաթը իւր աներոջ դէմ այնպիսի վայրկեան յաղթութիւնը դեռ նոր էր արել, երբ լսում է, որ Շամշուդիոյ ամրոցի վերակացու Վասակ Գնթունին ապստամբել է։ Նա իւր կարիճներով կայծակի արագութեամբ հասնում է այդտեղ, ջարդում դրանց, հնազանդեցնում գուդարներին և ուտիացիներին և դառնում կոտայք գաւառը։ Հենց այդ ժամանակ նորից ապստամբում է Ուտեաց վերակացու Յլիկ Ամբամը իւր ստորագրեալ իշխաններով։ Աշոտ Երկաթը շտապում է Ուտիք, իջևանում Կուր գետի ափին, անտառների մէջ, բայց տեսնելով որ անտառներում կռուել անհնար է և ցանկանալով զօրքին հանգստութիւն տալ մտնում է մի անմարդաբնակ ամրոց, ուր շրջապատուում է Ամբամի զօրքերով։ Աշոտ Երկաթը այդպիսով իւր զօրքերով բանտարկուում է այդտեղ ուր ոչ ջուր կար և ոչ պաշար։ Չկար դուրս գալու անցք, բացի նեղ կիրճից, որովհետև ամրոցի շուրջը անդունդներ էին մացառախիտ անտառներով պատած։ Նեղում են Աշոտ Երկաթի զօրքերին, որոնք դաւաճանելով դրան, խոստանում են Թշնամուն, որ կապեն Աշոտ Երկաթին և յանձնեն։ Աշոտ Երկաթը լսում է այդ և զարհուրում։ Գիշերով, կայծակի արագութեամբ ձեղքելով Թշնամեաց բանակը, անցնում է և գնում Կաքաւաբերդ, ուր յուսահատութիւնը պատելով նրան, իւր հետ հարիւր մարդ է վերցնում և գնում Սևան կղզին։ Այդ ժամանակ անտէր է մնում

ամբողջ Հայաստանը և Նրսը ոստիկանը օգտուելով հանգամանքից նախ ուզում է բռնել Յովհաննէս կաթուղիկոսին և ապա Աշոտ Երկաթին։

Այդ միջոցներին Յովհաննէս կաթուղիկոսը գտնուում էր Բիւրական ամրոցում, որ իրեն էր պատկանում և ուր շինել էր կուսակրօնների վանք և հոյակապ եկեղեցի կոփածոյ քարերով։ Նրսր ոստիկանի զնդերը արդէն մօտենում էին Բիւրականին։ Հեղեղը արդէն չարդում, ոչնչացնում էր անցած տեղերը և այժմ միանգամից ուզում էր լափել Բիւրականը և դրա հետ միասին հայոց հոգևոր գլխին, երբ Յովհաննէս կաթուղիկոսը իւր ընծաներով շտապում է պիջեցնել Նրսրի բարկութիւնը, բայց նա առ երես միայն ընդունելով դրա ընծաները, քիչ ժամանակից յետոյ դրժում է իւր խօսքը և իւր զօրքերը կրկին առաջ քաշում դէպի Բիւրական ամրոցը։ Յովհաննէս կաթուղիկոսը լսում է այդ և շուտով փախուստ տալիս այդտեղից դէպի Բագարան, Աշոտ բռնաւորի մօտ։

ԻԷ.

Գիշերը ցերեկ էր դառնում, ցերեկը գիշեր և օրը վազում օրի ետևից, բայց Հեղինէի կեանքի մէջ ոչինչ փոփոխութիւն չէր մտնում։ Օր աւուր նա հալւում էր, մաշւում և նրա սիրուն աչքերի շուրջը կա-

պոյտ շրջանակներ կազմւում։ Տաղտկալից էր նրա կեանքը։ Մատաղ կեանքը թառամում էր դառն և սիրտ խոցոտող մաքերով և նա անյոյս հայեացքը չորս կողմն էր դարձնում, մի յոյս էր փնտռում, բայց ոչ մի կողմից լուր չէր առանում։ Հեռու էր իւր հայրը, որի կարօտը օր աւուր մաշում էր նրան, հեռու էր նա և Գէորգ իշխանը, որից ոչ մի լուր չունէր թէ ո՞ւր է նա և ինչ է շինում եւ Հեղինէն միայնակ փակուելով իւր սենեակում, մաքերի ծովն էր ընկնում, որոնք անխնայ կրծում էին մատաղ սիրտը և գերեզմանին մօտեցնում։ Մի օր էլ, Հեղինէն փակուած իւր սենեակում արտասուք էր թափում, երբ ադախինը ներս եկաւ և յայտնեց, որ մի ինչ որ մարդ ուզում է ներկայանալ իրան։

Հեղինէն իսկոյն սրբեց արտասուքները և ուղղելով ցրուած մազերը հարցրեց.

—Ո՞վ է այդ մարդը։

—Չգիտեմ, իշխանուհի, նա սարսափելի դէմքով մարդ է և ուզում է քեզ հետ առանձին խօսել։

—Ո՞րտեղից է նա, չհարցրիր։

—Վասպուրականցի։

Հեղինէի սիրտը արոփաց։ Նա ձեռքը տարաւ դէպի կուրծքը, կարծես այնտեղով անցաւ մի ինչ որ անյայտ բան։

—Կանչեցէք նրան, հրամայեց Հեղինէն վրճռական ձայնով։

Աղախինը դուրս գնաց և երբ ներս մտաւ մարդը, Հեղինէն քարացածի նման կանգ առաւ և ապուշի նման սկսեց նայել։ Նրա առաջը կանգնած էր Ֆոսակը, որի դէմքը ծանօթ էր իրան։

— Ի՞նչ բան ունես, հարցրեց սառն կերպով Հեղինէն մի փոքը լռութիւնից յետոյ։

— Իշխանուհի, մի բարի համբաւ ունիմ հաղորդելու քեզ, յոյս ունիմ, կը վարձատրես ինձ ի տրիտուր այն նեղութեան, որ ես կրեցի ճանապարհին։

— Աւա՛, ինչ ուրախ լուր, վաղուց է որ իմ սիրտը չէ ճաշակել ուրախ լուրեր։

— Իշխանուհի, ինձ ուղարկեց հայրդ, վասպուրականի թագաւորը. նա կարօտ է քո տեսութեանը և րոպէ առ րոպէ սպասում է քեզ։

— Հմ՛յրս... ինձ կարծա է... Մի՞թէ նա մոռացաւ, որ ես զէնքը ձեռքիս դէմ էի գնում։ Մի՞թէ ես չէի, որ փախուստ տուի նրանից և նա կատաղի կռիւ մղեց իմ պատճառաւ և ամենուրեք սկսեց հալածել ինձ։ Այժմ ինչ է ուզում նա ինձանից... Եթէ ուզում է վերջ դնել կեանքիս, նա առանց այն էլ մօտ է իւր օրհասին...

— Իշխանուհի, դու ինձ չհասկացար։ Հայրդ ամեն բան մոռացել է և այժմ միայն քո կարօտն է քաշում։ Ինձ ուզում է դրկել, համբուրել և ոչ թէ կախաղան բարձրացնել։

Հեղինէն թափանցող կերպով նայեց Ֆոսակին։ Ըստ երևոյթին նա չէր հաւատում նրան։ Ֆոսակը այդ հասկանում էր, բայց ուզում էր դեռ փորձել նրան։

— Մի՞թէ ինձ չես հաւատում, իշխանուհի։ Ի՞նչու դու ոտքի տակ ես տալիս քո հօրը, որը բազուկները կարկառում է քեզ գրկելու և իւր երջանկութիւնը միայն քո մէջ է գտնում։

— Ո՛չ, ես քեզ չեմ հաւատում, սուր կերպով պատասխանեց Հեղինէն։

— Ահա ապացոյց, պատասխանեց Ֆոսակը և մեկնեց դէպի Հեղինէն մագաղաթի կտորը։

Հեղինէն շտապով առաւ նամակը նայեց գրին և նրա սիրտը սկսեց դողդողալ։ Նա ճանաչեց հօր գիրը, որին կեղծել ոչ ոք չէր կարող և նրա աչքերը մթնեցան։ Սրտատրոփ նա սկսեց կարդալ նամակը և նրա աչքերը լցուեցան արտասուքներով։ Նա մոռացաւ Ֆոսակին, որ աչքը չէր հեռացնում նրանից, և մտքով գրնաց հեռու՝ դէպի վասպուրական, ուր իւր հայրը արցունքներ էր թափում իւր համար։ «Թանկագին Հեղինէ, գրած էր նամակի մէջ, երկինքը վկայ եմ կանչում, որ առանց քեզ իմ կեանքը մաշւում է և գերեզմանին մօտենում։ Հեղինէ, հասիր քո հօր արցունքները ցամաքացնելու. նրա սիրտը քեզ է կանչում, քո տեսութեանն է կարօտում։ Ձգձում եմ արարքներս և մեղայ գալիս քո անարատ անուան առաջ, միայն թէ նամակս ստանալուն պէս շտապես դէպի ինձ։ Լռում եմ... քո հայրը քեզ մօտ մեղայ է գալիս։ Դու քո թոյլ տեղով յաղթեցիր ինձ։ Հասիր,

Հեղինէ, հասիր, իմ սարսածուած բազուկները ապասում են քեզ գրկելու...

Հեղինէն վերջացրեց նամակը, դարձեալ կարդաց, դարձեալ վերջացրեց։ Ամեն անգամ նա մօտեցնում էր նամակը շրթունքներին և համբոյրներով ծածկում նրան։ Ինչ նա կարօտել էր հօրը։

—Վերջապէս, ասաց նա և խոր հոգոց հանեց, վերջապէս, կրկնեց նա, իմ հայրը այլ ևս դաւաճան չէ, նա թողեց այդ սև դրօշմը, նա կանգնեց խայտառակութեան ճանապարհից, բայց թէ ինչով պիտի սրբի իւր կատարած նախատինքի դրօշմը... Ո՛հ, եթէ ամբողջ վասպուրականը զոհի ազգին, դարձեալ չի ազատուի... Բայց մթթէ բաւական չէ երբ նա զղջում է իւր արարքները և ես ինչ իրաւունք ունիմ այժմ հակառակելու նրան և դառնացնելու նրա առանց այն էլ դառն օրերը .. Օ՛, հայր, ես կարօտում եմ քեզ, ես ուզում եմ թռչել դէպի քեզ, գրկել քեզ, ասաց Հեղինէն ինքն իրեն և մօտենալով պատուհանին թանձր վարագոյրները եա քաշեց և նայեց դուրս։ Թարմ օդը շոյեց նրա բորբոքուած դէմքը և զովացրեց նրան։ Փայլուն, պրպտուն աչքերով Հեղինէն դէպի երկինք նայեց ուր այդ ժամանակ կախուած էին մի քանի սպառնալից ամպեր, որոնք պղտորեցին նրա սիրտը և նրա մտքով անցաւ Գէորգ իշխանը։

—Իսկ Գէորգ իշխանը, ասաց ինքն իրան, ո՛հ, ես նրան էլ չեմ կարող թողնել և առանց

նրա չեմ կարող ապրել։ Ո՞ւր է նա արդեօք։ Մոռացաւ ինձ թէ այժմ նրա հոգին միայն չըլնում է երկրի վրայ և անիծում ինձ... Ո՛հ, իշխան, դուրս բեր ինձ այս անյայտութիւնից և հասիր ինձ։ Հասիր, որ թռչենք դէպի վասպուրական, ուր իմ հայրը՝ վասպուրականի գոռող թագաւորը, կօրհնի մեր միութիւնը...

Այդ միջոցին Քոսակը, որ անհամբերութեամբ նայում էր, տեսնելով որ Հեղինէն մոռացաւ իրեն, սկսեց դիտմամբ հազալ, որ դարձնի Հեղինէի ուշադրութիւնը իւր վրայ։ Այդ բանը յաջողուեց նրան։ Հեղինէն դէպի Քոսակը նայեց իւր արտասուքներով լի աչքերով և ասաց.

—Ա՛խ, ես քեզ բոլորովին մոռացայ։ Քո բերած լուրը այնքան անսպասելի էր, որ ինձ վրայ խոր ապաւորութիւն գործեց։

—Շատ ուրախ եմ, յոյս ունիմ, որ գոհ մնացիր ինձանից։

—Ա՛ռ քո վարձատրութեան համար, ասաց Հեղինէն, մի քսակ տալով Քոսակին։ Գագիկ Արծրունին աւելի լաւ կը վարձատրի։ Յայտնիր հօրս, որ ես պատրաստ եմ նրա կամքը կատարելու։ Քոսակը ագահութեամբ առաւ քսակը և համբուրեց նրա փեշերը։

—Բայց իշխանուհի, շատ էլ մի շտապիր, այժմ վտանգաւոր է ճանապարհորդելը։ Մթթէ չգիտես թէ ինչ խառն ժամանակ է։

—Ի՞նչպէս, հարցրեց զարմացած Հեղինէն։

—Ասպատակները և արաբները ճանապարհ-

ներս բռնել են, ես հազիւ ազատուեցայ նրանց ձանկից։ Ճանապարհին դիակներ էին փռուած։ Ես սարսափեցի երբ տեսայ Գէորգ իշխ...

—Իո՛չ Գէորգ իշխանի, ասա, նա կենդանի է թէ մեռած, խեղդուած ձայնով հարցրեց Հեղինէն և բռնեց իւր սիրտը։

—Նրա նեխուած և այլանդակուած դիակը քաշքռտում էին գազանները, հարուածեց Քոսակը դիւական հրճուանքով։ Բայց այդ միջոցին Հեղինէն մի ճիչ արձակեց և անշունչ գետին փռուեցաւ։

Քոսակը դուրս թռաւ սենեակից և ինքն իրեն մտմտաց.

—Այս Գէորգ իշխանի վրէժը, որ ուզում էր ինձ փշերի մէջ բռնել. այժմ ինձ հարկաւոր է դէպի Նըսր ոստիկանը շտապել...

ԻԲ.

Արագած լեռը իւր ճակատը վեր պարզած, խորին մտմտուքի մէջ ընկղմուած նայում էր դէպի իւր աւագ եղբայրը՝ Մեծ Մասիսը և խոր հառաչում։ Ճակատը դեռ ձիւնով էր ծածկուած. իսկ փեշերը, որ ընդարձակ կերպիւ փռել էր չորս կողմը, արդէն ծածկուել էին քնքոյշ կանաչներով և երփներանգ ծաղիկներով. Իւր չորս կողմը սփռուում

էին Շիրակայ և Փամբակայ դաշտավայրերը, իսկ փեշերի վրայից վազում կարկաջահոս աղբիւրները և վճիտ ջրերի «բիւր ակունքը»։ Ուրախ էր շուրջը, ուրախ էր բնութիւնը, այն ինչ ինքը տխուր, յուսահատ։ Մի մթին ամպ պատել էր նրա դուարթ դէմքը եւ կորցրել ուրախ ժպիտը։

Արագած լեռան արևելա-հարաւային փեշերի վրայ, մի թումբի գլխին, որի տակ քչքչալով վազում էր մի առատ առուակ, փայլում էին Բիւրական ամրոցի պարիսպները, որտեղից լսւում էր եկեղեցու կոչնակի մելամաղձոտ հնչիւնը, որի ձայնի մանրիկները տարածուելով չորս կողմը, դիւզականներին դէպի ժամ էին հրաւիրում։ Եկեղեցին լի էր աղօթողներով։ Սրբազան պատկերների առաջ ծխում էին մոմերն ու խունկը, իսկ հոգևորականների քաղցր ու ներդաշնակ երգեցողութիւնը դիւթում էր ժողովրդի սիրտը։

Այնտեղ էր Սահակ սրբազանը, այնտեղ էր և մարտիրոս վանահայրը, որոնց դէմքի վրայ թէև երեւում էր մի տեսակ թախիծ. մի անորոշ երկիւղի արտայայտութիւն, բայց նրանք ամեն կերպ աշխատում էին մեռցնել իրենց մէջ հոգեկան այդ բուռն վրդովմունքը։

Սկսուեց քաղցրանուագ «Տերողորմեան» և ամենքը չոքեցին։ Մարտիրոս վանահայրը բարձրացրեց իւր ղիլ բայց դողդոջուն ձայնը և երբ արտասանեց.

Եկ, Տէր Յիսուս, ողորմեա մեզ

Ողորմութեան ժամ է արդէն
Եւ կ՚ըսեմ, Բարեխնամ, այդ արա մեզ
Այցելութեան ժամ է արդէն

Այդ ժամանակ նա փղձկուեցաւ, արտասուքները դուրս ցոլացին նրա աչքերից և նա այլ ևս չկարողացաւ շարունակել խօսքերը։

Զգաց ժողովուրդն էլ այդ խօսքերի ազդեցութիւնը, սուր սլաքի նման ցցուեցան նրա սրտի մէջ և նա էլ ինչպէս մի հոգի և մի մարմին սկսեց լաց լինել, հեծկլտալ այնպէս, ինչպէս «իւր սուրբը» լաց էր լինում։ Նոր վերջացել էր ժամասացութիւնը, երբ Բիւրականի հորիզոնի վրայ երևացին փոշու ամպեր, իսկ քիչ յետոյ Նրբ ոսոիկանի արաբաց հրոսակները։ Վայրենի ազաղակներով, դիւական հրճուանքով և թմբուկներ ածելով կանգ առան արաբները Բիւրականի պարիսպների տակ և պինդ օղակով շրջապատեցին նրան։ Միւս օրն և եթ նրանք դևերի նման յարձակուեցան Բիւրականի պարիսպների վրայ, որ նրան մի ակնթարթում ոչնչացնեն և ջնջեն աշխարհի երեսից, սակայն փոքրաթիւ հայ դիւնաւորների անձնուէր քաջութիւնը յետ մղեց նրանց պարիսպներից և չթոյլ տուեց նրա խուժել ամրոց։ Արաբները զարմացան նրանց դիմադրութիւնից և ապառնալիքներ ու հայհոյանքներ ուղարկեցին դէպի ամրոցի կտրիճները, եթէ նրանք անձնատուր չեն լինի։ Բայց Բիւրականի կտրիճները արհամարանքով նայեցին արաբների սպառնալիքներին։ Նրանց առաջ կանգնած էր իրենց

սուրբը՝ Մարտիրոս հայրը մի կողմն ունենալով Սահակ սրբազանին, որը իւր եպիսկոպոսական վեղարը մի կողմը ձգած, գլխին դրել էր փայլուն սաղաւարտ, իսկ ինքը կորել էր զէնք ու զրահի մէջ։ Նրա գեմքից կորել էր իւր հանաքչի ժպիտը և նա ահռելի կերպարանք էր առել։ Հոգևորական անձինք, բացի աղօթելուց, զէնք էին առել և միացել իրենց ժողովրդի հետ նրանց հետ ապրելու եւ նրանց հետ մեռնելու։

Արաբները կատաղաբար նորից յարձակուեցան, սանդուղքներից ուզեցան դևերի նման վեր մագլցել պատերի վրայ, բայց նրանք նորից ետ մղուեցան։ Նրանք պարիսպների վրայ տեսան ծերունի վանականին, որ խրախուսում էր հայ կտրիճներին և դրանով էլ չբաւականանալով, պոկում էր ահագին ժայռի կտորներ և շպրտում իրենց վրայ։ Ո՞վ էր այդ հոգևորականը որ այդպէս ազդել էր հայերի վրայ և սարսափ ձգել արաբների վրայ, որոնք ամեն անգամ յարձակուելիս յետ էին մղւում,

—Ո՜հ, ես նրան ոսկով կը շրջապատեմ ով այդ ծերունու գլուխը ինձ կը բերի, կանչում էր կատաղած Նրբը և հնարքներ որոնում Բիւրականը ձեռք ձգելու։ Նա կատաղած և վրդովուած մանէր գալիս իւր վրանի առաջ, երբ նրա առաջ յանկարծ կանգ առաւ մի մարդ։ Նրբը ոսոիկանը բարկացած սուրը պատենից հանեց և ուզեց այդ յանդուգն մարդու գլուխը թռցնել, երբ նա չոքեց և ասաց.

— Թող Ալլահը պահէ մեծ ամիրապետին, ես ուզում եմ մի ծառայութիւն անել իմ տիրոջը։

— Ի՞նչ ծառայութիւն, գեաւուր, միթէ դուք կարող էք ծառայութիւն անել ուղղափառներին։

— Թող Մարգարէն պահի իմ տիրոջը բայց վաղը, մինչև արևի մուտքը, Բիւրականը մոխիր կը դառնայ և ծերունի վանականի գլուխը քո ոտքերի տակ կը լինի։

Ընտր աստիկանին դուր եկան այդ մարդու խօսքերը և նա սուրը պատենի մէջ դնելով ասաց.

— Ասա, ով գեաւուր, ո՞վ է այդ վանականը և ինչպէս ես կարող եմ առնել ամրոցը. այն ժամանակ դու առատապէս կը վարձատրուես ինձանից։

— Միթէ չի ճանաչում իմ տէրը այդ վանականին, որ ամբողջ Հայաստանը տակն ու վրայ արաւ և ուղղափառներին հալածեց միանալով Աշոտ Երկաթի հետ։ Դրան «սպիտակ դև» կասեն, իսկ հայ ժողովրդականք «սուրբ» են անուանում։ Դա մի քանի խելառների «փիրն» է, անունը Մարտիրոս, Բագրեւանդի վանահայրը։ Միթէ լսած չես։

— Հը՛մ, յիշում եմ, շատ եմ լսել դրա անունը։ Լաւ է ուրեմն, ձեռքիցս չի գնայ։

— Ի հարկէ, տէր, առիւծի ճանկից էլ չի ազատուի։

— Բայց դու ո՞րտեղից գիտես այդ բանները և ինչպէս մենք կարող ենք առնել բերդը։

— Տէր, ես այս րոպէիս Բիւրականի մէջն

էի, ամեն բան տեսայ, ամեն բան լրտեսեցի և շտապեցի իմ տիրոջ տեղեկութիւն տալ։

— Լաւ է, լաւ, ասաց ինքնաբաւական կերպով Նբսրը, բայց ասա, գեաւուր, ինչպէս մենք կարող ենք մտնել բերդը։

— Բերդի հիւսիսակողմը մի գաղտնի անցք կայ, որը ազատ է պահապաններից, ես այդ անցքը պատրաստ եմ ցոյց տալու քո զօրքերին հենց այս գիշեր։

— Շատ լաւ, հենց այս գիշեր մենք յարձակումը կը սկսենք։ Եթէ ուղիղ դուրս եկան խօսքերդ, դու արժանաւոր վարձատրութիւն կը ստանաս։

— Թող Ալլահը պահէ քեզ, տէր, որ չես մոռանում խեղճ մարդկանց, կրկնեց Նբսրի խօսակիցը։

— Բայց ինչ է քո անունը։

— Քոսակ, քո ծառան։

Լաւ, Քոսակ, այժմ դու հանգստացիր. երբ կը կանչեմ իսկոյն կը գաս։ Քոսակը խոր գլուխ տուեց և գոհ սրտով հեռացաւ։

Մատնիչը գոհ էր և մտածում էր ամենահեշտ միջոցով թշնամիներին բերդ մտցնելու, այն ինչ այդ ժամանակ ամրոցի մէջ, կին, երեխայ, ծեր թէ երիտասարդ լցուել էին եկեղեցու մէջ և արտասուաթոր աչքերով լսում էին Մարտիրոս հօր քարոզը։ Մարտիրոս հայրը կանգնած բեմի վրայ խօսում էր անմահութեան վրայ և բացատրում մահուան նշանակութիւնը։ Կարծես նա

զգում էր մի ինչ որ չարագուշակ բան, կարծես նրա հոգին գուշակում էր, որ մանուիչը իւր գործը պիտի կատարի, ուստի շտապում էր վառ և կենդանի պահել յուսահատ և թուլացած ժողովրդի մէջ հաւատքի հոգին և ոյժը։

—Այո, ես տեսնում եմ Նրան, ասում էր նա, Նա է միայն յաւիտենականը և անմահը, իսկ ամեն ինչ անցաւոր է և ժամանակաւոր։ Մեր կեանքն էլ է անցաւոր։ Մի ակնթարթ, ժամանակի մի կարճ գոյութիւն, երբ մենք ճաշակում ենք Նրա բարիքները, ճանաչում Նրա անմահ գործերը և ապա պատում դէպի յաւիտենականութիւն։ Թող չվախեցնէ ձեզ արաբաց սուրը, նրանց սոսկալի տանջանքը և ամենքդ ի մի դարձած, պինդ պահեցէք ձեր կրօնը և արժանացէք Նրա սուրբ նահատակութեանը։ Ես չեմ ասում վիշտերդ ներկայացրէք անհաւատների մերկացրած սրերին, որ նրանք կտրեն, ո՛չ, քաւ լիցի։ Թանկ ծախեցէք ձեր կեանքը և քանի որ շունչ ներդ բերաններդումդ է սուրը ձեռքներիդ չձգէք, կռուեցէք ձեր թշնամիների դէմ, որն ուզում է խախտել ձեր կրօնը։ Վեհ է այն նահատակութիւնը, որ կատարում է հայրենիքի և կրօնի համար։ Իսկ այս իսկ վայրկենիս դուք կուռում էք և՛ հաւատի և՛ հայրենիքի համար։ Կոտորուեցէք ամենքդ էլ, մինչև վերջին մանուկը և դրանով դուք կարժանանաք Քրիստոսի անմահ պսակին։

Մարտիրոս հայրը լռեց և չոքեց աղօթելու։

Ինչպէս մարմնացած ասատուածութիւն, նա մի քանի վայրկեան անշարժ մնաց և ապա նա ցնցուեց, երիտասարդի նման վեր թռաւ տեղից և իջաւ բեմից։ Ժողովուրդը հեծկլտում էր և դառն արտասուքներ թափելով ընդունում ս. հաղորդութիւնը։ Երբ մինչև վերջին մարդը ընդունեց ս. հաղորդութիւնը այն ժամանակ կանայք և երեխաները մի կողմը քաշուեցան և մօտ 200-ի չափ պինուած մարդիկ դէպի պարիսպները շտապեցին։ Պարիսպներից դուրս հնչում էր արաբների դիւական քրքիջը և գնդերի շաչիւնն ու շառաչիւնը։ Ըստ երևոյթին նրանք պատրաստւում էին նորից յարձակուելու ամրոցի վրայ։ Երեկոյեան դէմ էր, արևը արդէն թագնուել էր և հեռագնահետ մութը ընկնում էր, երբ կատաղի գնդերը գրոհ տուին դէպի պարիսպները և ճանճերի նման փաթաթուեցին ամրոցին, որոնք կարծես ուզում էին շփոթել բիւրականցիներին, այն ինչ մի ուրիշ գունդ Քոսակի առաջնորդութեամբ գաղտնի անցքով մանում էր բերդը։

Հայ կարիճները անտեղեակ այդ բանից քաջերի նման կռուում էին և յոյս ունէին նորից հալածելու երբ ներսից մի չարագուշակ աղաղակ մի վայրկեան միայն սառեցրեց և սարսափը պատեց նրանց մարմնին։ Ամրոցի մէջ, այնտեղ, ուր գանուում էր եկեղեցին, նրա ճիշտ առաջը, երևում էր մի սև գունդ, որը վայրենի աղաղակներով աշխատում էր կոտրել եկեղեցու դուռը, ուր ապաւինուած էին հայ կանայք, երեխաները

և անկար ծերունիները։ Հայերը զգացին իրենց անյուսալի և վտանգաւոր դրութիւնը և սառը քրտինքը պատեց նրանց։ Սոսկալի մռնչիւնն արձակելով՝ նրանք թողին պարիսպները, որտեղից արդէն բարձրանում էր Թշնամին և կատաղութեամբ ընկան ներսի Թշնամիների վրայ։ Գիշերային խաւարի մէջ սկսուեց ձեռնամարտ սոսկալի կռիւը, որ ներկայացնում էր մի ահագին մսեայ գունդ, ուր որդերի նման վժվժում էին մարդիկ և իրար գրկած շուներն փշում, ընկնում իրենց ոտքի տակ տարածուած դեռ տաք դիակների կոյտի վրայ և անյայտանում, որովհետև նոր շարժուն կեաներ բարձրանում էին դրա վրայ և նորից իրար գրկւում...

Զարհուրելի էր այդ կռիւը։ Երեխանց ու կանանց ճիչն ու աղաղակը, վիրաւորների հառաչանքը և սրերի շաչիւնները մինչև երկինք էր հասնում։ Կռուղների ոչ մի կոպմը չէր ուզում տեղի տալ միւսին և նրանք մինը միւսի ետևից կոտորւում և մորթւում էին։ Բայց հայ զինուորների Թիւը արգէն պակասել էր, այն ինչ արաբները քանի գնում աւելանում էին։ Մի բուռն հայ կարիճներ միայն կռւում էին վերջին. օրհասական կռւով, երբ որ ամրոցի ամեն անկիւնից կրակէ հրեղէն լեզուներ երեացին և լուսաւորեցին սգապատ տեսարանը։ Այդ իսկ միջոցին տապարի հարուածներից չարդ ու փշուր եղան եկեղեցու դռները և կատարի հոսանքը ներս խուժեց... Խուժեց այնտեղից սիրտ պա-

տառող ձայները, կանանց ու երեխանց մահամերձ խրխրոցը։ Արաբները այնտեղ կոտորում էին երեխաներին, կոտորում կանանցը և կողոպտում ս. տաճարը։

Հայ կարիճները, որոնք հազիւ 40 հոգի էին մնացել, երբ տեսան անօրէնների եկեղեցի ներս խուժելը, յանկարծ գրոհ տուին Թշնամուն և դէմ-դիմի դէպի տաճարը։ Նրանց մէջ էր Մարտիրոս հայրը և Սահակ սրբազանը, որոնք մինչև սրունգները արեան մէջ Թաթախուած, արիւնաներկ սրերը ձեռքին առաջնորդում էին հայերին։ Այդ միջոցին ս. տաճարի բեմը բռնկուեցաւ և բոցերը ճարճատիւնով սկսեցին ս. սեղանը լափել և լուսաւորել կռուղներին, ուր խառնուել էին իրար հետ կին, երեխայ, ծեր, արաբ Թէ հայ զինուորներ և սպանդանոցի նման մորթոտում էին իրար։ Մի չեչոտ մարդ միայն, վառած ջահը բռնած, որ հէնց նոր կրակ էր տուել բեմը, կանգ էր առել ս. սեղանի վրայ և դիւական հայեացքով նայում էր կռուղներին։ Կարծես սովորական բան լինէը կատարուելիս նրա առաջ, կարծես մարդիկ չլինէին կոտորուելիս իւր առաջ, նա նայում էր սառն և անտարբեր հայեացքով և երբ մինը միւսի ետևից ընկնում էին հայ զինուորները այն ժամանակ մի տեսակ ցնցիւն անցնում էր նրա դէմքով և մի ինքնաբաւական ժպիտ փայլում նրա հրէշաւոր դէմքին։ Յանկարծ նա ցնցուեց և նրա դէմքը կա-

պոյտ գոյն առացաւ, աչքերը կատաղեցին և իւր ձահը ճօճելով՝ զարհուրելի ձայնով աւաց.

—Է՛յ, ուղղափառներ, սպիտակ դևին մի սպանէք, դրան կենդանի պէտք է ներկայացնել Նըսր ոսթիկանին։

Բայց նրա ձայնը խեղդուեցաւ վայնասունի և աղմուկի մէջ և ոչ ոք ուշադրութիւն չդարձրեց։ Այդ իսկ միջոցին ընկաւ Սահակ սրբազանը մի քանի տեղից վիրաւորուած, իսկ երկու սրի հարուած կարատեցին Մարտիրոս հօր թեւերը, բայց նա հինգ թէ վեց հոգով շրջապատուած դեռ կանգնած էր, երբ ձահը ձեռքին մարդը, որ Քոսակն էր, ցած թռաւ սեղանից և առանց երկիւղի մղուեցաւ կռուողների մէջ և որոտաձայն կանչեց.

—Հեռո՛ւ այստեղից։ Անհաւատների սուրբի դատաստանը ինքնը ամիրապետը պիտի անի։

Մարտիրոս հայրը նայեց դէպի դաւաճանը և արհամարհական հայեացք ձգելով՝ առաջ եկաւ և ասաց.

—Ծուռա՛, արա՛, ինչ անելու ես...։

Մարտիրոս հօր ուսերից առատապէս բղխում էր արիւնը և նա հազիւ ոտքի վրայ էր կանգնած։ Քոսակը ձահը մի կողմը շպրտեց և դիւական քրքիջ արձակելով գրկեց իւր անպաշտպան զոհին, որ ուշաթափ արդէն վայր էր ընկնում։

Այդ միջոցին երկու հարիւր հայ գինուորներից ոչ մէկը կենդանի չէր։ Արաբները հանգիստ շունչ քաշեցին և գևերի նման սկսեցին

կողոպտել տները, առևանգել հայ կոյսերին և մորթել երեխանցը։ Այդ ժամանակ Բիւրականը ներկայացնում էր Սոդոմը, ուր կրակն ու անօրէնների կատաղութիւնը ամենազզուելի պատկերը էր ներկայացնում...

Թ.

Գիշերը վերջացրել էր։ Սև ծուխը ամպի նման ոլոր մոլոր բարձրանում էր վեր և Բիւրական ամբողջում էլ քար քարի վրայ չէր մնացել։ Արևը արդէն կանգնած էր զենիթի վրայ։ Նըսր ոսթիկանի բանակից լսւում էր ուրախ դիւական քրքիջ, հայհոյական և անամօթ երգեր։ Բիւրականի և շրջակայ հայ գիւղերի նորատի կոյսերն ու կանայք համարեա մերկ, նրանց նախատինքի առարկաններն էին դարձել և միևնոյն ժամանակ նրանց վայրենի կրքերին բաւականութիւն տուողներ։ Այնտեղ՝ բաց երկնքի տակ, մի դիւական ճաշ էր կատարւում, ուր խորովածի, օշարակի և թմբուկի հետ միասին ամենաոսկալի տեսարաններ էին տեղի ունենում։ Մինչդեռ բանակի միջից լսւում էր թմբուկի, վայրենի քրքջի և երգի ձայներ, Նըսր ոսթիկանը իւր շքեղ վրանի առաջ անց ու դարձ էր անում և անտարբեր աչքով նայում էր իւր բա-

նակի մէջ տեղի ունեցող անասնական տեսարաններին։

— Այդ քիչ է գեաւուրների համար, ասում էր նա, գեռ շատ սարսափելի բաներ կը տեսնեն ինձանից. Թող գեռ ճանկս ձգեմ Յովհաննէս կաթուղիկոսին և Աշոտ Երկաթին, այն ժամանակ հեշտ է դրանց ոչնչացնելը։

— Այդ միջոցին նրա աչքումը ընկաւ Քոսակը, որ նրանից քիչ հեռու կանգնած, նայում էր արաբաց ոստիկանին, երևի նա եկել էր իւր վարձատրութիւնը ստանալու։

— Ա՛... գեաւուր, դու եկել ես, շատ լաւ։ Ես իսկոյն քեզ արժանաւոր վարձատրութիւն կը տամ քո ծառայութեան համար։ Բայց ուր է սպիտակ գլուխը, ես նախ նրան պիտի պատժեմ, արդեօք նա ուշքի եկաւ։

— Ոչ, տէր, նա իւր հոգին արդէն փչեց, պատասխանեց Քոսակը գլուխ տալով։

— Ա՛. . իսկ ինչ արիր դիակը։

— Դաշտի մէջ ձգեցինք։

— Վայրենի գազաններին կերակուր։

— Այո՛ տէր, նա, ով քո ամենակար զօրութեան դէմ է գնում, աւելի սոսկալի նախատինքի և պատժի է արժանի։

— Լաւ ուրեմն։ Կէս օրից յետոյ մեր բանակը հանւում է այստեղից. ես չպէտք է մոռանամ քեզ վարձատրելուց, ասաց Ներսը ոստիկանը և ապա դիմելով իւր մարդոց մի ինչ որ հրաման տուեց նրանց, որոնցից մէկը ուր որ

հեռացաւ, իսկ միւսները մօտենալով Քոսակին բռնեցին նրան և դէպի Ներսը բերին։

Ներսի օտարօտի վարմունքը սարսափ բերեց Քոսակին, նա դեռ շփոթուած սպասում էր թէ ինչ պիտի լինի։

Անցան մի քանի սարսափելի րոպէներ և ահա հեռուից երևաց մի կատաղի ձի, որի վրա նստած էր այն արաբը, որը փոքր առաջ կանգնած էր Ներսի մօտ։ Ձիաւորը կանգ առաւ Ներսի առաջ և իսկոյն ցած թռաւ ձիուց։

— Տեսնում ես այս ձին, ասաց Ներսը դիմելով Քոսակին, այս ձին քեզ եմ ընծայում, միայն ոչ թէ դու պիտի սրան կառավարես այլ դա քեզ։ Ես դրանից աւելի լաւ վարձատրութիւն չեմ գտնում քեզ համար։

Քոսակը չհասկացաւ նրան, բայց զգաց, որ մի ինչ որ զարհուրելի բան պատրաստում է իւր համար։

Ձին թամքած չէր և անհամբերութեամբ ոտքը գետին էր զարկում։

— Կատարեցէք հրամանս, ասաց Ներսը դիմելով արաբներին։ Արաբները իսկոյն մի պինդ թոկ բերին և ձգեցին Քոսակի վիզը, իսկ միւս ծայրը կապեցին ձիու աքիլից։

— Տէր, խղճա ինձ... մրմնջաց լեղապատառ Քոսակը, երբ հասկացաւ իրողութիւնը։

— Ո՛չ, քո արժանաւոր վարձատրութիւնը դա է։ Եթէ դու քո ազգին այդ ես անում, ուրիշին ինչ կանես, պատասխանեց Ներսը և նշան տուեց։

Այդ միջոցին ձիու սանձը հանեցին և մի քանի սաստիկ մտրակներ տուին նրան։ Ձին ցաւից կսկծաց և ահագին թռիչք արաւ քաշ տալով իւր եանից Քոսակին։

Բանակի ուրախութեանը մի նոր բան աւելացաւ։ Նրանք տեսան թէ ինչպէս Քոսակի գլուխը քարերին էր դիպչում և նրա ուղեղը ցաք ու ցրիւ գալիս...

Կէս օրից յետոյ Ներսը հանեց իւր բանակը և դափ ու զուռնով ուղղուեցաւ դէպի Նախճուան։ Բաւական ժամանակ նրանք առաջ էին գնում և վայրենի քրքջի և ուրախութեան ձայները մինչև երկինք էին հասնում։ Նրանք ճանապարհին քշում էին ձիերը և նշան դնելով գերիներից մինի վրայ, ցցում էին իրենց նիզակները նրանց սրտի մէջ և կարելով գլուխները ամրացնում նիզակների ծայրին և ձեռքին պըտտեցնելով վազում առաջ։ Գերիների լացը, կականը և ողբը միախառնուելով արաբների քրքիջի հետ մի զարհուրելի երաժշտութիւն էին կազմում, որ սառցնում էր մարդուս արիւնը։ Երեկոն մօտենում էր։ Ներսի բանակը կանգ առաւ մի առուակի շուրջը գիշերելու։ Վառուեցան խարոյկները և ընթրիքի պատրաստութիւնները սկսան տեսնել, այն ինչ գերիներին մի կողմը թողնելով մի քանի պահապան միայն թողին նրանց հսկելու իսկ իրենք սկսեցին իրենց գազանական ընթրիքն անել։

Այդ իսկ միջոցին մի խումբ ձիաւորներ զգուշութեամբ մօտենում էին Ներսի բանակին։ Նրանք, ըստ երևոյթին, վազուց է որ հետևում էին բանակին, բայց յարմար ժամանակ չէին գտնում իրենց նպատակը առաջ տանելու։

— Տղերք, դարձաւ խմբի գլխաւորը իւր ձիաւորներին, որոնք թուով մօտ երեսուն հոգի էին, այս բանակի հետ կռիւ սկսելով գլուխ չենք դուրս տանի, մենք պիտի միայն գերիներին ազատենք և խոյս տանք։ Ձեզանից մի մասը պիտի գերիներին տանի, իսկ ես մի քանի մարդկանցով նրանց ուշադրութիւնը ինձ վրայ կը դարձնել տամ, որ նրանք ձեզ հանգիստ թողնեն։ Այժմ ամենից յարմար ժամանակն է։

— Մենք պատրաստ ենք, իշխան, պատասխանեցին ձիաւորները։

Այդ ժամանակ խմբի գլխաւորը, որ Գէորգ իշխանն էր, նշան տուեց և մի ակնթարթում յարձակուելով գերիների պահապանների վրայ, բոլորին կոտորեցին և գերիներին սկսեցին տանել։ Բանակում իրարանցում ընկաւ։ Գէորգ իշխանը փոքրիկ խմբով բանակի հակառակ կողմը թռաւ և մեծ աղմուկ հանելով սկսեց շփոթել բանակին։ Արաբները գերիներին թողած գրոհ տուին դէպի Գէորգ իշխանը, որը կամաց կամաց սկսեց ետ նահանջել, իսկ երբ տեսաւ, որ բաւական ժամանակ է վատնուել, նա յանկարծ անյայտացաւ խաւարի մէջ և շուտով միացաւ ծնացած խմբի հետ, ուր գտնւում էին և հայ գերիները։ Նրանք առաջ գնացին դէպի Բիւրական, երբ արշալոյսը

նոր ուզում էր բացուել։ Գէորգ իշխանը տխուր առաջ էր գնում, երբ մի աղօտ լոյս նկատեց, որ իջնում էր երկնքից։ Նա ձին շտապեցրեց դէպի լոյսն իջնող տեղը և սարսափահար կանգ առնելով, մի վայրկեանից յետոյ ցած առաւ ձիուց, վերցրեց գլխարկը և չոքեց։ Նրա առաջ տարածուած էր Մարտիրոս հօր դիակը, առանց ձեռքերի, որը լուսաւորուել էր երկնքի լոյսով։ Հասան և գերութիւնից ազատուածներն, որոնք տեսնելով իրենց «սուրբին» դիակը, սկսեցին լալ և հեծկլտալ։

Գէորգ իշխանը համբուրեց Մարտիրոս հօր սառն ճակատը, որին հետևեցին և միւսները, ապա նրա դիակը վերցնելով տարան Բիւրականի տաճարում հողին յանձնեցին։ Հողը կուլ տուեց սրբազան աւանդը և հենց այդ ժամանակ արտուտները սկսան կրկչալ իրենց տխուր տաղերը, իսկ արշալոյսը ափռեց երկրի վրայ իւր կենաբար ցօլմունքները...

Լ.

Բիւրականի կոտորածից յետոյ Հեղինէն հանգստութիւն չունէր։ Նա, ինչպէս պահապան հրեշտակ, անցնում էր գիւղէ գիւղ, քաղաքէ քաղաք ու դեղ ու դարման անում տնանկներին ու վիրաւորներին։

Նա իւր կեանքը սկզբից ի վեր նուիրել էր թշուառներին ու այդ պատճառով գիշեր ցերեկ աշխատելով իւր սիրած ժողովրդի մէջ նրանց վէրքերն էր բուժում և այդպիսով մի փոքր հանգստութիւն տալիս իւր վշտաբէկ սրտին...

Երեկոյ էր։

Արևի վերջին ճառագայթները թեք ընկնելէին լեռան լանջին ընկած մի գիւղի վերայ, որի գետնափոր տնակների առաջ, զանազան դիրքերով, ընկած էին հիւանդ ու ծեր թշուառներ, որոնք ծանր հառաչելով դիտում էին արևի մուտքը։

Հեղինէն նստած էր մի լեռ քարի վրայ և իւր անթարթ աչքերով նոյնպէս դիտում էր արևի մուտքը, որը կամաց կամաց ծածկուելով լեռան քամակին, իւր հետից թողնում էր մի սև ու մռայլ ստուեր .. Սևով էր պատած և Հեղինէի սիրտը։

Դառն ու սրտամաշ մտքերը պաշարել էին նրան ու նրան ձգել մտքերի ահեղ ովկիանը։

Նրանից քիչ հեռու, կանաչ խոտի վրայ, կիսաթեք պարկած էր ծերունի Մաթոսը, որը անշարժ, ինչպէս մարմնացած արձան, նայում էր դէպի Հեղինէն։

Յանկարծ նա շարժուեցաւ, դողդոջուն ձեռքերով փայտին յենուեց ու դառնալով դէպի Հեղինէն, լալագին կանչեց.

— Ա՜խ, մի կաթիլ ջո՜ւր, ես այրուում եմ, պապակում։

Հեղինէն ցնցուեց։ Յետ մղեց իւր մռայլ

մոքերը, ծերունի Մաթոսին նայեց ու վեր թրռչելով տեղից մի գաւաթով ջուր մեկնեց դէպի Մաթոսը։

—Ա՛ռ, Մաթոս ապեր, խմիր, այս աղբիւրի ջուրը կրյագեցնէ ծարաւդ և կրզովացնէ քեզ։

—Ա՛խ, իմ սրտիս հրդէհը ոչ մի աղբիւրի ջուր չի կարող հանգցնել, պատասխանեց Մաթոսը գաւաթը առնելով։ Աղջիկս, ես պապակում, այրւում եմ։ Դժոխքը իւր բոլոր զարհուրանքով սրտիս մէջն է նստած ու ինձ տանջում, չարչարում է, հոգիս էլ չէ առնում, որ ես ազատուեմ անծայր տանջանքից։

—Հանգիստ ճիայ, Մաթոս ապեր, ամեն ինչ կանցնի, Աստուած ողորմած է, մխիթարելով ասաց Հեղինէն։

Մաթոսը ուղղուեց, նայեց ու դառնագին ասաց.

—Աստուած... Այո՛, բայց մենք այդ Աստծուն չըտեսանք, Տէր, մեղայ Քեզ։ Նրա փեշից բռնելով տանջանքների և արհաւիրքների ծովը նետուեցինք, բայց Նրա գութն ու ողորմութիւնը չտեսանք։ Տէր, մեղայ Քեզ։ Արաբը իւր սուրը հանած, մեր աչքերի առաջ մեր աղջիկներին ու կանանցը առևանգում է մինչդեռ մեր հարազատ իշխանները նրանց թև ու թիկունք են դառնում։ Մենք տրտնջում ենք, ոռնատակ լինում ինչպէս մի հասարակ մրջիւն և ոչնչ, ոչնչ իւր գթառատ ձեռքը չէ մեկնում մեզ պատուհասից ազատելու։ Աստուած, բայց ուր էր այդ Աստուած, երբ Բիւրականում դժոխքն էր տիրապետում։ Ո՞ւր էր նա, երբ այնտեղ՝ սպանդանոցի նման երկու հարիւր հոգի ընկան, երկու հարիւր նահատակ, ծեր թէ երիտասարդ, կին թէ մարդ, տղայ թէ աղջիկ, որոնք Աստուծոյ փեշից բռնած լալագին հայեացքով օգնութիւն էին մրմնջում ու շունչները փչում... Ես, ես միայն ազատուեցի այնտեղից և իբրև այդ զարհուրելի սպանդանոցի կենդանի վկայ, բողոքում եմ Աստուծոյ դէմ, բողոքում Նրա անտարբերը, սառն, անգութ վերաբերմունքի համար, Տէր, մեղայ Քեզ...

—Այդպէս մի՛ ասի, Մաթոս ապեր, ընդհատեց Հեղինէն, մի՛ բողոքիր Աստուծոյ դէմ։ Նա իւր դատաստանը այդպէս շուտ չէ անում։ Նա համբերում է բայց վերջը իւր Աստուածային շանթով խորտակում անօրէնին։

—Հա՛, վերջը... Այն ժամանակ երբ հազարաւորները կենդանի կենդանի խորովւում են, անասելի տանջանքներով հոգիները փչում։ Բայց ո՛ր մեղքի համար։ Ասա՛, աղջիկս, ինչէ արել ծծկեր մանուկը, որ անօրէնի սրի գոհ է գնում։ Ասա՛, ինչ յանցանք են գործել կանայք, որոնց սրինքների պատուհներից շարանները են շինում և իբրև յաղթական դափնի իրենց վիզը ձգում։ Օ՛... անասելի դժոխք էր ներկայացնում Բիւրականը սրի և կրակի մէջ, ուր ընկաւ մեր սուրբը՝ Մարտիրոս հայրը, որը դեռևներ մէջ կանգառած, երկու ձեռքերն էլ կարտուած, հարիւր

տեղից վիրաւորուած դեռ ազօթք էր մրմնջում ու իւր սիրած ժողովրդի համար երկնքից օգնութիւն հայցում... սակայն երկինքը լուռ էր, անզգայ, անգութ...

— Հայի ճակատագիրն է այդ, Մաթոս ապեր, ինչ կարող ենք անել։

— Ինչ կարող ենք անել... բայց ինչ են անում մեր իշխանները, որոնք արաբի հետ միացած մեզ ծեծում են, արիւնաքամ անում, եղբայր եղբօր դէմ յարուցանում ու իրենց սիրուն հայրենիքը սրի ու հրի ասպարէզ դարձնում։ Մեր գութանն ու մաճը ձեռց անտէր, դաշտերն ու արտերն ամայացան, լծկան եղն ու գոմէշը կոտորուեցան, ինչու, որովհետև մեր իշխանները փոխանակ միանալու, իրենց սին փառքի համար օտարի առաջ ստրկանում են, քծնում, շողոքորթում և մեզ անտէր թողնում... Օ՜... եթէ լինէր մեր մէջ համերաշխութիւն սէր, գիտակցութիւն, մենք այս օրին չէինք հասնի...

— Այո, համաձայն եմ։ Ա՜խ, հայի այդ սոսկալի եսը և փառամոլութիւնը իրենց տունն է քանդում, բայց դրանք էլի չեն խրատւում։ Ինչն է պատճառը, որ մեր թագաւորը այս րոպէիս Սևանայ վանքն է քաշուել և վիշտը սրտի մէջ, դառն հեծկլտում է Հայաստանի վիճակին նայելով։ Ա՜խ, եթէ իշխանները և նախարարները միանային և ժողովուէին թագաւորի շուրջը, այն ժամանակ Հայաստանի արշալոյսը կբացուէր և

Բայց ինչ եմ ասում. այդ արշալոյսը չի բացուի, քանի որ հարազատ հայրս է թագաւորի դէմ գնում իսկ ես ինչպէս մի ստուեր դեգերում եմ հիւանդ ու մեռնող ամբոխի մէջ և քաւում հօրս մեղքերը։

— Եւ թող Աստուած երկարացնէ կեանքդ, աղջիկս, դու սիրուիչ հրեշտակ ես մեզ համար, երկնքից տուած մի պարգև, ուր դառն և յուսահատ րոպէներին քո քնքոյշ ձայնով յուսոյ նշոյլներ ես ներշնչում մեզ... բայց մի ծաղկով գարուն չի գալ, աղջիկս և մենք մեռնում ենք և օրեցօր գերեզմանին մօտենում։

— Ո՛չ, Մաթոս ապեր, ժողովուրդը չի մեռնի, նա կապրի։ Կապրի, որովհետև նրա կենսատու ոյժը անսպառ է։ Իշխանները կգան ու կերթան, բայց ամբոխը կմնայ։ Կմնայ ու կզարթնի միանգամ։ Այն ժամանակ խաւարը կցրուի, մութը կանյայտանայ և գեղածիծաղ արշալոյսը կծագի ամեն կողմը։

— Օ՜... տայ Աստուած այդպէս լինի, գլուխը օրօրելով պատասխանեց Մաթոսը։ Բայց ահա սրտիս մէջ դժոխքը կրկին շարժուեց և ես յիշեցի Աստղիկիս, յիշեցի նրա նշանած Դաւթին, որը վերջին շունչը փչելիս ինձ նայեց ու անհուն ժպիտը անցաւ նրա դէմքով. կարծես հասկացնել ուզեց ինձ թէ հայրենիքի համար մեռնելը ինչքան քաղցր, ինչքան վսեմ է... Դաւի՛թ, իմ քաջ և անհման փեսաս, դու գնացիր ու ինձ ծովացունքի մէջ թողիր... Օ՜... ես էլ կ

էլ կգամ, ասաց ծերունին, գլուխը իջեցրեց, լուռ կացաւ ու երկու ջուխտակ արցունքները գլորուեցին նրա ալեզարդ մորուսի վրայ ու ընկան գետին։

Հեղինէն նայեց նրան ու սիրտը բռնեց։ Ա-պա հեռանալով նրանից, նորից նստեց լեռ քարի վրայ ու ինքն իրեն մտմտաց.

— Քնեց... մի քանի րոպէ լռեց նրա սրտի դժոխքը և ես այս բովանդակ երկրում մնացի միայնակ... Սուտ չէ ասում նա։ Ձորս կողմը աւերը, սրածուխրէն, կոտորած։ Ամեն կողմից լացի և արցունքի ձայները եմ լսում, որոնք սիրտս քերքերում, տրորում են ու ինձ գցում յուսահատութեան անունդը։ Ա՜խ, բարձրեալ Աստուածդ, անողոք երկինք, մինչև ե՞րբ հայի արցունքը քո գահի պատուանդանը պէտք է ողողէ, մինչև ե՞րբ հայի հեծկլտանքն ու հառաչանքը քո սրտի նուագածուխիւնը պիտի կազմեն... Դէմ, Տէր, այդ ազգի վրայ։ Դու նեղշնչիր իշխանների մէջ սէր ու միութիւն։ Հանիր նրանց սրտից ատելութեան ու նախանձի որոմները և ի մէկ դարձրու բարբարոսներին հալածելու...

Հեղինէն էլ լռեց ու քիչ յետոյ դադարեց մտածելուց։

Պահ մի դառն մտքերը գադարեցին նրա սիրտը կրծելուց ու նա ընկղմուեց քնի մէջ...

Հեղինէն քնած էր գլուխը լեռ քարի վրայ դրած, մինչդեռ արևը մայր էր մտել ու սկսուել լեռների ցուրտը, որը գողունի կերպով մտնում

էր Հեղինէի տանջուած ու հիւծուած մարմնի մէջ և կամաց կամաց իւր աւերմունքը գործում...

ԼԱ.

Ա՛ռիւծը բանտարկուած էր վանդակում... Մի սեպացած ժայռ, որի վրայ եղևում էին մի քանի վանքերը, իւր սև կուրծքը դուրս էր ցցել կապոյտ ջրերի միջից և գոռոզաբար նայում էր շուրջը։ Պարզ, վճիտ ջրի կոհակներն էին վխտում նրա շուրջը, որոնք երբեմն մանրիկ, քնքոյշ ալիքներով լիզում էին նրա սեպացած ժայռի ափերը, գորովագութ մօր նման շոյում նրա փեշերը, համբուրում նրան և ապա միմեանց եռևից յետ նահանջում և կորչում ջրերը ալիքների մէջ։ Իսկ երբեմն փրփրած ալիքները կատաղած վրայ էին վազում դէպի այդ սեպացած ժայռի կատրը, որ յանդգնել էր իրենց տեղը խլել։ Վիշապի նման գլուխները վեր բարձրացրած՝ ալիքները ուժգնութեամբ ծեփւում էին ժայռերին, նրան խորտակելու նպատակաւ, ջարդւում, փշրւում և ապա իրենց ոտքերի տակ անդունդներ բանալով՝ ամօթահար թագնւում այնտեղ և կորչում անյայտութեան մէջ. բայց եռեւից նոր ալիքներ էին գալիս, աւելի բարձր, աւելի զարհուրելի, որոնք դիպչելով ժայռերին, անյոյս կերպով նոյնպէս ոչնչանում էին, մինչև որ դադար էին տալիս իրենց անյոյս յար-

ձակմանը և լռում: Այդ ժամանակ լճի մակերեւոյթը պարզ հայելի էր ներկայացնում իւր խոր յատակով, ուր լուանի դիւթող ճառագայթների հետ պար էին բռնում ոսկեթել ձկները, փայլուն արծաթագոյն ձկնիկները, դեղարքունին ու կողակը և ձկների իշխանը:

...Այդ սեպացած ժայռի մէջ էր բանտարկուած առիւծը՝ Աշոտ Երկաթը, որի հառաչանքից սարսափից փախուստ տալիս:

Ուժասպառ ընկած էր նա իւր մի բուռն կարիճներով, որոնց թիւը 70-ի էր հասնում և իւր մթագնած հայեացքը դարձնում դէպի Սեւանայ ջրերի ափերը: Նա խոր, շատ խոր հոգոց է քաշում տեսնելով Հայաստանի ալեծուփ դրութիւնը և նրա սիրտը լցւում է խորին կսկիծով: Հայաստանը քանդւում էր, ժողովուրդը տառապում, իսկ ինքն իմնչ էր անում... Ո՛հ, վեր կաց, Աշոտ Երկաթ, քաշիր երկաթէ սուրդ, հուր ու մոխիր դարձրու թշնամիներիդ, որոնք ոչնչացնում են հայ ժողովրդին... Թող անշարժութիւնդ, իմնչը արդեօք սուրդ ժանգոտեց և վհատեցրեց քո հոգին... Տես, արաբները կրկին գլուխ են բարձրացրել և հայերի ծուխն ուզում են կտրացնել, իսկ դու մինչէ մոռացար հօրդ սուսերին տուած երդումդ թէ խորին յուսահատութիւնը վհատեցրեց քեզ... Հասիր, Երկաթ, հասիր, ժողովուրդը քեզ է սպասում, ազգը քեզ է կանչում... Եւ Աշոտ Երկաթը ցնցուեցաւ... Քաջի

ցումից սարերը դողացին և Սեւանայ լճի կռնակները դուրս թռան իրենց տեղից և կատաղած փժի նման գլուխները ցցեցին: Հողմը շաչեց և սպառնալից ամպերը թռան անհուն երկնակամարի խորքից և որոտալով ու փայլփլելով կախուեցին Սեւանայ գլխին: Տարերքն էլ կատղել էր քաջի դէմ և նրա ցնցումի դէմ իւր պատնէշներն էր տալիս:

— Է՛, հէյ, ձայն տուեց Երկաթը իւր քաջերին, հողին ու մրրիկը, ծովը ու ցամաքը մեզ էմ կռիւ են գալիս, զարթեցէ՛ք, նիզակներդ սուր սրեցէ՛ք, թրերիդ ժանգը սրբեցէ՛ք, կուրծքներդ պատնէշ շինեցէ՛ք և պահպանեցէ՛ք ձեր թագաւորին: Չէ՞ք տեսնում, ծովը ուզում է կուլ տալ ինձ, մրրիկը երկինք բարձրացնել, իսկ փայլակը կայծակնահար անել: Մեռած չէ ձեր թագաւորը, դեռ առողջ են լայնաթիկունք կռնեքս, անվնաս իմ պողպատի սուրը: Չերեղէն է այս սուրը, որ մի ակնթարթում հազարաւոր գլուխներ կը թռցնի և ծովին ու երկնքին կը հրամայի...

— Ապրի՛, մեր թագաւորը, ապրի՛ Աշոտ Երկաթը, գոռում են եօթանասուն բերաններ և նիզակները ճօճում օդի մէջ:

— Տուէ՛ք իմ սաղաւարտը, զէնք ու զրահս, հերիք է ինչքան հանգստացանք, ասում է Աշոտ Երկաթը և արեան ծարաւի աչքերը դէպի լճի ափը դարձնում:

Նա տեսնում է այնտեղ արաբների անհուն բազմութիւն, որոնք պինդ օղակով շրջապատել

էին իրեն և դիւթական քրքիջ էին արձակում տեսնելով քաջին զէնք ու զրահի մէջ կորած։

Մի տեսակ դառն, արհամարհական ժպիտ է արձակում Երկաթը և հրամայում տասն նաւակ պատրաստել։

Տեսնում են արաբները և ժպտում բանտարկուած առիւծի պատրաստութեան վրայ։

Ժպտալիս երևում է նրանց սպիտակ ատամները, որոնք սարսուռ էին ազդում մարդուն։

—Խելացնոր Աշոտ, ինչ է ուզում նա անել, ասում են հեգնօրէն արաբները, մի՞թէ չի տեսնում ինչքան շատ ենք մենք, ինչքան ահաւոր։ Արաբիայի և Աֆրիկայի խորքերից ենք եկել մենք, որ գրա արիւնը խմենք, իսկ դա ուզում է ուզում թռչել...

Բայց երկիւղի ոչ մի նշան չի երևում Աշոտ Երկաթի սառն դէմքի վրայ. նրան չեն վախեցնում սև սև դէմքերը, տափակ ճակատները, հաստ շրթունքները և թշնամիների «բիւր» թիւը։ Անհոգիւղ նստում է նա նաւակի մէջ և նշան տալիս քաջերին, որոնք տեղաւորուելով հօթնական մարդ իւրաքանչիւր նաւակի մէջ, շարժում են թիակները և դէպի թշնամին վազում։

—Աշոտ Երկաթ, գոռում են արաբները, թող քո խելառ վարմունքը, զէնքդ ցած դիր և արի չոքիր մեր Բըշր*) ոսոխիկանի առաջ, որ չհաւաբեցնի արևդ։ Ե՛լ, դժուխքին խնդրիր ա-

*) Այդ ժամանակ Նըսրի տեղ ոսոխիկան էր նշանակուած Բըշր։

միրապետից, մոռացիր պիղծ հաւատդ և պաշտիր Մահմէդին։

Լսում է Աշոտ Երկաթը և կատաղութիւնից մռնչում. նրա մռնչիւնից ծովը աւելի է կատաղում և յորձանքները աւելի ուժգին են զարկւում ժայռերին։

Տասն նաւակը տասն տաշեղի նման կոհակները պար են ածում և սպառնում նրանց կուլ տալ անտակ ջրերում։ Բայց անվախ են նաւավարները, անվախ քաջի պէս։ Թռչում են նաւակները առաջ, թռչում և դէպի թշնամիները վազում։ Նրանք երբեմն բարձրանում են լեռան ալիքի գլխին, երբեմն իջնում խոր անդունդները և նրանց գլխին թափւում են բիւրաւոր նետեր։

—Տղերք, յառաջ, յառաջ, կանչում է Աշոտ Երկաթը և սուրը պատեհանից հանում։ Այդ ժամանակ նրանք մօտենում էին ափին, ուր թշնամին խիտ խիտ կանգնած ուզում էր կուլ տալ Աշոտ Երկաթին և իւր կարիճներին։

Թռչում են նետերն անթիւ, անհամար. ծովը կուլ է տալիս բիւրաւոր նետեր և Աշոտ Երկաթը անվնաս մօտենալով ափին, յանկարծակի այնպէս գրոհ է տալիս, որ թշնամին առ ժամանակ ճնշում է սառած, քարացած։

Պլպլում է Աշոտ Երկաթի սուրը և աչ ու ձախ մահ սփռում։ Գոռոզ արաբը Ալլահ է կանչում և մահուան մէջ տոչորւում։ Սարսափը պատում է արաբաց ահռելի բանակին և նրանք

չեն իմանում դևերը են իրենց հետ կռւում թէ մարդիկ։ Բայց մէթէ մի բուռն մարդիկ կը յանդգնեն ահռելի բանակի դէմ կռիւ մանել։— Չէ, ղրանք դևեր են կամ դիւթած մարդիկ և իրենց սուրը չի կարում ղրանց, մտածում են արաբները և լեղապատառ դէպի փախուստ վազում։ Ցրւում է բանակը և նրանք անհովիւ ոչխարների նման սկսում են զանազան կողմն վազել և իրենց գլուխն ազատել, բայց ամեն տեղ հասնում են Աշոտ Երկաթի կարիճները և նրանց ջարդ ու փշուր անում։

Բայց ով է ահա գեղեցիկ արաբական նժոյգ ձիու վրայ նստած բանակից փախուստ տալիս և ամօթահար գլուխը ցած իջեցրած անխնայ մտրակում է ձիուն։ Հասիր, Աշոտ, հասիր, դա դուռդ Բըշըր ոստիկանն է, որ քեզ սպառնալիքներ էր տալիս և ուզում էր քո արիւնը խմել։ Աշոտ Երկաթը նայում է նրան և մի հեգնական ժպիտ է արձակում։

— Թող գնա, դա էլ չի համարձակուի ոտք կոխել Հայաստան, լաւ դաս էր որ ստացան արաբները ինձանից, ասում է նա և հրամայում դադար տալ հալածելուց։

Բայց Բըշըրը էլ յետ չէր նայում և վազում էր առաջ, նրա ետևից վազում էին փախստական գնդերը և շտապում առաջ։

Երկար ժամանակ նրանք առաջ էին գնում, երբ նրանց առաջ երևաց Քեղայոց ամրոցը և կատաղած Բըշըրը հրամայեց կանգ առնել այդտեղ

և հուր ու մոխիր դարձնել Քեղայոց ամրոցը։ Աշոտ Երկաթի վրէժը դրանցից էր ուզում առնել, բարկութեան բոցը Քեղայոց ամրոցի վրայ էր ուզում թափել, երբ յանկարծ մի խումբ ձիաւորներ վրայ տուին արաբների վրայ և պահական էլ իրենք լրացրին։

— Տղերք, ձեր սրերը կարուկ արէք, մեկի տեղ հինգ գլուխ թռցրէք, կանչեց խմբի գլխաւորը՝ Գէորգ իշխանը և մղուեցաւ արաբների մէջ։

Բըշըրը սարսափեց։ Նրա մարմնով սառը դող անցաւ. նա տեսաւ, որ Ալլահը իւր երեսը դարձրել է արաբներից և ուզում է գլուխն առնել կորչել, բայց այդ միջոցին նրա ձին ծանր վիրաւորուեց և մահամերձ վայր ընկաւ։ Կատաղութիւնից նա առաջները կրճտացրեց, վեր թռաւ տեղից և խելագարի նման աչ ու ձախ նայեց։ Անգիտակցօրէն նա իւր կէս սուրը մխեց իրեն մօտից անցնող արաբի սիրտը և ինքը հեծնելով նրա ձիու վրայ, առանց գլխարկի, մազերը փշաքաղուած, առաջ սլացաւ և շուտով անյատացաւ ձորերի մէջ...

Գէորգը ցնծում է իւր յաղթութեան վրայ և շտապում դէպի Աշոտ Երկաթը, որոնք գրկւում են և փառաբանում Աստծուն։

Այդ յաղթութիւնը վերջնականն էր։ Արաբները այլ ևս չէին համարձակւում ոտք դնել Հայաստան, դաւաճանների ձայնն էլ չի լսւում և նրանք երկիւղից քաշւում են անկիւնները։

Աշոտ Երկաթն ազատ շունչ է քաշում և սկսում է խնամել իւր երկիրը...

ԼԲ.

Սևանայ ճակատամարտից յետոյ Հայաստանի մի ծայրից մինչև միւսը խաղաղութիւն սփռուեցաւ: Կոտորածները վերջացան և հայերն ազատ շունչ քաշեցին, իսկ Աշոտ Երկաթը սկսեց զարմանել ժողովրդի վէրքերը:

Այդ միջոցին Յովհաննէս *) կաթողիկոսը գնում է Վասպուրական Գագիկ Արծրունու մօտ ուր մի տարի միայն կենալով, վախճանւում է Ծերուքեան հասակին հասած և թաղւում այնտեղ:

Բայց դեռ նոր Աշոտ Երկաթը սկսել էր հանգստանալ, երբ մի չարագուշակ ամպ մրթնացրեց հայոց երկնքի հորիզոնը և Աշոտ Երկաթը մահիճ մտաւ:

*) Սոյն Յովհաննէս կաթուղիկոսը, որ կոչւում է Դրասխանակերացի, Վասպուրականում գրում է իւր պատմութիւնը, որ գլխաւորապէս մանրազնին նկարագրում է իւր ժամանակակից դէպքերը: Բ. Ա.

Ծանր հիւանդութիւնը բռնեց քաջին, որից նա յաղթական չկարողացաւ դուրս գալ:

Երբ նա յաւիտեան պիտի փակէր աչքերը, կանչեց իւր եղբօրը՝ Աբասին, որը դեռ թշնամաբար էր նայում իրան և դողդոջուն ձայնով ասաց.

—Տէր, եղբայր իմ, ձեռքդ և մոռանանք մեր անցածը: Ես մեռնում եմ և իմ գահը յանձնում քեզ, խնամիր ժողովրդին, պահպանիր նրան, որովհետև նա է կազմում աղդի հիմքը:

Փոթորիկն անցաւ և այժմ սկսւում է պեղածիծաղ արևը, օգտուիր նրանից բայց հեռու կաց քոնու և դաւաճան իշխաններից: Սէր և խաղաղութիւն եմ թողնում քեզ, պահպանիր հայրենիքդ և այն ժամանակ Տէրը կօրհնէ քեզ... ասաց Աշոտ Երկաթը և նրա հոգին բաժանուեց մարմնից:

Աբասը չոքեց, համբուրեց եղբօր սառը ճակատը և փակեց քաջի աչքերը:

Այսպէս չկար Աշոտ Երկաթը, որը փոթորկալից կեանք վարեց 14 տարի և 6 ամիս:

ԼԳ.

Գէորգ իշխանը, Բեղայոց ամրոցում Բրշը ոստիկանին չարդելուց մի քանի ամիս յետոյ, շտապում էր դէպի իւր Հեղինէն: Անխնայ կերպիւ նա մտրակում էր ձիուն և ա-

ռաջ սլանում։ Նա արդէն կատարել էր Հեղինէին տուած խօսքը և այժմ յաղթական կերպով գնում էր սառնալու թանկ գնով ձեռք բերած Հեղինէի ձեռքը։

— Երկրիս վրայ խաղաղութիւն է տիրում և այլ ևս չկան թշնամիներ, որոնց կարողանամ հալածել. Հեղինէ, գալիս եմ քո ոտքերիդ տակ ընկնելու և քեզանից աջեր խնդրելու։ Դադարեց կռիւը, խորտակուեցան արաբները և այժմ տեսնենք ո՞ւր կուզարկես ինձ... Օ՛, էլ ոչ մի վայրկեան չեմ կարող առանց քեզ ապրել, էլ դու ինձ չես կարող հեռացնել։ Կատարեցի տուած խոստմունքս և այժմ դու իմն ես և ինձանից էլ ոչ ոք չի կարող խլել, ասում էր Գէորգ իշխանը և աւելի շատ պեղնում ձիուն, բայց մի տեսակ անորոշ զգացմունք նրան հանգստութիւն չէր տալիս և շփոթեցնում էր նրա սիրտը։ Նա վաղուց է, որ տեղեկութիւն չունէր Հեղինէից թէև գիտէր թէ ուր է գտնւում նա։

Իսկ եթէ մոռացած լինի նա ինձ... օ, այն ժամանակ սոսկալի կը լինի իմ դրութիւնը կամ թէ վատպուրական լինի գնացած... Հոգ չէ, եթէ վատպուրական լինի գնացած, ես կերթամ նրա համար մինչև աշխարհիս վերջը, բայց եթէ մոռացած լինի ինձ կամ արհամարելիս անա սոսկալի բանը... Բայց չէ, ես ճանաչում եմ նրա հոգին, նա սիրում է ինձ, սիրում անհուն, անարատ սիրով։ Նա սպասում է ինձ և ես պի-

ւի թռչեմ դէպի նա, ասաց Գէորգ իշխանը և սլացաւ առաջ։

Բայց մինչդեռ Գէորգ իշխանը իւր ձին էր շտապեցնում, արդեօք ինչ դրութեան մէջ էր Հեղինէն։ Մենք թողինք նրան լեռ քարի վրայ քնած, երբ ծանր հիւանդութիւնը բռնեց նրան ու նա մահիճ մտաւ։ Այն որից յետոյ նրա դրութիւնը հետզհետէ վատացաւ և նա կուռւմ էր մահուան հետ։ Զառանցանքների մէջ նա միշտ յիշում էր Գէորգ իշխանին և նրան կանչում, իսկ Գէորգ իշխանը չկար ու չկար։

Այն օրը, երբ Գէորգ իշխանը քաղաք մտաւ՝ Հեղինէն սարսափելի կերպով զառանցում էր և այլ ևս ոչ ոքի չէր ճանաչում։ Նրա մօտ կանգնած էր Սահակ քահանան և լացակումած աչքերով նայում էր Հեղինէի բորբոքուած դէմքին։ Նա նոր տուել էր հիւանդին ս. հաղորդութիւնը և աղօթում էր Հեղինէի փրկութեան համար։

— Այս ո՞ւր էք տանում, ասում էր Հեղինէն, ես չեմ ուզում այդ ճանապարհով գնալ, չէք տեսնում ահագին ժայռի կատրները, իսկ նրանց գլխին սև սև արաբներ... յիմարներ, այդ էլ չէք հասկանում... Չ՛ը, ինչ ես դէմքդ ծռել, տէր հայր, դու ծիծաղո՞ւմ ես, բայց ինչու դէմքդ ծամածռւում է... ո՛ւ, տես, ինչպէս երկարացաւ, իսկ հիմա տափակացաւ... ճշմարիտ որ ծիծաղելի է... Դարձեալ սև ամպեր, անզութները հենց սրտիս վրայ են պարկում և ճնշում ինձ. Գէորգ իշխան, ո՞ւր ես գնում, սպասիր...

այ դու անգութ, ինչպէս չես խղճում ինձ, մի՞թէ սիրա չունիս, որ ինձ միայնակ ես թողնում... Ջէս տեսնում, սենեակիս առաստաղը վերցնում են, պատերը հեռու քաշում, իսկ ցուրտը կամաց կամաց մտնում է մարմինս...

Սահակ քահանան լալիս էր և հեղեղի նման արցունքներ թափում։ Նա հասկանում էր, որ ոչ մի ոյժ այլևս չի կարող մատաղ կեանքը փրկել և խոր կսկիծը ցնցում էր նրան Մի փոքրիկ, աննշան յոյս ունէր նրա առողջանալու համար և այդ յոյսը Գէորգ իշխանն էր։ Ո՜հ, եթէ նա գար, եթէ նա թռչէր իւր Հեղինէի մօտ, այն ժամանակ գուցէ բժշկուէր նա, բայց Հեղինէի կեանքի րոպէները համարուած էին, մի քանի րոպէից յետոյ գուցէ ուշ լինէր...

—Է՜հ, անգութ են մարդիկ, ինձ չեն խըղճում... մի՞թէ դուք քար սիրտ ունիք, մի՞թէ չէք հասկանում որ ցուրտ է, ձիւն է գալիս, ես մրսում եմ, ձիւնը ուղղակի վրաս է թափւում, սենեակս առաստաղ չունի. իսկ դուք կանգնած այդտեղ ծիծաղում էք... անգութներ, ասաց Հեղինէն և մեքենաբար սկսեց կոլոլուել վերմակի մէջ, ապա յանկարծ նա դէն շպրտեց վերմակը, ուզեցաւ վեր թռչել, բայց ուժասպառ ընկնելով բարձի վրայ ճչաց.

—Գէորգ իշխան, ես քեզ սիրում եմ, հասի՛ր ինձ, ա՛ըր ես դու... կանչեց նա և մի խոր հոգոց քաշեց։

—Տէր, Դու փրկիր մատաղ կեանքը, կան-

չեց Սահակ քահանան։ Այդ իսկ ժամանակ աղաւխինը ներս մտաւ և Սահակ քահանայի ականջին մի ինչոր փսփսաց։

Սահակ քահանայի աչքերը մի տեսակ ոգևորութեան փայլ ստացան և նա մօտենալով Հեղինէին բռնեց նրա սառը ձեռքը և ասաց.

—Հեղինէ, աղջիկս, կուզե՞ս տեսնել քո սիրած մարդուն։

—Յիմար, դու էլ բան ասացիր, կարծես ես չեմ տեսնում, որ ծովը ծփում է և նաւակով այլևս չի կարելի զբօսնել. ինչ անենք որ, վաղը հօ կարելի է զբօսնել։

—Հեղինէ, Գէորգ իշխանն է եկել, ուշքի արի, կրկնեց Սահակ քահանան և արտասուքները խեղդեցին նրան.

—Գէորգ իշխա՞ն .. չընջաց Հեղինէն և ապուշի նման սկսեց նրա դէմքը դիտել, ապա նրա աչքերի մէջ մի տեսակ թախիծ անցաւ և հազիւ լսելի ձայնով ասաց.

—Սուտ էք ասում, ինձ խաբում էք, նա արդէն մեռած է...

Այդ ժամանակ Գէորգ իշխանը ներս մտաւ սենեակ և տեսնելով Հեղինէի գունատ և ուռան դեղնութեամբ պատած դէմքը, մի կեանս սառածի նման կանգ առաւ և ապշկարծակի գրկեց Հեղինէին և սկսեց համբուրներով ծածկել նրա դէմքը։

—Հեղինէ, լսի՛ր ինձ, կանչեց նա խեղդ

ձայնով։

Հեղինէն լսեց իւր սիրած մարդու ձայնն և ցնցուեցաւ: Նա լայն բացած աչքերով նայեց իշխանին և ճանաչեց նրան: Հրաշքը կատարուեցաւ, հիւանդութեան ճգնաժամն անցաւ Հեղինէն փաթաթուելով իշխանին, նրանց շրթունքները հպուեցին և երկար, շատ երկար, բայց չէին թողնում իրար...

Հեղինէն փրկուած էր, կարճ ժամանակից յետոյ հիւանդութիւնն անցաւ և սիրող սրտերը ապրեցան երջանիկ և հանգիստ կեանքով:

Սահակ քահանան օրհնեց դրանց միութիւնը, իսկ Գագիկ Արծրունին համբուրեց իւր փեսայի և աղջկայ ճակատները...

18611/399 25-00 20-00

<< Ազգային գրադարան
NL0327798

19.384